Մեր գործը մեզնից սկսենք

Հոդվածներ

Աշոտ Բլեյան

Դպիր

Աշոտ Բլեյան
Դպիր 2007-2015

I. Հատուկ փորձարարական դպրոցի կոչումը
Նոր կլինի յուրաքանչյուրիս համար
Կրթությունն ինքը կյանքն է
Նախամասնագիտական, մասնագիտական ուսուցման Ավագ դպրոցներ
Գրականություն և դպրոց. ահավասիկ Հանրապետությունն Արարատյան
Համաձա՞յն եք իմ պնդումների հետ
Նախաձեռնողականությունը ավելի ու ավելի մեծ կշիռ է ստանում
Մեր դպրոցական համակարգի դժբախտությունը փակ լինելն է
Անգիրի դպրոցի մեր այլընտրանքը
Ոչ թե սովորողների համար, այլ սովորողների հետ
Ստեղծողի մոբիլ դպրոց
Անկեղծ, բաց ու անդավաճան
Ավելի գրավիչ, քան փողոցը, առավել հետևողական, քան աղանդավորական գործիչը
Օգտվենք առիթից կամ շնորհավորական կրկնության փոխարեն
Ես չխոսեմ՝ քարի ու ասֆալտի ծանրության տակ թողած հողը կաղաղակի
Շշմելու ուսումնական աշուն
Աշուն է եկել մեր բակը
Ավերակների հաղթահարում
Կրթական պարտեզ արվարձանում

Հավելված
Մի՞թե դեռ ժամանակը չէ
Այս ոչ լեգիտիմ կյանքը մեզ ո՞վ է տվել

Բարո՛վ եկար, սիրո՛ւն Մեդիա
Կա մեդիա՝ կա կրթություն
Անհատական համակարգիչն ու ինտերնետը՝ուսուցման միջոց
Տեղեկատվական հաղորդակցության (ինֆորմացիոն) տեխնոլոգիաները՝ ուսուցման միջոց
Արդիական՝ գրավիչ և արդյունավետ ուսուցում
Մեդիան՝ անընդհատ աշխատանքի հնարավորություն
Ստեղծագործական հավաքի մասնակցությունը ուսումնական-հետազոտական-ստեղծագործական աշխատանք է
Սկսենք մեր գործը, նորեն ու մեզնից սկսենք
Խիզախելու կարողություն

Հերթը հասավ հիմա Ձեզ
Եկել է ժամանակը
Շնորհավորում եմ. կրթահամալիրը ներկայացնում եք «DigiTec Expo 2012»-ում
Մեկնարկը տրված է
Դիջին ու դդումը հանդիպեցին ստուգատեսում
Գլխավորի մասին

II. Կրթահամալիրը՝ ազատ-ստեղծագործ-համերաշխ մարդկանց կոոպերացիա

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր. ինչպես սկսվեց ամեն ինչ
Ինչ արժեք ունի խոսքը, եթե այն գործ չի դառնալու
Ողջո՛ւյն, ստեղծողների միասնության և ստեղծական աշխատանքի տոնական օրեր
Նվեր՝ տարվա բոլոր օրերի համար
Աչքներս լույս. մենք նորից միասին ենք, տոնական մարմարյա սրահում
Թող գա սովորելու նա…
Կենտրոնում Դուք եք
Մեր ընկեր Հակոբը
Մեր ավագ եղբայրն ու ընկերը՝ միշտ Ուսուցիչ Հակոբ Հակոբյանը
Գարնանային տոն՝ օլիմպիադա
Նոր գինին՝ նոր տիկի մեջ
Գնալ չկա…
Ձեր կյանքի դպրոցական շրջանը փակվեց...
Միշտ սովորողի հետքերով

III. Կրթահամալիրի տնօրենի օրագրից

25 տարի մոբիլ և ստեղծական
Մանկավարժական սկզբունքներ
Կրթահամալիր՝ բաց հասարակության բաց դպրոց
Ուսուցում ուսումնական օրացույցով
Ուսուցում ուսումնական նախագծերով
Ուսուցում դաշտային-արշավախմբային ճամբարներում
Նոր ուսումնական միջավայր. «Սեբաստիա» կրթական պարտեզը՝ ուսումնական նախագիծ
Գրավոր և բանավոր խոսքի մասին
Խնամքը բարեխղճություն է ենթադրում նախ և առաջ
Լողափը՝ ամառվա առօրյայի կարևոր բաղկացուցիչ
Կրթահամալիրի աշխատողը կամ իմ հերոսները
Սա իմ հայրենի հողն է, ապրում եմ, սովորում եմ, գործում եմ, որ այն

ծաղկեցնեմ
Հեռավար հարցազրույց կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանի հետ
Իրական ու կոնկրետ քայլերով
Թող կենտրոն գա անհատը
Կոզի, բայց ոչ երբեք կոզիացած
Հետևեք ինձ, մտնում եմ իմ ու ձեր երկիր դրախտավայր՝ Բանգլադեշ
Ջա՞ն, ճամբար ջան
Հանրային միասնությունը դաստիարակություն է
Սեբաստացիական մեր աշխարհը այլ է...
Բլեյանի դպրոց. մասնավորի կրթական ծրագիր
«Հեղինակային կրթության կազմակերպում» ստուգատես
Մեր ժամանակների տիրակալները
Ինչպե՞ս ենք հաղթահարելու փակ շրջանը
«Հայ-վրացական» կամուրջները մարդկային հարազատությամբ
կամրապնդվեն-ավելի բանուկ-կենսական կդառնան
Կտրվենք գետնից, նոր թափ ու թեթևություն մեր գործողություններին, մեր ընթացքին…
Մեր օրացույցում մեր ու սումնական կյանքն է
Փոփոխությունները հնարավորությունների հոմանիշներն են

I. Հատուկ փորձարարական դպրոցի կոչումը

Կլոր սեղանի հարգելի մասնակիցներ, «Դպիր» մանկավարժական պարբերականի սիրելի ընթերցողներ ու ստեղծողներ
Ինձ հատուկ բավարարում է պարգևում մեր մանկավարժության ծրագրերի մի խումբ հեղինակների և այն արժևորող պաշտոնյաների, լրագրողների, հասարակության ներկայացուցիչների, մանկավարժությամբ զբաղվողների և կրթությունը կարևորողների այս հրապարակային կոնսիլիումը: Բարով եք եկել մեր կրթական Տուն: Լավ է, որ մեզ չնկատելու, մեզ հալածելու, մեզ հանդուրժելու փուլերից հետո սկսվել է մեզ հետ համագործակցելու շրջանը, մեր հեղինակային մանկավարժության ծրագրերի իրագործմանը պետականորեն աջակցելու շրջանը:
Կրթության նախարարի, փոխնախարարի ճանաչողական այցից հետո՝ այսօր հոկտեմբերի 27-ին (շառից-փորձանքից հեռու), Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում նախարարությունը նախաձեռնել է «Հեղինակային մանկավարժության ծրագրերի իրագործման արդյունքներ և խնդիրներ» օրակարգով այս հավաքը:

Մեր հեղինակած մանկավարժական ծրագիրը, որ մշակվում է շուրջ 20 տարի, լինենք շիտակ, պետական համարվող մանկավարժության հետ համառ պայքարում ապացուցեց իր կենսունակությունը, արդիականությունը: Կրթակարգը վկա, մենք չենք կարող այլևս

այլընտրանք կոչվել պետականին. հեղինակային մանկավարժության ծրագրեր՝ խնդրեմ: Ես ուրախ եմ, որ շարունակ ունենալով կրթությամբ հեշտ ապրելու, անուն և նյութական վաստակ ձեռք բերելու մեծ հնարավորություն՝ մենք ի վերջո դիմացանք գայթակղությանը՝ ընտանիքների, ծնողների աշխատանքը, երեխաների բնածին ընդունակությունները մեզ վերագրելու կամ այլոց աշխատանքի արդյունքներին տիրելու, հանրապետության ուսումնատենչ և ակնհայտ ընդունակ երեխաներին հատուկ դպրոցում հավաքելու, այդ երեխաների դափնիներով մեր ճակատը զարդարելու: Ես ակադեմիկոս Կապիցայի մոտ եմ առաջին անգամ հատուկ դպրոցի առաքելության ճշգրիտ ձևակերպումը կարդացել: Մեջ եմ բերում իմ թարգմանությամբ. «Հատուկ դպրոցների առաքելությունն է ուսուցման և դաստիարակության առաջավոր մեթոդների ուսումնասիրությունն ու մշակումը: Հատուկ դպրոցները պիտի ունենան լավ ընտրված մանկավարժական կադրեր և օրինակելի կազմակերպում: Երկրի մասշտաբով ուսուցման մակարդակի բարձրացումը հենց պիտի դառնա հատուկ դպրոցների հիմնական խնդիրը: Այս դպրոցների կազմակերպման բնույթը, դասավանդողների և սովորողների ընտրությունը պիտի համաձայնեցվեն այս խնդրի հետ»: Հարկադիր դադար... Ուզում եմ հավատալ, որ մենք մեր կրքով, տաղանդով, ջանքերով փորձել ենք լինել և կանք այսօր՝ որպես կրթության և գիտության նախարարության փորձարարական-հետազոտական միավորում՝ հատուկ դպրոց՝ Կապիցայի ձևակերպմամբ: Կլոր սեղանի նախապատրաստական ընթացքում մեր կրթահամալիրի մանկավարժության կենտրոնի տնօրենն առաջարկեց օրակարգ, որը լավագույնս է սահմանում կրթահամալիրն այսօր. «Կրթահամալիրը՝ երեխայի անհատականության համակողմանի զարգացման, մասնագիտական կողմնորոշման և պատրաստվածության ապահովման, մասնագիտական ուսուցման և մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման համակարգ»: Կրթահամալիրի կրտսեր դպրոցը՝ երեխայի համակողմանի զարգացումն ապահովող ենթահամակարգ: Կրթահամալիրի Ավագ դպրոցը՝ սովորողի քաղաքացիական ու մասնագիտական ապագան կանխորոշող ենթահամակարգ: Կրթահամալիրը՝ ներդրումային կրթական ծրագրերի մշակման և իրականացման արդյունավետ համակարգ. ահա մեր տաղանդին արժանի խնդիր, որը հետևողական և հաջողությամբ լուծում ենք, որն ապահովում է ակտիվ համագործակցություն պետական մարմինների, համայնքների, կրթական ողջ համակարգի, մեր բոլոր սովորողների և նրանց ծնողների, հայաստանյան ու միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների որակյալ կրթության բոլոր շահառուների՝ իրավական հասարակության բոլոր պատվիրատուների հետ:

Ինձ մնում է ավելացնել՝ և այս ամենը՝ որպես սովորողի և ուսուցչի տաղանդի դրսևորման ու զարգացման միջոց: «Կլոր սեղանի» մասնակցի փաթեթում 2006թ. կրթահամալիրում իրականացվող ծրագրերի սովորողների և ուսուցիչների հետազոտական աշխատանքների ցանկերը, կարծում եմ, խոսում են: Մենք սովորական երեխաների դպրոց ենք մղել միշտ, այսօր էլ կանք, բայց միայն երեխաների, ում ծնողները ճանաչում և ընտրում են ուսումնական գործի մեր կազմակերպումը, մեր մանկավարժությունը: Քանակը մեզ չի կարող շեղել մեր դավանած մանկավարժությունից, պարզապես մենք պիտի մատչելի դառնանք ոչ միայն ողջ Երևան քաղաքի, այլև հանրապետության սովորողների համար: Մենք եղել ենք ու կանք բաց կրթական համայնք՝ բաց դռներով բազմաձրագիր ուսումնական հաստատություն, որն իրականացնում է կրթություն բոլորի համար, առանց որևէ խտրականության: «Կրթական

ավտոբուս» ծրագիրը՝ սովորողների ապահով ու հարմար տեղափոխումը քաղաքի տարբեր ծայրերից՝ ահա խնդիր, որ ունենք մենք՝ որպես հատուկ դպրոց:

Մանկավարժական աշխատողների զարգացման ենթահամակարգը մենք ձևավորում ենք որպես կրթահամալիրի ներկան հաստատող և ապագան կանխորոշող կառույց: Իսկական եռուզեռ է մեր նորաստեղծ մասնագիտական ուսուցման կենտրոնում և գրադարանում. յուրաքանչյուր երկուշաբթի և երեքշաբթի՝ կրթահամալիրի կրտսեր դպրոցների ուսուցիչները, չորեքշաբթի և շաբաթ՝ մեր նախակրթարանների դաստիարակները, հինգշաբթի՝ վարժարանի ուսուցիչները, ուրբաթ՝ արհեստագործական դպրոցի ուսուցիչները հատուկ պատրաստություն են անցնում» «Կրթության որակի և համապատասխանության» միջազգային վարկային ծրագրով վերապատրաստում ենք Մալաթիա-Սեբաստիա համայնքի հանրակրթական դպրոցների ուսուցիչներին, ծրագիր, որի իրագործմանն ակտիվ մասնակցում են կրթահամալիրի 2 տասնյակ առաջատար ուսուցիչներ, մեր իրականացրած՝ նախակրթարանների հանրապետական ծրագրով սկսել ենք վերապատրաստել մայրաքաղաքի նախադպրոցական հաստատությունների մանկավարժական աշխատողներին, ՀՀ նախագահի դրամաշնորհի «Ծնողի դպրոց» ծրագրով սկսել ենք կրթել 1-ին դասարանցիների ծնողներին... Ենթահամակարգ, որի մասնագիտական ու նյութական բազան, հավատացնում եմ, կբավարարի արդի մանկավարժական բակալավրիատի ստեղծման համար: Այսուհետ միայն անընդհատ սովորող, հետազոտական-ինքնուրույն որոնողի գործունեությունից գիտնականի բովանդակություն ստացող մասնագետները կարող են աշխատել կրթահամալիրում: Ոչ թե կրթահամալիրի ղեկավար աշխատողների կամայականությունը կբաժանի հատուկ դպրոցի մշակին և ոչ հատուկ դպրոցի սպառող դասատուին, այլ գործունեության բնույթը: Հետազոտող ուսուցչի նոր՝ հավակնոտ աշխատակարգի ներդրումը հնարավոր է դարձնում 2-3 տարում յուրաքանչյուր սովորողի և մանկավարժի տաղանդը դրսևորել ու զարգացնել իրական, հանրօգուտ և ստեղծագործական աշխատանքներում: Երբ ասում ենք «հատուկ դպրոցում օրինակելի կազմակերպում», նկատի ունենք նախ և առաջ սովորողների, սովորողների և աշխատողների փոխադարձ հարգանքի ապահովումը վերից վար ու բոլոր մակարդակներում: Խնայել սովորողի ժամանակը, ջղերը, առույգություն և հավես հաղորդել սովորողին և ուսուցչին, նրանց բոլոր տարիքներում և ուսումնական բոլոր բնագավառներում ստեղծագործելու (հետազոտելու, ինքնուրույն հայտնաբերելու) հնարավորություններ ընձեռել, նյութապես, մանկավարժորեն և տեխնիկապես ապահովել իմացումի հրճվանքը՝ որպես սովորողի և ուսուցչի իրավունք: Մեզ համար սա է կրթելը, կրթության կազմակերպումը: Առանց հետազոտողի (գիտափորձի մասնակցի) կրքի առաջ չենք գնա: Մեր վաստակը արժանի է հարգանքի, բայց մենք, եթե թոշակառու չենք, եթե շարունակում ենք գործել որպես մանկավարժ-հետազոտողներ, պիտի ամեն օր բազմապատկենք իմացումի սիրահարի մեր գործունեությամբ այդ վաստակը, պարտավոր ենք ստեղծել ավելին, քան ծախսում ենք: Եթե ոչ, պիտի թողնենք այս հատուկ դպրոցը՝ սկսած ինձանից:

Ուխ, երկարատև հանգստից ինտերնետ հեծած վերադարձավ վերջապես իմ սիրելի «Դպիրը», ու ես նրան հանձնեցի իմ սրտում կուտակվածը:

Նոր կլինի յուրաքանչյուրիս համար

Ոչ մի նպատակ այնքան կարևոր չէ, որ արդարացնի դրան հասնելու միջոցը: Աստվածատուր այդ միջոցը կյանքն է, մարդավարի ապրելը: Հենց այս գիտակցումն է, որ նշանավոր է դարձնում մեր՝ ցանկացած տարիքի սեբաստացու կյանքը՝ սովորողի ու սանի, ծնողի ու աշխատողի, անհատի ու հավաքանու, 2013-ին էլ, 2014-ին էլ: Այս հավատամքը թույլ է տալիս մեր հեղինակած կրթության միջոցով ու դրա արդյունքում փոխել մեր կյանքը՝ որպես մեր կողմից ձևակերպվող և լուծվող խնդիրների՝ ուսումնական նախագծերի ամբողջություն, որպես յուրաքանչյուր անհատի կրթական պատվերի բավարարմանն ուղղված ստեղծողի մոբիլ կրթություն: Սրանով մենք հաղթահարում ենք բոլոր տեսակի անջրպետները՝ կրթահամալիրի ներսում, կրթահամալիրից դուրս, ներանձնային, միջանձնային, ֆիզիկական, կրթության և կյանքի միջև: Սրանով սկսում ենք հաստատել ու նորոգել կամուրջներ՝ կրթության և կյանքի միջև, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի և աշխարհի միջև՝ Հայաստանում, թե Հայաստանից դուրս:

Մեծ երևակայություն է հարկավոր պատկերացնելու, որ հաղթահարելի է հայաստանցուն խոցած անհուսությունը, և խիզախում է պետք, որ սկսի այլ դարձնել իր ու մերձավորի, անծանոթի կյանքը՝ այդ աշխատանքը դարձնելով իր կյանքը: Ահա այս ստեղծագործ երևակայությունը պարգևող Ձմեռ պապիկ պիտի լինի մեզանից ամենաընդունակը, ամենահաջողակը, ամենա.... Այս որոշումը կայացնողներով 2014-ին Հայաստանում ամբողջությամբ կօգտագործենք փոխադարձ վստահության, միջանձնային հարաբերությունների, համերաշխության, գործընկերության ողջ պաշարը, հաղթահարելով ներհասարակական մեկուսացվածությունը, հատվածականությունը, հանդես գալով որպես նույն հավատամքով կազմակերպված հավաքանի՝ հանդես գանք նախաձեռնություններով, ապրենք ու գործենք լիարժեք աջակցության ռեժիմում: Միայն այսպես ու սրանով կարող ենք տեսանելի տեղաշարժ կատարել Հայաստանում: Ահա այսպես Նոր կլինի տարին: Ի՞նչն է այստեղ դժվարը:

Ասում են, աջ ու ձախ լսվում է՝ հոգնել եմ...: Իհարկե, այսպիսի կյանքից՝ չապրելուց, վաղուց կարելի էր հոգնել: Արձանագրենք, որ հասարակությունը հոգնել է սրանից: Վերջապես: Իսկ սրա հաղթահարման միակ ձևը, կներեք՝ յուրաքանչյուրիս պարտականությունը, առանց պայմանների ապրել սկսելն է, ստեղծելը, որպես Ձմեռ պապ՝ նվիրելը, կարիքավորի կողքին լինելը, անհատական ու հասարակական բարօրություն հաստատելը, ազատ, ինքնիշխան, ժողովրդավար, իրավական, սոցիալական Հայաստանի ու հայաստանյան բաց հասարակության կառուցումը:

Ահա ինչու՝ ինձ համար Նոր տարվա շնորհավորական նվեր ընտրելը դժվար չեղավ. կրթահամալիրի 2014-ի ուսումնական տոնացույցով <u>առաջին նախագիծը</u>, որ ուզում եմ որպես ամանորի նվեր մատուցել, միասին ստեղծական գործելու հնարավորությունն է:

Կրթության և գիտության նախարարությունն ուշացումով, բայց, ուզում եմ հավատալ, գործնականում սկսել է զբաղվել կրթության նոր կառուցվածքի կազմակերպմամբ. նախարարության կրթական ծրագրերի կենտրոնի կազմում ստեղծվել է առանձին գործող ավագ դպրոցի գործունեության հայեցակարգ մշակող աշխատանքային խումբ, իսկ խմբի աշխատանքները համակարգելու, առանձին գործող ավագ դպրոցի փորձնական ներդրման աշխատանքները կազմակերպելու, ինչպես նաև հանրապետությունով մեկ ինքնուրույն ավագ դպրոցի ցանցի ստեղծման այլ աշխատանքները համադրելու նպատակով ԿԳ նախարարն ստեղծել է հանձնաժողով՝ իր ղեկավարությամբ:

Ինքնուրույն ավագ դպրոցը (12-ամյա հանրակրթական դպրոցի 10-րդ, 11-րդ, 12-րդ դասարաններ)՝ որպես ինքնուրույն կրթական ծրագիր, հարկ է դիտել մասնագիտական կրթության համակարգում: Կարծում եմ՝ լրացուցիչ փաստարկման կարիք չկա՝ մասնագիտական կրթության գործող համակարգը պարազիտիկ է ու կեղծիքի մեջ թաթախված, նրա գերխնդիրը ոչ թե այսօր ապրող անհատն է ու վաղվա քաղաքացիական հասարակությունը, այլ երեկվա իրականության՝ զարգացման չտրվող-մսխող ուսումնական հաստատությունը, դրա պահպանումը: Մասնագիտական կրթության (արհեստագործական, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական՝ հիմնական ու լրացուցիչ) գործող համակարգը պիտի չկաշկանդի աշխատանքային խմբին և հանձնաժողովին՝ ավագ դպրոցի արդիական հայեցակարգ մշակելու, այնպիսի հայեցակարգ, որը ոչ միայն կներառվի հանրապետության մասնագիտական կրթության համակարգում, այլև փոփոխություններ կառաջարկի նրանում: Ես անհոգնել կրկնում եմ, որ մի փուլում ենք, որ հանրակրթության փոփոխությունները ճիշտ ուղղություն և դինամիզմ ձեռք կբերեն, եթե առաջանցիկ ու վճռական փոփոխություններ սկսվեն կատարվել մասնագիտական կրթության համակարգում: Ուզում եմ հավատալ, որ ինքնուրույն ավագ դպրոցի հայեցակարգին զուգահեռ (ոչ թե դրանից հետո) կձևավորվի ընդհանուր կրթության նոր համակարգը՝ բազային կրթության (մեր կարծիքով՝ 6-ամյա) և պարտադիր դպրոցի (7-8-9-րդ դասարաններ) ինքնուրույն կրթական ծրագրերով: Այո, տարատեսակ, ուսուցման տարբեր տևողությամբ և խնդիրներով ինքնուրույն ավագ դպրոցի հայաստանյան ու միջազգային փորձը պիտի վերջապես անաչառ ուսումնասիրվի:

Կենսունակ, արդյունավետ ավագ դպրոցի գործունեությունը ենթադրում է այնպիսի պարտադիր դպրոց (9-ամյա հանրակրթություն), որի շրջանավարտը բազմազան ավագ դպրոցում կրթությունը շարունակելուն մասնագիտորեն կողմնորոշված է կամ բավարար հմտություններ և քաղաքացիական պատրաստություն ունի ինքնուրույն աշխատանքային գործունեություն ծավալելու համար: Մեր նոր ձեռնարկությունները կարող են և պիտի գործեն նաև որպես ուսուցման կենտրոններ՝ իրենց 14-16 տարեկան աշխատողների համար: Այո, ուսուցում՝ ողջ կյանքի ընթացքում, անընդհատ կրթություն, նաև ստացիոնար աշխատանքային գործունեությանը զուգահեռ, ուսուցման անհատական ծրագրերով, մանավանդ որ շատ ընտանիքներ այսօր գոյատևում են իրենց 14-16 տարեկան երեխաների աշխատանքի շնորհիվ:

Ինքնուրույն ավագ դպրոցը ենթադրում է սովորողի ընտրությամբ մասնագիտացված ուսուցում և ընդհանուր կրթություն՝ ուսուցման տարբեր (1-ից 3 տարի) տևողություններով: Ահա ինչու մեծ, շատ մեծ է վտանգը, որ գործող միջնակարգ դպրոցի և մասնագիտական կրթության արատները կթափանցեն անունով նոր և ինքնուրույն հաստատությունները, կզրկեն նրանց էությունից, իմաստից՝ վերածելով դրանք միայն միջնակարգ կրթության և մասնագիտական ուսուցման վկայականներ բաշխող-վաճառող հաստատությունների: Հաստատություններ, որտեղ մեծերիս քմահաճույքով մեր 15-18 տարեկան պատանիները ստիպված լինեն 1-3 տարի՝նստել՝ու՝նավթալինոտ տեսություններ՝լսել՝ փոխանակ իրենց տաղանդին ու հակումներին համապատասխան ստեղծագործ ուսումնառություն անցնելու: Պարզ է նաև, որ գործող դպրոցական համակարգը՝ իր մարդկային և նյութական ներուժով, ծրագրերով, ավանդույթով, անկարող է ծնել առողջ և ինքնուրույն զարգացող ավագ դպրոց: Ես վստահ եմ, որ միայն ազատական (լիբերալ) գաղափարախոսությունը կկարողանա մրցակցային տնտեսության և բաց հասարակության սպասարկու արդիական և ինքնուրույն ավագ դպրոցներ ստեղծել:

Ինչպե՞ս ինքնուրույն ավագ դպրոցը զերծ պահենք կրթական համակարգը կերած կեղծիքից, անբանությունից ու անորակությունից (ձևականությունից): Ինչպե՞ս անհատականացված որակյալ ուսուցմամբ այն գրավիչ դարձնենք այսօրվա 14-17 տարեկանների և օգտակար՝ հասարակության մեր վաղվա օրվա համար: Ինչպե՞ս ինքնուրույն ավագ դպրոցի ձևավորումը կազմակերպենք որպես ներդրումային ծրագիր՝ գրավիչ և՛ քաղաքացիների (ծնողների), և՛ գործատուների (ձեռներեցների) համար: Չեմ կարծում, թե առանց հայաստանյան ներդրումների, միայն միջազգային ինչ-ինչ դրամաշնորհներով ու վարկերով էական գործ կարվի: Ավագ դպրոցի կայացման ճանապարհին պիտի խորտակվի հասարակության և կրթության միջև տասնյակ տարիներ կառուցված անջրպետը: Ժամանակակից կյանքի և կրթության օրինական և ներդաշնակ ամուսնությունից կարող է ծնվել այսօր ապրող անհատին անհրաժեշտ մասնագիտացված ուսուցման ավագ դպրոցը: Սրանք լուրջ հարցեր են: Եվ օգտակար կլինի, եթե նոր ավագ դպրոցի նախագծի մշակման աշխատանքներին մասնակցեն նրա բոլոր շահառուները: Կրթության բոլոր պատասխանատուները կկարողանա՞ն ուժ հաղորդել անգամ շատ թույլ արտահայտված նախաձեռնություններին և առաջարկներին: Տեսնենք, տեսնենք...

Նախամասնագիտական, մասնագիտական ուսուցման Ավագ դպրոցներ

Ավագ դպրոց-վարժարան, Գեղարվեստի ավագ դպրոց, Արհեստների ավագ դպրոց
14.07.09թ. «Ավագ դպրոց. խնդիրներ, լուծումներ» Կլոր սեղանի զեկուցում

ԿԳՆ հավանությանն արժանացած կրթահամալիրի 2009-2012թթ. Զարգացման ծրագրով որոշված են կրթահամալիրի Ավագ դպրոցների գործունեության փուլերը և ուղղությունները առաջիկա երեք տարիների համար:

Զարգացման ծրագրի հավելված «Նախամասնագիտական, մասնագիտական ուսուցման Ավագ դպրոց» ծրագրով որոշված է 2009-2010 ուստարվա հիմնական աշխատանքների բովանդակությունը:

Մեր Ավագ դպրոցը ՀՀ կառավարության 2008թ. մարտի 27-ի 12-րդ արձանագրային որոշումով հաստատված «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրի» պահանջներին համապատասխան է: «Ավագ դպրոցների ստեղծման ռազմավարական ծրագրով» նախատեսված է «...ստեղծել սովորողների համար նախընտրելի հոսքային ուղղության, այդ թվում, նախնական մասնագիտական կրթության ընտրության հնարավորություն: Այդ նպատակով ավագ դպրոցի կրթական ծրագիրը դարձնել ճկուն՝ հնարավորություն ստեղծելով արձագանքելու աշակերտների կրթական պահանջմունքներին և նախասիրություններին: .... Հիմնական կրթության այն շրջանավարտները, որոնք չեն ձգտում բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ստանալ, կամ չեն ունեցել բավարար առաջադիմություն հիմնական դպրոցում, պետք է հնարավորություն ունենան ստանալու գոնե նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն, միաժամանակ չկորցնելով միջնակարգ կրթություն ստանալու հնարավորությունը, կամ ուսումը շարունակել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ավագ դպրոցի շրջանավարտների որոշ մասը չի կարողանա կամ չի ցանկանա շարունակել կրթությունը բուհում: Նրանց այլընտրանքը կարող է լինել միջին մասնագիտական կրթությունը կամ ելքը դեպի աշխատանքի շուկա: Նկատի ունենալով, որ միջին մասնագիտական կրթության ծավալները սահմանափակ են, ավագ դպրոցը պետք է ապահովի նաև որոշակի նախնական մասնագիտական պատրաստվածություն»:

Մեր Ավագ դպրոցի տասներորդ դասարանի սովորողի ուսումնական պլանները պարզաբանումներով, սովորողին ներկայացվող պահանջներով, խորացված ուսուցման մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ, առանձին գրքույկի ձևով տրվում է յուրաքնաչյուր սովորողի:

Մենք խուսափում ենք Հիմնական դպրոցի շրջանավարտների գիտելիքների ստուգումից՝ որպես Ավագ դպրոց ընդունելության պայման: Մեզ համար գլխավորը մասնագիտորեն կողմնորոշված ուսումնատենչ անձն է, եթե սովորողը և նրա ծնողը պատրաստ են կատարել ուսումնառության պայմանագրով որոշված պարտավորությունները:

Այսպիսով տասներորդ դասարանցու ազատ ընտրությամբ (2008-2009 ուստարվա համար 27-30 մասնագիտացումներ) շաբաթական 11-14 ժամ խորացված ուսուցում, 10-15 հոգանոց խմբերով, մասնագիտական միջավայրում, իրենց բնագավառի հայտնի մասնագետների ղեկավարությամբ: Խորացված ուսուցմանը տասնմեկերորդ դասարանում կհատկացվի շաբաթական 13-16 ժամ, տասներկուերորդ դասարանում՝ 19-22 ժամ: Եռամյա խորացված ուսուցումը սովորողի ընտրությամբ կարող է ավարտվել արհեստագործական որակավորմամբ:

Խորացված ուսուցման դասընթացի լրիվ ծավալը ավարտած սովորողը կարող է մասնագիտական ուսումը շարունակել կրթահամալիրի քոլեջում (նաև այլ քոլեջներում) երկրորդ կամ երրորդ կուրսում:

Հիմնական դպրոցի շրջանավարտը կարող է ազատ ընտրել մեկամյա արհեստագործական ուսուցման ծրագիրը լիցենզավորված 16 մասնագիտություններից մեկով:

Այսպիսի Ավագ դպրոցը պատվիրատու է որակապես նոր Հիմնական դպրոցի, որը կրթահամալիրում գործում է երկու ինքնուրույն կրթական ծրագրերի օրգանական միասնության ձևով՝«Անգլերենի, ռուսերենի, համակարգչային ծրագրերի խորացված ուսուցման և նախասիրությունների զարգացման 1-6-րդ դասարաններ» և «Սովորողի նախասիրությունների զարգացման և մասնագիտական կողմնորոշման 7-9-րդ դասարաններ»: Նախասիրությունների զարգացումը կատարվում է սովորողի ազատ ընտրությամբ՝ սկսած 2-րդ դասարանից, ուսումնական պլանով նախատեսված գործունեության կազմակերպման միջոցով՝ 12-15 հոգիանոց խմբերով, մասնագիտական միջավայրում, հմուտ մասնագետների ղեկավարությամբ:

Մեր Ավագ դպրոցի (ինչպես նաև Հիմնական դպրոցի) սովորողի ընտրությամբ (խորացված, մասնագիտացված կամ մասնագիտական) դասընթացների ծրագրերը, ձեռնարկները, կազմակերպական եղանակները մշակում են կրթահամալիրի դասավանդողները: Այս աշխատանքները նախատեսված են և պետական աջակցություն են ստանում (պիտի ստանան) «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» բյուջետային ծրագրով:

Թվային ուսուցման միջոցները և մեդիա տեխնոլոգիաները գործածվում են առավելագույն ծավալով և տեսակներով՝ սկսած առաջին դասարանից: Ռուսերենը և անգլերենը, ինչպես նաև ինտերնետը գործածվում են որպես ուսուցման արդյունավետ գործիքներ՝ սկսած առաջին դասարանից:

Խորացված ուսուցումն իրականացվում է տեխնիկապես հագեցած, անհատական և խմբային հետազոտական աշխատանքին հարմար արհեստանոց-արվեստանոց-լոբորատոր միջավայրում: Խորացված ուսուցման ղեկավարներն ընտրվում են մրցույթով կամ հատուկ կարգով հրավիրվում են աշխատանքի. նրանք իրենց բնագավառում գործող մասնագետներ են: Խորացված ուսուցման արդյունավետությունը ենթադրում է ուսումնական ճամփորդությունների (հատուկ պարապմունքներ թանգարաններում, այլ արվեստանոցներում, արտադրամասերում) մասնագիտական փորձառությունների, ուսումնական-հասարակական նախագծերի, ցուցահանդեսների, համաժողովների կազմակերպում և մասնակցություն ուսուցման ողջ շրջանի ընթացքում:

Ավագ դպրոցում կիրառվում է անհատական ուսումնական պլան, որը հնարավորություն է տալիս սովորողի խորացված ուսուցումը մի մասով կազմակերպել նաև կրթահամալիրից դուրս: Օրինակ՝ սովորողն ընտրել է չինարենի և թարգմանության խորացված ուսուցումը. կրթահամալիրում այսօր պատրաստ չենք չինարեն սովորեցնելու, բայց սովորողը, ծնողի խնդրանքով այն պատրաստ է իրականացնելու այլ ուսումնական կենտրոնում: Այլ օրինակ՝ մարզչական խորացված ուսուցմամբ տասներորդ դասարանի սովորողը բռնցքամարտիկ է...

Խորացված ուսուցման դասարաններում սկսած յոթերորդ դասարանից, լայնորեն կիրառվում է հեռավար ուսուցումը, որպես անհապաղ ստացիոնար ուսուցման արդյունավետ միջոց:

Ահա ինչու, բոլոր դասավանդողները կրթահամալիրում տիրապետում են համակարգչային ծրագրերի և տանը ունեն ինտերնետին միացված անհատական համակարգիչ: Ահա ինչու, պահանջ է առաջանում, որ կրթահամալիրի յուրաքանչյուր սովորող ունենա ինտերնետին միացված անհատական համակարգիչ:

Խորացված ուսուցման դասարաններում սովորողը գնահատվում է վերը նշված ամբողջական գործունեության արդյունքներով՝ պարբերական (շաբաթական, ամսեկան, կիսամյակային, տարեվերջյան) հրապարակային ելույթներ, ցուցադրություններ, հասարակական պահանջարկ ունեցող ծառայություններ ու ապրանքներ: Այսօր բացակայում է խորացված ուսուցման պետական ֆինանսավորումը՝ տարեկան, մեկ սովորողի հաշվով՝ ոչ պակաս քան 100.000 դրամ; Այս գումարը՝ որպես լրացուցիչ կրթական ծառայությունների համար, վճարում է սովորողի ծնողը ուսումնական տարվա համար կնքված լրացուցիչ կրթական ծառայությունների պայմանագրով նախատեսված չափով և կարգով: Մենք այս հարցով մեր հիմնավորված առաջարկը ներկայացրել են ԿԳ նախարարին:

Հատուկ ուշադրություն է դարձվում ֆիզկուլտուրային, հայրենագիտական արշավներին և ակումբային գործունեությանը, ուսումնահետազոտական ճամբարներին, ստուգատեսներին սովորողների մասնակցությանը: Ֆիզկուլտուրան ոչ թե առարկա է, այլ սովորողի ընտրած մարզաձև, որպես գրավիչ, արդյունավետ ու անհատի պահանջմունքները բավարարող պարբերական գործունեություն:

Ա.Բլեյան
Գ. Հակոբյան

Գրականություն և դպրոց. ահավասիկ Հանրապետությունն Արարատյան

Որպեսզի խափանանարի դեր չկատարեմ, որպեսզի նպաստեմ, որ հանրակրթական դպրոցի վիճակի մասին հայ հասարակության այս մտասևեռումը նրա բարելավմանը ծառայի, որպեսզի գոնե այս մեկ հարցով հասարակության մեջ քննարկում կայանա, փորձեմ մտավորականի պարկեշտությամբ, առանց կրքի ու նախապաշարմունքի, առանց համակրանքի ու հակակրանքի մասնավոր զգացումների, առանց որևէ հետին մտքի ու հաշիվների, միով բանիվ առանց պատեհապաշտության: Գրի ստեղծումով-գործածումով սկսած գրականության ու գրավոր մշակույթի, սրա հետ կապված՝ հայոց դպրոցի զարգացումը երեք ինքնուրույն փուլերով է անցել: Առաջին փուլը ձեռագիրն է՝ իր սահակ–մաշտոցյան դպրոցով: Մաշտոցի աշակերտը, ինչպես Կորյունը, որպես դպիր՝ գիտակցում է իր առաքելությունը հայրենիքի ու Աստծո առաջ, գործում է իր ուսուցչապետից փոխառած ոգեղենությամբ, թարգմանիչ է ու գրիչ: Ուսուցանման մեթոդն ու առարկան Սուրբ գրքի, Գործք առաքելոցի և ձևավորվող հայալեզու քրիստոնեական ծիսակարգի ջանասեր սերտումն է: Օտար լեզուն (ասորերեն և հունարեն), ամենահայտնի դպիրները գործուղումով սովորում են Եդեսիայում և Կապադովկիայում: Մայրենի լեզուն, հասկանալի է, գրաբարն է: Այսպես իր վայրիվերումներով մինչև 16-րդ դար... Գրատպությամբ սկսվում է գրականության և դպրոցի գոյության երկրորդ փուլը: Ցավոք, գրահրատարակչությունը ընդամենը2ը պահպանեց սահակ-մաշտոցյան դպրոցը, դրանով նաև հայոց մշակութային մաքառման կանոր գործոն դարձավ, բայց զրկված լինելով եվրոպական ռեֆորմացիայի և լուսավորության ազդակներից, չդարձավ

հայոց նոր դպրոցի տեխնոլոգիական հիմքը: Գրատպության շրջանում ինքնակրթությունը, գլխավորապես Մխիթարյան միաբանության հրատարակություններով, դարձավ ուսուցման նոր եղանակ, հնարավորություն տալով հատկապես ամենաընդունակներին (Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Ս. Նազարյան և այլք) նախապատրաստելու մեր մշակույթի աշխարհիկ զարթոնքը (19-20-րդ դարեր): Մինչև 19-րդ դարը չի փոխվում ուսուցման լեզուն՝ գրաբարը, ուսուցման մեթոդը (սերտումը) և ուսուցման բովանդակությունը:

Աշխարհաբար լեզուն 19-րդ դարի երկրորդ և 20-րդ դարի առաջին կեսին կենդանություն հաղորդեց նաև դպրոցին: Նոր Ջուղայի, Զմյուռնիայի, Թիֆլիսի, Նոր Նախիջևանի և մի քանի այլ դպրոցներում, շնորհիվ Աբովյանի, Աղայանի, Մամուրյանի, Զորայանի, Լիսիցյանի և այլոց, սկսեց զարգանալ հայ մանկավարժությունը: Մեթոդի առումով, գաղափարների առաջադիմության առումով, մեր ամենամեծ մանկավարժը Աղայանն է, ամենաերևելի դպրոցը՝ Ներսիսյան դպրոցը: Այս շրջանում ևս կրթությունը շարունակող հայ դպրոցի լավագույն սաները օտար լեզուն՝ ֆրանսերենը, անգլերենը, գերմաներենը, ռուսերենը, սովորում են արտասահմանում: Խորհրդահայ դպրոցը, որն իհարկե անուրանալի դեր կատարեց համատարած գրագիտության ապահովման առումով, մանկավարժական իր արժեքները չստեղծեց: Անզոր լինելով շարունակելու Ներսիսյան դպրոցի լավագույն փորձը՝ նա եղավ ու մնաց խորհրդային դպրոցի ամենավատ պատճեններից մեկը: Խորհրդային դոգման և ռեժիմի պարտադրած կեղծ արժեքները դպրոցը պահեցին մի տեսակ ձեռագրի փուլում: Խորհրդահայ դպրոցը ոչ միայն չկարողացավ օտար լեզու սովորեցնել, այլև մինչև մեր օրերը հետևողական եղավ իր ջանքերի մեջ՝ ցույց տալով, թե ինչպես չի կարելի օտար լեզու սովորեցնել: Ռուսաց լեզուն դարձավ երկրորդ մայրենին, խորհրդային բանակը՝ ռուսերենի ժողովրդականացման դպրոցը, իսկ ռուսաց լեզվի ուսուցմամբ հայ դպրոցը դարձավ խորհրդային հայտնի բարձրագույն մասնագիտական հաստատությունների կադրեր պատրաստող դարբնոցը: Խորհրդային դպրոցը անգիրի դպրոց էր: Կարևոր չէ՝ որն է ուսուցվող առարկան՝ մայրենի լեզվի քերականությունը, աշխարհագրությունը, բնագիտությունը, թե մաթեմատիկան: Անգիրի դպրոցում, որտեղ գլխավորը մտապահումն է ու վերարտադրումը, ընթերցանությունը չդարձավ մեթոդ, մտածող մարդու համար՝ քննարկման-ճանաչման միջոց: 1950-90-ական թվականներին գրատպությունը, շնորհիվ տնտեսության բուռն զարգացման, որը իր հետ բերեց սոցիալական որոշակի ապահովություն և դարձավ գիտելիքի պատվիրատու, ֆորմալ կրթության զարգացած ցանցով՝ պարտադիր հանրակրթության և մասնագիտական մատչելի կրթության բարձր ցենզ ապահովեց, կուլտուրականացրեց հայ հասարակությունը, ընտանեկան և հանրային գրադարանների կազմակերպած ընթերցանությունը ապահովեց ընդհանուր զարգացման մինչ այդ չտեսնված մակարդակ: Մենք 1991թ. անկախությամբ պիտի թևակոխեինք մեդիագրի և մեդիակրթության փուլ, որի մեթոդը ուսումնասիրությունը, ստեղծականությունն է և անհապաղ, անընդհատ ուսումը՝ ինքնակրթության (ոչ ֆորմալ կրթության) անսպառ հնարավորություններով, շնորհիվ ինտերնետի, կրթություն ողջ կյանքում ու առանց սահմանների: Հայաստանը պիտի վերածված լիներ ոչ թե խորհրդային շրջանի «թանգարանի՝ բաց երկնքի տակ», որը չգիտեմ՝ հնարավոր էր իրագործել, թե ոչ, այլ գրադարանի, որտեղ բոլորն են սովորում ու սովորեցնում, շնորհիվ մեդիայի: Ավաղ, արդեն քսան տարի իներցիայով շարունակվում է խորհրդային դպրոցը՝ անգիրի և կեղծիքի պատրանքազերծությունից ուժասպառ և ոգեղենությունից

զրկված: Եվ ահա հերթական տեսարանը՝ կապված ուսուցման լեզվի փոփոխման այս նախագծի հետ: Ամեն ինչ շատ պարզ է: Չե՞ս պահել ինքնիշխան երկրի ազատ մարդու մայրենի դպրոցը, պահիր օտար լեզվի դպրոց: Մեր հասարակության մեջ օտար լեզվի ուսուցմամբ դպրոցը նոր կրթական տեխնոլոգիա չի դառնալու, ոչ միայն չի ուժեղացնելու հայերեն լեզվով ուսուցմամբ հանրակրթական դպրոցը, այլև որպես ոչ իրավական միջամտություն՝ հայաստանցու գիտակցության մեջ այն հաստատելու է որպես խեղճուկրակների դպրոց:

Արձանագրենք: Ռուսաց լեզուն մեզանում համառորեն չի ընկալվում որպես օտար լեզու: Հայաստանում օտարալեզու (ռուսերեն) ուսուցում իրականացվում է հանրապետության 40 դպրոցներում: Դրանք խորհրդահայ շրջանի ռուսական դպրոցներն են, որոնք 1991-1993 թթ ոչ թե փակվեցին, այլ դարձան փաստացի երկլեզու՝ ունեն և՛ հայերեն, և՛ ռուսերեն լեզուներով ուսուցման դասարաններ: Վերջիններս կան և գործում են հակառակ Լեզվի մասին ՀՀ օրենքի: 2010-2011 ուսումնական տարվա՝ ՀՀ ԿԳ նախարարի հաստատած ուսումնական պլանով նախատեսված է ռուսաց լեզվի խորացված ուսուցում՝ սկսած 1-ին դասարանից: Հասկանալի կլիներ, եթե այս խորացված ուսուցումը կոչվեր «օտար լեզվի»՝ դպրոցի ընտրությամբ՝ անգլերենի, ռուսերենի, գերմաներենի, ֆրանսերենի, իսպաներենի, արաբերենի, վրացերենի և այլն: ԿԳ նախարարի հաստատած ուսումնական պլաններով նախատեսված է նաև ազգային փոքրամասնության լեզվով (դպրոցի) գործունեությունը՝ որպես պետական դպրոց: Այս դեպքում էլ ռուսերենը չի դիտվում որպես այդպիսին: Եվ ահա առաջանում է էլիտար օտարալեզու դպրոցը՝ որպես ուսուցման նոր տիպ: Այս ոչ իրավական իրականությունը համադրեք ՀՀ Սահմանադրությամբ հռչակված իրավական հանրապետության պահանջի հետ: Կա պետության դպրոցը, որը նկատի ունի և՛ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունը, և՛ ոչ պետականը: Լեզվի մասին օրենքի առաջ սրանք հավասար են՝ անկախ իրենց իրավակազմակերպական վիճակից: Հակառակ դեպքում ստացվում է, որ լեզվի մասին օրենքի պահանջները այլ են պետական կազմակերպության և այլ ոչ պետական (մասնավոր) կազմակերպության համար, որով խախտվում է անձերի իրավահավասարությունը: Այս անհավասարությունը կամ անարդարությունն է հայաստանյան հասարակության աքիլլեսյան գարշապարը:

Արձանագրենք: Հանրակրթական համակարգում (իր մանկապարտեզով, հիմնական ու ավագ դպրոցով) ուսուցման լեզուն որևէ աճպարարությամբ անհնար է փոխել՝ առանց դիպչելու 1991թ. սեպտեմբերին Անկախության հանրաքվեով հռչակված մեր քաղաքական անկախությանը, առանց պետական լեզվի գործածման և հանրակրթության կազմակերպման մեջ խտրության և անհավասարության: Ահա ինչու, ուսուցման լեզվին ուղղված օրենսդրական որևէ նախաձեռնություն պիտի խաղար այն դերը, որ խաղաց: Սրանից ավելին չարից է: Օր առաջ պիտի հանվի այս նախաձեռնությունը՝ լայն տեղ բացելով հասարակության բոլոր շերտերին ու խմբերին ուղղված և նրանց ամենագործուն մասնակցությամբ քննարկման համար: Նոր Հայաստան ու կրթության՝ մեդիակրթության, սկզբունքորեն նոր կազմակերպում, որտեղ արդյունավետ օտար լեզուն մեդիակրթության կարևոր գործիքներից է և դրա շոշափելի արդյունքը: Ահա, այս է մեր «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի այլընտրանքը գործող պետական դպրոցին: Կրթահամալիրի փորձն ու ձեռբերումները մենք պարտավոր ենք փոխանցել և անհոգնել փոխանցում ենք: Համեցեք:

Համաձա՞յն եք իմ պնդումների հետ

2012-2013-ի մեր կրթահամալիրային ռազմավարության մեջ գլխավորը բոլորին համախմբելն է ընդհանուր նպատակների շուրջ:

Մեր կրթահամալիրում յուրաքանչյուրին հնարավորություն է տրվում սովորելու, ղեկավարելու և հաջողության հասնելու:

Սահմանափակ նյութական միջոցներ ունենալով՝ մեդիայի խելամիտ ու ամբողջական օգտագործման շնորհիվ ենք կարողացել հեղինակային կրթական ծրագիրն առաջ մղել:

Մենք ազատվում ենք հիերարխիայից և հաղորդակցություն հաստատում կրթահամալիրի բոլոր աշխատողների և սովորողների միջև:

Դավիթի հետ շատ եմ շփվում, իմ տեքստում դա կերևա. անմիջական ու անցումները՝ շատ: Ինչպես Դավիթը՝ ես սիրում եմ այն արդյունքը, որ ոչ միայն ակնհայտ է, այլև այն կարելի է շոշափել, անգամ բերան տանել: Անցնող ուսումնական տարվա մեջ մեր կրթական առօրյայում հեղինակային կրթական հայտնված-ակնհայտ ու շոշափելի ձեռքբերումներ թվարկեմ-առանձնացնեմ, որոնք կրթական նոր բովանդակություն են, ուսուցողական նոր միջավայր են, ուսուցման կազմակերպման նոր ձևեր են, մեր փորձի փոխանցման <u>բաց համակարգի</u> տարրեր են:

Որպես 2012-2013 ուստարվա կարևոր արդյունք՝ և՛ բովանդակության, և՛ կազմակերպման առումով, առանձնանում է երաժշտությունը: Ես հավատում եմ բարձր երաժշտության, որ հայոց համար Կոմիտասն է, մաքրագործող՝ դիվահալած զորությանը: Սաղմոսյան հասարակ հովիվ Դավիթը իր նվագարանի մեղեդիներով հալածում է Սավուղ թագավորին տանջող չար ոգուն և հանգստություն պատճառում նրան. սա ինձ համար ոչ միայն հուզիչ է որպես չորս հազարամյա հարազատ ու արժանահավատ պատմություն, այլև հեղինակային կրթական ծրագրում երաժշտության կարևորության չափն է որոշում:

Երաժշտության դասավանդման ամբողջականության վերականգնումը՝ սկսած 2 տարեկանից մինչև ավարտական 12-րդ դասարան ու քոլեջի ավարտական կուրս, ուսուցչաց երգչախմբի գործունեության կազմակերպումը՝ որպես դիվահալած յուրաքանչյուրիս համար, mskh.am-ում ձայնադարանի կարևորումը, «Հանրակրթական համերգ» ուսումնական նախագծի՝ Մերի Առաքելյանի բոլոր ջանքերին և նախաձեռնություններին իմ պաշտպանությունը, մեդիայով երաժշտական հանրակրթության տեղափոխումը ընտանիք ու սովորողի կյանք. Դավիթ Բլեյանի օրինակով ու միջոցով վաղ տարիքից երաժշտության կարևորության՝ բացառիկության փոխանցումը, կրթահամալիրում երաժշտության դաստիարակ-ուսուցիչների դերի կարևորումն ու անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովումը, լրացուցիչ երաժշտական կրթության կազմակերպման Սվետա Ճաղարյանի և Լիլիթ Առաքելյանի բոլոր նախաձեռնություններին կոնկրետ աջակցությունը՝ ո՞րն է չափազանցված կամ անտեղի: Այս ջանքերի պսակ և արդյունքն են «Անտիվիրուս Կոմիտասը», որ այս մայիսի 31-ին մարմարյա սրահում կհավաքի մեր բոլոր սաներին և

ուսուցիչներին երրորդ անգամ, մայիսի 25-ից մեկնարկող «Կենսամշակութային արշավը», որ կդառնա մեր տոնացույցի մասը: Այստեղից և մաեստրո Հարություն Թոփիկյանի մուտքը հեղինակային մանկավարժություն՝ որպես 2012-2013 ուստարվա կաղրային էական համալրում:

Հաստատուն, մեր ուսումնական կյանքը կարգավորող-թելադրող, ուստարվա սկզբին հրապարակված ուսումնական օրացույց-տոնացույց ունենք, որ մեր ուսումնական առօրյան ոչ միայն միասնականացնում է, այլև ռիտուալացնում և ավանդույթի ուժ հաղորդում մեր ուսումնական ջանքերին, կամրջում ընտանիք-դպրոց-բարեկամ, անցյալն ու այս օրը:

Առավոտյան ընդհանուր պարապմունքները կրթահամալիրի ութ հանրակրթական դպրոցներում (շաբաթվա բոլոր օրերին, միաժամանակ, նույն կարգի մեջ, 9.00-9.15), մեդիաուրբաթները (յուրաքանչյուր ուրբաթ՝ ժամը 15.15-16.00, Մարմարյա սրահում) մանկավարժական աշխատողների ամենշաբաթյա սեմինար պարապմունքները (ամեն երկուշաբթի՝ ժամը 15.15-16.15), կրթահամալիրի մասնաժողովի բաց քննարկումները, պարբերական առցանց քննարկումները, մանկավարժական աշխատողների ամեն ամսվա ընդհանուր ժողովները, աշնանային, ձմեռային, գարնանային և ամառային դպրոցները մեզնից յուրաքանչյուրի աշխատաժամանակն են, կայուն են, կան: 2012-2013 ուստարվա ուսումնահետազոտական ճամբարների, ուսումնահայրենագիտական ճամփորդությունների, ստեղծագործական բաց պարապմունքերի (պլեներների) ուսումնական ամենատարբեր նախագծերի քանակն ու նրանցում ընդգրկված սովորողների թիվը հաստատում են, որ մեզանում ուսումնական պարապմունքի տեսականին ցուցամոլություն չէ. փաստ է: Ես նայեցի Ավագ դպրոց-վարժարանում առցանց ուսուցման կազմակերպման հաճախականությունը, այն ևս վաղուց էկզոտիկա չէ, առօրյա է: Զանգի մասին ո՞վ է հիշում: Պահակի, հերթապահի, մուտքի փակ դռան մասին ևս մոռացել ենք... Ես արձանագրում եմ բաց, մոբիլ, կանխատեսելի հեղինակային կրթական համակարգի դինամիկ զարգացումը:

Կրթական միջավայրն ավելի ու ավելի բաց է դառնում թե՛ ֆիզիկական, թե՛ մեդիաաշխարհում: Դպրոցական շենքն առանց ներքին պատերի՝ գրավչությամբ արագացնում է խուլ պատերի անհետացումը. աղմուկը դրանից պակասում է, չի ավելանում, ուշադրության շեղման պատրվակն այլևս պաշտպաններ չունի... Մեկ-երկու ամառ, և մենք կունենանք մինչև վերջ թափանցիկ ամբողջական միջավայր՝ հեռուստատաղավարային (սրահային) ուսուցում, սովորողը և ուսուցիչը հրաժեշտ կտան երկրորդ վարքին (փակ տարածքի համար), կդառնան միվարքանի: Հետևեք միջին դպրոցի մոդել-հարկաբաժնի զարգացմանը: Մարկոսյան Վիկան, Ղազարյան Հայկը, Արսենյան Սոնան, Աթոյան Քրիստինեն... կարելի է և շարունակել, ֆորմալ-խմբային կրթությանը հակադրում են ներքին պահանջի պատվերի արդյունավետ կազմակերպումը՝ ինքնակրթության-ինքնուսուցման համակարգչային ծրագրերի և դասընթացների գրագետ գործածմամբ... Սովորողի ընտրության ազատության հարգումը 2013-2014 ուստարում կպահանջի նոր որակի ու տեսակի ուսուցիչ, ուսուցման այլ կազմակերպում... Ինքնակարգավորումը՝ որպես հավաքանիի զարգացման գլխավոր գործոն, վերջապես տեսանելի ենք դարձնում ինքներս մեզ համար: Ու տես, մոռացել ենք ընդվզել:

Թե ինչ եղավ, որ կրթահամալիրի բոլոր տարածքներից անհետացան ասֆալտն ու եզրաքարը (բորդյուրը). պարտիզպանության որակի ու ծավալի այնպիսի պատվեր առաջացավ, որ ուսումնական նոր բովանդակություն է բերում՝ իր ուսումնական նախագծերով, շրջակա աշխարհի նկատմամբ ակտիվ ու էսթետիկ վերաբերմունքով:

Ավելի մոբիլ, ավելի բաց, ստեղծական, ավելի խիզախ ու համերաշխ, իրար զգում ենք, ուշադիր ենք և ընդառաջող-աջակցող, գործընկերության միջավայր կա՝ փոխօգնության, փոխլրացման առավելությունների գործածումը ևս հազվադեպ չէ... Գեղարվեստի դպրոցի 15 հոգանոց խմբին 5-օրյա Շուշվա պլեներին պատրաստվելու համար 3 օր ժամանակ կար, և, տեսեք, ստացվեց: Շաբաթներ առաջ հանրապետական կրթական էքսպոյին մասնակցելու որոշումից հետո կրթահամալիրի տաղավարի ձևավորմանն ընդամենը կես օր ժամանակ կար. և Զառա Առաքելյանն իր ընկերների հետ կարողացավ: 5-6-րդ դասարանցիների խումբը ոչ միայն հասավ Շուշի, այլև վերադարձավ Երևան Քելբաջարով, առանց օֆ քաշելու, տրտունջի՝ իրենց հետ բերելով կրթահամալիրի մարզադաշտի կառուցման ավետիսը: Էկոտուր 2013-ի 80-ի չափ հյուրերի ընդունում-տեղավորումը, նրանց համար անհատական ծրագրերի իրականացումը ոչ ոք չնկատեց, բացի մասնակիցներից՝ էս ոնց եք կարողանում առանց լարվելու, ձեզուձեզ... 9-րդ դասարանցի Զիմենկո Դիանան այս ուստարում երեք անգամ իր ֆոտոապարատով վերադարձավ Շուշի. ավերակները շշնջում են, հմայում են... Եկեք, արդար լինելու համար այս շարքը շարունակեք ձեր իմացած-կարևորած օրինակներով: Ի՞նչ տպավորիչ «քոմենթաշար» կդառնա... Ես սկսեմ՝ «բարձունքների նվաճում» և՛ սեպտեմբերյան, և՛ առավել ևս մայիսյան նախագծերի համար ուշքս գնում է:

Հախուռն գործունեությունը, որ ինձ խորթ չի եղել, երբեմն անգամ վնասներ բերել ինձ էլ, կրթահամալիրին էլ, հաղթահարվե՞լ է: Աշխատանքի թափը թուլացնելու (մեզ հանգիստ թող) մասին չէ խոսքը: Հարցնում եմ. աշխատելու թափն ուղղվա՞ծ է ընդհանուրի առաջ դրված նպատակներին, արդյունավե՞տ են ծախսվել մեր միջոցները: Կարևոր է, որ կրթահամալիրի յուրաքանչյուր աշխատող պատասխանի: Կան կոնկրետ-իրավական-շոշափելի ձևակերպումներ՝ կրթահամալիրի 2013-2016թթ Զարգացման ծրագրի հիմնադրույթները: Համեցեք՝ կրթահամալիրի 7 հոմանիշները, կրթահամալիրի 7 որակները, կրթահամալիրում կառուցվող 7 հրաշալիքները: Անձանձիր, անդադրում և նպատակադրվա՞ծ են եղել մեր ջանքերը, մեր նյութական ու մարդկային ներդրումները 2012-2013 ուստարում: Կա՞ բարեխիղճ հետևողականությունը՝ որպես ձեռքբերում: Համակարգված-հետևողական տեքստի պահանջ ներկայացողներին օգտակար կլինեն «Դպիրի» 2012-13-ի իմ հրապարակումները:

Դպիր 68 – Խիզախելու կարողություն

Դպիր 68- Ավերակների հաղթահարում

Դպիր 67- Անգիրի դպրոցի մեր այլընտրանքը

Դպիր 65- Դիջին ու դդումը հանդիպեցին ստուգատեսում

Դպիր 63- Ինչպես սկսվեց ամեն ինչ

Դպիր 61- Շշմելու ուսումնական աշուն, Աշուն է եկել մեր բակը:

Նախաձեռնողականությունը ավելի ու ավելի մեծ կշիռ է ստանում

Կրթահամալիրը Մայքրոսոֆթի «Գործընկեր ուսման ոլորտում» ծրագրին ներկայացնում է կրթահամալիրի տնօրենը:

Կրթահամալիրի՝ առաջիկա 3-5 տարիների հեռանկարը...

Հեռանկարը որոշված է կրթահամալիրի 2013-2016 թթ զարգացման ծրագրով: Հեղինակային կրթական ծրագիրը՝ «Ստեղծողի դպրոցը»՝ որպես սովորողների, նրանց ուսուցիչների ու ծնողների, մեր գործընկերների կողմից մշակվող և իրականացվող ամբողջական ուսումնական նախագիծ, անընդհատ կնորացնի իր բովանդակությունը, կունենա ավելի ու ավելի բաց ու հետաքրքիր միջավայր. մոբիլությունը և առաքելական ոգին կապահովեն դրա տարածումը:

Ի՞նչ նորարարական գործունեություն է ընթանում կրթահամալիում այսօր:

Համեցեք: Նախագծերով ուսուցում՝ երբ ուսուցման վայրն է ոչ միայն կրթահամալիրը, այլ նաև համացանցը, թանգարանը, ցուցասրահը, համերգային դահլիճը, գիտական լաբորատորիան, բնության, պատմության հուշարձանը, ընտանիքը, փողոցը... Ուսումնական պարապմունքի կազմակերպման ձև դառնում են նաև պլեները, ճամբարը, հավաքը, ստուգատեսը, ցուցահանդեսը, համերգը... Ուսուցանող են դառնում նաև տարատարիք սովորողները, ամենատարբեր մասնագետները, ծնողները.... Ուսուցման շատ կարևոր ձև է դառնում ինքնակրթությունը: Ուսուցման արդյունքը՝ սովորողի անընդհատ փոխվող կյանքը:

Ի՞նչ ազդեցություն է ունենում այդ նշված նորարարական գործունեությունը համայնքի համար:

Համայնքը, ինչպես կրթահամալիրը, դառնում է ավելի համերաշխ, ներառող, տնտեսող-պահպանող, զարգացող-զարգացնող, ավելի ունակ ու նախաձեռնող:

Ի՞նչ նորարարություն է պլանավորվում առաջիկա 2 տարիների համար: Դրա կապը կրթահամալիրի հեռանկարի հետ…

Օրինակ՝ կգործարկվի արշավախմբային-դաշտային ճամբարը, որը թույլ կտա շուրջտարյա շրջիկ ստեղծագործական հավաքներ կազմակերպել հանրապետության մարզերում՝ ներգրավվելով տվյալ համայնքի սովորողներին և ուսուցիչներին և այլ մասնագետներին: Ուսուցման անհատականացումը և ուսուցման թվային աշխարհի ամբողջական գործարկումը կրթահամալիրը կդարձնեն ավելի մոբիլ:

Ինչպե՞ս է ձեր դպրոցն ազդել ուրիշ դպրոցների, տեղական համայնքների վրա՝ ձեր երկրում կամ աշխարհում:

Հեղինակային կրթական ծրագրերի մշակման, իրագործման և տարածման բաց համակարգով՝ բազմալեզու և ճանաչված կայք, հանրապետության ուսուցիչների

վերապատրաստումներ, կրթական փոխանակումներ՝ հարմար կացարաններով, ամենամյա բաց ստուգատեսներ, ուսումնական ճամբարներ և բաց ստեղծագործական հավաքներ... Կրթական փոխանակումների աշխարհագրությունն ընդարձակվում է՝ Վրաստան, Արցախ, Արգենտինա, Թուրքիա: Ավելի ու ավելի հաճախ դրանք դառնում են խմբային-անհատական նախաձեռնություններ՝ որպես ուսումնական նախագծեր:

Որպես հաստատության ղեկավար՝ ո՞րն եք համարում Ձեր մասնակցությունը նորարարական գործունեությանը:

Ես ավելի ու ավելի շատ եմ գործում որպես ուսումնական նախագծերի համակարգող՝ բաշխելով կրթահամալիրի բյուջետային և ոչ բյուջետային դրամական միջոցները՝ որպես արդարացի և նպատակային ներդրումներ առաջարկվող ուսումնական նախագծերում՝ 50-50 հարաբերության սկզբունքով:

Ձեր կրթահամալիրի մանկավարժական անձնակազմի ո՞ր տոկոսն է առաջնորդ լինելու իր կարողությունը զարգացնում, և ի՞նչ աջակցություն են նրանք ստանում:

Ուսումնական նախագծերի մշակումն ու իրագործումը խթանում են, պահանջում են, որ յուրաքանչյուր ուսուցիչ՝ որպես դրա համակարգող կամ ղեկավար դրսևորի լիդերի իր կարողությունները, խրախուսվում է թիմային-խմբային գործունեությունը, պլանավորումը կատարվում է նախաձեռնության հաջողության զարգացման սկզբունքով: Ուսումնական նախագիծն անհնարին է իրականացնել առանց նոր գործընկերների, նյութական միջոցների ներգրավման: Սպառող-պասիվ, սոսկ կատարող ուսուցիչն իր տեղը ստիպված է զիջել:

Կարո՞ղ եք նախաձեռնության մի օրինակ բերել, որը չի պարտադրվել, բայց ձեր ուսուցիչները ներգրավվել են այդ գործում:

«Մշակույթ անիվների վրա», «Դասարան անիվների վրա», «Ուսումնական ամառ» նախագծերի իրականացումը, որոնց արդյունքում մենք ունենք սովորողների և ուսուցչական երգչախմբեր, երևանյան ամառային ճամբարներ, կրթական ընդարձակվող փոխանակումներ:

Ինչպե՞ս եք խթանում սովորողների՝ նշմարվող լիդերական կարողությունները:

Կենսական խնդիրների լուծում ոչ թե երեխայի, սովորողի համար, այլ սովորողի հետ միասին, սովորողի սպոնտան դրսևորումների և ուսուցչի նախաձեռնությունների օպերատիվ արձագանքում: Ուսուցչի և սովորողի ուսումնական գործունեության գնահատման մեջ նախաձեռնողականությունը ավելի ու ավելի մեծ կշիռ է ստանում:

Ինչի՞ հույս է փայփայում կրթահամալիրը՝ ձեռք բերելով Մայքրոսոֆթի մենթոր դպրոցի կարգավիճակ:

Հեղինակային կրթական ծրագրերի մշակման-փոխանցման նոր պատվիրատուներ ու գործընկերներ, մեր մեդիակրթությունը արդիականացնելու, կատարողականության և իրացվելիության նոր մակարդակ, ուսումնական գործունեության գնահատման միջազգային չափանիշներ, կրթական նոր փոխանակումներ նոր ունենալու հնարավորություն:

Մեր դպրոցական համակարգի դժբախտությունը փակ լինելն է[1]

- Պարոն Բլեյան, վերջին երկու ամիսների ընթացքում ԿԳՆ-ն դպրոցների տնօրենների հավաս-տագրեր ստանալու մրցույթ է անցկացնում՝ երկու փուլով: Ինչպե՞ս կգնահատեք, ո՞րն է դրա արդյունավետությունը:

- Եթե մի նախադասությամբ ասեմ՝ «անգիրի դպրոցը», իր պահանջին համապատասխանող տնօրեն կունենա: Ընդունենք, ամեն ինչ արվի շատ հետևողական և ազնիվ: Դպրոցի տնօրեն կկարողանան աշխատել այն մարդիկ, ովքեր կարող են ինչ-որ ժամանակում անգիր անել, մտապահել և բարեխիղճ վերարտադրել մեծ քանակությամբ իրավական տեղեկություններ: Սովորողների գիտելիքների թեստավորման կենտրոնին (ԳԹԿ) զուգահեռ, առաջանում է հանրակրթական դպրոցների, հետագայում գուցե և այլ կրթական հաստատությունների ղեկավարների գիտելիքների ստուգման համակարգ, որով զբաղված է Կրթության և գիտության նախարարությունը: Վերջին շրջանում կրթության մասին հիմնական խոսակցությունները սրա շուրջ են: Եթե սրան ավելացնենք նաև ուսուցիչների ատեստավորման (գիտելիքների ստուգման) ստեղծվող համակարգը, Կրթության նախարարության պետական տեսչության և լիցենզավորման գործակալության՝ ստուգման ընդարձակվող ծավալն ու գործառույթները, ապա կրթության նախարարությունն իր ողջ ներուժը սպառում է համակարգը վերից վար քննելու, հսկելու վրա: Ի՞նչ կշահեն սրանից բաց հասարակությունը և զարգացող անհատը, որպես նոր կրթության պատվիրատու... Ի՞նչ ներարկում կունենա սրանից այս նոր կրթական պատվերի թելադրանքով գործող ուսումնական հաստատությունը... Բարեփոխումների այս փուլում, երբ առաջին պլան են մղվում բովանդակային-կառուցվածքային փոփոխությունները (առաջանում են հիմնական, ավագ դպրոցների ամբողջական և ցանցեր), ենթադրվում է, որ հասարակությունը և կրթական համակարգը կարիք ունեն նոր որակի կրթության կազմակերպիչների՝ ընդունակ, նախաձեռնող, համարձակ ծրագիր կրող և իրականացնող մենեջերների: Այս ճանապարհո՞վ են գալու: Արդեն հավաստագիր ստացած անձինք այսպիսի՞ն են:

- Ստացվում է՝ սա աննպատակ և անարդյունավե՞տ քաղաքականություն է:

- Ի՞նչ խնդիր ես դնում, ի՞նչ խնդիր ես լուծում, արդյունքում ի՞նչ ես ուզում ունենալ: Ես պնդում եմ, որ հանրակրթական համակարգը իր միջոցներով՝ նախևառաջ ղեկավար, կադրային բազայով, անկարող է լուծել մոտ ապագայի խնդիրները և շարունակում է զբաղվել ինքն իրեն վերարտադրելով, զարգացման սահմանափակ, նյութական և մտավոր ռեսուրսները մսխելով գոյապահպանության համար դաժան պայքարում: Այս ճանապարհով հանրակրթության լիդերների նոր որակ, ներարկում չենք ունենա: Հանրակրթության մասին օրենքով արդեն դպրոցի ղեկավարին ներկայացվում են պահանջներ՝ բարձրագույն կրթություն, վերջին տասը տարին յոթ տարվա գիտամանկավարժական աշխատանքի անընդհատ փորձ, այսինքն՝ խիստ պահանջեր են դրված: Հիմա եթե այս քննական համակարգով բարեխիղճ, անգիր անողը գալիս, անցնում է մրցույթը, ստանում ղեկավարման հավաստագիր, հետո էլ դպրոցական խորհրդի կողմից ընտրվում տնօրեն հինգ տարի ժամկետով, ի՞նչ է փոխվելու:

[1] Սիրանույշ Պապյան, Ժամանակ, 02.04.2011թ.

- Շատ տնօրեններ դժգոհում են բանավոր փուլից: Շատերն էլ փաստում են, որ այս ամենը կոռուպցիայի նոր աղբյուր է, քանի որ գիտենք, թե հիմա տնօրեն դառնալու համար ինչքան գումար է անհրաժեշտ:

- Հայաստանյան հասարակության զարգացման այս փուլում՝ անուժ, վերից վար կոռումպացված, շփոթված և անհեռանկար, բոլոր տեսակի քննությունների ճանապարհը շեղող եմ համարում, որով առաջին հերթին կարող, անկախ անհատների ճանապարհն է փակվում: Այն մարդու, ում դու քո քաղաքականության միջոցով պիտի փնտրեիր, գտնեիր, հարկ եղած դեպքում համոզեիր, պայմաններ ստեղծեիր դպրոց բերելու համար, ղեկավարի կամ ուսուցչի տեսքով: Իբր կարող մարդիկ այնքան շատ են. որ այսպիսի քննությունների միջոցով ընտրություն ես կատարում: Բայց այս ձևը «անգիրի դպրոցի» գործող տնօոենին ու հավակնոտ ուսուցչին, ծնին լավ դաս է: Իրենց գործն էին դարձրել երեխաներին անընդհատ քննելը, անգիրը ստուգելը, մտապահելը, ստուգողական հանձնարարություններ տալը առաջին դասարանից մինչև բուհի ընդունելության քննություններ: Դե, հիմա եկեք ինքներդ քննվեք, նույն սթրեսն ապրեք, նույն ձախողումը: Կրթության բարեփոխման խնդիրը պետք է դառնա սովորողի, ուսուցչի, տնօրենի կարողությունների բացահայտումը, դրսևորումը և զարգացումը բոլոր առումներով: Եվ մեդիան ստեղծագործող անհատի ձեռքին կգործի որպես ինքնակրթության հզոր միջոց:

- Իսկ անհատն այսօր այդպիսի խնդիր դնո՞ւմ է:

- Հենց անհատն է դնում: Շատ փոփոխվող է այն իրականությունը, որում մենք ապրում Ենք: Այս իրականության մեջ մեծ երևակայություն է պետք հավատալու համար, որ կարելի է հաղթահարել այս փակուղին: Եվ կրթությունն ինքը պետք է խթանի մարդու երևակայության զարգացումը, կարող և ակտիվ դարձնի իր կյանքի բարդացող ու փոփոխվող խնդիրները լուծելու: Մեր ժամանակին անհրաժեշտ են ամբողջական, ակտիվ ու ստեղծագործ անհատներ; Ահա խնդիր, որի լուծմամբ մենք այսօր զբաղված ենք կրթահամալիրում:

- Աշակերտ-մանկավարժ հարաբերությունների ճանապարհին ի՞նչ օրենքներ եք մշակում: youtube-ում հայտնված ծեծող մանկավարժները հենց երևակայություն չունենալու արդյո՞ւնք են:

- Թվում է՝ մեդիան մեղավոր էր, բայց մեդիան բացեց, վարագույրը բացվեց, ասաց՝ տեսեք իրականությունը: Ի՞նչ է՝ չգիտե՞նք ինչ հասարակությունում ենք ապրում, ի՞նչ է՝ դպրոցն այդ հասարակության մասը չէ՞: youtube-ում հայտնվում են ընդամենը դեպքեր, իրականությունը շատ ավելի տխուր է, մռայլ: Մեդիան սովորողի, ուսուցչի և ծնողի ձեռքին կարող է լուսավորել դպրոցական հասարակության ստվերը, դարձնել այն բաց համայնք: Իսկ մեր դպրոցական համակարգի դժբախտությունը փակ լինելն է: Տնօրենին թվում է, թե դպրոցն իր տնամերձն է, որ իշխանությունն իրեն է շնորհել: Ինքը հասարակական պատվերը, հասարակական հսկողությունը մինչև վերջ չի էլ ընդունում:

- Տեսեք, նույն հասարակական դժգոհությունը եղավ մարտի 8-ից առաջ, երբ վեցերորդ դասարանցիներից հավաքեցին 8000 դրամ, հստակ դրվեց, նախարարությանը տեղեկացրին, եղավ հասարակական ճնշում, բայց սայլը տեղից շարժվեց:

- Ամեն անգամ ինձ՝ որպես կրթահամալիրի տնօրեն, դժվար է կոնկրետ փաստերից խոսել. իմ կարգավիճակն ինձ դա թույլ չի տալիս: Ինչո՞ւ եք շրջանցում անշրջանցելին: Ուսուցիչը նախևառաջ ինքնապահպանության սոցիալական խնդիր է լուծում: Ես չեմ պաշտպանում, բայց 80.000 դրամ ստացող ուսուցչին՝ առանց հեռանկարի, այս գնաճի պայմաններում՝ առանց կացարանի, ինչի՞ եք մղում կամ ի՞նչ եք պահանջում, ո՞ր իրավունքով: Հասարակական կյանքը՝ դպրոցի և ուսուցչի գլխավոր պատվիրատուն, պիտի փոխվի: Ուսուցիչը հասարակական-իշխանական մշտական և կոնկրետ աջակցության կարիք ունի: Կոնկրետ օրինակով ասեմ: Քաղաքապետարանի վերջին որոշումը՝ մանկապարտեզներն անվճար դարձնելու մասին: Խորհրդային շրջանում անգամ ծնողների մեծ մասը օրինական վճարում էր երեխայի մանկապարտեզի սննդի համար: Տգեղ սոցիալիզմը, երբ դայակը 35 հազար դրամ, իսկ դաստիարակը լրիվ օրվա համար առավելագույնը 65000 դրամ աշխատավարձ է ստանում, ի՞նչ բացատրություն ունի, ո՞մ շահերից է բխում: Եթե կան միջոցներ, գոնե կրկնապատկեք դայակի, դաստիարակի, վարիչի աշխատավարձը, որ նրանց սոցիալական կախվածությունը ծնողից մի փոքր մեղմանա, որ ավելի արդար համայնք դառնա նախադպրոցական հաստատությունը:

Անգիրի դպրոցի մեր այլընտրանքը[2]

Ուզում եմ խոսել տպագրի և մեդիագրի հանրակրթական՝ պետական թե մասնավոր, դպրոցների մասին: Ի՞նչ են գրում, կարդում տպագրի դպրոցի սովորողը, ուսուցիչը: Սովորողի կարդացածը հիմնական, միջնակարգ կրթության առարկայական ծրագրերով որոշված պարտադիր ընթերցանության նյութն է, որն արտացոլված է տվյալ առարկայի դասագրքում: Դասագիրքը, որից այսօր միայն ծույլը չի դժգոհում, պետական թե դրա այլընտրանքի ձևով, ներկայանում է որպես մեկ առարկա – մեկ գիրք: Լավն է համարվում տպագրի այն դպրոցը, որ ապահովում է տրվածի յուրացումը (սերտումը), այն սովորողը՝ ով անգիր է անում: Այստեղից էլ՝ տպագրի (անգիրի, զուբրիտի) դպրոցի պահանջով ծնված առարկայական շտեմարանները՝ որպես միջին և ավագ դպրոցների դասագրքերի «համահավաք»: Ի՜նչ տխուր է...

Ինչպե՞ս պիտի կարդա սովորողը տպագիր նյութը: Մեթոդը, որն է առարկայական շտեմարանը, ապահովում է, որ սովորողը մտապահի և վերարտադրի նյութը թեսթերի պահանջներով առավելագույն միավոր հավաքելու համար: Զրո ընտրություն, նախաձեռնողականություն, ստեղծականություն և անհատականացում. Հիերարխիկ հնազանդություն, հնազանդություն և հնազանդություն:

Ի՞նչ պիտի կարդա-կարդում է այս դպրոցի ուսուցիչը: Լավագույն դեպքում՝ նույնը, սովորողից մի օր առաջ: Եվ վերջ: Ի՞նչ է գրում, թեմատիկ պլանավորումից, սովորողի տետրում կամ օրագրում (գործո՞ւմ են դրանք) անառարկելի ուկարճ (ստանդարտ) ցուցում-բողոք գրանցելուց բացի:
Ինչպե՞ս են ստուգում–վերահսկում ծնողը, ԿԳ նախարարը, պետական կառավարման այլ մարմինը, լայն հասարակությունը: Հավատում են ընթացիկ կամ քննական

[2] *«Հայկական ժամանակի» պատվերով*

գնահատականների՞ն, անցկացնում են միջանկյալ քննություննե՞ր, իրենց գիտելիքների հե՞տ են համեմատում իրենց ձեռքն ընկած սովորողի գիտելիքները....

Այսպիսով պետական հանրակրթական ծրագրի կազմակերպումը պահանջում է սոսկ վերարտադրություն՝ պարտադիր նյութի (դասագրքի, շտեմարանի): Այստեղից՝ դաս-դասարանային կոչված մոդելը՝ որպես տպագիր դպրոցի ֆետիշ, որը հենց տպագրի դպրոցի ռեպրեսիվիրականության արտացոլումն է: Ու սրա հետևանքով՝ սովորողազուրկ թանգարաններ, համերգային դահլիճներ, բնության ու պատմության հուշարձաններ, տպագիր ու էլեկտրոնային գրադարաններ, խաղահրապարակներ, այգիներ, ոչ ֆորմալ ուսուցման դասընթացներ, փախուստ դպրոցական ֆիզիկական հասարակությունից դեպի վիրտուալ՝ օդնոկլասսնիկ ու խաղեր, հասարակության մեջ փոխընբռնման պակաս: Պարտադիր առաջադրանքներից բացի՝ ոչինչ: Սովորողի տնային և դասարանական պարտադիր աշխատանքի տետրերը սովորողին, առարկայի ուսուցչին և առավելագույնը՝ ծնողին ու տեսուչին են հասանելի. Փակ տարածքներ են հասարակության համար: Ինչի՞ վրա են ծախսվում սովորողի ուժը, ժամանակը, տաղանդը: Ի՞նչ հասարակական արժեքներ են արտադրում ամեն օր տնային, դասարանական աշխատանք կատարողները... Ի՞նչ է շրջանառվում՝ որպես ուսումնական գործունեություն: Ամեն ինչ թողնվում է հետոյին. սովորիր՝ պետք կգա... սովորիր՝ վնաս չկա.... սովորելուց ի՞նչ վնաս: Իսկ հետո գալիս է մոռացումը ու դրանից բխող անզորությունը. իրականում անգիրի դպրոցը մոռացումի դպրոցն է: Հասարակությունը, որ տպագրի (զուբրիտի) դպրոցի պատվիրատուն է, սրա դեմ, բնականաբար, կազմակերպված չի ընդվզում ու մեկ էլ հարայ-հրոցով հարձակվում է շտեմարանների վրա, որ հայոց լեզվով գրականության բեսթսելլերներն են դարձել և տպագրի դպրոցի վախճանը, նրա տապանաքարը:

Մենք՝ որպես փորձարարական-հետազոտական միավորում, կրթահամալիրի ստեղծմամբ հեղինակում ենք անգիրի դպրոցի այլընտրանքը՝ որպես ազատ անհատի և բաց հասարակության կրթական պատվեր, ստեղծողի և ստեղծական աշխատանքի դպրոց: Այսօր նա «մեդիակրթություն» անունը ունի, մեդիագրի դպրոցն է, այլընտրանք տպագրի դպրոցին: Եվ <u>անընդհատ է ու մոբիլ այս բաց կրթության</u> պատվիրատուն անհատն է՝ սովորողն ու իր ծնողը, բաց հասարակությունը՝ ի դեմս ակտիվ անհատների, մեր գործընկերների, և պետությունը՝ ի դեմս ԿԳ նախարարության, որ աջակցում է:

Իսկ մեդիան, ստեղծականությունը, անհատի կրթական պատվերի կազմակերպումը կարող են այլ դարձնել ուսուցումը՝ որպես բաց համակարգ: Դրանց շնորհիվ կարող ենք ունենալ, ունենք, կարդացող, գրող, մտածող, քննարկող սովորող և ուսուցիչ, ավելին՝ հասարակությունը կարող է մասնակցել նրանց քննարկմանը:

Ուսուցման մեջ նոր գործիքներ՝ թվային միջոցները, և դրանք ստեղծական ուսումնական աշխատանքում կիրառելու անհատական ազատություն. ահա և մեդիակրթությունը: Երբ ուսումնական բլոգը մտավ մեր հեղինակած հանրակթությունը, դարձավ դասվար-դաստիարակինը, նախադպրոցական խմբինը, 1-4-րդ դասարանինը, բոլոր տարիքի անհատ սովորողներինը, ակումբինը, դարձավ ամսագիր, առցանց TV ու ռադիո, գրադարան, դարձավ առցանց քննարկում, շուրջտարյա մեդիաօլիմպիադա՝ որպես ուսումնական նախագծեր, դարձավ անընդհատ ուսուցման վայր՝ տանը թե դպրոցում... Տեքստը, այդ թվում՝դասական ու

ժամանակակից, հայտնի և անհայտ հեղինակի, այդ թվում՝ սովորողի, ուսուցչի հեղինակած, թարգմանած, նրա ընտրած, տեքստի քննարկումը, հեղինակի ասելիքի յուրացումը, մեկնաբանությունը դարձան առօրյա ուսումնական աշխատանք՝ բաց, ամենահաս, անընդհատ, ինտերակտիվ... Մեդիակրթությունը ոչնչացնում է դաս-դասարանային ֆետիշը, հանրակրթական տարածքը դարձնում ֆեյսբուքային: Հիմա բլոգավար սովորողները և ուսուցիչներն ավելի ու ավելի շատ են թելադրում. Ինձ համար՝ որպես տնօրենի, երբեք այսքան դժվար ու հետաքրքիր չիեղել:Դժվար, որովհետև ֆիզիկական իմ ծանրաբեռնվածությանը, որպես կրթության կազմակերպիչ, անընդհատ ավելանում են հարյուրավոր բլոգերների տեքստերի ընթերցումը, դրա արձագանքը: Չնայած այս խնդրի առաջ է կրթահամալիրի ամեն մի ուսուցիչ և սովորող, ավելի և ավելի մեծ թվով բարեխիղճ ծնողներ, որոնք պիտի ծանոթանան ոչ միայն իրենց երեխայի բլոգին, այլ նաև նրա ընկերների, ուսուցիչների, դպրոցի, ակումբի: Մեդիագրի մեր դպրոցի մեթոդը դառնում է ուսումնասիրությունը, ուսումնական պարապմունքի վայրեր են դառնում ոչ միայն կրթահամալիրի լաբորատոր-հետազոտական գործունեության միջավայրը, այլև երևանյան, հայաստանյան ու վիրտուալ թանգարանները, համերգային դահլիճներն ու ցուցասրահները, հայրենագիտական, էկոլոգիական ճամփորդության միջոցով ձեռք բերվող հայրենագիտությունը, ոչ ֆորմալ կրթության տարածքները, սովորողի՝ խրախուսվող ուսումնատենչությունը, նրա ինքնակրթության կազմակերպումը... Եվ սովորողի և ուսուցչի համատեղ բազմաբնույթ ուսումնական գործունեությամբ ձեռք է բերվում զորացող կարողություն, որն ի զորու է փոխել մարդու, հասարակության կյանքը: Ինչի՞ համար է կրթությունը, եթե մարդուն չի դարձնում ավելի կարող, դրանով հայտնի:

Ես ուզում եմ ընդհատել խոսակցությունը, որովհետև ինչո՞ւ նոր տպագիր տեքստ ստեղծեմ՝ որպես պարտադիր ընթերցանության նյութ՝ փոխարինելով սովորող և ուսուցիչ բլոգերների, մեդիագիր տեքստերին: Հեշտացնելու համար ձեր գործը ես թողնում եմ իմ ընտրությամբ հղումներ, առաջարկում եմ ծանոթանալ ու շարունակել՝ ուզում եք թերթում, ուզում եք՝ մեդիայում:

Կրթահամալիրի կայքը

«Դպիր» մանկավարժական հանդես

«Լուսաստղ» պատանեկան ամսագիր

«Պարտեզ»

«Հեռադիտակ»

Ակումբի բլոգ

Դաստիարակի բլոգ

Դասվարի բլոգ

Հայոց լեզվի ուսուցչի բլոգ

Մաթեմատիկայի ուսուցչի բլոգ

6-րդ դասարանցու բլոգ

8-րդ դասարանցու բլոգ

Ոչ թե սովորողների համար, այլ սովորողների հետ

Իմ աշխատանքն անընդհատ է, ինչպես կյանքը: Չի ընդմիջվում՝ նոր տարի, նոր ուսումնական տարի, հոբելյանական տարի, արձակուրդ, զանգ, դասամիջոց, շաբաթ-կիրակի, տոնական օր, աշխատանքի սկիզբ, ավարտ: Ահա ինչու՝ ես վաղուց չունեմ մոտեցող նոր ուսումնական տարվա զգացում: Թույլ տվեք չկեղծեմ ու... չշնորհավորեմ: Իսկ միասին նորից լինելու ուրախության համար շնորհակալ եմ:

Իսկական կրթությունը, ինչպես կյանքը, չի կարող անընդհատ չլինել: Նոր ուսումնական տարին անընդհատ կրթության կարգավիճակ կպարգևի ավելի մեծ թվով ուսուցիչների և սովորողների: Եվ թվային միջոցները՝ իրենց անընտհատ նորացվող բազմազանությամբ, ուսուցման մեջ անընդհատ կրթության հարմար գործիքներ են: Ահա ինչու ես առավելագույնն եմ անում, որ յուրաքանչյուր սովորող և ուսուցիչ տանը թե դպրոցում, նաև ճամփորդելիս իր հետ ունենա իր ինտերնետը, թվային ֆոտոխցիկն ու ձայնագրիչը, նոթբուքը, դասարանում՝ նաև էլեկտրոնային գրատախտակը:

Մանկավարժության դասական Դիստերվեգը ժամանակին զգուշացնում էր մանկավարժությամբ զբաղվող յուրաքանչյուրիս երեք դևերի՝ տափակության, սահմանափակության և մեխանիկականության սպառնալիքի մասին: Ահա, ստեղծականությունը՝ ուսուցումը որպես սովորողի և ուսուցչի համատեղ ստեղծագործական աշխատանքի արդյունք և պայման, անընդհատ սովորելը և ... թափառելը՝ սովորողների և ուսուցիչների համատեղ հայրենագիտական ճամփորդությունները, իմ համոզմամբ արդյունավետ միջոցներ են այս դևերի դեմ պայքարելու: Որպես կրթական փոխանակումներ կազմակերպված բազմօրյա ճամփորդությունների արդյունքում այս ամառ ծնվեց մեր «Ջառմա» կազմակերպությունը: Օրեր առաջ, ժամանակային առումով վերջին, մեր հերթական, Երևան- Վարագավան-Լաստիվեր- Կիրանց-Բերքաբեր, ճամփորդությունը թարմ ապացույց է այն իրողության, որ միասին ու էժան թափառումն օգնում է օտարություն հաղթահարելու, կապվելու մի քանի սար ու ձոր Հայաստանին, համատած կեղտից մաքրելու բնությունն ու հուշարձանները, դուրս գալ սովորականության ու չկազմակերպված կենցաղի թմբիրից, աչքը միշտ սուր պահել: Լավ առիթ է, և ես յուրաքանչյուր դպրոցի հրավիրում եմ դառնալ մեր կազմակերպության անդամ, սրանով մեր կրթական փորձը իրար փոխանցենք, մեր սովորողներին դարձնենք ընկերներ, միասին կրթական խնդիրներ լուծենք:

Մեդիագրի շրջանը, որում ապրում ենք, իր բոլոր կիսատ պռատով, չի կարող չունենալ **իր դպրոցը**: Այս ուսումնական տարվա առանձնահատկությունն է տեղեկատվական

տեխնոլոգիաների ուսուցման 1-10-րդ դասարանները, որ գործում են «Մայքրոսոֆթի» աջակցությամբ և կրթահամալիրում հետևողականորեն ձևավորում են մեդիակրթության դպրոցը: Հոկտեմբերին, ամենամյա մեր կլոր սեղանին, հետաքրքրվածները հնարավորություն կունենան այս սկզբունքորեն նոր, հայերեն լեզվով արդիական ծրագիրը իր ընթացքի մեջ տեսնելու: Ուռա՛, մեդիատպագրությունը թափ է հավաքում կրթահամալիրում, իսկ մեր mskh.am կայքը դառնում է ուսուցման մատչելի գործիք սովորողի և ուսուցչի ձեռքին: Ինձ ոգևորում է, որ ավելի ու ավելի շատ ուսուցիչներ և սովորողներ օգտվում են նոր գործիքներից, անհապաղ հրապարակում իրենց գյուտը, նորույթը, տպագիր թե էլեկտրոնային՝ ուսումնական նյութ դարձնում իրենց ուսումնասիրությունը: Դասագիրք կոչվածը, այն ձևով, ինչ ձևով կար երեկ ու, ցավոք, նաև այսօր, մեզանում վերանում է, ուռա՛, լայն դաշտ բացելով համատեղ ստեղծական աշխատանքի համար:

- Իմ տնօրինական գործունեության լավագույն կամ հիշարժան տարի՞ն.- հարցնում եք: Ինչպես միշտ, ես անկեղծ եմ: Լավագույն տարին 2010 թիվն է, չնայած ես դառնում եմ 55 տարեկան, լավագույն օրը՝ այսօրը: Եվ օրվա հոգսը բավ է օրվա համար:

Մենք ապրում ենք, գործում ենք հանուն երեխաների, իսկ նրանցից շատերը շարունակ երախտագետ չեն մեր այս նվիրումի դիմաց: Խոստովանենք, որ մանկավարժների մեջ համատարած է այս զգացումը: Եվ լավ է, որ մեր կրթահամալիրում շատերը սկսել են այսպես չմտածել: Մենք աշխատում ենք ոչ թե սովորողների համար, այլ սովորողների հետ:

Ստեղծողի մոբիլ դպրոց

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը ներկայացնում է կրթահամալիրում իրականացվող հեղինակային կրթական ծրագիրը 2013-2014 ուսումնական տարվա վերջում, կրթական ծրագրի զարգացման ուղղությունները:

Առաջին տեսանյութը՝ «Շրջանավարտների հետքերով», ներկայացնում է «Սեբաստացի» TV-ն: Տնօրենը գնահատում է կրթական ծրագրի մշակման և արդյունքների մեջ կրթահամալիրի Ավագ դպրոց-վարժարանի, Գեղարվեստի ավագ դպրոցի, Արհեստագործական ավագ դպրոցի 2013-2014 ուստարվա շրջանավարտների ներդրումը:

Երկրորդը «Բուն TV»-ի 2014թ. մայիսի 31-ի հաղորդումն է կրթահամալիրի մասին:

Ազատության առաջին աստիճանն ինքնուրույնությունն է: «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում ուսուցումը, զարգացումը սկսվում է երկու տարեկանից: Մենք ունենք մոտ 300 երկուսից հինգ տարեկան երեխաներ: Մենք մեր առաջին քայլերը սկսեցինք երկու տարեկան երեխայի համար ինքնուրույնության ճանապարհին բոլոր արգելքները հանելուց. հանեցինք բոլոր դռները, բոլոր պատերը, բոլոր շեմերը վերացրինք: Երեխային ինքնուրույն, ազատ շարժվելու հնարավորություն տվեցինք: Այսինքն՝ ինքնուրույն ապրի՝ առանց խնամակալի, դայակի, դաստիարակի, մայրիկի: Հետո հասկացանք, որ մեծ պատնեշ կա դրսի և ներսի միջև: Երեխայի դուրս գնալը դառնում էր իրադարձություն: Մահճակալը դարձել էր երեխայի ստորացման մի գործիք, ինչպես աշակերտական անշարժ նստարանը: Մենք որոշում կայացրինք, որ մեր 200-ից ավել անշարժ մահճակալները պետք է լքեն մեր նախակրթարանները: Պարզվեց, որ դա ամենակենսունակ քայլերից մեկն էր, որովհետև մենք

ինքնուրույն երեխայի համար կենսական տարածք ազատեցինք: Հաջորդ կարևոր քայլն այն էր, որ ուսուցիչը հայտնվեց երկրորդ պլանում:

Համոզվեցինք, որ պատերը խանգարող էին և դաս-դասարանային համակարգը հատուկ ստեղծված է, որ մարդկանց բաժանի խմբերի, վերացնի նրանց միջև հաղորդակցությունը ու հակադրի միմյանց: Այստեղից առաջացավ բոլոր տեսակի պատերը վերացնելու կարիքը: Պարզվեց, որ այդ դասղեկների ինստիտուտը վտանգավոր է, որ նրանք ստեղծված են հենց մի երեխային մյուսին հակադրելու համար:

Անկեղծ, բաց ու անդավաճան[3]

Սիրելի ներկա և բացակա: Միանգամից ասեմ՝ մենք Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի 25-ամյակը չենք նշում՝ ո՛չ հիմա, այս հոյակապ ու պատվավոր դահլիճում, չենք նշելու նոյեմբերին, երբ կրթահամալիրի տոնացույցով «Սեբաստացիների օրեր» կրթահամալիրի տոնն է: Չե՛նք նշելու որպես հոբելյանական միջոցառում. երբ բեմ է դուրս բերվում արվածը, նրա ետևից բեմ է բարձրանում ստեղծողը, ու այնքա՜ն գործ է մնում չարված: Իսկ մենք գործում ենք, անընդհատ. մոբիլ ու ստեղծական ենք նաև հիմա: Հոբելյանականը տարին է՝ 2014-ը. հանենք նրանից 1989-ը՝ կրթահամալիրի ստեղծման՝ իրավակազմակերպման տարին, ու կստանանք 25: Մոբիլ ու ստեղծական 25 տարի անընդհա՞տ՝ հարցնում եմ: Այո՞: Ահա ինչու մենք սրանով մեկնարկում ենք մեր հրապարակային հաշվետու գործունեությունը 2014 հոբելյանական տարում՝ համերգ-ցուցադրությունների, ամենատարբեր պարապմունքների, նախագծերի, միով բանիվ՝ նախաձեռնությունների տեսքով՝ խմբային ու անհատական՝ այո, ընտանեկան՝ այո, հանրային՝ իհարկե: Ինչ-որ մի պահից հաստատվեց գիտակցումը, որ սեբաստացի լինում-դառնում են ընտանիքով կամ չեն լինում, քանզի լավն է այն դպրոցը, որտեղ սովորում ես դու, քո երեխան, երեխայի երեխան: Ահա ինչու՝ մենք կանք որպես աշխարհ, որպես կյանք ու հասարակություն՝ բոլոր տարիքի՝ սկսած 2-ից, 5-ից, 6-ից, 14-ից..., քմահաճ անհատի կրթական պատվերի, նրա ընտրության իրական ապահովությամբ, մոբիլ ու ստեղծական:

Երեք բան, այո, որպես **Բան**, որ ի Սկզբանէ է, որպես ճիգ ու ջանք:

Մենք անկեղծ ենք՝ մեր անկումների ու ոգևորությունների պահին և առօրյա: Կեղծիքն է կամ անկեղծության պակասը, որ 25 տարի փչացնում է հայաստանյան կյանքը: Մեջբերում Կտակարանից՝ *վարվեք մարդկանց հետ այնպես, ինչպես կուզենայիք, որ ձեզ հետ վարվեն*:

Մենք բաց ենք, առանց արհեստականության սահմանների՝ որպես կազմակերպություն, որպես գործունեություն ու ծրագիր, ներառվող ու ներառող, բաց այլոց՝ մարդկանց, գաղափարների թե ջանքերի առաջ, դրանց ազատ շրջանառության համար: Ապրել-գործել բաց՝ այսօրվա բաց աշխարհում՝ այն է, ինչից համառորեն վախենում ու ընկրկում են Հայաստանում շուրջ 25 տարի, բոլոր մակարդակներում: Մեջբերում՝ Կտակարանից՝ *արդ կատարյալ եղիր շարունակ, ինչպես իմ Ուսուցիչն է կատարյալ*:

---

[3] «Մոբիլ ու ստեղծական 25 տարի» հոբելյանական հաշվետու համերգ-ներկայացում-ցուցադրության մեկնարկի առթիվ

Մենք կարողանում ենք փոխել մեզ, մենք այլ ենք ամեն պահի... Փոխելով մեզ՝ կարող ենք ազդել մեր միջավայրի վրա ու ստեղծել նոր միջավայր: Ահա ինչու կարողության՝ որպես անձի ողջ ներուժի դրսևորման, և զուբրիտի՝ որպես անձի ողջ ներուժի մսխման, երկընտրանքի լուծումը մեր անդավաճանությունն է Ստեղծականությանը: Եթե հայ մարդը այս 25 տարին զբաղվեր արարչությամբ.... Մեջբերում Կտակարանից՝ *ճակատիդ քրտինքով վաստակիր օրվա քո հացը*:

Ավելի գրավիչ, քան փողոցը, առավել հետևողական, քան աղանդավորական գործիչը

Մտովի պատկերացնենք, որ սովորողը, որևէ տարիքի, պարտադիր ուսումնական պարապմունքներից հետո որոշել է պարզապես մնալ դպրոցում: Քանի՞ ժամ կթույլատրվի նրան այդպիսի հանդգնությունը, ինչպե՞ս կարձագանքի այս իրադարձությանը դպրոցի ռեժիմը: Եթե փորձենք վերլուծել պարտադիր ուսումնական պարապմունքներից դուրս դպրոցական շենքերի և գույքի զբաղվածությունը, պարզապես լրացուցիչ (արտադպրոցական) կրթության կազմությունը, բացի բազմապիսի կարատեներից ու պարի խմբերից ուրիշ ինչի՞ կհանդիպենք: Սովորողի ինքնավարության ինչպիսի՞ ակումբներ են գործում՝ սկսած վոկալ-գործիքայինից, մարմնամարզական-խաղային, հայրենագիտական-ճամփորդական, գեղարվեստական-թանգարանային, տեխնիկական-բնագիտական, թատերական-ստեղծագործական ինչպիսի՞ իրական, գործող, զարգացող կառույցներ կան այսօր դպրոցում: Ինչպե՞ս է սովորողը մասնակցում իր կրթական պատվերի ձևակերպմանը: Ինչպիսի՞ն է դպրոցի մեդիան՝ կայքը. ինչքա՞ն է զբաղեցնում սովորողին, ինչքա՞ն է ուսումնական:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում մեզ հաջողվել է ջնջել անջրպետը դպրոցականի և արտադպրոցականի միջև, մեծ թվով սովորողների համար, սկսած 1-ին դասարանից, դպրոցը դարձնել ուսումնական աշխատանքի և հետաքրքրությունների կենտրոն՝ որպես բաց համակարգ՝ ֆիզիկական և մեդիամիջավայրում, առանց ոստիկանի, փայտով կամ բանալիով պահակի, առանց թևկապավոր մանկավարժական աշխատողի՝ հերթապահի, առանց զանգի, կողպված կաբինետի, առանց շաբաթ-կիրակի ու հանգստյան կամ տոն օրերի, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 8-ը սովորողը, նրա ծնողը և ուսուցիչը անարգել կարող են և օգտվում են դպրոց-կենտրոնի՝ կրթահամալիրի բոլոր միջոցներից, հնարավորություններից: Սրա հիմքում.

սովորողի, նրա ուսուցչի և ծնողի ազատությունն է, սովորողի, նրա ուսուցչի և ծնողի իրական ինքնավարությունը, սրանց վրա կառուցված գործընկերությունը, կրթական ծրագրի մշակումը որպես համատեղ ստեղծական աշխատանք.

մարդկային հարաբերություններում ձևականության, կեղծիքի, արհեստականության հաղթահարումը. սրա վրա կառուցված ակումբային գործունեությունը, որն ընդգրկում է սովորողի գործունեության բոլոր ձևերն ու տարիքները.

ուսումնա-հայրենագիտական անընդհատ ճամփորդությունները.

ուսումնական գործունեության շուրջտարյա ստուգատեսները, ծեսերը, ստեղծագործական հավաքները.

դաս-դասարանային փակ ու հիերարխիկ համակարգի փոխարինումը ուսումնական պարապմունքների բաց ու մոբիլ ցանցով՝ սկսած ամենօրյա, ամենշաբաթյա համերգ-պարապմունքներից, երբ դրանք կազմակերպում և դրանց մասնակցում են տվյալ կրթական ծրագրի բոլոր սովորողներն ու մանկավարժները, պարապմունքներ միատարիք և տարատարիք խմբերով՝ թանգարաններում, համերգասրահներում, ցուցահանդեսներում, բնության և պատմության հուշարձանների տարածքում, զորամասերում, գիտա-արտադրական կենտրոններում.

ուսումնական-ստեղծագործական ճամբարներ, պլեներներ՝ բացօթյա ստեղծագործական հավաքներ.

կրթական փոխանակումների բաց համակարգի՝ հանրակրթական կամուրջների գործարկումը, ինչպես հայաստանյան, այնպես էլ արցախյան, վրաստանյան դպրոցների հետ:

Մենք ստեղծել ենք մեր նույնքան բաց ու գրավիչ մեդիամիջավայրը՝ մեր mskh.am սոցիալական ցանցը՝ իր ենթակայքերով, մեդիագրադարանով, TV-ռադիոներով, մանկավարժական, պատանեկան, մանկական ամսագրերով, սովորողների և ուսուցիչների անհատական, դասարանների, ակումբների ուսումնական բլոգներով: Մեր սովորողները այդ մեդիաաշխարհի ստեղծման և զարգացման մասնակիցն են: Համեցեք mskh.am, ծանոթացեք, համոզվեք, գնահատեք:

Եթե այս ամենը բերենք ցուցանիշի՝ որպես ուսումնական չափելի արդյունքի, վարկանիշվորման, կարո՞ղ ենք խնդիր դներ, որ սովորողը՝

ամեն օր զբաղվի մարզանքով, որպես վարք, իսկ 5-րդ դասարանից սկսած՝ ունենա նախընտրած մարզական ակումբը, թիմը.

ուսումնառության ընթացքում ընթացքում նվաճի հայաստանյան 10 ամենահայտնի լեռնագագաթները.

ամեն օր զբաղվի երաժշտական գործունեությամբ, ունենա երաժշտական նախընտրելի գործունեություն՝ վոկալ, գործիքային, թե վոկալ-գործիքային, սկսած պարզ շրխկանից, մինչև ջութակը.

ամեն օր զբաղվի տեխնոլոգիական-կերպարվեստային-դիզայներական գործունեությամբ.

բակում ունենա իր ծառը, որի որպիսության համար կրի անհատական պատասխանատվություն.

ունենա իր պատասխանատվության տարածքը՝ ֆիզիկական ու մեդիա միջավայրում.

ունենա նախասիրության զարգացման իր գործունեությունը, ավագ դպրոցում՝ նախընտրելի ակումբը.

ունենա իր անհատական ուսումնական բլոգը.

մասնակցի արշավների, ճամբարների, ավագ տարիքում՝ նաև ռազմա-մարզական ճամբարների՝ Արցախում և Հայաստանում.

երիտասարդը ծառայի հայաստանյան բանակում՝ առանց որևէ բացառության, տարկետման, խտրության՝ որպես իր անօտարելի քաղաքացիական պարտականություն:

Հաճույքով արձանագրում եմ, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում ամեն օր մոտ ենք այս ցուցանիշներին:

Մենք նախաձեռնող ու բաց ենք. գործընկերության, նշվածի պահպանման այլ ճանապարհ չկա, անհատի ու խմբի, ֆորմալ ու ոչ ֆորմալ կրթության հաստատության, պետական բոլոր մարմինների հետ, Հայաստանում, Արցախում:

Օրինակելի են, իհարկե, ամեն օր ընդարձակվող մեր կապերը Հայաստանի պաշտպանության համակարգի, նախարարության հետ: Շնորհակալ ենք ու պատրաստ կապերի ընդարձակման՝ ի փառս հայրենյաց և ի սարսափ թշնամյաց:

Ելույթ ՀՀ պաշտպանության նախարարությունում՝ «Քայքայիչ պաշտամունքները և փողոցային արատավոր բարքերը որպես պաշտպանունակության սպառնալիք» գիտագործնական կոնֆերանսում:

26.04.2014թ.

Օգտվենք առիթից կամ շնորհավորական կրկնության փոխարեն

«Կրթություն» թերթը 75 տարեկան է

Ընթերցողը, ով բացում է կամ կբացի 75 տարեկան դարձած «Կրթություն» թերթը, չի ազդվելու (պատկառելու) թերթի տարիքից. տարիքը և՛ առավելություն է, եթե բրենդի է, և՛ ամեն դեպքում, ինչպես ակադեմիկոս Կապիցան էր ասում, ծերունական հիվանդություն, երբ ուզում ես ավելին ստանալ, քան ստեղծում ես: Ցանկացած հոբելյանական հանդիսություն, կարծում եմ, դատարկ է առանց հոբելյարի շարունակելի գործունեության մասին անաչառ ու սրտացավ խոսակցության:
Ի՞նչ եմ կամենում իմ ողջույնով հոբելյարին՝ «Կրթություն» շաբաթաթերթին: Կուզեի թերթի ընթերցողին և չընթերցողին հրահրել այդպիսի խոսակցության:
Արժե թոթափել կրթության գերատեսչության հովանավորյալի կարգավիճակը՝ ծրագրել ու գործել առանց ԿԳ նախարարության ու կրթության համակարգի պաշտոնյայի խնամակալության: Պաշտոնաթերթի դեյուրե թե կամ (և) դեֆակտո պահպանումը զրկել է ու կզրկի թերթին և՛ անկախությունից, և՛ 11գրավչությունից, թերթը կմնա՝ որպես ավանդական դպրոցին և ուսուցչին հարմար մեթոդական տեղեկագիր. թերթը չի նորանա ու չի զորանա իրական մրցակցային կյանքում՝ որպես կրթական տեղեկատվական ծառայություն՝ անհրաժեշտ և՛ ինքնակրթվող քաղաքացուն, և՛ ստացիոնար կրթություն ստացող երեխայի ծնողին, և՛ ուսուցչին, կրթություն կոչվող հասարակական գործունեությամբ զբաղվող (շահառու) յուրաքանչյուրին: Այո, ես կոչ եմ անում «Կրթությունը» վերածելու բոլորի համար կրթական թերթի, որ հետաքրքիր ու օգտակար կլինի ոչ միայն ուսուցչին ու կրթության համակարգի պաշտոնյային:

Իհարկե, ՀՀ պետական բյուջեն, կրթության նախարարությունը և կրթական համակարգի կառավարման այլ մարմիններ կարող են նյութապես աջակցել թերթին՝ իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը դպրոցին հասցնելու համար, բայց սրանից թերթն իր ազատությունը, անսպասելիությունը չպիտի կորցնի: Նոր «Կրթությունը» չի կարող չունենալ իր գրավիչ ինտերնետային կայքը՝ նոր հասարակության կրթական ծառայությունները բազմապատկող էլեկտրոնային (վիրտուալ) աշխարհի անսպառ հնարավորություններով: Սա թույլ կտա մի կողմից ակտիվացնել օրեցօր բազմացող դպրոցական ու տնային ինտերնետ համակարգչային կենտրոններին, մյուս կողմից ավելի ու ավելի շատ ուսուցիչներ, սովորողներ, ծնողներ, կրթության այլ շահառուներ իրենց տեղեկատվությունը (կարծիքը) կարող են տրամադրել թերթին: Միայն այս ճանապարհով շաբաթաթերթը ծավալով կրկնակի կմեծանա ու կստանա արդիական տեսք՝ համակարգչային դիզայնով ու ֆոտոլրագրությամբ:

Թերթի մշտական բարեկամ ու գործընկեր՝ Աշոտ Բլեյան

II. Ես չխոսեմ՝ քարի ու ասֆալտի ծանրության տակ թողած հողը կաղաղակի

Նվիրում եմ Հայաստանի Անկախության 20-ամյակին. այսպիսի իրադարձությունը առանց նվեր հո չէի թողնի:

«Ավաղ, մենք պարզունակ ժողովուրդ ենք»

Կյանքին հրաժեշտից առաջ մահճում այս խոսքերն է արտասանել արձակագիր Ստեփան Զորյանը: Իսկ Զորյանը, նրա լավագույն պատմվածքները հաստատում են, ճանաչելու աստիճան ուսումնասիրել էր իր ժողովրդին: Կրկնում եմ Զորյանին՝ մենք պարզունակ խալխ ենք: Ոչ թե բարդ կամ խրթին: Եվ մեր հասարակական կյանքում կարող ենք արձանագրել սրա բազում դրսևորումները: Գլխավոր դրսևորումը՝ մենք շարունակ խնայում ենք կյանքի (ապրելու) մեջ և շռայլում-վատնում չապրելու (մահվան) համար: Բանն ասելը չէ, բանն ապացուցելն է, որը փորձեմ անել հոդվածաշարով: Հոդվածաշարի պատվիրատուն լրագրող Պետրոս Ղազարյանի բարեխիղճ հետևողականությունն է:

Հոդված 1-ին: Ես չխոսեմ՝ քարի ու ասֆալտի ծանրության տակ թողած հողը կաղաղակի
Ահա, աղաղակում է, լսեցեք:
Մեր գյուղական-թաղային-ներհամայնքային ճամփաների (անցումների) վիճակից ավելի քստմնելի ու անարժանապատիվ բան դժվար է պատկերացնել. Ամեն օր (միշտ ու, թվում է, հավերժ) ամենքս ստորանում ենք այս ճամփին՝ ոտավոր թե մեքենավոր, մեկ է: Թվում էր՝ քարաստան երկրում այս ժողովուրդը պիտի քարագործ դառնար, մեր հանրային աշխատանքի կազմակերպման միջոցով սալապատեր իր անցումները, ցեխից ու փոշուց ազատ ապրեր իր համայնքում, ոչ թե սիզիփոսյան աշխատանքով զբաղվող, քարից ու հողից հաց քամող ժողովրդի պարզունակ մոդելը գովերգեր, այլ հողը ազատեր քարից, քարը ճամփա դառնար, ու նրա տակի տարածքը՝ մշակվող հող: Իսկ մեզանում քարը՝ բազալտը կամ տուֆը, միայն եզրաքար (բորդյուր) ու պատ է դառնում:

Ամենապահանջվող մասնագիտություններից պիտի լիներ սալարկող (սալահատակ անող) վարպետը: Ո՞ւր է, ցույց տվեք: Մեկը հաշվեր, թե տարին քանի կմ բորդյուր է քանդվում, դեն շպրտվում ու նոր բորդյուր շարվում: Մեկը չեղավ, որ հասկանալի դարձներ բորդյուրի իմաստը այս անհող երկրում. հենապատը հասկանում եմ, բորդյուրս ո՞րն է: Անտեղի գետնից բարձր հարթակ ենք ստեղծում, նոր ծավալներ առաջացնում և սրանք լցնում չգիտես որտեղից բերված բուսահողով կամ խճաքարով: Էս բարձրավանդակ երկիրը ինչո՞ւ ենք շարունակ բարձրացնում:

Մեր հողազուրկ ժողովուրդը, թվում է, պիտի կյանքում հողապաշտ լիներ: Սա պարզ ու հասկանալի կլիներ: Բայց տեսեք՝ աջ ու ձախ ինչ ահավոր դաժան ենք վարվում հողի հետ, որքան հող ենք թաղել (70 տարի) ու թաղում (արդեն 20 տարի) ասֆալտի տակ, ինչպես ենք հողը չմշակելով անապատեցնում: Ասֆալտը մեր նկարագիրն է, էությունը. պարզունակ ենք, ամենօրյա խնամք չի պահանջում, գեղագիտություն՝ նույնպես... Լցրու, կատոկի ու մի տասն... քանի տարի հոգսից ազատես:

Իմ գիտակից կյանքը, գիտեք, Բանգլադեշում անցավ: 1985-2011 թթ. Իմ աչքի առաջ գոնե երեք անգամ նույն տեսարանը եղել է՝ Ռաֆֆի և Բաբաջանյան պողոտաների ուրախացնող-հսկայական գազոնների՝ չմշակվելուց-չխնամվելուց-չջրվելուց անապատացած բուսական հողը, որպես քաղաքային-պետական ծրագիր, բարձվում է մեքենաները, որպես արդեն շինարարական լցոն՝ թափվում, իսկ հարյուրավոր խորանարդ մետր նոր բուսական հողը, չգիտեմ՝ որ դաշտերից ու մարգագետիններից տեղափոխվում է գազոններ... մինչ այդ, իհարկե, քանդվում են բազալտե կամ բետոնե բորդյուրները և տեղադրվում նորերը՝ թարմ, ինչպես բատոն հացերը.... Համեցեք, այս օրերին Բաբաջանյան պողոտայում տնաքանդությունը փառահեղ հանդիսավորությամբ մոտենում է ավարտին: Մնաց բացումը, TV-իշխանավոր հավաքը, արմանք-զարմանքի գովաբանությունը... Պարզունակ խալխի թամաշա...

20 տարի անընդհատ կրթահամալիրի սովորողների և ուսուցիչների հետ, ծնողների զարմանքը, զայրույթը զանցառած, մեր կրթական օբյեկտների մաշվող ասֆալտն ենք քանդում, դրանից, եզրաքարերից և բետոնից ազատում հողը.... Վերջին տասը տարում ոչ մի քառակուսի մետր ասֆալտ մեր բակերում չի արվել, իսկ հողի ազատագրման գործը մի սերնդի էլ դեռ կազնվացնի:

Եզրաքարը փոխում ենք հողի, խճի, ավազի հետ՝ մոտեցող չկա: Առևտրական ազգիս նորն է պետք: Իսկ ասֆալտը, շեն մնա «Սահակյանշինը», վերջապես տարավ: Միայն «Սահակյանշինը»: Ասֆալտի ի՛նչ հումք կա Երևան քաղաքում և Հայաստանով մեկ... Հին ասֆալտի... Պարզ, ազնվացնող ու միավորող ինչպիսի գրավիչ աշխատանք՝ հողի ազատագրումը...

Միշտ ուզեցել եմ բուսական հող բերող մեքենայի հետևից գնալ, տեսնել այդ հանցագործության վայրը, այդ հանցավոր արարքի մյուս մասնակիցներին, նայել նրանց աչքերին: Ուզում եմ հասկանալ: Հո թշնամի չե՞ք:

20 տարի ամենափնտրվող աշխատողը ինձ համար եղել է պարտիզպան-ուսուցիչը, պարտիզպան մասնագետը: Ինձ դժվար է հասկացնել, թե ովքեր են դպրոցների բուսաբանության-կենսաբանության, տեխնոլոգիայի ուսուցիչները, եթե ոչ շարքային պարտիզպաններ: Ինչ ենք սովորեցնում, եթե ուսուցման արդյունքում միջավայրը չի վերածվում պարտեզի: Ո՞վ է դպրոցի տնօրենը, եթե ոչ գլխավոր պարտիզպանն ու հավաքարարը: Ինչպե՞ս պարզունակ խալխից անցում կատարենք պարզ, բաց, ապրող հասարակության, սովորական ազգի: Անհամեստ չերևամ, ահա, ձևակերպում եմ Հայկական քաղաքակրթության հանրակրթական ծրագիր՝ որպես մեծին-պստիկին, սովորողին-ուսուցչին-ծնողին-իշխանավորին-ձեռնարկատերին համախմբող գործունեություն՝ կրթական օբյեկտ անապատը կրթական պարտեզի վերածելու ծրագիր.

ա) ուսումնական հմտություններ կրթական բոլոր աստիճաններում՝ հողը եզրաքարից-բետոնից-ասֆալտից-ցանկապատից ազատելու, հարմար համապատասխան գործիքներով ապահովում.
բ) հմտություններ՝ հողը պարարտացնելու, նրա որակը լավացնելու, բուսական դարձնելու, անհրաժեշտ նյութերով և պարագաներով ապահովում.
գ) հմտություններ՝ հողը ջրելու, խնամելու, ծաղիկ ու ծառ աճեցնելու, անհրաժեշտ նյութերով ուպարագաներով ապահովում.
դ) կանաչ (ֆիտո) դիզայնի ճաշակի ձևավորում ....
ե) հանրակրթական ուսումնական հաստատությունում իրականացվող կրթական ծրագրի գնահատման գործիքը՝ ակնհա՛յտ դպրոց-պարտեզ:

Ձեզնից յուրաքանչյուրը կարող է շարունակել և ամբողջացնել այս ծրագիրը՝ պայմանով, որ մասնակցելու է դրա իրագործմանը:

Շշմելու ուսումնական աշուն

Աշուն է, պայծառ աշուն, որը մենք միասին հիշարժան ենք դարձնում հոկտեմբերի 20-ից սկսվող և մինչև 28-ը տևող ուսումնական արձակուրդով՝ մեր հայրենագիտական, էկոլոգիական ճամփորդություններով, արշավախմբային ու ճամբարային ուսումնական գործունեությամբ, թափառումներով, դպրոցում և բնակավայրերում պարտիզա-պուրակային համատեղ աշխատանքով. ծառատունկի շրջան է: Այս ամենի մասին մենք պատմում ենք կայքում՝ սիրով, գրավիչ, ինչպես աշունն է գրավիչ՝ ֆոտոշարեր ենք անում, ֆիլմեր, ուսումնասիրություններ, ռադիոպատումներ, պատմություններ, նոր նախագծերի սկիզբ, նոր մարդիկ, նոր հանդիպումներ: Մեդիաօլիմպիադան ուշադիր հետևում է այս կյանքին:

Հաջողություն ցանկանանք Գեղարվեստի ավագ դպրոցին, որ այսօրվանից իր եռօրյա ուսումնական նախագիծն է անում Ստեփանավանի դենդրոպարկում, Աշտարակում՝ գործընկեր դպրոցում մեր հեղինակային կրթական ծրագիրը ներկայացնող Միջին դպրոցի, Դպրոց-պարտեզի սովորողներին, հոկտեմբերի 23-ից Արցախ վերապատրաստումների մեկնող ուսուցչական խմբին, հոկտեմբերի 23-ից Արցախի Գանձասարում հավաք անցկացնող կրթահամալիրի պատանեկան ակումբների ղեկավարներին ու սովորողներին, հոկտեմբերի 24-ից Ջավախքում մեր կրթահական ծրագիրը ներկայացնող Տերյանասեր պարմանիների ու պարմանուհիների խմբին, հոկտեմբերի 24-ից Եղեգիսի կիրճով Սելիմի լեռնանցք եռօրյա

արշավախմբին.... Տեսնո՞ւմ եք՝ ինչ դպրոց և ինչպիսի ուսուցիչներ ունեք: Մեր ուսումը պարտադրված չէ, որ արձակուրդով ընդհատվի, անընդհատ է. հոկտեմբերի 22-ից գործում են ուսուցչական սեմինարները, բաց են բոլոր կրթական օբլեկտները, ընթերցարանները, լաբորատորիաները, սրահները, դահլիճները...

Ձեր նախանշած հետագծով մեկ շաբաթ ունեք՝ հրաշալի շաբաթ, որի համար ես ուրախ եմ և արդյունքներին սպասում եմ հենց այս պահից: Կարդացեք և արձագանքեք՝ անհատապես, ընտանիքով. դասարանով...

Միշտ ձեր՝ Աշոտ Բլեյան

Աշուն է եկել մեր բակը

Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ,
Որ չբուսավ էս հողին.
Ինչ պատասխան պիտի ես տամ
Հող ու ծաղիկ տվողին...

«Մեր բակը՝ կրթական պարտեզ» ուսումնական նախագծի իրագործման աշնանային աշխատանքների մասին եմ ուզում խոսել, որպես կրթահամալիրի գլխավոր բակապահ կամ պարտիզպան: Քանի՞ քառ. մ է մեր բակը՝ Երևանի քաղաքապետի հրամանով մեր խնամքին հանձնված հողային տարածքը: Համեցեք. կրթահամալիրի կրթական օբյեկտների պետական գրանցում ստացած ցուցանիշները՝

Մայր դպրոց՝ 17381 քառ. մ

Նոր դպրոց՝ 7934 քառ. մ

Դպրոց-պարտեզ՝ 7635 քառ. մ

Գեղարվեստի դպրոց՝ 7440 քառ. մ

Հիմնական դպրոց՝ 6920 քառ. մ

Արհեստագործական դպրոց՝ 7240 քառ. մ

Բնասերի դպրոց՝ 4540 քառ. մ

Սեղիակենտրոն՝ 752 քառ. մ

Ընդամենը՝ մեր կրթական բակի մակերեսը 59842 քառ. մ. կամ մոտ 6 հա: Ահա ուսումնասիրության, լրագրողական հետաքննության իմ առաջարկի վերնագիրը՝ «Մեր դպրոցական բակը»:

Սկսենք տեսնել, նկարել, նկարագրել, ներկայացնել: Ամբողջ աղբը հանենք բակից, հողը ազատենք բետոնից, քարից, ասֆալտից... չգիտեմ ինչից:

Կարգի բերենք բակի մշակման՝ պարտիզպանի գործիքները: Դրանք դարձնենք հարմար յուրաքանչյուր տարիքի պարտիզպանի համար, մատչելի. երբ հարկ լինի, առանց որևէ մեկից

կախում ունենալու կարողանա վերցնել պարտիզպանի գործիքները: Մեկը լինի անընդհատ սարքին վիճակում պահի բոլոր գործիքները:

Բակի մի քանի անկյունում կուտակված լինեն բուսական հող, կարմիր ավազ, խիճ... հարկ եղած պահին անարգել օգտագործելու համար:

Ի՞նչ ենք անելու հոկտեմբերից մեր բակ մտնող տերևաթափը. տոննաներով տերևը թափելո՞ւ ենք, վառելո՞ւ ենք, կոխկռտելո՞ւ ենք, թողնելու ենք ձյան մեջ...

Մեր բակի արտաքին ցանկապատը պատշաճ վիճակի բերենք՝ լրացնենք, նորոգենք, ներկենք, դարձնենք ավելի բարետես-պատշաճ մեր բակին-կրթական պարտեզին, առավել անվտանգ:

Ոռոգման ցանցը ինչպե՞ս գործեց ամառվա տապին: Գարունը Երևանում կարճ է տևում՝ աշնանը պիտի ոռոգման ցանցը նորոգվի, ընդարձակվի, դառնա հարմար բակի ամեն մի անկյուն ջրելու համար: Ի՞նչ նոր՝ արդիական լուծումներ կան որպես տեխնիկական նախագծեր-ոռոգման ցանցեր: Ներկայացրեք: Ո՞ր ծառը, թուփը չորացավ ամռանը: Ինչո՞ւ: Պատմեք, ցավով լսում եմ:

Հիմա բակը բաժանենք իմաստային-գործածական կտորների... Ինչպես է այն օգտագործվում:

Ծառը (տնկին) տեղափոխելու ժամանակն է: Խնամքով պիտի արվի: Բակը մեքենայի կայանատեղի չէ: Բակի ցանկապատից այս կողմ հետիոտն է: Մեքենաների կայանատեղին որոշեք: Իսկ լուսավորվա՞ծ է մեր բակը: Ինչո՞ւ, ինչպե՞ս:

Ծառերի տեսականին որակապես պիտի փոխվի. չի կարելի այսպես՝ ում ձեռքին ինչ ընկնի, տնկի՝ դե, ծառ է, էլի, տնկում է: Ոչ, մերը կրթական պարտեզ դարձող բակ է: Որքան ծաղկազուրկ են մեր բակերը: Անծաղիկ բակեր դպրոց-պարտեզներում. զավեշտ է:

Իսկ սերմնարան ունե՞նք: Որտե՞ղ ենք պահում սերմերը, ինչպե՞ս ենք հավաքում, տեսակավորում: Ճանաչո՞ւմ ենք սերմերը: Տնկարան ունե՞նք: Սածիլանո՞ց, ջերմո՞ց...

Որքա՞ն ժամանակ եմ անցկացնում ես բակում՝ իմ դպրոցի բակում, որպես պարտիզպան: Ամեն օ՞ր: Որպես ազատ ընտրություն, թե՞ ինձ պարտադրում են: Պարտիզպանի աշխատանքը, ինչպես հավաքարարինը, ինչպես պահապանինը, անընդհատ է:

Աշուն է եկել մեր բակը, սիրելիներս, իրեն մշակող սովորողով, ուսուցչով՝ պարտիզպանով... Որտեղի՞ց եմ հայթայթում ինձ ու պարտեզին անհրաժեշտ իմացությունը, պարտիզպանի հմտությունները: Հիմա մտնենք mskh.am. մտա՝ ի՞նչ տեսնեմ, ի՞նչ իմանամ, սովորեմ...

Ես կարող եմ այս նախագծի ուղեցույցը շարունակել: Դուք էլ կարող եք: Արժե՞ դա անել, գրավո՞ւմ է ձեզ:

Ավերակների հաղթահարում

Ավերակները մեր շուրջ են ու մեր մեջ այնքան, որ սովորել ենք դրանց: 2012-2013 թթ կրթահամալիրի նյութական միջավայրի բարելավման ծրագրով խնդիր դրեցինք կրթական օբյեկտների ողջ ծավալով ազատվել ավերակներից: Ահա ինչու կենտրոնացանք Հիմնական

դպրոցի, Արհեստագործական դպրոցի չօգտագործվող, բարձիթողի, որպես ավերակ «գործող», «չուսումնական» ներքին տարածքներն ուսումնական դարձնելու խնդրի վրա, ինչպես նաև մյուս կրթական օբյեգկտներում որպես պահեստային օգտագործվող կամ վատ օգտագործվող կամ ոչ ուսումնական նպատակներով օգտագործվող տարածքներն ուսումնական միջավայր վերադարձնելու խնդրի վրա:

Հեղինակային կրթական ծրագրերի մայիսյան ստեղծագործական հավաքի օրերին մենք կարող ենք գնահատել մեր ջանքերը և որոշակիացնել ամառային երեք ամիսների ընթացքում այս ուղղությամբ արվելիք աշխատանքները: Սովորողների թվի աճը, տարեցտարի աճող ուսուցման բազմազանություն-բազմաձևություն-բազմագործունեությունը պահանջել ու պահանջում են ավելի ու ավելի խնամքով վերաբերվել ուսումնական ներքին տարածքներին՝ դրանք շարունակ դիտելով որպես ուսուցման հանրային գործածման տարածքներ: 2013-2014 ուստարում մենք կոնկրետ կզբաղվենք արդեն կրթական օբյեկտների տանիքների, դրանց ձեղնահարկային հատվածների օգտագործման կամ հարթ տանիքները որպես բաց ուսումնական տարածքներ օգտագործելու խնդրով: Եվ, իհարկե, նկուղների, որոնք այսօր կա՛մ անփույթ օգտագործվող «պահեստներ» են, կա՛մ մոռացված փակ տարածքներ: Ուսումնական նախագծերի զարգացումը, մեր գործողություններում և նախաձեռնություններում խիզախության և երևակայության աճը պահանջում են կամ կպահանջեն ավելի հարգանքով վերաբերվել տանիքներին և նկուղներին: Խնդրեմ՝ խիզախեք, երևակայեք, առաջարկեք, մենք դրանք գրանցենք 2013-2014-ի ծրագրում:

Կրթական օբյեկտների բակերի հետևողական ասֆալտազերծումը, հողի վերջնական ազատագրումը մի կողմից մեր հավաքանիի խիզախության ցուցանիշն է կամ արդյունքը, մյուս կողմից դա պիտի բերեր և բերել է անխնամ հողատարածքային կուտակումների՝ արտաքին ավերակների: Այսպես պիտի լիներ, որովհետև պետական միջոցներ համառորեն չեն հատկացվում կրթահամալիրին բարեկարգման-կանաչապատման, մարզահամալիրի կառուցման աշխատանքների համար, իսկ «Դպրոցական բակը՝ կրթական պարտեզ» ուսումնական նախագծով կատարվող մեր աշխատանքները չունեն պահանջվող թափն ու ծավալը: Իմ հետևողական քննարդատներին և հոռետեսներին ես առաջարկում եմ կարճատև զբոմսանք կատարել Գեղարվեստի դպրոցի բակով և Հիմնական դպրոցի բակով: Որքան էլ կատարվածը հեռու է իմ պատկերացումներից, բայց կարող է ձեզ «Դպրոցական բակը՝ կրթական պարտեզ» ուսումնական նախագիծ բերել: Մի բան պարզ է՝ ետդարձի բոլոր ճանապարհները փակ են: Պարզ է նաև, որ նոր թափը, նոր հավեսը միայն նոր մեկնարկի հնարավորություն կտան: Խիզախելու, նախաձեռնելու, հողի հետ կապը հաստատելու լայն դաշտ կա, որտեղ ես ուզում եմ առանձնացնել երկու հանգրվան՝ առաջինը իհարկե, մեր Էկոտուր 2013-ի մեկնարկն է՝ ապրիլի 26-ը, երկրորդը՝ հունիսի մեկը՝ երեխաների պաշտպանության օրով սկսվող «Ուսումնական ամառ» նախագծի, ուսումնական ճամբարների մեկնարկը:

Կրթական պարտեզ արվարձանում

Օրերս, Երևանի քաղաքային ավագանու անդամ Անահիտ Բախշյանը մեզ տրամադրեց այսպիսի պաշտոնական գրություն. «Հարավարևմտյան թաղամասում Մխիթար Սեբաստացի

կրթահամալիրի տնօրինության «Կրթական պարտեզ» նախաձեռնության ֆինանսավորում (Բլեյանի առաջարկություն), որը համահունչ է Երևանում 16.11.2015թ. քաղաքապետարանի և ՎիվաՍել-ի կողմից նախաձեռնած հեծանվորդների համար ճանապարհներ ստեղծելու նախաձեռնությանը: Առաջարկությունը ողջունելի է, սակայն անհրաժեշտ է ներկայացնել ֆինանսատնտեսական գնահատականով համապատասխան ծրագիր, որը սահմանված կարգով կուսումնասիրվի, կքննարկվի և հնարավորության սահմաններում հարցին կտրվի համապատասխան լուծում»:

1990-ից սկսած՝ տարբեր ինտենսիվությամբ ու ձևերով մենք բարձրացրել ենք բանգլադեշյան կրթական պարտեզի ստեղծման անհրաժեշտության հարցը, առաջարկել Հարավարևմտյան զանգվածի Բ-1 թաղամասի մանկական-կրթական հաստատությունները՝ բոլորը, անկախ նրանց պատկանելությունից, մեկ կենսական տարածքում բարեկարգել՝ խելամիտ-գրավիչ-հարմար անցումներով՝ իրար հետ ու թաղի, կանաչապատումով-բարեկարգումով, ենթակառուցվածքներով: Վերջին անգամ 2015-ի սեպտեմբերի 1-ին ենք դիմել Երևանի քաղաքապետին. «Ուզում ենք հավատալ, որ նոր ուսումնական տարին առիթ կդառնա մեր կողմից բազմիցս ներկայացված «Կրթական պարտեզ» նախագծին վերադառնալու համար, հատկապես որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով որոշված է «ներառական կրթությունը՝ որպես յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովում»»:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի՝«Զորավար Անդրանիկի թաղամասի՝ շինարարական անունով Բ-1 բնակելի թաղամասը (այսուհետ՝ թաղամաս), եզրափակված Ռաֆֆի, Զորավար Անդրանիկ, Առնո Բաբաջանյան փողոցներով, կառուցապատված է հիմնականում 1977-1986 թթ 9-14 հարկանի բնակելի շենքերով: Թաղամասում այսօր գործում են Երևանի քաղաքապետարանի ենթակայության թիվ 181 հիմնական դպրոցը (հասցեն՝ ՀԱԶ, Ա. Բաբաջանյան 4), թիվ 95 (հասցեն՝ ՀԱԶ, Զ. Անդրանիկի 124), թիվ 93 (հասցեն՝ ՀԱԶ, Զ. Ռաֆֆու 69) և թիվ 98 (հասցեն՝ ՀԱԶ, Զ. Ռաֆֆու 85/5) նախադպրոցական հաստատությունները, «Տարոն» գեղագիտական դաստիարակության տունը (հասցեն՝ ՀԱԶ, Զ. Անդրանիկի 54), ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կազմում գործող Նոր դպրոց-պարտեզը (հասցեն՝ ՀԱԶ, Ա. Բաբաջանյան 47/1), Քոլեջը (հասցեն՝ ՀԱԶ, Զ Անդրանիկի 92/1), Գեղարվեստի դպրոցը (հասցեն՝ ՀԱԶ, Ռաֆֆու 69/1), Մեդիակենտրոնը (հասցեն՝ ՀԱԶ, Ռաֆֆու 57), Մայր դպրոցը (հասցեն՝ ՀԱԶ, Ա. Բաբաջանյան 25): Թաղամասում են գտնվում տասնյակի չափ մանկական խաղահրապարակներ:

Թաղամասի բնակիչները, թաղամասում գործող ուսումնական հաստատությունների սովորողները դժվարություններ են կրում թաղամասի հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք ուղղություններով հետիոտն, սայլակով, հեծանվով միջթաղամասային առօրյա հաղորդակցության ժամանակ. թաղամասի կառուցապատման ժամանակ բնակչության համար այս պարտադիր խնդիրը թերի է լուծվել, իսկ 1990-ականների հախուռն

շինարարությունը վատացրեց վիճակը: Շուրջ 20000 բնակիչ, 1000-ի չափ նախադպրոցական սաներ, մոտավորապես 4000 տարատարիք սովորողներ ունեցող թաղամասը չի կարող հարմարեցված միջավայր չլինել, այնպիսին, որ բացառի խտրությունը և ապահովի հավասար հնարավորություններ ազատ տեղաշարժի: Առաջարկվող «Կրթական պարտեզ» նախագիծն ուղղված է սահմանափակումների, խոչընդոտների վերացմանը, կլուծի բնակիչների ազատ-հարմար տեղաշարժի խնդիրը:

Թաղամասը կունենա նշագծված հեծանվուղի, հետիոտն անցումներ՝ հյուսիս-հարավ, հարավ-արևմուտք հատվածներն իրար կապող, ինչպես նաև՝ շրջանաձև: Կրթական պարտեզի կառուցումով թաղամասի հետիոտն անցումները բարեկարգվում-կանաչապատվում են, դառնում խնամված մշտապես: Թաղամասի ուսումնական հաստատությունների կադաստրային տարածքները (բակերը), դրանց հարող հողատարածքները կրթական-մարզական-մշակութային, հանգստի, զբոսանքի կիրառում են ստանում, կանաչ տարածքներ են դառնում:

Կրթական պարտեզի շահառուն թաղամասի բոլոր բնակիչներն են, թաղամասում գտնվող ուսումնական, այդ թվում՝ նախադպրոցական հաստատությունների ամեն մի սովորող-սան, աշխատող, յուրաքանչյուրը, որ որևէ ձևով առնչվում է թաղամասին: Կրթական պարտեզը որևէ ձևով չի վատթարացնի բնակչի, սովորողի, աշխատողի, հաստատության այսօրվա վիճակը. պարտեզի կառուցումով-գործարկումով բարելավվում է յուրաքանչյուրի կենսագործունեությունը: Պարտեզի գործարկումով թաղամասը՝ որպես միջավայր կդառնա ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի պահանջով ամբողջովին ներառական, ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի պահանջին համապատասխան՝ «հաշմանդամների համար բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտներից անարգել օգտվելու՝ օրենքից բխող պահանջների իրականացում» (հոդված 10):

Քաղաքացիական նախաձեռնությունը գործում է: Կրթական պարտեզի շահառուներ, ճարտարապետներ Արտավազդ Թարխանյանը, Արամ Հարությունյանը ստանձնել են Կրթական պարտեզի նախագծման ճարտարապետական լուծում պահանջող խնդիրների լուծումը. գործը թափով առաջ են տանում: Կրթական պարտեզի նախագծի հետ տեղում մանրամասն ծանոթացել է ՀՀ քաղաքաշինության նախարար Նարեկ Սարգսյանը: Կրթական պարտեզը՝ որպես պիլոտային ծրագիր, տարածում կգտնի ոչ միայն Երևանի, այլև Վանաձորի, Գյումրիի, Կապանի, այլ քաղաքների բնակելի զանգվածներում: Կրթական պարտեզի առաջարկի սաղմնավորման փուլում իր աջակցությունն է հայտնել Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, նախաձեռնությանն իր օրհնությունն է բերել Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը:

Կրթական տարածքին առնչվող, թաղամասի ուսումնական հաստատությունների նպատակային-անհատույց օգտագործման իրավունքով պատկանող տարածքները Երևանի քաղաքապետարանի սեփականությունն են: «Կրթական պարտեզը» գործում է որպես քաղաքացիական նախաձեռնություն: Երևանի քաղաքապետարանի նպատակային հատկացումներից բացի, կրթական պարտեզում 50/50 սկզբունքով կներառվեն

կամավորական միջոցներ, ինչպես աշխատանքի, ծառայությունների, ապրանքների, այնպես և դրամական ձևով: «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամը ոչ միայն գործուն մասնակցում է, այլև Կրթական պարտեզի աջակիցների մեջ ներգրավում է ոչ կառավարական այլ կազմակերպությունների, ինչպես «Հայաստանի մանուկներ», «ԻԴԵԱ», «Կրթասեր», «ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն», «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության» հիմնադրամ և այլն: Կրթական պարտեզը ներառված է կրթահամալիրի և «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի միջև համագործակցության պայմանագրում:

Նախագծի հանրայնացման շրջանում «Բանգլադեշ անիվների վրա» նախաձեռնությունը լայն արձագանք գտավ քաղաքում, թաղամասում: Դրա ազդեցությամբ իրականացվեց և գործում է առաջին մանկապատանեկան հեծանվային ակումբը, ապահով հանրակրթական հեծանվաուղին: «Ideal Bikes in Armenia»-ի աջակցությամբ ստեղծվում է հեծանվային բաց արհեստանոց, որը կսպասարկի կրթական պարտեզի հեծանվավոր, սայլակավոր շահառուներին:

«Սեբաստիա» մարզադաշտը, որը կառուցվեց-բարեկարգվեց ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի աջակցությամբ, այսօր բաց է թաղամասի բոլոր տարիքի բնակիչների համար. հեծանիվ, վազք, բացօթյա-մարմնամարզություն, լողափնյա վոլեյբոլ, ֆուտբոլ, նետաձգություն, ռազմամարզական խաղեր, հրաձգություն... 2014-2015-ին անցկացվեց ամենամյա «Բանգլադեշ-արվարձան» պլեները, որին մասնակցեցին սովորողներ, ուսուցիչներ Արցախից, Վրաստանից, մարզերից: Պլեներն ուղղակի ազդեցություն ունեցավ շրջակա միջավայրի վրա ոչ միայն կրթահամալիրի տարածքում. դրա շրջանակում սովորողները մասնակցեցին Բ-4 թաղամասում Յու. Բախշյանի անվան մանկական այգու բարեկարգմանը, Բ-1 թաղամասում իրականացվեցին ձևավորման առանձին ակցիաներ:

Ամեն ամառ՝ հունիսի 1-ից սեպտեմբերի վերջը գործում են կրթահամալիրի կրտսեր դպրոց-պարտեզների բաց լողափերը, 2016թ. կգործարկվի նաև պատանեկան բացօթյա լողավազանը... 2016թ. նախատեսվում է անցկացնել ռազմամարզական ազգային խաղերի բաց առաջնություն դեռահասների համար, մարզական բաց խաղեր ուսուցիչների համար...

2015-ին նորոգված կրթահամալիրի բրուտանոցը, գործարկված հայրենագիտական-արշավախմբային կենտրոնը, ձիասպորտի կենտրոնը բաց են. թաղամասի բնակիչներն անարգել օգտվում են, կարող են օգտվել դրանցից:

Ինչպես հաշվել է կրթահամալիրի քոլեջի ուսանող Աննա Պետրոսյանը, Ռաֆֆու պողոտայից թաղամասի հյուսիս-հարավ ուղղությամբ դեպի Մայր դպրոց և թիվ 181 դպրոց տանող մի կողմի նոր կառուցապատված աստիճանները 98-ն են, դրան զուգահեռ երկարաժամկետ անհայտ պատճառներով արգելափակված և աղբանոցի վերածված աստիճանները՝ 142,Անդրանիկ Զորավարի փողոցի կողմից քոլեջից թիվ 181 և Մայր դպրոց՝ արևելք-արևմուտք ուղղությամբ աստիճանները՝ 52...

«Կրթական պարտեզ» նախագծի տեսլականով ոգևորված ծնողների, բնակիչների, ուսուցիչների և սովորողների միջոցով բարեկարգվում են Նոր դպրոցի պարտեզի բակը,

Քոլեջի բակային տարածքը, նրանց արանքում ընկած հողակտորի վրա հիմնվել է «Սեբաստիա» ուսումնական փորձարարական պտղատու այգին… Էապես բարելավվել-կանաչապատվել է Գեղարվեստի դպրոցի բակային տարածքը: Ցանկապատերի վերացումը թիվ 181 և Մայր դպրոցների իրար նայող հողային տարածքներից, հնարավորություն տվեց ստեղծել թաղամասի բնակիչների համար կենսական նշանակության զբոսայգի:

«Կրթական պարտեզ» քաղաքացիական նախաձեռնությունը համալրվում է նորանոր ակտիվիստներով: Թաղամասի բնակիչ Անահիտ Մելքոնյանը բացել է «Կրթական պարտեզ արվարձանում» ֆեյսբուքյան էջը, որին սկսել են ակտիվ արձագանքել տասնյակ շահառուներ, սովորողներ և ուսանողներ…

«Կրթական պարտեզ» նախագիծը, իհարկե, տարիների ծավալուն աշխատանք է, բայց որոշիչը 2016-ի աշխատանքն է, որը ապահովելու է արդեն քաղաքացիական նախաձեռնության ցանցի ստեղծումը ըստ շենքերի, ենթաթաղամասերի, երբ ամեն մի շենք, խաղահրապարակ, հատված, կապվում է նախագծի հետ, ներառվում է նախագծում և լուծում է կոնկրետ խնդիրներ:

2016թ. աշխատանք

Այսպիսով՝ կրթական պարտեզ թաղամասի հյուսիսային բարձրադիր հատվածը՝ Ռաֆֆու պողոտայով. մուտք երեք դալաններով՝ Մեդիակենտրոնի, հարևան շինությունների, հեծանվուղու և հետիոտնի համար նշագծված, մեքենայի մուտք-կայանատեղի:

Ցածրադիր հատվածը՝ սարալանջով, թ. 181-Մայր դպրոց միացյալ զբոսայգով, մանկական այգու շարունակությամբ մետաղե աստիճաններով մինչև Նոր դպրոց,
թ. 95 նախադպրոցական ուսումնական հաստատություն:

Իննսունութ աստիճաններով սանդուղքի, որ 2014-ին հիմնանորոգվել է, բազալտով պատվել քաղաքապետարանի միջոցներով, և խորհրդային շրջանի բետոնե, այժմ չօգտագործվող, աղբակույտի վերածված հարյուր քառասուներկու աստիճանով սանդուղքի միջև սարալանջ կա (… քառակուսի մետր), որ կարճ ժամկետում, ըստ ճարտարապետական հիմնավորված նախագծի, կարող է առանց մեծ միջոցների դառնալ թաղամասի հյուսիս-հարավ կասկադի «մեխ»-ը, կրթական պարտեզի չորս կողմերը շրջանագծով և՛ հետիոտն, և՛ հեծանվուղով հետաքրքիր-հուսալի կապող հանգույցը՝ պուրակ: Սարալանջի հյուսիսային պարիսպը, որ առաջացել է ավտոտնակների պատերի գծից, 2016-ի բանգլադեշյան նկարչական երրորդ պլեների գլխավոր ակցիայի առարկան դառնա:

Նախագծով կրթական պարտեզը հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք կասկադների միակցում է, որի կենտրոնական հրապարակը փաստացի կա, գործում է՝ թիվ 181 և կրթահամալիրի մայր (նախկին թիվ 183) դպրոցների գլխավոր մուտքերի հարթ հրապարակ-այգիները միավորող մոտ …. քառակուսի մետր մակերեսով, և՛ թաղամասի, և՛ կրթական պարտեզի աշխարհագրական ու մշակութային կենտրոնն է: Այսպիսի լուծումը թույլ է տալիս «Սեբաստիա» մարզադաշտը, Մայր դպրոցի մարզամշակութային հայտնի-ձևավորված-գրավիչ մարզական մշակութային կրթական լրացուցիչ ծառայությունների սրահները բացել կրթական պարտեզը կազմող բոլոր ուսումնական-մշակութային հաստատությունների

համար, իսկ թիվ 181 դպրոցի տարրական դասարանների սովորողների համար մինչև 2016-ի սեպտեմբերի 1-ը համեստ ներդրումով ունենալ հարմարավետ մարզական խաղահրապարակ: Մնացածը՝ ի տես, Կրթական պարտեզի ճարտարապետների նախագծում ակնհայտ է, ֆունկցիոնալ, մատչելի-արդար՝ և՛ կրթական պարտեզի ուսումնական հաստատությունների սովորողների, և՛ թաղամասի տարատարիք բնակիչների համար: Ոչ մի թանկ-պպլան-ցուցադրական-անհարմար ճոխություն՝ պարզ-հիգիենիկ-հարմար, կանաչ տարածքով ու յուրօրինակ լուծումներով, որում մեծ, հնարավորինս մեծ կլինեն «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի սովորողների և ուսուցիչների «Սեբաստացի» հիմնադրամի ջանքերը, յուրաքանչյուր շահառուի ներդրումը՝ գնահատելի... Որքա՜ն գումար է անհրաժեշտ 2016-ի այս նկարագրված նախագիծը մինչև սեպտեմբերի 1-ն ավարտելու համար: Դժվար չէ հաշվել, վերցրեք նմանատիպ խաղահրապարակ-կանաչապատ տարածքների համար 2015-ի մայրաքաղաքի մեկ քառ. մետրի տենդերային գինը, բազմապատկեք նախագծում դրված սարալանջի մակերեսով ու բաժանեք երկուսի: Ասված է՝ «Կրթական պարտեզի» համար պահանջվող գումարի ուղիղ կեսը քաղաքային նախաձեռնության հոգսն է՝ իմ անձնական պատասխանատվությամբ:

«Կրթական պարտեզի» հյուսիս-հարավ ուղղությամբ կասկադի ճառագայթ՝ դեպի կրթահամալիրի Մեդիակենտրոն ու Գեղարվեստի դպրոց, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 93 և 98 նախադպրոցական ուսումնական հաստատություններ, կառուցապատվող սարալանջից (սանդուղքների արանքում) մինչև թիվ 181 և կրթահամալիրի Մայր (նախկին թ. 183) դպրոց գործող այգի-հրապարակներ, մանկական գործող խաղայգի:

Կրթական պարտեզի կասկադի արևելք-արևմուտքի ուղղությամբ ճառագայթ՝ երկու գծով՝ կրթահամալիրի Քոլեջի, «Սեբաստիա» պտղատու այգու (... քառակուսի մետր), «Մալաթիա Սեբաստիա» վարչական շրջանի թիվ 95 նախադպրոցական ուսումնական հաստատություն, «Վահան Ասատրյան» պուրակ (... քառակուսի մետր), թիվ 181 դպրոցի կառուցվող խաղահրապարակ (... քառակուսի մետր), Երևանի քաղաքապետարանի թիվ 181 հիմնական դպրոցի, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Մայր դպրոցի գործող այգի-հրապարակ կամ զբոսայգի (... քառակուսի մետր), կրթահամալիրի «Սեբաստիա» մարզադաշտով (... քառակուսի մետր) մինչև Բաբաջանյան փողոցից երկրորդական փողոց ու թաղամաս մտնող փողոց: Կրթական պարտեզի մի մուտքն այս փողոցից, մյուսը՝ Ռաֆֆու փողոցից, երրորդը՝ Զորավար Անդրանիկից:

Կրթական պարտեզի հյուսիսային, արևմտյան, արևելյան մուտքերի շեշտում-բարեկարգում, մուտքերի և շրջանաձև հեծանվուղու նշագծումը, ավտոկայանատեղիների և հեծանակայանատեղիների որոշում:

Բոլոր տարածությունները նախագծողների կողմից չափվում են. թվերը նախագծում կճշտվեն:

Կրթական պարտեզի նախագծով կառուցվող թիվ 181 դպրոցի մանկական մարզական բացօթյա խաղահրապարակի համար բավարար կլինեն թիվ 181-ին 2015-ին ցանկություն-ցանկապատի հատկացումները: Ոչ ավելի, քանզի բավարար է: Պակասող գումարը կլրացնի քաղաքացիական նախաձեռնությունը:

Կրթական պարտեզը՝ իր ուսումնական շենքային պայմաններով, անվտանգ ու հարմար հեծանվուղով, ազդելու է բնակելի ողջ թաղամասի զարգացման վրա:

Կայանատեղի՝ վերգետնյա անցումի մոտ. 1-ին հեծանվային ծառայությունը:

Կրթական պարտեզը ամառային երևան ճամբարի հարմար միջավայր:

Հետգրություն: Մենք. 30 տարի Բանգլադեշում

Այո՛ կրթական պարտեզին, որ ահա, երեսուն տարի՝ որպես **հոմանիշ մեր** հեղինակային մանկավարժության, կառուցում ենք մենք՝ Բանգլադեշ կոչվող քար ու քոի մեջ, կրթահամալիրի մեր Բանգլադեշում... Եվ այդ պարտիզպանությունը, որպես անընդհատ բարեխիղճ աշխատանք, փոխում է մեզ, պարտիզպանի որակներ պահանջում ու դրսևորման՝ անհատական-ստեղծական, խմբային-ստեղծական ինչպիսի՜ դաշտ: Ահա, 2016-ի Նոր տարուն որպես նվեր ինքներս մեզ ու յուրաքանչյուրիս, մենք խիզախում ենք ընդարձակել այդ պարտեզը, որպես մի նոր խմբային աշխատանք՝ «Կրթական պարտեզ բնակելի մեր արվարձանում»՝ Հարավարևմտյան զանգվածի Բ-1 թաղամասում՝ ունենալով Երևանի քաղաքապետարանի գործուն աջակցությունը: Նոր մարդիկ, նոր խմբեր՝ անծանոթ մարդկանցով խառը խմբեր, բայց պարտիզպանի աշխատանք ու գործունեություն: Ես դադար ունեցա այսպիսի հրապարակային «այո»-ից առաջ ու, մեկուսի, տանն աշխատեցի երեկ. «Կրթական պարտեզ» նախագծի **2016-ի աշխատանքը**, անելիքը մեր, ահա, ներկայացնում եմ Դավիթ Բլեյանի միջոցով: 2016-ին հինգ տարեկան դարձող Դավիթը, որպես ուսումնական աշխատանք, իր ընկերների, ուսուցիչ-դաստիարակների, իր հայրիկի-մայրիկի, հարազատների հետ կներգրավվի պարտեզի աշխատանքներում:

Հավելված

Մի՞թե դեռ ժամանակը չէ[4]

15 տարի անց կամ առաջաբանի փոխարեն: 1992թ. աշնանը Բաքու կատարած իմ անմոռուկ այցից հետո «Ազգ» թերթը սրանից 15 տարի առաջ՝ 1992 թ. նոյեմբերի 19-ին հրապարակեց իմ «Պատերազմը մերժելով՝ խաղաղություն չի հաստատվում» ընդարձակ հոդվածը: Թույլ տվեք մի մեջբերում անեմ հոդվածից. «Մոռանանք «ելուզակ», «թշնամի», «բարբարոս» որակումները, չբորբոքենք ու շաղ չտանք թյուրիմացություն, չուրախանանք զոհված «թշնամիներով» ու սկսենք ցավել իրար համար ու ցավակցել իրար, ներկայացնենք հանրապետությունների ներքին կյանքը լրիվ սև, սպիտակ, կարմիր... բոլոր գույներով: Թող առաջին հեռուստամարաթոնը կայանա երկու հանրապետությունների դպրոցականների ու ուսանողների միջև. ի՞նչ են մտածում իրար մասին, ինչպե՞ս կարելի է հակամարտությունից անցնել համագործակցության: Ինչո՞ւ չի կարելի հրապարակումներ պատրաստել հարևան երկրի թերթի կամ ամսագրի համար, տրամադրել մեր եթերը մեր հարևաններին: Ինչո՞ւ չեն կարող մեր քաղաքացիները հոդվածներով ու նամակներով հանդես գալ հարևան երկրի

[4] Հանրակրթության դերը հայ-ադրբեջանական դիմակայության հաղթահարման համատեքստում

թերթերում: Պիտի սկսեն իրար նամակներ ու բացիկներ ուղարկել երկու հանրապետությունների դպրոցականներ և ուսուցիչներ, փոխայցելության նախապատրաստվեն երեխաների առաջին խմբերը...»:

Խաղաղարար նախաձեռնությունների կովկասյան կենտրոնի «Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա. քայլեր դեպի երկխոսություն» ծրագրի «Ադրբեջանի օրեր» նախագծով հայ-ադրբեջանական հակամարտության 20-րդ տարում խնդիր է դրվում հասկանալու հասարակական գործունեության մի տարողունակ ձևի՝ կրթության, ի մասնավորի՝ հանրակրթության դերը այդ հակամարտության հաղթահարման գործում: Ահա թե ինչու չէինք կարող այդ նախագիծը ոչ միայն չողջունել, այլև ակտիվ չմասնակցել այդ օրերին:

«Մի՞թե դեռ ժամանակը չի, որ իրար մոտենանք, ճանաչենք, ներենք, սիրենք» (Հովհաննես Թումանյան, Թյուրիմացության մութի մեջ, 1909 թիվ):

Ինձ հուզեց այն լրջությունն ու պատրաստակամությունը, որով իմ գործընկերները և սովորողները փորձում էին ձևակերպել կրթության դերը մեր երկու հասարակությունների հակամարտության հաղթահարման գործում. ասել է թե սկսում ենք անձնավորել, անհատականացնել այս ընթացքում և դրա շարունակման շրջանում կորուստներն ու ձեռքբերումները, ասել է, թե մեր կրավորական և անպատասխանատու վիճակը փոխարինում ենք յուրաքանչյուրիս գործուն ու պատասխանատու դերակատարումով: Գիտակցում եմ, որ մի շնչով, մի ծրագրով այս թեման չենք սպառի: Իմ գործընկերների ««Կրթական կամուրջներ» կրթա-տեղեկատվական և հետազոտական-ստեղծագործական ծրագիր 7-12-րդ դասարանցիների համար» նախագծի առաջարկը, «Հայաստան-Ադրբեջան. հակամարտության կարգավորման չօգտագործված հնարավորություններ և հաշտության ներուժը» խորագրով տպավորիչ Կլոր սեղանը, «Ադրբեջան՝ թշնամի՞, թե՞ բարեկամ» խորագրով սովորողների և ուսուցիչների նամակների անկեղծությունն ու անձնականությունը, կրթահամալիրի սովորողների համար կինոֆոտոլրագրողի և իրավապաշտպանի դպրոցներում Ադրբեջանի և Հայաստանի մասնագետների արդյունավետ համագործակցությունը. ուսումնական աշխատանք դարձավ «Ադրբեջանի օրեր» նախագիծը:

Կկարողանա կրթությունն իր ազդեցությամբ ավելի զորեղ լինել, քան փողոցը: Մեր իրավապաշտպանի դպրոցի սաներն այս նախագծի շրջանակում մեկնարկային դասընթաց յուրացրին, ակտիվ ու ազատ տեսակետներ հայտնեցին շատ հարցերի վերաբերյալ, երբ, դատելով ըստ վերջին հետազոտությունների, հասարակության կեսից ավելին ազատ արտահայտվելու իր իրավունքից օգտվելուց վախենում է... Մեր սովորողներն ու ուսուցիչները մեր ադրբեջանցի գործընկերների օգնությամբ անաչառ փորձաքննության ենթարկեցին կրթահամալիրում խոսքի իրավունքի և ազատության վիճակը. կարևոր էր արձանագրել, թե կրթահամալիրը իրականում որքանով է բաց քաղաքացիական համայնք, որտեղ ապահովված է սովորողի և ուսուցչի՝ արտահայտվելու իրավունքը՝ անկախ քննարկվող հարցի բնույթից, անկախ հասարակական ամենասուր, հաճախ անթույլատրելի արձագանքներից:

«Երկար տարիների խեթ-խեթ հայացքները, ցեղական շահերի անունով բորբոքվող պայքարները, թշնամական երգերն ու կասկածելի փսփսոցները մարդկանց, ժողովուրդների հոգու մեջ ամբարվում են ժամանակի ընթացքում մի սև օր պայթելու՝ զարմացնելով բոլոր միամիտներին, թե էս ինչպես եղավ և որտեղից էր»:

Մեր ժողովուրդների համար բեկումնային շրջանում՝ խորհրդային պետության փլուզման և անկախ պետականության վերականգնման շրջանում, նաև կրթությունը ցույց տվեց իր ողջ սնանկությունը. փողոցն իր փսփսոցով ավելի զորեղ եղավ, քան պետական և հասարակական բոլոր ինստիտուտները (նաև դպրոցն ու կրթական համակարգը) միասին վերցրած: 20 տարի ձգվող հակամարտության շրջանում ինչո՞վ է զբաղված հանրակրթական համակարգը, դպրոցը՝ իր ուսուցչով, դասով, դասագրքերով ու ծրագրերով, ամենատարբեր միջոցառումներով, երբ գոնե վերջին 2-3 տարում Հայաստան թե Ադրբեջան այցելած եվրոպական երկրների կամ կառույցների ղեկավարները (ներկայացուցիչները), որպես կանոն՝ իրենց միջնորդական առաքելությունն ավարտում են իշխանություններին ուղղված կոչով՝ ժամանակն է երկու հասարակություններին նախապատրաստելու արժանապատիվ փոխզիջումային լուծումների ու համաձայնությունների....

Կրթական համակարգը ներկայացնող կառույցների ղեկավարները, իհարկե, հրահանգներով ղեկավարվելու և ղեկավարելու սովոր՝ սպասում են... Եթե ուշանում է պետական իշխանության հրահանգը, այսօր հանրակրթական համակարգը հակամարտության կարգավորման առումով ի՞նչ է անում... Սա, համաձայնեք, հատուկ ուսումնասիրության նյութ է: Ինձ, օրինակ, ուրախացնում է, որ մեր հայաստանյան այսօրվա դպրոցի հասարակագիտական առարկաների դասագրքերում հարևան ժողովուրդների մասին թշնամական կամ անհանդուրժողական ձևակերպման այլևս չես հանդիպում: Սա՝ դասագրքերում, ծրագրերում, իսկ իրական դպրոցական կյանքում, մեր նորագույն պատմության հարցերը և հայ-ադրբեջանական առկա դիմակայության խնդիրները քննարկելիս, տեսակետներ հայտնելիս որքանո՞վ են կրթական համակարգի աշխատողներն իրավական, սահմանադրական, որքանո՞վ են հարգվում մարդու իրավունքներն ու ազատությունները, չէ՞ որ ըստ մեր Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով, և արգելված է ուսուցչի իրավունքների և ազատությունների օգտագործումը ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն և պատերազմ քարոզելու նպատակով: Ցավոք սրտի, մեր կայքում հայտարարված մրցույթին մեր կրթահամալիրից դուրս ոչ մեկը չմասնակցեց: Ուզում եմ հավատալ, որ այս նախագիծն իր շարունակությունը կունենա Ադրբեջանում և մեր հարևան գործընկերները ևս կլծվեն այս տարողունակ և հեռահար աշխատանքին:

Հաշտության ներուժը: Այսօր երկու հարևան ժողովուրդներին՝ մեզ և ադրբեջանցիներին բաժանող հրադադարի շուրջ 200 կմ ձգվող գծի մոտ ի՞նչ վիճակ է. մեզ ի՞նչ է հայտնի: Շփման գծի մոտ միջազգային խաղաղապահներ չկան, և այն հսկվում է միայն ԵԱՀԿ հատուկ դեսպան Անջեյ Կասպերչիկի և հինգ դաշտային օգնականների կողմից: Սա այն դեպքում, երբ

Եվրոպայի կենտրոնում՝ Կոսովոյում, հրադադարն ապահովում է ՆԱՏՕ-ի մի քանի հազարանոց զորամիավորումը: Մյուս կողմից՝ «Հիմնարար սկզբունքներ» կոչվող մի քանի էջանոց փաստաթղթի շուրջ, որը հետագայում, ենթադրվում է, պիտի ստորագրեն Հայաստանի և Ադրբեջանի նախագահները, կողմերը «համաշխարհային» համաձայնության գալու փորձ են անում հրադադարի կնքման պահից, շուրջ 14 տարի... Եվ մեր ուժերով շուտով 14 տարի պահվող հրադադարը, և ջերմությունը, որով իրար հետ հայ և ադրբեջանցի մարդիկ շփվում էին այստեղ, 1992-ին Բաքվում և այլուր. ահա և ներուժը՝ մեր մարդկանց միջև համատեղ կյանքով ստեղծված ու պահպանվող համակեցությունը, անհատական թշնամության բացակայությունը.... Իսկ ճակատային գծի մոտ միայն այս տարի տեղի ունեցած միջադեպերում 30 զինվոր է զոհվել:

«Մեզ չեն ճանաչում մեր հարևանները, բայց մի՞թե մենք նրանց ավելի ենք ճանաչում»:

Ինձ այս փուլում օգտակար և հասանելի են թվում մեթոդոլոգիական բնույթի մի քանի նկատառումներ, որոնք, որքան էլ խելքիս զոռ տվեցի, Հ. Թումանյանից գրագողության նման մի բան ստացվեց: Ահավասիկ: «Իհարկե, գոյություն ունին տարաձայնության և իրական պատճառներ, բայց երբ մոտիկից ծանոթանում եք գործերին ու հանգամանքների խորքն եք նայում, ափաշկարա տեսնում եք, որ դժբախտության գլխավոր պատճառը թյուրիմացությունն է, իրար չճանաչելն ու իրար չհասկանալն է»: Վստահ եմ, որ մեր ուսուցիչների սկսած «Կրթական կամուրջներ» հետազոտական նախագիծը կարևոր խթան կդառնա իրար ճանաչելու և հասկանալու համար:

Մենք՝ երկու ժողովուրդների ներկայացուցիչներս (տնօրեն, ուսուցիչ, սովորող), պիտի անվերապահ հարգենք մեկմեկու: Թե չէ՝ արևմտաեվրոպացի է՝ ճառագում ենք, պատրաստակամ ենք, մեր հարևանն է՝ ադրբեջանցու, թուրքի թե վրացու տեսքով՝ այլ վերաբերմունք է՝ խռոված, պահանջատեր, մեղադրող... Անվերապահի հարգանք մեկմեկու նկատմամբ: Հետաքրքրվենք մեկմեկով, կներեք, մեզ իրար պարտադրենք, հրամցնենք, օգնենք իրար՝ բոլոր բնագավառներում և մակարդակներում իրար ճանաչելու: Հարգենք, հետաքրքրվենք, որ ճանաչենք միմյանց, և վստահ եղեք, որ կուժեղանա հարգանքն, ու կմեծանա հետաքրքրությունը: Վստահ եմ, որ մեր կրթահամալիրում ադրբեջանցի գործընկերների հետ կարճատև ճամբարային գործունեությունը այս «բումերանգն» ի ցույց դրեց: Անկեղծ ու բաց սրտով պիտի մոտենանք մեր հարևան ժողովուրդներին, բոլորին, իհարկե, նաև մեր դրկից ադրբեջանցիներին:

«Եվ երբ էսպես կմոտենանք նրանց թեկուզ հասարակ մարդուն, ավելի շատ բան կգտնենք հարգելու, սիրելու, քան երբ նախապաշարված մոտենում ենք նրանց մեծ մարդկանց»:

Մեր պատմական բեռը, մեր ժողովուրդների պատմությանն ուղեկցող «ռազբիրատը» թույլ չեն տալիս մեզ ժամանակակցի մեր կյանքով ապրելու և մեր՝ այսօրվա մարդու և հասարակության խնդիրներով զբաղվելու, ինչպես սերիալն է մղում իր հերոսների՝ չարի ու բարու անմիջական հուզական ընկալում ունենալու, որպես իր հետ իր մասնակցությամբ կատարվածի: Թոթափենք մեր պատմական բեռը, որպես ճամփորդն է թոթափում իր կոշիկների փոշին, այսօևր ապրող մարդիկ, ապրենք մեր անհատական կյանքը, լուծենք

իրական խնդիրներ: Սրա համար մենք միասին մի ընդհանուր որոշում պիտի կայացնենք՝ ինչ ուզում է լինի, պահպանել խաղաղությունը, հաշտ ապրել և ստեղծել մի եղբայրական կապ մեր ու մեր ժողովուրդների միջև:

20 տարի անց կամ վերջաբանի փոխարեն: Ղարաբաղյան շարժման մեկնարկի՝ 1988թ. փետրվարի անակնկալ ու բազմամարդ միտինգների մասնակիցներիս թվում էր, թե ահա, մի քանի օրում, «ոտքի վրա» կլուծվեն մեր արդարացի պահանջները, ու ամեն մեկս կանցնի իր գործին. հեղինակային մանկավարժություն իրականացնող Երևանի թիվ 183 դպրոցի երեք հայտնի Աշոտներն էլ (Դաբաղյան, Մանուչարյան, Բլեյան) կվերադառնան իրենց սիրելի գործին: Ավա՜ղ, ընդամենը մի քանի օրում խաղաղ շարժումը վերածվեց հայ-ադրբեջանական հակամարտության, հետո՝ նաև պատերազմի: Իմ դուստրը՝ Լիլիթը, ով 1988-ին ընդամենը 10 տարեկան էր, այսօր որպես մասնագետ ներգրավված է այդ հակամարտության կարգավորման գործում: Եթե այսպես գնա, Լիլիթի 6-ամյա Արաքսիկը նույնպես կգործի այս՝ 1994թ. մայիսի 12-ի հրադադարով «սառեցված» հակամարտության պայմաններում... Թվում է՝ հակամարտությունը հատուկ էլ սառեցվել է, որ բոլոր սերունդներին բաժին հասնի...

17.12.07

Այս ոչ լեգիտիմ կյանքը մեզ ո՞վ է տվել

Լեգիտիմությունն ինձ համար երկու չափանիշ ունի՝ իշխանության (պետական և համայնքային) մարմինների ձևավորման օրինականություն և իշխանության մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից մարդու (քաղաքացու) անօտարելի իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգում: Իշխանությունը ոչ լեգետիմ է, եթե նրա ձևավորումը (ընտրական գործընթացը) անհատական գիտակցության ընկալմամբ հասարակայնորեն ճանաչված է որպես անօրինական: Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով Հայաստանը՝ որպես պետություն, պարտավոր է իր տարածքում ապահովել մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Ուրեմն այսօր իշխանությունը ոչ լեգետիմ է նաև, որ չի ապահովում մարդու իրավունքների ու ազատության պաշտպանությունը: Երկու չափանիշով էլ ոչ լեգիտիմ իշխանություն ունենք Հայաստանում. անպաշտպան է քաղաքացին (փաստ է), նաև անօրինական են ձևավորվել («ընտրվել») ոչ միայն օրենսդիր և գործադիր մարմինները, այլև գործող Սահմանադրությունը: Սահմանադրական վերջին հանրաքվեի ժամանակ արձանագրվեց, որ ընտրական գործընթացը կարելի է կազմակերպել և առանց ընտրողի. ՀՀ օրենքով ձևավորվող ընտրական հանձնաժողովները և ՀՀ օրենքով վարվող փաստաթղթերը (ընտրական ցուցակներ, քվեաթերթիկներ, արձանագրություններ) բավարար են: Ընտրողի մասնակցությունը ծախսատար է ու հոգսեր է առաջացնում: Իրավունքի դասականի մոտ եմ կարդացել՝ իրավապահ մարմինները (այդ թվում՝ պետական իշխանության ամենազգայուն մարմինները՝ դատարանները) արդարադատություն իրականացնելու իրենց ուժն ստանում են օրինական ձևավորված օրենսդիր և գործադիր իշխանությունից: Մեր դատարանն այսօր անուժ է իրավունքի պաշտպանության համար: Մարդկանց իրավունքները կարող են անպատիժ ու անվերականգնելի ոտնահարվել համայնքի և պետության մակարդակով: Աքսիոմատիկ պնդում է (մեր իրականությունը վկա)՝

բարեկեցիկ հասարակություն, մրցունակ տնտեսություն և անվտանգ քաղաքացի չեն լինում առանց գործուն արդարադատության: Մենք այս ոչ լեգիտիմ կյանքով բավականաչափ երկար ենք ապրում՝ հասարակայնորեն հարմարվելու աստիճանի: Սրա հաղթահարումը և՛ դժվար կլինի, և՛ հատուկ կազմակերպում է պահանջում:

Ինչո՞ւ է այսպես

Հին պատմություն է, եթե թողնեմ չարչրկված հղումը ազգային մենթալիտետին, մենք՝ մեր եղունգով մեր գլուխը քորողներս ու յոլա գնացողներս, հայտնվել ենք մեր «մոր փորում», մեր ստեղծած անկարգ ու անօրինական կյանքում սկսել ենք զգալ ինչպես ձուկը ջրում: Ես Հ. Թումանյանի մոտ եմ կարդացել ավանդույթի ուժով այս արատի պատճառի մասին՝ մեզանում գաղափարի մարդը իր հրապարակած գաղափարին չի ծառայում: Այսօր սա, ցավոք, միայն մեր հասարակության ֆորմալ լիդերներին (բոլոր մակարդակի իշխանավորներին) չի վերաբերում: Ավա՜ղ, այս արատը՝ որպես բացիլ, հասել է նաև մեր հասարակության ոչ ֆորմալ լիդերներին՝ լրագրողին ու ձեռնակատերին, ընդդիմադիր քաղաքական ու հասարակական գործչին, ուսուցչին ու դասախոսին, արվեստագետին ու գիտնականին, ովքեր իրենց ստացած կրթությամբ և զբաղեցրած դիրքով հասարակության որևէ խմբի (հանրույթի) վրա ազդեցություն ունեն: Մեր իրականության ողբերգությունը կատարյալ է, քանզի գաղափարին չի ծառայում (դադարել է ծառայելուց) նաև շարքային կոչվող քաղաքացին, Հայաստանում ապրող մարդը, ում գաղափարը մեկը պետք է լիներ՝ հարգել օրենքները, իր և այլոց իրավունքները: Ընտրողը տարբեր պատճառաբանություններով դադարել է օրենքով (օրինական) իշխանություն ձևավորելուց՝ այսպիսով իր չընտրած իշխանավորի և առանց լիազորության ազգի անունից հրապարակավ հանդես եկող գրագետի հետ կազմելով մռայլ երրորդություն:

Ի՞նչ անել

Երբ իշխանություններն անօրինական են, սոսկ քննադատելը մի տեսակ նրանց օրինականացնելու ձև է: Խնդիրը երկու չափանիշով էլ հայաստանյան իշխանության օրինականացումն է: Մենք մեր անհատական՝ սոցիալական-քաղաքական-քաղաքացիական իրավունքների և ազատությունների համար չենք պայքարել և չենք նվաճել դրանք՝ որպես մեր անհատական պայքարով ձեռք բերած արդյունք: Էլ չեմ խոսում սոցիալական-քաղաքական-քաղաքացիական ազատություններն ամեն օր անհատական ջանքերով պահպանելու մասին: 1988-1990թ.թ. երանությունը բոլորս ճաշակեցինք՝ որպես երկնային մանանա, որն ունեցանք հասարակական համաձայնության մեր պոռթկումի պահին՝ հանուն մեր ազգային իղձի՝ Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծման: Այո, կարճատև, բայց ցույց տվեցինք, թե մարդկային ինչպիսի որակներ ենք կրում, ինչ ասել է հասարակական կյանք, ազատության, հավասարության և եղբայրության գաղափարներով տոգորված ժողովուրդ: Ինչպես եկել էր, այդպես էլ գնաց: Ազգային եռանդն ու ոգևորվածությունը չփոխարինվեցին աշխատավոր մարդու անհատական ազատությունների և իրավունքների համար զրկանքներով ու վտանգներով ուղեկցվող անդադրում և տևական պայքարով: Ծուլացանք, չկարևորեցինք, ընդունակ չեղանք... Այսքա՜ն գործազուրկ և կյանքի իրավունքի այսպիսի՜ արհամարհում, և ո՛չ մի գործադուլային շարժում: Այսքա՜ն կեղծված ընտրություններ, քաղաքացու այսպիսի ստորացում, և ետքվեարկության բողոքի մի քանի օրից բացի ոչ մի լուրջ ընդվզում: Չի կարելի

հաշտ ապրել այս «ոչ լեգիտիմ» իրականության հետ ու չսկսել համեստ անհատական պայքարը: Չի կարելի կեղծել՝ թերթով, հեռուստացույցով, լսարանի (այդ թվում սովորողների) առաջ խոսել օրինական ընտրությունների անհրաժեշտության մասին, իսկ քիչ հետո վաճառել հանձնաժողովի տեղերը կամ ընտրական այլ անօրինականություն կատարել ու մտնել աշխատանքային կոլեկտիվ ու դասարան, քարոզել հաջորդ վեհ գաղափարները, կարծես ոչինչ էլ չի եղել:

Ի դեպ, ընտրությունները երբեք չեն ավարտվում, անընդհատ են: Իսկ ի՞նչ օրինականություն, երբ հայտնի ու հաճախ անհաղթահարելի խոչընդոտներ կան՝ հասարակության մեջ քաղաքական գաղափարների տարածում (գործադիրի կողմից կառավարվող եթեր, խաղաղ երթերի և հանրահավաքների անցկացման թույլտվություն, ժողովների համար դահլիճների հայթայթում), քաղաքական գործունեությամբ զբաղվելու համար գլխավոր դատախազի կողմից կառույցների ստեղծում, երբ Հայաստանով մեկ քաղաքական կուսակցությունները ոչ միայն զբաղված են ընտրակաշառք (ապրանք, փող և ծառայություններ) բաժանելով, այլև դա հեռուստաեթերով գովազդում, որպես կարևոր լրատվություն են ներկայացնում հասարակությանը, երբ վաղվա օրվա համար համատարած վախ կա... Սրանք ընտրության օրինականությունը բացառող հանգամանքներն են՝ յուրաքանչյուրն առանձին-առանձին և միասին վերցրած: Պիտի խիզախի մեզանից յուրաքանչյուրը, պիտի վտանգի իրեն, ունեցած-չունեցածը, որ հաղթահարենք հասարակությանը բռնած վախը: Չխոսենք ազգի անունից և չգուժենք ազգի կործանման մասին՝ այ, եթե այս անգամ էլ..., ապա ազգը կկործանվի: Ազգին հանգիստ թողնենք: Համեստություն է պետք, որ յուրաքանչյուրս հանդես գանք մեր անունից կամ այն խմբի, ում լիազորությունն օրինական ստացել ենք: Յուրաքանչյուրս անելիք և լիազորություն ունենք՝ ինքներս մեզանից սկսելու, օրինական գործելու, որպես քաղաքացի լեգիտիմանալու համար:

III. Բարո՛վ եկար, սիրո՛ւն Մեդիա[5]

Մեդիան ամենաթափանց է, որքան էլ ջանաք դռները ամուր փակել կամ եթե բոլոր ճեղքերը դարձնեք խուլ պատեր: Լա՛վ լսեք, Մեդիայի ժամանակն է վաղուց: Յուրաքանչյուրի՝ սովորողի ու նրա ուսուցչի, դպրոցի երեխայի ու նրա ծնողի, ընտանիքի քաղաքացու ու միով բանիվ՝ անհատի ու հասարակության, ով հաստատակամ է կատարելագործման, առաջադիմության ու անվերջ ճանապարհից չշեղվելու, ում շահն է՝ այս հնչեղ, գրավիչ, համապարփակ Մեդիան: Ամենադեմոկրատական աշխարհն է այս Մեդիան.

ա) առանց տարիքի ու որևէ այլ սահմանափակման. տեսե՛ք, մեր ստուգատեսին մասնակցում են հինգ տարեկաններն ու նրանց տատիկ -պապիկները, սկսնակ ուսուցիչն ու նրա տարիքից ավելի մանկավարժական փորձառություն ունեցողները,
բ) չկա ոչ մի խտրություն՝ տեսե՛ք, ինչ հեշտ հարաբերվում են ու համագործակցում

[5] «Թվային ուսուցման միջոցները արդյունավետ կրթության գործիքներ» 2010թ. միջազգային ստուգատեսի բացման խոսք

ամենատարբեր խմբերն ու անհատները,
գ) ամեն օր էժանանում է ու մատչելի դառնում յուրաքանչյուրին, ունևորին ու չունևորին:

Ստեղծագործի՛ր, զբաղվի՛ր ստեղծական աշխատանքով՝ ամենուր, անընդհատ, անհապաղ՝ ահա այսպիսի արարչագործ հնարավորություն է ընձեռում մեդիան՝ իր տեխնոլոգիաներով և թվային սարքերով:

Այս ստուգատեսով մենք՝ որպես հավաքանի, կրկին հաստատում ենք մեր հավատարմությունը Մեդիային ու մեր բռնած ճանապարհին. կրթահամալիրը՝ Մեդիա աշխարհ: Անելիքը պարզ է՝ վերացնելով ուսումնառության գործի անջրպետները, հաստատելով նոր կամուրջներ ուսումնառության բոլոր սուբյեկտների միջև և գործածելով ազատ արտահայտվելու այսօր հայտնի միջոցները՝ կհայտնվենք Մեդիա աշխարհում: Մեր ստուգատեսը բաց ու ամենամյա հենց այդպիսի կարևոր հանգրվան է:

Մենք բացում ենք Մեդիայի դռները հանրակրթական դասարանի առաջ ու սկսում մի նախագիծ, որ կոչվում է «Խելատախտակը դասարանում»: Ահա մեր Լուսինե Փաշայանի երկրորդ դասարանը դարձավ էլեկտրոնային գրատախտակով առաջին դասարանը: Այդպիսի դասարանների թիվն անընդհատ կավելանա: Մեր սովորողների ծնողները սրանով շարունակում են հանդես գալ որպես իրենց երեխայի արդյունավետ կրթության ներդրողներ:

Մենք սկսում ենք մեր «Ուսումնական ռադիոթատրոնի» գործունեությունը և ստուգատեսին ներկայացնում առաջին ռադիոբեմականացումները: Յուրաքանչյուր սովորող հնարավորություն կունենա ռադիոեթերում ակտիվացնելու շարունակ պասիվացող գրական ստեղծագործությունը:

Մենք սկսում ենք իրականացնել «Ուսումնական ինտերնետ TV նախագիծը», և Ձեր ուշադրությունը հրավիրում մեր սովորող Սարգիս Մարկոսյանի նորացրած կրթահամալիրի կայքին՝ որպես կարևոր քայլ կրթության ճանապարհին:

Սոսկ թվերով ներկայացված են ստուգատեսի պահանջներին բավարարող անհատական ու խմբերով կատարված մրցութային էլեկտրոնային աշխատանքները՝ բոլոր հայտարարված անվանակարգերով: Ի դեպ՝ բոլորը նոր աշխատանքներ են, որ չեն ներկայացվել ո՛չ 2008թ հունիսին՝ «Ժանգոտ դդում» ամենամյա Մեդիափառատոնին, ո՛չ 2009թ. մայիսին՝ «Հեղինակային մանկավարժության հեղինակների բաց ու ամենամյա հավաքին», ո՛չ 2009թ. հոկտեմբերին՝ «Կրթահամալիրում իրականացվող մանկավարժության բաց փորձաքննությանը»: Ստուգատեսի կատալոգը հրապարակված է ի տես, մնացածը՝ կտեսնեք երեք օրերի ընթացքում: Ստուգատեսի հետաքրքրության մասին է խոսում ոչ միայն մասնակիցների այսպիսի աննախադեպ աշխարհագրությունը, քանակն ու կազմը, այլև մեր կայք այցելողների օրական թվի կրկնապատկումը: Ներկայացված են նաև աշխատանքներ, որոնք ոչ մրցութային են: Ոչի՛նչ, որ այս անգամ չհասցրիք: Մենք կհանդիպենք մայիսին, հունիսին, հոկտմեբերին, 2011-ի հունվարին: Չե՛ք փախչի: Կարևորը հանդիպեցինք: Բարով եք եկել:

Ստուգատեսի փակումը, մրցանակային ֆիլմերի դիտումը և մրցանակների հանձնումը

հունվարի 23-ին, այստեղ և՝ ոչ պակաս հանդիսավոր: Նրանք, ովքեր չեն հասցրել դառնալ ստուգատեսի հովանավորը, մրցանակաբաշխություն սահմանել կամ մուծումներ կատարել մրցանակային ֆոնդին, ժամանակ ունեն:

Ուռա՛, Մեդիակրթությունը կարևորում է նաև Հայաստանի Հանրապետությունը: Մեջ եմ բերում հանրակրթության մասին ՀՀ օրենքից. «Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է. 4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը»:

Բարով եք եկել բոլորդ՝ անցել դաշտ ու սար: Ճանապարհ եք անցել: Ահա Մայր դպրոցում հանդիպեցինք, որ միասին շարունակենք ճանապարհը Գրավիչ Մեդիա Աշխարհով:

Կա մեդիա՝ կա կրթություն

Վիլյամ Սարոյանը՝ «Ինչպե՞ս եք գրում» հարցին պատասխանել է. «Սկզբից գրում եմ վերնագիրը, հետո շարադրում եմ գրել»:
Այս տեքստի պատվերը նորից «Դպիրինն» է, նրա անխոնջ-խոնարհ-նվիրյալ խմբագիր՝ Սուսան Մարկոսյանինը, իսկ վերնագիրը ինձ հուշեց Նունե Մովսիսյանը, ում՝ թեմայի առումով արդիական «Չկա մեդիա, չկա կրթություն» հոդվածի թարգմանությունը անպայման կարդացեք «Դպիրի» այս համարում: Վերջին շրջանի իմ մանկավարժական հրապարակումները «Դպիրի» պատվերի կատարումն են: Այդպես է ստացվել: Շնորհակալ եմ կրթահամալիրի էլեկտրոնային հրատարակչությանը, որ Հանրակրթական Դիջիտեքի օրերին թվայնացրեց իմ տպագիր ժողովածուները, հրատարակեց մանկավարժական հոդվածների էլեկտրոնային հատընտիրը: Ուռա՛, ես իմ ստեղծագործական արխիվով ամբողջությամբ մեդիայում եմ: Ես կամ, ինչպես իմ գործընկերները կան, սովորողները՝ սկսած երեք տարեկան սաներից, նրանց ծնողները, ովքեր շնորհիվ Հանրակրթական Դիջիտեք 2011-ի հայտնվեցին մեդիայում, դարձան ճանաչելի, հասանելի:

Այս մի տարին, որ բաժանում է նախորդ ստուգատեսից, դարձավ բոլորիս մեդիակարողությունների զարգացման ու հնարավորությունների դրսևորման շրջան: Այսքան ակնհայտ, որ բավական է ընդամենը Հանրակրթական Դիջիտեքի ներկայացրած ամփոփիչ ցանկում համապատասխան սովորող կամ ուսուցիչ հեղինակի տողում սեղմել համապատասխան հղումը, ու դուք մեդիայի ցանցում կդիտեք տեսանյութը՝ 800-ից ավելի՝ տեսանյութեր, հոդվածներ, էլեկտրոնային հաշվետվություններ, թվային միջոցներով ստեղծված այլ նյութեր: Ժյուրիի վիճակը նախանձելի չէ. պիտի կարողանա մի քանի օրում տասնմեկ անվանակարգերով («Տեսադասեր, էլեկտրոնային դասեր», ««Նոթբուք» ծրագրով ուսումնական նյութեր», «PowerPoint ծրագրով ուսումնական նյութեր», «Ուսումնական ֆիլմեր», «Տեսահոլովակներ (գրական, երաժշտական, գովազդային)», «Ռադիոհաղորդումներ», «Աուդիոգրքեր», «Ուսումնական աշխատանքի էլեկտրոնային

հաշվետվություններ», «Համակարգիչ-դասընկեր ծրագրի նախագծեր», «Թվային միջոցներով ստեղծված այլ ուսումնական նյութեր», «Էլեկտրոնային գրքեր, հոդվածներ, թարգմանություններ») կարողանալ արդարացի ընտրություն կատարել, երբ ոչինչ ծածուկ կամ անհայտ չէ: Շնորհիվ մեդիայի, յուրաքանչյուրս ժյուրիի անդամ է: Մնում է, որ մենք օգտվենք մեդիաշնորհից, ուշադիր ծանոթանանք ու անաչառ գնահատենք: Ստուգատեսից ստուգատես անցնող այս մեկ տարին մեր mskh.am-ը իրական երկրոդ աշխարհը դարձրեց կրթահամալիրի ուսուցիչների, սովորողների ու նրանց ծնողների համար:

Այս ստուգատեսը ունի մի էական առանձնահատկություն ևս: Նրա կազմակերպիչները՝ սկսած ստուգատեսի տնօրենից, մեր սովորողներն են: 11-րդ դասարանցիների մի մեծ խումբ պատվով բռնեց այս միջազգային քննությունը: Բռավո՛: Կա մեդիա՝ կա կրթություն: Փետրվարի 28-ից սկսվում են մեր այլընտրանքային օլիմպիադաները, ըստ կրթատարիքային փուլերի՝ 1-4-րդ, 5-6-րդ, 7-9-րդ, 10-11-րդ դասարանցիների համար: Սրանք լավագույն հնարավորություն կդառնան ստեղծագործական, հետազոտական աշխատանքի համար: Շնորհիվ մեդիայի, օլիմպիադային հնարավորություն կունենան մասնակցելու նաև հանրապետության այլ դպրոցներում սովորող ուսումնատենչ երեխաները: Մնում է՝ նրանք լինեն մեդիայում: Մենք կթարգմանենք այլընտրանքային օլիմպիադայի առաջադրանքները՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն, թուրքերեն, վրացերեն, ռուսերեն, իտալերեն, իսպաներեն լեզուներով, որ օլիմպիադան միավորի բոլորին՝ անկախ լեզվից և սահմաններից: Օլիմպիադայի միջոցով սովորողները ձեռք կբերեն գարնանային ուսումնահետազոտական ճամբարի ուղեգրեր, որպես հնարավորություն բնության գրկում միասին գործելու, միասին ու միմյանց ճանաչելու:

Այսպիսի՛ն է մեդիան: Դեմոկրատական, գրավիչ, միավորող, ամենահաս, անընդհատ և անվերջ:

Անհատական համակարգիչն ու ինտերնետը՝ ուսուցման միջոց

Հանրահայտ Բիլ Գեյթսն իր «Ճանապարհ դեպի ապագա» գրավիչ գրքում հայտարարում է. «Մենք նոր հեղափոխության շեմին ենք և հիմա հատում ենք տեխնոլոգիական պատնեշը, որից այն կողմ ամեն ինչ այլ է լինելու»: Թերահավատներին Գեյթսը պատասխանում է պատմական ակնարկով: Օքսֆորդի պրոֆեսորը 1878թ. էլեկտրականությունը համարում էր խաբեություն, իսկ պատենտային ծառայության աշխատակիցը հրաժարվում էր գյուտը գրանցելուց և հայտարարում. «Այն, ինչ կարելի էր ստեղծել, արդեն ստեղծված»: Գուտենբերգից (1450թ.) առաջ աշխարհում մոտավորապես 30 հազար գիրք կար, իսկ 1500-ին արդեն գոյություն ուներ մոտավորապես 9 մլն. գիրք: Միայն 1981թ. հայտնվեց առաջին IBM-PC անհատական համակարգիչը: Հետևություն ըստ Գեյթսի՝ առաջընթացի արագացումն անխուսափելի է, պետք է նրանից լավագույնը քաղել:

Ամենակարևորը մոտ ապագայի մեր պատկերացումն է: Աշխատենք ինֆորմացիոն նոր տեխնոլոգիաների մասին իմանալ հնարավորինս շատ, քանզի անխուսափելիորեն առնչվում են բոլորիս: Որքան շատ իմանանք, այնքան քիչ կվախեցնեն մեզ: Իսկապես, իսկ ինչպիսի՞ն կլինի, ասենք, կրթությունը, եթե կապի արդի միջոցները, անհատական համակարգիչն ու որակյալ ինտերնետը հասանելի լինեն բոլորին՝ սովորողին, նրա ուսուցչին ու ծնողին:

Այսպիսի հարցադրմամբ այսօր ինչպիսի՞ն է վիճակը Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում. ի՞նչ թվային սարքեր ունենք կրթահամալիրում, մանկավարժների ու սովորողների տներում, ծնողների աշխատավայրերում, ինտերնետից, կապի նոր միջոցներից և տեղեկատվական հաղորդակցության թվային սարքերից ինչքա՞ն ենք օգտվում այսօր մենք՝ ես, դուք, մեր սովորողը, տանը, աշխատավայրում:

Համաժողովի հարգելի մասնակիցներին եմ ներկայացնում կրթահամալիրի սոցիոլոգի ծառայության ուսումնասիրությունը, կրթահամալիրի տնօրենի աշխատակազմի պատրաստած տեղեկանքը ըստ դպրոցների (ծրագրերի): Հարգելով լսարանը և ձեր ժամանակը՝ թույլ տվեք հնչեցնել միայն հարցադրումներ: Ահա ձեզ էժան և ունիվերսալ էլեկտրոնային պարբերական՝ կրթահամալիրի ինտերնետ կայքն ու էլեկտրոնային «Դպիր» ամսագիրը, բոլորիս մատչելի՝ սովորողի, ուսուցչի և ծնողի անհատական էլեկտրոնային փոստը: Ինչպե՞ս սրանք դարձնենք ամենօրյա գործածական՝ մանկավարժների, սովորողների և նրանց ծնողների համար: Կարո՞ղ ենք, որպես 1-ին քայլ՝ էլեկտրոնային փոստը դարձնել մեր հաղորդակցությունների փոխանակման հիմնական միջոց: Կարո՞ղ ենք օգնել միմյանց ու եղած, մեր ունեցած տեղեկատվական հաղորդակցության միջոցներն արդյունավետ գործածել: Կարո՞ղ ենք անհատական համակարգիչը գործածել որպես ուսուցման անհատական միջոց: Կարո՞ղ ենք, ինչպես Գեյթսն է պատասխանում, եթե մեր ու մեր երեխաների կրթությունը դիտենք մեր սուղ միջոցների ներդրման լավագույն վայր: Ինֆորմացիոն տեխնոլոգիաները (գլոբալ կապն ու թվային միջոցները՝ անհատական համակարգիչն ու նրա աքսեսուարները, այլ թվային տեսասարքերը), մեր օրինակով գիտենք (այս հավաքում փորձեցինք ցույց տալ)՝ լավացնում են կրթությունը՝ որպես պրոցես, և միաժամանակ փոխում մեր կյանքի բոլոր ոլորտները: Դրանք, ստիպելով սովորողին, ուսուցչին և սովորողի ծնողին շարունակել սովորել, ուսուցման պրոցեսը, սովորելու ընթացքը դարձնում են հաճելի, ուսուցմանը գրավչություն հաղորդում այնքան, որ արագ տեսանելի (ակնհայտ) են դառնում ուսուցման արդյունքները: Տեսա՞ք, չէ՞, ինչքան բան գիտեն, կարողանում են անել և անում են մեր երեխաները՝ սկսած 1-ին դասարանից:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաները փոխում են ոչ միայն առաջնակարգ ֆիրմաները կամ օֆիսները, այլև մեր երեխայի դասարանը, դպրոցը, ուսուցման գործի ողջ կազմակերպումը: Ինֆորմացիոն տեխնոլոգիաները (ԻՏ) կբերեն ու վերջապես կհաստատեն անհատական, խմբային և կոլեկտիվ ուսուցման մեթոդների այնքա՜ն պակասող հարմոնիան: ԻՏ-ն արթնացնում է հետաքրքրություն և խթանում մեր ուսուցիչների ու սովորողների ստեղծական գործունեությունը: Այս դահլիճն ու հավաքը հագեցած են այդպիսի, սիրելի, անհրաժեշտ (ուսուցչի համար) որակներով: Մեր ուսուցիչներն ավելի ու ավելի վստահ, զինված ինֆորմացիոն նոր տեխնոլոգիաներով, կատարում են իմացումի (գիտելիքի) միջնորդի իրենց առաքելությունը: Սովորողը հենց սովորող է, երբ ուզում է իմանալ. իսկ իմանալու որքա՜ն բան կա: Առանց ինֆորմացիոն տեխնոլոգիաների, արձանագրենք, անձին բավարարում պարգևող իմացումն անմատչելի է թվում: ԻՏ-ով զինված, ԻՏ-ն ամենօրյա աշխատանքում գործածող ուսուցիչը կարող է լավատես լինել ու վստահ նայել ապագային. ստեղծագործ ոգի ու իմացումի էներգիա դպրոց-դասարան բերող մասնագետը մեծացող պահանջարկ կունենա: Ծնողները պիտի սովորեն (կսովորեցնեն հենց ձեր երեխաներն ու մենք՝ ձեր երեխայի դպրոցի ուսուցիչները) և սովորեցնեն: Խոսքս այն ծնողների մասին է, ովքեր ինֆորմացիոն նոր

տեխնոլոգիաներն արդեն գործածում են իրենց աշխատանքում: Մեզ ՏՀՏ-ից, լիարժեք հաղորդակցությունից, սովորելու արդյունավետ ու գրավիչ միջոցներից անջրպետող արգելքները կհաղթահարենք, կհայթայթենք ֆինանսներ ու խելամիտ լուծումներ կգտնենք, եթե կրթության նպատակը մեզ համար ոչ թե դիպլոմն է, այլ անընդհատ կրթության պարգևած հաճույքը: Այո՛, կրթություն ողջ կյանքի ընթացքում: Իսկ մեր կյանքի սահմանափակումները մեզ պարտադրում են խելամիտ լուծումներ գտնել: Շնորհքի, ընդունակության հարց է:

Ելույթ՝ «Կրթությունը 10 տարի անց» համաժողովում 23.12.06թ.

Տեղեկատվական հաղորդակցության (ինֆորմացիոն) տեխնոլոգիաները՝ ուսուցման միջոց

Այս վերնագրով ելույթ այս նույն լսարանում ես ունեցել եմ 2006թ. դեկտեմբերի 23-ին «Ծնողի դպրոց» ծրագրով, «Կրթությունը 10 տարի անց» համաժողովում: Հետաքրքրասերներն այն կարող են կարդալ «Դպիր» էլեկտրոնային ամսագրի 3-րդ համարում: Ուզում եմ շարունակել իմ այդ ելույթը և յուրաքանչյուր ուրբաթ հետազոտողի՝ ազատ մարդու դպրոցի ներկայացման համար, ինֆորմացիոն տեխնոլոգիաների փաստացի բերած անհատական, խմբային ու կոլեկտիվ ուսուցման մեթոդների այնքա՛ն պակասող ներդաշնակության համար իմ երախտագիտությունը հայտնել իմ գործընկերներին՝ դասավանդողներին և սովորողներին՝ նրանց մեջ, իհարկե, առանձնացնելով Սոնա Խաչատրյանին: Ուրբաթ օրերին սովորողների ներկայացրած էլեկտրոնային հետազոտական աշխատանքների (նախագծերի) անվանումների ոչ լրիվ ցանկը, որ բաժանված է հավաքի մասնակիցներիս, իսկապես տպավորիչ է:

Մենք չենք թերագնահատում ավանդական (սպառողի) դպրոցի իներցիան, նրա ռևանշիստական էությունը: Նա գործում է, ինչպես վիրուսը՝ ինտերնետում, ուստի նրա վնասազերծումը հնարավոր է և պահանջում է ուսումնական գործի նոր կազմակերպում: Վերջին տարիներին մենք մեր հպարտությունն ենք համարել 1-ին դասարանից սկսած «Համակարգչային գրագիտություն և ինտերնետ» առարկայի ներմուծումը, նոր առարկայի ուսուցման կազմակերպումը կրթահամալիրի բոլոր սովորողների համար, իսկ ա՛յ, կրթահամալիրի 2007-2008 ուստարվա ուսումնական պլաններում այդ առարկան չքացել է: Այո՛, պիտի չքանար, որ ՏՀՏ-ն չօտարվի ուսուցչի և սովորողի իրական ուսումնական կյանքից, չդառնա դպրոցում մի խումբ նեղ մասնագետների մենաշնորհը, այլ հայտնվի հետազոտող ուսուցչի և սովորողի ձեռքին՝ որպես հարմար ու գրավիչ աշխատանքային միջոց: Թո՛ւյլ տվեք Ձեր առաջ հպարտանալ պարտադիր հանրակրթության՝ կրթահամալիրի կրտսեր դասարանների 2007-2008 ուստարվա ուսումնական աշխատանքի պլանի պարզաբանումներից արված այս մեջբերումով (կետ 7, 8). «Իմացումի հրճվանք» ծրագիրը բաղկացած է մայրենի լեզու, մաթեմատիկա, ռուսաց լեզու, անգլերեն, համակարգչային գրագիտություն, կյանքի հմտություններ, ֆիզկուլտուրա, արվեստ, տեխնոլոգիա, շախմատ դասընթացներից: Օտար լեզուները, համակարգիչն ու ինտերնետը ուսուցվում և գործածվում են առաջին դասարանից: 1-2-րդ դասարաններում ապահովվում են օտար լեզուների ամենօրյա պարապմունքներ: Երկրորդ դասարանից սկսած՝ սովորողն օգտվում է

էլեկտրոնային փոստից: 2-4-րդ դասարաններում «Համակարգչային գրագիտություն» դասընթացի շրջանակներում սովորողը ծանոթանում է համակարգչային կիրառական ծրագրերի: 5-6-րդ դասարաններում սովորողը օտար լեզուները, համակարգչային կիրառական ծրագրերը և ինտերնետը գործածում է որպես ուսուցման միջոց, նաև ձևերից մեկը՝ նախագծային, հետազոտական աշխատանքները կատարելու և դրանք ներկայացնելու ընթացքում»:

Եվ այնքա՛ն բնական է ու համոզիչ, որ կրթահամալիրի 2007թ. հայտագրում հանդիպում ենք «Համակարգչային ծրագրերով ուսուցում անհատական համակարգիչներ ունեցողների համար ստեղծված դասարաններում» ազդին: Եվ գովելի է այն հետևողականությունն ու արագությունը, որով նորացվում են կրթահամալիրի բոլոր ուսուցողական ծրագրերի մեդիա կենտրոնները, իսկ անհատական համակարգիչն ու ինտերնետը, ուսուցման թվային այլ միջոցներն սկսել են հայտնվել կրթահամալիրի գրադարանում, բնագիտության լաբորատորիաներում, դասարաններում, այլ ուսումնական կաբինետներում, վաղը-մյուս օրը կհայտնվեն յուրաքանչյուր սովորողի աշխատանքային սեղանին, ասել է, թե սկսում են դառնալ անհատական գործածման: Եվ իհարկե մեր երեխաները որ ոչ միայն չեն վախենում տեխնիկայից, այլ իրենց բնական հետաքրքրասիրությամբ ձգվում են դեպի տեխնիկան՝ համակարգիչը, սկաները, թվային պրոեկտորը և ֆոտոխցիկը, շատ ավելի արագ են յուրացնում ինֆորմացիոն նոր տեխնոլոգիաները, քան մենք՝ դասավանդողներս: Ո՛չ վախենալ է պետք, ո՛չ չարանալ, ո՛չ խանգարել. պիտի խնդրել, որ նրանք մեզ էլ սովորեցնեն իրենց յուրացրած համակարգչային ծրագրերը: Այդ գործը նրանք այնքա՛ն լրջությամբ են կատարում: Համ էլ զվարճալի է:

Իմ այս ելույթից լավ կոչ ստացվեց: Համակարգիչն ու ինտերնետը շքեղություն չեն ժամանակակից դպրոցում, այլ ուսուցման գրավիչ ու արդյունավետ միջոց: Ես ազնիվ պիտի լինեմ Ձեր առաջ. մեր ուսուցիչը, Դուք, հարգելիներս, հենց Ձեր մասնագիտության ուսուցման համար բավարար գրագետ չեք կարող համարվել, եթե գործնականում չեք տիրապետում մեկ տասնյակի չափ համակարգչային ծրագրերի և Ձեր աշխատանքում չեք գործածում օր օրի էժանացող և դրանով յուրաքանչյուր դպրոցին, սովորողին և ուսուցչին մատչելի դարձող ուսուցման էլեկտրոնային միջոցները:

Արդիական՝ գրավիչ և արդյունավետ ուսուցում

Ելույթ 2009թ. «Թվային տեխնիկական միջոցները արդյունավետ կրթության գործիքներ» ստուգատեսի ամփոփման ժամանակ

Չորս օր կրթահամալիրի մայր դպրոցի նորաստեղծ հինգ ՏՀՏ կաբինետներում կրթահամալիրի սովորողներն ու ուսուցիչները հրապարակային ցուցադրում էին իրենց հեղինակած տեսանյութերը, տալիս անհրաժեշտ մեկնաբանություններ: Իմ ձեռքին են ցուցադրված նյութերի ցանկերը (ավելի քան 230 տեսանյութ), որոնք տեղադրվել են նաև կրթահամալիրի ինտերնետ կայքում: Այսպիսով՝ առաջինից տասնմեկերորդ դասարանցի հարյուրավոր սովորողներ և մի քանի տասնյակ ուսուցիչներ տեսանյութերի հեղինակներ են:

Այսօր՝ ստուգատեսի ամփոփիչ փուլին, հեղինակները կներկայացնեն նմուշներ այդ ցուցադրությունից՝ սահմանված անվանակարգերով ընտրված նյութերը:

Հիմա, երբ իրողություն է, որ թվային տեխմիջոցները կրթահամալիրի սովորողների և ուսուցիչների ձեռքին ուսանելու, ուսուցանելու և ստեղծագործելու գործիք են, մենք կարող ենք մեզ ավելին թույլ տալ: Մեր սովորողների ստացիոնար դպրոցը, ֆորմալ կրթությունը շարունակ կդառնա ավելի գրավիչ, ավելի հարմար, ուսումնատենչ երեխայի կրթությունը՝ անընդհատ ու անհապաղ: Ահա ինչու հեռավար կրթությունը՝ որպես մեթոդ, կսկսենք կիրառել ավելի ու ավելի համապարփակ: Մեր ձեռքին հայտնված մեդիա, ՏՀՏ միջոցները, ծրագրերն ու տեխնիկաները, արդիականացնում, ուրիշ են դարձնում ուսուցումը, առավել արդյունավետ ու անպայման առավել գրավիչ: Ահա թե ինչու այսպիսի ստուգատեսները կլինեն պարբերական, ամենամյա՝ հունվարին և հունիսին: Այս անգամ ստուգատեսը հանրապետական էր. ցուցադրություններին նյութով մասնակցեցին Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի յոթերորդ դպրոցից, «Անանիա Շիրակացի» ճեմարանից, սլավոնական համալսարանից դասախոս Գագիկ Աղեկյանը, սովորողներ և ուսուցիչներ Գյումրիից, Սյունիքից, Տավուշից, Երևանի դպրոցներից: Հաջորդ ստուգատեսը կլինի միջազգային՝ առանց աշխարհագրական, տարիքային ու թեմատիկ սահմանների: Մենք մեկ-երկու շաբաթից կհրապարակենք հունիսյան ստուգատեսի հայտագիրը:

Մենք կարծես հասկացել ենք գլխավորը՝ առանց մեր սաների ուսուցիչներս տեխնիկայից գլուխ չենք հանի: Տեխնիկապես հագեցրել ենք մեր բոլոր կաբինետներն ու սրահները, մեր ողջ միջավայրը և թույլ տվել, որ սովորողներն անարգել օգտվեն տեխնիկայից՝ մշտապես նորոգեն, զարգացնեն ՏՀՏ-մեդիա մեր հմտությունները: Մեր հարգանքն ավելի բարձրացավ սովորողների աչքում, քանզի ապացուցեցինք, որ բարեխիղճ ուսանողներ ենք, իսկ կրթությունն անընդհատ է, ու կատարելությունը սահմաններ չունի:

Մեդիան՝ անընդհատ աշխատանքի հնարավորություն

Կրթահամալիրի կրտսեր դպրոցի հետևողական զարգացման-ծավալման՝ մսուրային-մանկապարտեզային, նախապատրաստական ուսուցման խմբերի, ստեղծողի դպրոցի ու նրա արդիական միջավայր մեդիայի ու թվային գործիքների, նոր տեխնոլոգիաների համապարփակ ու նպատակային կիրառման, խելամիտ սերնդափոխության արդյունքում մեր հավաքանին՝ կրթահամալիրի աշխատախումբը («կոլեկտիվ» բառը միշտ չեմ սիրել, խուսափել ու խուսափում եմ գործածելուց) շարունակում է երիտասարդանալ, չի ծերանում: 2011թ. կրթահամալիրի տասներկու ուսուցիչ-մայրիկները՝ իրենց զավակների ծնունդով, տասներկու «ինձի-ձեզի մեծ ավետիս»-ի ձևով, պատճառա-հետևանքային կապի մեջ են իմ նշած ջահելացման հետ: 2012-ին ծնունդների քանակը չի պակասի, պիտի ուրախանանք, պիտի նպաստավոր աշխատանքային միջավայր ստեղծենք երիտասարդ մայրերի և հայրերի համար: Ընդգրկուն թեմա է. ես կմնամ Հանրակրթական Դիջիթեքի շրջանակում:

Ուսուցչուհի մայրիկն արձակուրդի իրավունք ունի, և շատերն օգտվում են երեք տարվա իրենց արձակուրդից: Նախկինում, մինչև ինտերնետը, մինչ մեր mskh.am-ը, մեդիամիջավայրի ու մեդիա-հաղորդակցության հաստատումը, աշխատողը երկու կամ երեք տարով

մեկուսանում-կտրվում էր իր հավաքանուց, կրթական գործից: 2011-ին, հիմա, անհաղորդության պատի փլուզման, բլոկադայի ճեղքման ականատեսն ու մասնակիցը դարձանք: Ուռա՜: Մեդիայի շնորհիվ յուրաքանչյուր ծնունդի (սուրբ է ծնունդը) բերած ուրախությունը, դարձավ յուրաքանչյուրինս, յուրաքանչյուր մայրիկ-աշխատող մեր մեդիայում պատմում-ներկայացնում է իր Ստեղծական աշխատանքը, իր Ստեղծագործությունը: Արմինե Թոփչյանի՝ բոլոր ռեկորդները խփած ֆիլմերը ահա այսպիսի պատումներից-խրոնիկայից են ծնվել: Կեցցես, Արմինե ջան, այնքան սիրով-խելքով-շնորհքով ես ստեղծել ֆիլմը, որ սերիալի կյանք է ունենում: Հաստատվեց հաղորդակցություն մայրիկ-աշխատողի և նրա երեխա-սովորողի ապագա հասատատության հավաքանու միջև: Կրթահամալիրի սովորողները, սկսած նախակրթարանից, սկսում են արձագանքել, շնորհավորել, մայրացած իրենց ուսուցչին, դաստիարակին: Տեսեք՝ ինչ սիրով-շնորհքով է արձագանքում Նոր Դպրոցի 4-րդ դասարանցի Արփի Սահակյանը: Ազնվացավ Դիջիթեքն Արփիի այս ֆլեշ-բացիկներով: Մեր կայքում նոր էջ առաջացավ՝ «Մայրիկի օրագիր»:Կդառնա այն ենթակայք, և իհարկե, ամենակարդացվողը:

Քաղաքացու կրթությունը (16-17-18 տարեկան սովորողը, շրջանավարտը անսեռ չէ՝ կին է կամ տղամարդ) անպայման նաև հայրության և մայրության ուսուցում է, ընտանեկան, ամուսնության արժեքների և կարողությունների-հմտությունների փոխանցում: «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիակրթություն» ծրագրի չափորոշչի, սրանից բխող ուսումնական պլանների, դասընթացների մշակման այս փուլում սա արձանագրենք:

Առցանց կրթություն ֆիզարձակուրդում գտնվող մեր երեսունից ավելի ուսուցիչների համար (սա Չափորոշչի պահանջ կդառնա. վերադառնալու են, չէ՞, շարունակելու են աշխատանքը, ուրեմն չեն կարող ընդհատել կրթությունը). և մեդիային ասենք՝ ուռա՜: Ինչպիսի գրավիչ ու հարմար միջավայր մայրության ընթացքում աշխատանքային վիճակը պահելու համար: Իսկ ի՞նչ անի ուսուցիչ-մայրիկը, երբ սոցիալական նպաստը և ընտանեկան բյուջեն անբավարար են մայրության պատշաճ կենցաղի համար: Պիտի աշխատի, վաստակի, որքան էլ մայրությունը լրիվ ծավալով ու որակյալ աշխատանք է: Լիլիթ Բլեյանը, ով բարձր որակի լրագրող է, ո՛նց է պահում իր Սոնուլիկին. իսկական-անընդհատ, ստեղծագործական աշխատանք... ու տեսեք՝ A1 պլյուսի ինտերնետ TV-ի հեղինակային հաղորդաշար է վարում, իր կատարումով հեղինակային երգերի ձայներիզ է հրապարակում, ամուսնուն օգնում է մեդիա-տեղեկատվական աշխատանքներում: Սարգսյան Մարգարիտը, գտնվելով ֆիզարձակուրդում, երեխայի ծնունդի 3-րդ ամսից մեդիաօլիմպիադայի և «Դպիրի» պատվերներն էր կատարում և ստեղծագործական-մանկավարժական առցանց աշխատանքի լավ օրինակ տվեց: Սրա արդյունքն է և երեխայի 2-րդ տարում «Լուսաստղի» ծնունդը. Մարգարիտը, շնորհիվ մեդիայի, չկտրվեց կրթական գործից: Լուսինե Ալեքսանյանն իր կրակի կտոր Օլգայի ծննդյան ամսից էլ մայրիկի իր գործը շատ արդյունավետ համատեղում է սովորողների սոցիոլոգիական հետազոտությունների ղեկավարման և կրթահամալիրում իրականացվող ներառական ուսուցման ծրագրի համակարգման հետ....

Ես՝ որպես գործատու, պատրաստ եմ ուսուցիչ-մայրիկի աշխատանքն արձակուրդում ինչ-որ ժամանակից սկսած դարձնելու անընդհատ: Մենք պարտավոր ենք աշխատելու նոր

հնարավորություն առաջարկել կրթահամալիրի ուսուցչին՝ նոր պայմաններին համապատասխան:

Վստահ եմ՝ հաջորդ Դիջիթեքում կկրճատվի անջրպետը ֆիզարձակուրդում գտնվողների և առայժմ չգտնվողների միջև:

Ստեղծագործական հավաքի մասնակցությունը ուսումնական-հետազոտական-ստեղծագործական աշխատանք է

Մայիսի 17-ին կրթահամալիրում սկսվում է մեր ամենամյա ստեղծագործական 7-րդ հավաքը: Սա մեր կրթական ծրագրերի արդյունքների, մեր ուսումնական կարողությունների-հմտությունների դրսևորման ստուգատեսն է: Տեսեք հավաքի ծրագիրը. մեզ սպասում են աշխատանքային հագեցած օրեր: Բոլորս հավաքի մասնակիցն ենք. մի դեպքում՝ որպես օրվա հեղինակ-կազմակերպիչ, մի դեպքում՝ որպես հեղինակ-փորձագետ:

Հավաքի մասնակցությունը ուսումնական-հետազոտական-ստեղծագործական աշխատանք է:

Օրվա, կոնկրետ ուսումնական պարապմունքի, սովորողի ընտրությամբ գործունեության, ուսումնական կաբինետի և լաբորատորիայի ղեկավար-պատասխանատուները խնամքով, համերաշխ նախապատրաստում են իրենց կողմից ներկայացվող աշխատանքը, ամեն ինչ անում են, որ ծրագրի փորձագետները կարողանան տեսնել և գնահատել կրթական միջավայրի զարգացումը, ուսումնական գործի կազմակերպման փոփոխությունը:

Նրանք պատասխանատու են, որ իրենց ներկայացրած պարապմունքները լուսաբանվեն mskh.am-ում՝ ներառելով պարապմունքի նկարագրությունը, նյութերը, պարապմունքի մասնակից սովորողների վերաբերմունքը, և՛ փորձագետ ուսուցչի, փորձագետ ծնողի տպավորություններ: Սրանով կօգնեք ծրագրի բոլոր շահառուներին, համակիրներին և հետաքրքրվողներին, կրթական ոլորտի ղեկավարներին՝ հավաքին կայքում հետևելու և առցանց քննարկումներին մասնակցելու: Օրվա պատասխանատուները երեկոյան ժամը 20.00-21.00 վարում են օրվա առցանց ամփոփում- քննարկումը:

Փորձագետները դասարանի, խմբի սովորողների ծնողներն են, կրթահամալիրում իրականացվող մյուս կրթական ծրագրերի դասավանդողները, սովորողները, հավաքի հյուրերը, որոնց որպես փորձագետ ներգրավում և նրանց աշխատանքը կազմակերպում է տվյալ պարապմունքի կազմակերպիչ-ուսուցիչը (այդ թվում՝ դասվարը, դաստիարակը): Փորձագետ սովորողները, ծնողները, ուսուցիչները իրենց դիտարկումները, կարծիքները, այդ թվում՝ կազմակերպիչ-ուսուցչի առարկությունները, արտահայտում են օրվա ծրագրի, ծրագրի կոնկրետ կետի լուսաբանման մեջ, առցանց քննարկումների ժամանակ կամ ուղարկում են «Դպիրին»՝ որպես առանձին հոդված:

Հավաքը լուսաբանող նյութերը տեղադրվում են mskh.am-ի հատուկ էջում, հոդվածները՝ «Դպիր» էլեկտրոնային ամսագրում:

Հարգանքով՝
Կրթահամալիրի տնօրեն՝ Աշոտ Բլեյան

Սկսենք մեր գործը, նորեն ու մեզնից սկսենք

Գարեգին Սրվանձտյանցի կոչն է: Նորենը կա նորի նույն այն սպասման մեջ, որ իր հետ ամեն տարի նույն ժամանակ այցելող սեպտեմբերի մեկն է բերում, ամեն տարի փակվող և բացվող դպրոցը: Ինչ-որ բան մեր շուրջը փոխելու համար մեզնից սկսելը կտակարանային պահանջ է:

Ամռանը ուսուցիչների վերապատրաստման կենտրոնի ղեկավարիս անակնկալի բերեց իմ գործընկերների նոր մեթոդը, նոր գիտելիք սովորելու ձգտումը՝ չնայած տապին, չնայած արձակուրդին. դա ինձ ոգևորեց: Չեմ հոգնում կրկնելուց. միայն անընդհատ սովորող ուսուցիչն է սովորեցնելու իրավունք ձեռք բերում, և միայն նա կարող է սովորող աշակերտ ունենալ:

Շարունակենք սովորելը՝ համապատասխան դարձնելով կրթությունը այսօրվա երեխայի կյանքին, ապրած ժամանակին ու իր անհատական կարիքին, խորտակելով դպրոցը կյանքից, մեզ իրարից բաժանող արգելքները: Սովորողի նոր, պակասող հմտություններ ավելի արագ ձեռք բերենք՝ ուսուցումն առավել արդյունավետ ու գրավիչ դարձնելու համար: Նկատի ունեմ նախ և առաջ ինտերնետն ու օտար լեզուները: Ամեն օր բաց, գործածվող ինտերնետն ուսուցչին հնարավորություն կտա մեր իմացած միակ օտար լեզուն՝ ռուսերենը, դարձնելու ուսուցման միջոց, սովորելու համակարգչային ծրագրեր և նոր օտար լեզու, նախ և առաջ՝ անգլերեն: Սովորենք իրար հետ համագործակցել. այսօր տարածությունն ու ժամանակը արգելք չեն միասին աշխատելու համար: Ահա ինչու համագործակցային մեթոդը դարձավ ուսուցիչների վերապատրաստման առանցք:

Մեր կրթահամալիրը՝ Բլեյանի դպրոցը, եղել ու մնում է բաց յուրաքանչյուր մարդու համար: Մենք արդեն մատչելի ու հիգիենիկ հյուրատուն ունենք: Ինչպես մեր անգլերենի մասնագետ Յուրա Գանջալյանն է ասում՝ կրթահամալիրի կողքով մի՛ անցեք, ներս եկեք, սա նաև Ձեր տունն է:

Միշտ Ձեր՝

Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն՝ Աշոտ Բլեյան

Խիզախելու կարողություն[6]

Ջանի Ռոդարի մանկագիրն իմ բարեկամն է մանկավարժական աշխատանքի ամենասկզբից՝ 1980-ից: Նրա այս տողերով պիտի սկսեմ «Անդին»-ին տված խոստումս. «Մարքսն ուտոպիստ չէր, հզոր երևակայություն ուներ: Այսօր էլ դպրոցի վաղվա օրը տեսնելու համար ոչ փոքր երևակայություն է հարկավոր՝ պատկերացնելու համար, թե այդ «ժամային ուղղիչ տան»

[6] «Անդին» ամսագրի պատվերով

պատերն ինչպես են փուլ գալու»: Սա Ռոդարիի «Ստեղծագործական երևակայության քերականություն» գրքում է, որի հայերենը, համեցեք, կարդացեք մեր մեդիագրադրանում:

Բոլորի բոլոր ջանքերն առ այսօր ուղղված են ահա այս, մեղմ ասենք, սպառողի կամ պարազիտության դպրոցի նորոգմանը, վերարտադրությանը՝ Իտալիայում, Խորհրդային Միությունում թե, ավա՜ղ, այսօր Հայաստանի Հանրապետությունում: Ես մի էական հարցադրում եմ արել և պաշտպանում՝ սպառողների դպրոցը մեռած է. նոր, կենդանի է այն դպրոցը, որտեղ սովորողը մշակույթը և այլ արժեքներ «սպառողը» չէ, այլ արարողը: Այո, երևակայություն, ստեղծականություն և իհարկե... խիզախելու կարողություն: Ահա և մեր հեղինակային դպրոցի «այբֆեն»: Հետաքրքրվողներին և «Անդին»-ի ընթերցողին հարգելով՝ օրինակներով խոսեմ, քանզի մի օրինակը լավ է, քան տրակտատը:

Երբ կարողացանք խիզախել ու «հանգստի» ուղարկել կրթահամալիրի նախակրթարանների բոլոր 220 մահճակալները, ու մեր արհեստագործականի պատրաստած ներքնակները հայտնվեցին դրանց փոխարեն, դաստիարակն ու դայակը հայտնվեցին ճիշտ տեղում՝ երկրորդ պլանից հսկողի, որ որևէ մեկը ոտնձգություն չգործի մանկական ինքնուրույնության վրա. այն ազատության աստիճանն է: Երբ այդ նույն՝ ազատագրված տարածքում հայտնվեց ինտերնետն ու պրոեկտորը, ահա այդ հսկումն իրականացնողներն ունեցան ստեղծագործ աշխատանքի վահանակը, որ մանկական գործունեության մեջ գլխավորը լիներ համատեղ ստեղծական կյանքը: «Ստեղծագործելը՝ առաջին տեղում»: Լսեցի՞ք՝ պիտի խիզախես միշտ, ինքնահաստատվես, որ կարողանաս ձանձրալի չլինել, որ հետաքրքիր լինես սովորողին՝ սկսած երկու տարեկանից...

Այլ օրինակ բերեմ: Մենք կարողացանք համոզել «Սահակյանշին» կազմակերպությանը, որ կրթահամալիրի բոլոր դպրոցների բակերից տանի շենքի չորսբոլորը բռնած, մեր հողը խորհրդային շրջանում զավթած տասնյակ հազար քառակուսի մետր ասֆալտը: Ու երբ ասֆալտաքանդ-ազատարար տեխնիկան մտել էր դպրոցների տարածք, խիզախեցինք չնահանջելու չափ: Հիմա մենք բոլորս դրսևորում ենք (պիտի կարողանանք դրսևորել) պարտեզ հիմնելու մեր ընդունակությունը, որն անպայման ստեղծական, համերաշխ և ուսումնական աշխատանք է:

Իսկ վախերն ամենուր են, ծնողների, ուսուցիչների ու տարբեր մեծահասակների մեջ, ովքեր հասարակություն են կազմում, և «դպրոց» կոչված մանկական գաղութից վախի տեսքով հաստատվում են սովորողի մեջ: Չխիզախես՝ չես կարող... Չի կարող դա անել ճամպրուկները հավաքած մարդը. չի խիզախել, որ հանգել է ճամպրուկ հավաքելուն: Ճամպրուկը հավաքած մարդու դպրոցը և նրա մանկավարժությունը այնքան տեսանելի է, որ կա՛մ կույր-համր պիտի լինես այն չտեսնելու-չարձանագրելու համար, կա՛մ վախկոտ: Խիզախումն էլ տեսանելի է, ամենահաս, ամենազոր մեդիայի շնորհիվ. ահա, օրինակ՝ «Ինձ վերապահելով մի շարք իրավունքներ, հաշվի չառնելով թարգմանության գրեթե ոչ մի պահանջ, միախառնելով իմացածս լեզուների տված բոլոր հնարավորությունները, բացարձակ չտիրապետելով գերմաներենին, համոզված լինելով, որ անմահ Գյոթեի հետ միևնույն է ոչինչ չի պատահի՝ թարգմանել եմ նրա «Լերանց շարքերը...», գրում է 10-րդ դասարանցի Թամար Ստեփանյանը... Էլի օրինակներ տեսեք մեր սովորողների և ուսուցիչների բլոգներում՝ դաստիարակի, դասվարի, ուսուցչի, 6-րդ դասարանցու, 8-րդ դասարանցու, 10-րդ դասարանցու...

Խիզախության զորակցումը պիտի կրթական խնդիր դառնա, այլապես այս վիճակը, որից կարծեմ, բոլորս ենք դժգոհ, եկար կտիրապետի:

Արզական գյուղի դպրոցն իր համայնքով պիտի խիզախի ու 10-12-րդ դարերի Նեղուցի վանքը, որ խոնարհված է (Դու, յոթնապատիկ խոցված Տիրամայր) բերի կրթական ծրագիր... Սպիտակի Հարթագյուղի դպրոցն իր համայնքով պիտի վերջապես սկսի որպես գլխավոր ուսումնական նախագիծ՝ հավաքել 25-ամյա վաղեմության երկրաշարժի փլատակները, որ թույլ չտա իր հուշարձանները... գերեզման դարձնել: Դրա համար պետք է հասարակական գիտակցումը, որ կրթությունը՝ որպես սովորողի ժամանակի (կյանքի), ջանքերի, պետական ու անհատական դրամական միջոցների ներդրում, արդարացվում կամ իմաստ է ստանում, երբ մարդ դառնում է կարող՝ փոխում է իր կյանքը, իրագործվում: Կրթական ծրագիրը չի կարող ակնհայտ չլինել. գո՞հ եք ձեր այսօրվա կյանքից, գոհ եղեք դպրոցից: Պետք է դպրոց-ուղղիչ տան պարիսպները ներսից ու դրսից փլուզվեն, որ սովորողի իրական կյանքը գյուղում թե քաղաքում որպես առարկա ուսումնասիրվի՝ իր ողջ բազմազանությամբ, բոլոր տեսանկյուններից: Ինչպե՞ս ապրել ու աշխատել միասին՝ սովորողներով և ուսուցիչներով, ծնողներով և այլ մեծահասակներով ու հասակակիցներով, միասին իրական կյանքի խնդիրները սովորել ու լուծել... Սրանք մեզ համար դատարկ խոսքեր չեն. ինչպես երգում՝ «հենց այսպես էլ ապրում ենք» մեր «Մխիթար Սեբաստացի» կրթական աշխարհում...

Հերթը հասավ հիմա Ձեզ

Հերթը հասավ հիմա Ձեզ՝ կրթահամալիրի բարեկամներին, ստեղծական ուսումնական աշխատանքը գնահատողներին և խթանողներին, հանրակրթության պատվիրատուներին:

«Հանրակրթական Դիջիթեք 2014. թվային միջոցները հանրակրթության արդյունավետ գործիքներ» բաց, ամենամյա, թվով 6-րդ ստուգատեսի ներկայացման փուլն ավարտվեց: Հարյուրավոր սովորողներ, ուսուցիչներ ստուգատեսի 20+1 անվանակարգերով digitech.mskh.am-ում ներկայացրել են իրենց ուսումնական-ստեղծագործական-թարգմանական գործունեության արդյունքները: «Դպիր» էլեկտրոնային մանկավարժական ամսագրի 77-րդ հատուկ համարում հրապարակված են մանկավարժական հոդվածներն ու թարգմանությունները: Մրցութային հանձնաժողովներն ըստ անվանակարգերի որոշել են հաղթողներին: Ստուգատեսի տնօրեն Լուսինե Բուշը digitech.mskh.am-ում հրապարակել է հաղթող աշխատանքների ցուցակը: Այս ընթացքում շատ մասնակիցներ անհատների և կազմակերպությունների կողմից արժանացան անվանական մրցանակների, Խաչատրյանների և Ղալամքարյանների սեբաստացի-քառազավակ դիջի-ընտանիքները պարգևատրվեցին ԱրմԹաբ ֆիրմայի Հայաստանում հավաքված պլանշետներով, Հանրակրթական Դիջիթեքի կազմակերպիչ կրթահամալիրը Ֆիրմա Ալֆայի կողմից ստացավ նոր կարճաֆոկուս պրոյեկտոր: Շնորհակալ ենք:

Եկել է ստուգատեսը խրախուսելու, ստուգատեսի մրցանակակիրներին արժանին մատուցելու ժամանակը: Գլխավոր մրցանակը ավանդական 5-օրյա դիջի-ճամբարի ուղեգիրն է՝ գրավիչ-ստեղծական միջավայրում միասին աշխատանքը շարունակելու և հանգստանալու հնարավորությունը: Հատուկ մրցանակները ուսումնական ճամփորդությունների, ուսումնական պիտույքների համար նախատեսված կրթական վաուչերներ են: Ո՞վ

կառաջարկի ճամբարի տեղը Հայաստանի, Արցախի տարածքում, ո՞վ կհատուցի ճամբարի կազմակերպման նյութական ծախսերը: Այսպիսի հնարավորություն քչերին է տրված: Շատերը կարող են ձեռք բերել և իրենց ընտրած մրցանակակիրներին հրապարակավ հանձնել գլխավոր կամ հատուկ մրցանակ: Վաուչերը ձեռք բերելու համար Հայէկոնոմբանկի «Մետաքս» մասնաճյուղի հ/հ 163218137665 կրթահամալիրի հաշվին պետք է ուղարկել՝

գլխավոր մրցանակի համար՝ 40000 դրամ,

հատուկ մրցանակի համար՝ 20000 դրամ՝ նշելով «Հանրակրթական Դիջիթեքի մրցանակ» և ընտրած մրցանակակրի անունը:

Այն կարող եք անձամբ հանձնել կրթահամալիրում ամեն ուրբաթ՝ ժամը 15.15-16.00, ընդհանուր բաց պարապմունքի ժամանակ:

Ամենաթանկը, իհարկե, Ձեր ուշադրությունն է, այն ժամանակը, որ կհատկացնեք և digitech.mskh.am-ում կծանոթանաք ներկայացված նյութերին:

Միշտ Ձեր՝
Աշոտ Բլեյան, կրթահամալիրի տնօրեն

Եկել է ժամանակը

Բացատրական բառարան

Digitec Edu 2012 - «Թվային միջոցները հանրակրթության արդյունավետ գործիքներ» ամենամյա 4-րդ ստուգատես
Digitec - թվային միջոց, թվային տեխնիկա
մեդիա – հաղորդակցման աշխարհ՝ իրեն ստեղծող թվային միջոցներով
mskh.am - կրթահամալիրի սոցիալական էլեկտրոնային ցանցը
պրեզենտացիա – աշխատանքի մեդիաներկայացում

Թվային տեխնիկան, մեդիան, համացանցը՝ հանրակրթության արդյունավետ գործիքներ: Ամենամյա 4-րդ ստուգատես, հայերեն, ռուսերեն, անգլերեն, վրացերեն գործածման լեզուներով, բաց յուրաքանչյուրի համար՝ Հայաստանում թե Հայաստանից դուրս, սովորողի թե ուսուցչի, հանրակրթությամբ հետաքրքրվողի համար: Խնդրեմ, առանց որևէ խոչընդոտի. մարզերից ու արտասահմանից եկածների համար՝ անվճար հյուրատուն, սնունդ, գրանցման մատչելիություն: Մրցանակներ շնորհելիս որևէ խտրության բացառում: Շնորհակալ ենք Դիջիթեքի մեր գործընկերներ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությանը, Մայքրոսոֆթ ԱՐԷՅ-ին, ԿԳ նախարարությանը, որ առավելագույն ջանքեր են գործադրում, որպեսզի հանրակրթական Դիջիթեքին լիարժեք մասնակցեն նաև մեր վրաց գործընկերները, որ այն դառնա հայ-վրացական նախագիծ, որ այն ընթանա շուրջտարի: Բայց... Սա կրթահամալիրի Ստուգատեսն է. մասնակից է կրթահամալիրի հանրակրթական դպրոցը, դասարանը, խումբը, սովորողը, ուսուցիչը, մասնագետը, ուսումնական կենտրոնը՝ յուրաքանչյուրը առանց բացառության: Ով որևէ, իբր հարգելի, պատճառաբանությամբ իրեն

դուրս է տեսնում 2012թ. հունվարի 15-ից սկսած և փետրվարի 11-ին ղափամա ճաշակելով ավարտվող Ստուգատեսից, նա իրեն դնում է կրթահամալիրում իրականացվող «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիահանրակրթություն» ծրագրից՝ կրթահամալիրից, դուրս: Այստեղից և Ստուգատեսին ներկայացվող աշխատանք-նախագծերի տեսականին՝ ընդգրկուն, ամեն նախասիրության, հավեսի ու պահի համար: 2 տարեկանից մինչև... սովորողի, մանկավարժության մեջ առաջին տարին քայլ անողից մինչև... Այստեղից և Ստուգատեսի փետրվարի 1-ից 11-ը տևող ներկայացում-միջոցառումների ցանկը՝ խիտ ու տարողունակ, որ որևէ մեկը նեղացած ու չկարևորված չլինի:

Հանրակրթական Դիջիթեքը յուրաքանչյուրինս է՝ ոչ որպես գաղափար, այլ որպես շոշափելի մասնակցություն: Սա է 4-րդ Ստուգատեսի առանձնահատկությունը: Ինչպե՞ս եք պատրաստվել: Ժամանակ դեռ կա: Սկսեք: Տանը թե դպրոցում՝ կարգի բերեք թվային տեխնիկան, լինի անհատական թե ընդհանուր գործածման: Ինչ խափանված է, սարքին չէ՝ անհապաղ նորոգել, գործածել: Այս ստուգատեսին Սեն Միքայելյանը ներկայանում է թվային տեխնիկայի շահագործման և սպասարկման ծառայություններով: Ստուգատեսը հնարավորություն է ու լավ առիթ՝ ձեր թվային զինանոցը նորացնելու, լրացնելու: Ես Ձեզ խոստանում եմ շատ մրցանակներ: Մինչև 2012թ. մարտի 1-ը մենք ձևավորելու ենք ապառիկով թվային տեխնիկա՝ նեթբուք-նոթբուք, ձեռք բերելու 2-րդ փուլի պատվերը: Ով ուշացել է 1-ին փուլից, ով փոշմանել է, ով վճռել է՝ թող առաջ գա: Համացանցը, թվային տեխնիկան կրթահամալիրում՝ տանը թե դպրոցում, ձևավորում են ուսուցանող նոր՝ արդյունավետ ու գրավիչ միջավայր: Ես Ձեզ խոստանում եմ՝ մինչև 2012թ. ապրիլի 1-ը

նկատելի կլավանա համացանցի արագությունը կրթահամալիրի կրթական օբյեկտի յուրաքանչյուր կետում՝ դասարանում, խմբում.

անլար համացանցային միջավայր կդառնան մեր բոլոր կրթական օբյեկտները ամբողջությամբ.

կունենանք Հայաստանում ամենահզոր սերվերային կրթական տնտեսություններից մեկը. մեդիագրադարանի սպասարկումը կընդգրկի յուրաքանչյուր սանի, սովորողի, ծնողի.

համացանցով պրոյեկտորը կգործածվի կրթահամալիրի յուրաքանչյուր ուսուցանվող միավորում՝ սկսած 2 տարեկանների խմբից.

կրթահամալիրը կգործի որպես ամբողջական էլեկտրոնային միջավայր:

Ստուգատեսն այս կցուցադրի թվարկված նախագծերի իրական լինելը, ստուգատեսն այս կնպաստի, որ յուրաքանչյուր նախագիծ ավարտվի մինչև 2012թ. ապրիլի 1-ը:

Ստուգատեսի՝ ինձ համար ամենամեծ պրեզենտացիան «Դպիր» էլեկտրոնային ամսագրի 50-րդ համարն է: Տեսեք՝ մի «Դպիր» որքա՜ն հայացրեց մանկավարժությունը մեդիայում: Շնորհիվ դրա մենք ունենք արդիական մանկավարժություն՝ ներկայացված մեդիայում: Բրավո, Սուսան Մարկոսյան և ընկերներ: «Դպիր» էլեկտրոնային 50-րդ հոբելյանական համարը չի փակվի այնքան ժամանակ, քանի դեռ սահմանված կարգով կրթահամալիրի յուրաքանչյուր ուսուցիչ-մասնագետ չի ներկայացրել հետազոտական աշխատանքի իր

փորձը՝ մեթոդական հոդվածը, թարգմանությունը, ուսումնասիրությունը: Ստուգատեսում ինձ համար ամենասպասված նախագիծը «Լուսաստղն» է՝ պատանիների նոր մեդիա ամսագիրը՝ իր ֆիզիկական ակումբով: Շնորհիվ այս նախագծի՝ «Լուսաստղի» ընթերցողի համար համացանցը կդառնա ավելի ուսուցանող, ավելի շատ պատանիների համար համացանցը կդառնա կարևոր ուսուցիչ: Առա՛ջ, Մարգարիտ Սարգսյան և ընկերներ: Ստուգատեսին Արտակ Զիլֆիմյանը, Միշա Ավդալյանը, Գրիգոր Խաչատրյանը և ընկերները կներկայանան ամենահեռանկարային նախագծով՝ «Կրթահամալիրը TV տաղավար»: Ստուգատեսում կներառվեն նաև կրթահամալիրի հանրակրթական դպրոցների սովորողների ծնողները՝ լիարժեք մասնակցելով տանը կատարվող մեդիանախագծերին, ինչպես նաև 2 անգամ իրենց համար հատուկ կազմակերպվող Դիջիթեքի ներկայացումներին: Էլ ի՛նչ ստուգատես՝ առանց անակնկալների, առանց իմպրովիզի... Չխոստանամ էլ, գիտեք, սպասում եք: Հուսախաբ չենք անի:

Ձեր՝ Աշոտ Բլեյան

Շնորհավորում եմ. կրթահամալիրը ներկայացնում եք «DigiTec Expo 2012»-ում

Հարգելի բարեկամներ, շնորհավորում եմ Ձեզ: Դուք կրթահամալիրը ներկայացնում եք «DigiTec Expo 2012» 8-րդ ամենամյա ՏՀՏ/ԲՏ միջազգային միջազգային ցուցահանդեսում, որը կայանալու է հոկտեմբերի 5-7-ը Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում: Այնտեղ կրթահամալիրին հատկացվել է մեծ հատուկ տաղավար: Ցուցահանդեսի բացումը հոկտեմբերի 5-ին է: Տաղավարի ձևավորումը՝ հոկտեմբերի 4-ի երեկոյան:

Դուք նախապատրաստվելու համար ունեք քիչ ժամանակ՝ այսօր, վաղը: «DigiTec Expo 2012» 8-րդ ամենամյա ՏՀՏ/ԲՏ միջազգային ցուցահանդեսին ներկայացնում ենք մեր ուսումնական նախագծերը: Պիտի հավաքել նյութերը՝ ֆիլմ, պրեզենտացիա: Ցուցահանդես պետք է գնալ տարբերանշաններով, բեյջերով, նյութերով, անհատական համակարգիչներով: Հերթապահ խումբը ունենա ֆոտոխցիկներ, ձայնագրիչներ, ինտերնետ կրիչներ:

Խնդրում եմ հիմա սկսել ներկայացման աշխատանքները: Ցուցահանդեսի նյութերը հավաքվում են mskh.am-ի DigiTec Expo 2012 էջում:

Ցուցահանդես տարվում են նաև՝ շարժական գրատախտակ, էկրան, պրոյեկտորներ, կրթահամալիրի, հիմնադրամի դրոշներ, տարբերանշաններ, տեղեկատվական թերթիկներ՝ կրթահամալիրի տեղեկատվական թերթիկներ հայերեն և անգլերեն, հիմնադրամի թերթիկները՝ ուսումնական նախագծերով:

Հարգանքով՝
կրթահամալիրի տնօրեն՝ Աշոտ Բլեյան

Մեկնարկը տրված է

Արժանին մատուցենք Հանրակրթական անցած հինգ Դիջիտեքներին՝ ամենամյա, սկսած 2009թ.-ից:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում մշակվող և իրականացվող հեղինակային կրթական ծրագրերում թվային միջոցների՝ արդյունավետ ուսումնական գործիքների հիմնավորվելը փաստ է: Փաստ է, որ կրթահամալիրի բոլոր՝ 8 հանրակրթական դպրոցների և քոլեջի սովորողները՝ բոլորը՝ սկսած 1-ին դասարանից, ուսուցիչներն ու դաստիարակները՝ բոլոր մանկավարժական աշխատողները, կրթահամալիր են գալիս անհատական նոթբուք-նեթբուքով: Փաստ է՝ կրթահամալիրի բոլոր յոթ կրթական օբյեկտները WiFi ինտերնետ տարածքներ են: Փաստ է, որ mskh.am-ը ուսումնական տարածք է յուրաքանչյուր սեբաստացու համար, կրթահամալիրի մեդիագրադարանը՝ ուսումնական գրադարան ոչ միայն սեբաստացիների համար: Փաստ է՝ սովորողի և ուսուցչի, անհատական, խմբային, դասարանական, ակումբային բլոգները՝ ուսուցման անփոխարինելի միջոց են: Կարդացեք Հանրակրթական Դիջիթեք 2014-ի «Աշխատողի, սովորողի, ծնողի ուսումնական գործունեության դիջիպատում 2013-2014» անվանակարգով կրթահամալիրի դպրոցների սովորողների, ուսուցիչների պատումները և նոր փաստ կգրանցեք՝ նախագծերով ուսուցումը կրթահամալիրում:

Ահա այսպիսի միջավայրում և պայմաններում զարգացած-կայացած Հանրակրթական Դիջիթեքը պիտի փոխվեր-փոխվի, որ շարունակ մնա արդիական՝ որպես գործունեության դպրոցի Ստուգատես, որի հայտերի ընդունման մեկնարկը տրվեց այսօր՝ հունվարի 14-ին: Նորից անցեք Հանրակրթական Դիջիթեքի պաշտոնական կայքով, թերթեք ստուգատեսի քսան անվանակարգերը…

Այսպիսի փաստերով մեկնարկող 6-րդ Հանրակրթական Դիջիթեքի դեպքում անշնորհակալ գործ է կանխատեսում անելը և ցանկություններ հայտնելը. ի՞նչ գիտեք՝ ինչ զարգացումներ կարող են լինել առաջիկա 25 օրը: Մեզ մնում է օր առաջ դառնալ ստուգատեսի մասնակից ու ստուգատեսի տարածող՝ օգնելով ստուգատեսի կազմակերպիչ Միջին դպրոցին և ստուգատեսի տնօրեն Լուսինե Բուշին:

Դիջին ու դրումը հանդիպեցին ստուգատեսում

Հենց այսպես՝ հետևողական ու անդադրում, մի ստուգատեսից մյուս ստուգատես, մի ուսումնական նախագծից հաջորդը մեր գաղափարը հեղինակային կրթական ծրագիրը կյանքի է կոչվում, իրականանում է: Շնորհիվ մեդիայի մենք անբաժան ենք, մեկ ենք, անընդատ ենք, ու … ստեղծագործելը՝ 1-ին տեղում: Կրթահամալիրը շարունակ ավելի թանկ է դառնում ամեն մի սեբաստացու համար, յուրայնացվում է.»:Կեցցեք, թույլ չտաք, որ հաստատությունը դուրս մնա յուրաքանչյուրիս ազդեցությունից, որ շարունակ զարգանա, կատարելագործվի:

Հանրակրթական Դիջիթեք 2013-ի շոշափելի-չափելի արդյունքը. ազդում է ու զորացնում իր ներգործությունը սեբաստացին, երբ նախաձեռնում է ու սկսում իրագործել՝ ունենալով համերաշխ և ընդունակ հավաքանու կյանք դարձած բարյացակամությունն ուաջակցությունը, մոբիլ՝ ժամանակի ու տեղի մեջ: Թվարկենք: Մասնակիցների ընդարձակվող աշխարհագրություն՝ Արցախ աշխարհ՝ իր Շուշիով, Ստեփանակերտով, Ասքերանով, Հայաստանի մարզեր՝ Լոռի ու Վայոց ձոր, Արմավիր, Շիրակ… Մեդիածնունդ, առօրյա դարձող առցանց քննարկում-պարապմունքներ, հանգստի օրերի ընտանեկան

դարձող ընդհանուր պարապմունքներ, սովորողի և ուսուցչի անհատական TV, բոլոր տարիքի սովորող ու ուսուցիչ բլոգերներ, կրթահամալիրը՝ որպես ինքնավար դաշնություն կազմակերպող անհատներ, խմբեր, ակումբներ, այլ նախաձեռնություններ: Դիջին հենց սրա գործիքն է, ու առարկան՝ նոր ուսուցողական միջավայր: Մոտեցավ և այս ստուգատեսի առանձին հաջողակներին պարգևատրելու պահը: Չեմ ասում՝ հաղթողներին, որովհետև պարտվողն ո՞վ է: Ստուգատեսցիներ, վարձատրված ենք արդարացի ու լիուլի. Դիջի այս շրջանը որպես կյանք ապրեցինք, բերկրալի պահերով.... Այսօր այսխումբն է կենտրոնում: Շնորհավորում ենք նրանց, ծափահարում, ընթացքի մեջ է «Զմեռ» մեդիաօլիմպիադան իր տերյանական, թումանյանական օրերով, «Գարուն» մեդիաօլիմպիադան կսկսվի «Չարենցյան օրերով, հետո՝ Տիգրան Հայրապետյանի օրեր, հետո՝ էկոտուր, մայիսյան ստեղծագործական հավաք, ամառային ճամբար ու հունիսյան ստուգատեսներ: Ընդհատում չկա. Ստեղծագործ անհատը մրցանակակիր դառնալու իրական հնարավորություններ ունի: Խիզաքե՛ք, մի հոգնեք:

Հիմա, երբ Դիջի-ստուգատեսի հմայիչ տիրուհին՝ Սրբուհի Աղաբաբյանը, իր իրավասություններն է փոխանցում Դիջի 2014-ի՝ յուրաքանչյուրիս այնքան սիրելի Բուշ Լուսինեին, ես ասում եմ՝ կեցցեք, Սրբուհի, Հիմնական դպրոց, Լուսինե ու Միջին դպրոց, ընդունեք մեր ծափահարությունները: Տեսա՞ք՝ ինչ կատարվեց բոլորիս հետ, երբ ստուգատեսում հանդիպեցին դիջին ու դդումը: Կրթահամալիրն ունեցավ նոր հոմանիշ՝ դիջի դդմաշեն: Հիմա բոլորիս համառ աշխատանքով ուզում ենք՝ մի տարի անց նորից կայանա դիջիի և դդմի հանդիպումը Հայաստանով մեկ, Արցախով մեկ, աշխարհով մեկ: Եթե անհամբեր ենք վաղվա մեր ծեսի ղափամայի կամ Դդմագովքի մեր ստեղծած ծեսով և այս երեկոն անցկացնելու ենք ընտանիքում դրան նախապատրաստման փութաջանությամբ... Առողջ ու շքեղ, տեսեք որքան գրավիչ, անսպառ, ինչպես մեր գովական Դդումը.... Հանդիպում ենք փետրվարի 9-ին. ժամը 11.00, Մայր դպրոցում, ու միասին սկսում «Ղափամա» ծեսը:

08.02.2013թ.
Հանրակրթական Դիջիթեք 2013-ի հանդիսավոր փակում

Գլխավորի մասին

Հավաքից հավաք. 2007թ. մայիս-2008թ. մայիս
Հեղինակային մանկավարժության արդյունքներ

Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում մենք իրականացնում ենք հեղինակային մանկավարժություն՝ որպես սովորողների և ուսուցիչների հետազոտական աշխատանքի արդյունք, որպես այլընտրանք բոլոր ժամանակների սպառողների՝ անգիրի, ոչ արտադրական դպրոցին: Գլխավորը, որ ես հաճույքով և հատու արձանագրում եմ Հեղինակային մանկավարժության հանրապետական 3-րդ բաց հավաքի արդյունքներով, մենք շարունակում ենք հաջողությամբ կառուցել մեր նոր դպրոցը, որտեղ 1-ին տեղում ստեղծագործելն է, որտեղ ուսումնական աշխատանքը յուրաքանչյուր սովորողի և ուսուցչի ստեղծական գործունեություն է. ոչ այն նպատակով, որ գիտնական կամ արվեստագետ ենք

պատրաստում, այլ օգնում ենք յուրաքանչյուրին ազատագրվելու, սպանելու իր ստրուկին, ակտիվ մասնակցելու իր անհատական ու հասարակական կյանքի բարելավմանը:

Գլխավորը՝ ավելի ու ավելի շատ սովորողներ և ուսուցիչներ են հաճույք ստանում համատեղ հետազոտական-ստեղծագործ աշխատանքից, ավելի ու ավելի տեսանելի են (չափելի) այդ աշխատանքի արդյունքները: Եվ հավաքից հավաք (2007թ. մայիս - 2008թ. մայիս) մեր «Հեղինակային մանկավարժության արդյունքներ» զեկույցը ես ահա հանդիսավոր հրապարակում եմ՝ ի գիտություն մեր մանկավարժության պատվիրատուին՝ բաց, ազատ քաղաքացիական հասարակությանը: Ահա ինչու՝ նորից ունեցանք հրատարակչատան պահանջը՝ որպես անհրաժեշտ գործիք հետազոտող սովորողի և ուսուցչի աշխատանքի արդյունքի նյութականացման, որպես մեր իրականության պատվերի կազմակերպչի:

Այո, ստեղծական աշխատանքը՝ սովորողի և ուսուցչի, որպես հետազոտողներ՝ այս նոր գործընկերությունն անընդհատ է, 24 ժամ, անսահման, յուրաքանչյուր վայրում և պահի, տանը, փողոցում, թե դպրոցում: Հեշտ է կրթակարգով որպես նորմատիվ կոչ սովորողին և ուսուցչին առաջադրել հետազոտելու և ստեղծագործելու ընդհանրական պահանջները: Մեր չարչարանքի հասարակական նշանակությունն այն է, որ հենց օրինակի միջոցով շոշափելի ցույց ենք տալիս, որ այս կոչին լուրջ վերաբերմունքը, այս պահանջի իրագործումը ենթադրում են ուսումնական գործի նոր կազմակերպում: Ահա թե ինչու՝ մեր հեղինակած մանկավարժությունը կրթություն է կյանքով ու կյանքի համար, ահա, ինչու ենք մենք վերացնում սովորող դպրոցի գործունեության բոլոր արգելքները, պատերը, կյանքի գերեզմանոցները, մենք մեր տաղանդով վերակառուցում ենք կրթահամալիրը՝ որպես կրթական միջավայր, դպրոց առանց պատերի, ճնշումների, արգելքների, առանց խտրականության, առանց վախի, տեխնիկապես արդյունավետ կազմակերպված կրթական միջավայր: Գլխավորը, որ այս մի տարում, թվում է, յուրաքանչյուր սովորողի և ուսուցչի ձեռքբերումն է՝ մեզնից ամեն մեկը հմտացել է հետազոտողի նոր տեխնոլոգիաների (ինֆորմացիոն) և թվային միջոցների գործածման մեջ: Ահա ինչու՝ մենք առիթը և հնարավորությունը չենք կորցնում աջակցելու, որ յուրաքանչյուր սովորող և ուսուցիչ ունենա անհատական միջոցներ՝ համակարգիչ, ֆլեշ, ֆոտոխցիկ, որ ամեն մեկին մատչելի լինի ինտերնետը: «Կրթասեր» և «Ուսուցչի տուն» հասարակական կազմակերպությունների նախաձեռնությունը տեղին է՝ ունենալ ֆոնդ հետազոտող-ստեղծագործող ուսուցչին և սովորողին նյութապես-տեխնիկապես աջակցելու: Իհարկե, այսօրը իր մրցանակներով ու խրախուսանքներով մեծ ուրախություն է սովորողների և ուսուցիչների մեծ խմբի՝ «Իմացումի հրճվանք» և «Ծուղրուղու» մրցանակներին արժանացածների համար: Մենք չենք առանձնացնում, ուղղակի ինչ-որ հերթականություն մեզ պարտադրում են սահմանափակումները՝ սովորողի և ուսուցչի ստեղծագործ աշխատանքին հասարակական ու պետական անբավարար աջակցությունը: Գլխավորը՝ չկա ավելի մեծ պարգև ստեղծագործող անհատի համար, քան բուն ստեղծական աշխատանքի պարգևած հաճույքը՝ իմացումի, հայտնաբերելու հրճվանքը: Ահա ինչու՝ որպես բոլորիս ուղղված նվեր է ներկայանում մեր հաջորդ ստեղծագործական հավաքը՝ հունիսի 1-16-ը կրթահամալիրում անցկացվելիք սովորողների ուումնական հետաքրքրությունների բաց ստուգատեսները:

Գլխավորը՝ իրական հետազոտական աշխատանքի անընդհատ ընթացքն է

Կրթահամալիրում իրականացվող (մշակվող ու ներդրվող) մանկավարժական ծրագրերի հեղինակների (դասավանդողներ, սովորողներ ու նրանց ծնողներ) հերթական (չորրորդ) Հավաքը սկսվեց... հիմա՝

երբ հնգօրյա Հավաքի յուրաքանչյուր օրվա հինգժամյա աշխատանքի բովանդակությունն ու կարգը հայտնի են.

երբ հրապարակված են Հավաքին ներկայացված բոլոր զեկուցումները (տե՛ս «Դպիր» ամսագրի հատուկ թողարկումը).

երբ Հավաքի աշխատանքային նիստերի և ցուցադրության վայրը՝ կրթահամալիրի մեդիա-մշակույթային կնտրոնը այնքան սիրով և խելամիտ պատրաստված է.

երբ մեդիա –մշակույթային կենտրոնում այսքան խնամքով ցուցադրված են մեր ուսուցման արդյունքում ստեղծված իրերն ու էլեկտրոնային նյութերի նմուշները.

երբ ամեն Հավաք մի կարևոր, այո՛, ծիսական նշանակություն ստացող, ավելի ու ավելի կարևորվող հանգրվան է դառնում.

երբ Հավաքին ներկայացված վեց տասնյակից ավելի զեկուցումները, կրթահամալիրի հեղինակների աշխատանքներից ցուցադրված մոտ 150 ցուցանմուշը, ինը բեմական ելույթը, տասը ֆիլմը Հավաքի կողմից, վստահ եմ, կարժանանան պատշաճ վերաբերմունքի.

ի՞նչ է մնում ինձ ավելացնել այս ամենին, որպես մեր ավանդական հավաքի ավանդաբար ասվող կրթահամալիրի տնօրենի բացման–ողջույնի, միով բանիվ՝ Հավաքի գլխավոր խոսք:

Կեցցենք մենք, որ այսքան լուրջ ենք մոտենում մեր ստեղծական - հետազոտական աշխատանքի ներկայացմանն ու գնահատմանը: Մեր Հավաքի այսպիսի կազմակերպումն, այո՛, մեր հավաքական ուժի յուրատեսակ ցուցադրություն է, երբ առանց ուսումնական բնական գործունեությունը վնասելու, թվում է, բոլորս ենք Հավաքի ակտիվ մասնակից (կազմակերպիչ): Ինձ հուզեց ձեր՝ հեղինակների ու հեղինակային խմբերի ներկայացման (ցուցադրության ջանքերը) քննարկումները, աջակցությունը մեդիա կենտրոնի շինարարման, բարեկարգման աշխատանքներին, ցուցադրությունը որպես կոլեկտիվ նախագիծ իրականացնելը... և այս ամենը՝ գործընկերության մշտական ռեժիմում: Ինչպես մեր սիրելի Գայանե Վաղարշակովնան երեկ ասաց ինձ հասկանալի օտար լեզվով՝ мне это всё будоражыло. Շնորհակալ եմ, ու կեցցե՛ք:

Գլխավորը՝ իրական, հետազոտական աշխատանքի ընթացքն է՝ անընդհատ, իր բնական հանգրվաններով: Հաջորդ հանգրվանը ուսումնահետազոտական ճամբարների գործունեությունն է՝հունիսի 1-ին սկսվող, «Ժանգոտ դդում» փառատոնն է՝ հունիսի 10-ին սկսվող, տեխնիկական ստեղծագործության ստուգատեսը՝ հունիսի 17-ին սկսող, Կարինե Մացակյանի ստեղծագործական ցուցադրությունը՝ հունիսի 10-ին սկսվող: Մեր հետազոտական- ստեղծական աշխատանքն իրական է ու անընդհատ, քանզի կրթահամալիրում իրականացվող կրթական ծրագիրը մեր կյանքն է՝սովորողների և

սովորեցնողների համատեղ ուսումնահետազոտական աշխատանքի պայման է և արդյունք: Եվ ինչպես ինքը՝ կյանքը, անընդհատ է և իրական:

Կրթահամալիրը՝ ազատ-ստեղծագործ-համերաշխ մարդկանց կոոպերացիա

Անցնող տարվա այնքան հաճախ հնչած իմ կոչը՝ ոչ թե սովորողի համար, այլ սովորողի հետ, մնում է մեր բոլոր ձեռնարկումների մեթոդը: Սա մեթոդ է նաև նոր տարվա համար. ավելին՝ իրեն պիտի դրսևորի 2011-ին: Կարողությունների զարգացման, մեր ուսումնական աշխատանքի կազմակերպման տեխնոլոգիական նորացումը, ամենանոր գործիքների գործածումը սոցիալական փակուղում հայտնված ընտանիքների համար կարող են և պիտի ինքնօգության, ընտանիքի սովորողների, կներեք, պարազիտիկ վիճակը հաղթահարելու ճանապարհն ապահովեն: Ծնողների համար ավելի ու ավելի դժվար է ընտանիքի սովորական համարվող կարիքներն ապահովել. մեր մանկավարժության սովորողը պիտի լիովին գործածի իր կարողությունները՝ սկսի փող աշխատել, կանգնի ծնողի կողքին, հաշվի իր ծախսերը, անձնական բյուջե ձևավորի: Կարողությունների զարգացման մեր մանկավարժությունը պիտի 2011-ին վերակազմակերպի կրթահամալիրը՝ որպես ազատ-ստեղծագործ-համերաշխ մարդկանց (սովորողների և սովորեցնողների) կոոպերացիա՝ սովորեցնելու ծրագիրը վերածելով հասարակական պահանջարկ ունեցող ծառայությունների և իրերի արտադրության:

Օրինակներով խոսեմ, որ ավելի կոնկրետ, հասկանալի ու օգտակար լինեմ:

Կարո Մանդալյանը հետևողական ստեղծում էր կենդանաբանական այգի-լաբորատորիա, և ահա 11-րդ դասարանցիների համերաշխ խումբը՝ Նարեկը, Արմենը, Ռաֆֆին, Արսենը գյուղացիական օժանդակ տնտեսության վերակենդանացման գործը չթողեցին գարնանը, դեկտեմբերյան եռուզեռով թևակոխում են Նոր տարի: Նրանց արդեն միացավ 10-րդ դասարանցի Բագրատը:

Կառուցման (շինարարական) փուլից արտադրական փուլ է մտնում ջերմոցային տնտեսությունը՝ Մեդիակենտրոնում, Մայր դպրոցում, Հիմնական դպրոցում: Ինչպե՞ս կօգտագործեն այս հնարավորությունները մեր ուսուցիչներն ու սովորողները: «Յունիքոմփի» մասնագիտական աջակցությամբ իրական կերպ է ստանում ՏՀՏ ծառայությունների և սպասարկման ուսումնական կենտրոնը: Տիգրան Պարսիլյանը, Սեն Միքայելյանը, Դավիթ Մինասյանը, Կոնստանտին Նալբանդյանը կօգտվե՞ն այս հնարավորությունից՝ ընտանիքների համար շոշափելի դարձնելու խորացված ուսուցման առավելությունները՝ սովորողների հետ իրական ՏՀՏ ծառայություններ մատուցելով կրթահամալիրի դպրոցներին, սովորողներին ու նրանց ընտանիքներին:

Կարինե Մացակյանի, Մովսես Ավետիսյանի և տեխնոլոգիայի մասնագետների (Տաթև Թամազյան, Մարինե Զաքարյան, Անի Հովհաննիսյան, Աննա Վարդանյան և ընկերներ) հետևողականությամբ գործարկվում է տեխնոլոգիայի ուսումնա-արտադրական կենտրոնը: Ի՞նչ ծառայություններ կմատուցի այս կենտրոնը և ե՞րբ:

Մերի Առաքելյանը, Արմինե Բաբայանը, Սյուզի Մարգարյանը, թատրոնի նորեկ ուսուցիչ Քնարիկ Ներսիսյանը՝ իրենց հաստատակամությամբ ու շնորհքով, մեր համերգային, թատերական դահլիճները իրենց սաների հետ դարձնում են մշակութային-ժամանցային ծառայությունների մատուցման կենտրոններ: Ի՞նչ զարգացում կունենա այս ամենը նոր

տարում:

Գևորգ Հակոբյանն իր ամանորյա նվերով՝ Փոյայի «Ինչպես լուծել խնդիրը» էլեկտրոնային դարձրած գրքով, մեզանում սկիզբ դրեց մի ուղղության , որը 2011-ին կարող է զարգացնել մեզանից յուրաքանչյուրը, մեր սաները: Այո, էլեկտրոնային հրատարակության գործարկումը կրթահամալիրի՝ այնքան աղմուկ հանած 1990-96 թթ հրատարակչական գործունեության նորացումն է: Կարողություններ բավարար չափով ունենք, թվային գործիքներ՝ նույնպես: Ինչպե՞ս էլեկտրոնային հրատարակչությունը դարձնենք շահութաբեր, որ ուսումնատենչ-հետազոտող սովորեցնողն ու սովորողը, որպես հրատարակիչ (մուտքագրող, սրբագրիչ, խմբագիր, ժողովածուի հեղինակ, թարգմանիչ, համակարգչային ձևավորող) վարձատրվի իր ջանքերի դիմաց: Այս է ճանապարհը. շահութաբեր էլեկտրոնային հրատարակչությունը կարող է հարստացնել-հայացնել ինտերնետը՝ մեդիագրի միջոցով նորոգելով արդիական դարձնելով հայերենը: Սուսան Մարկոսյանի բարեխիղճ ու հմուտ աշխատանքը՝ «Դպիր» էլեկտրոնային ամսագիրը, այս հրատարակչական ծրագրի հաջողության գրավականներից է: Նոր մանկավարժության տարածող «Դպիրը» չունի՞ արդեն այսօր օտարալեզու ընթերցողի կարիք: Վստահ եմ, որ ունի, և սա ծառայությունների ընդարձակման իրական պատվեր է: Առանց մեծ ճիգի այս թվարկումը կարող եմ շարունակել: Սրանք հորինած բաներ չեն, սրանք տեսանելի են մեզանից յուրաքանչյուրի համար:
Ինձ դժվար է զբաղեցնել այլոց անելիքի ծրագրման անլուրջ աշխատանքով: Կրթահամալիրի սովորողների և սովորեցնողների յուրաքանչյուր նոր ընկերակցության կայացման ու զարգացման խումբ կարող է ու պիտի նոր տարում այդպիսի ծրագրմամբ և դրա իրագործմամբ զբաղվի:
Իմացեք՝ ձեր նախաձեռնությունները, ձեռնարկները պատշաճ աջակցություն կստանան: Խիզախեք: Արտադրեք: Հարստացեք, որ կարողանաք նաև դրսևորել բարեգործի Ձեր էությունը:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր. ինչպես սկսվեց ամեն ինչ

Հարցազրույց ԿԳՆ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանի հետ

- Տիար Բլեյան, ինչպե՞ս ծնվեց կրթահամալիր ունենալու գաղափարը:

- Դա մի փոքր երկար, բայց սիրելի պատմություն է: Յուրաքանչյուրը, ով ունի մանկավարժական գաղափարներ, ծրագրեր, ուզում է դրանք իրականացնել, փորձում է գտնել համախոհներ իր դպրոցը՝ կրթական միջավայր ստեղծելու համար: Միջավայր, որովհետև միջավայրն ամենամեծ դպրոցն է:

Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետից, որտեղ աշխատում էի, այսպիսի ծրագրով եմ անցել դպրոց: 1985 թվականին համախոհների փնտրտուքը ինձ բերեց Բանգլադեշ, թ. 183 նորաբաց դպրոցը, այն էլ՝ որպես տնօրեն: Եվ այս նոր յուրացվող տարածքում, որտեղ ամեն ինչ դեռ անկազմակերպ էր, իմ բախտը բերեց կամ չբերեց, որովհետև ինձ պես խելառ երկու Աշոտներ՝ Աշոտ Մանուչարյանն ու Աշոտ Դաբաղյանը, իմ օգնականներն էին, դպրոցի փոխտնօրենները: Եվ մենք՝ երեք Աշոտներով, տեսնելով, որ շատ

հարմար պահ է գորբոչովյան վերակառուցումներից հետո, երբ խորհրդային ռեժիմը հոգեվարքի մեջ է, օգտվեցինք այդ ազատությունից, «թթվածնի» առկայությունից... 1989-ին Հայաստանի կառավարությանը կարողացանք համոզել ընդունել մեր կրթական նախագիծը: Ստեղծվեց «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը՝ որպես փորձարարական-հետազոտական միավորում, որպես անհատի հնարավորությունների, կարողությունների ու տաղանդի դրսևորման արդյունավետ միջավայր:

- Իսկ ինչո՞ւ կոչվեց հենց Մխիթար Սեբաստացու անունով:

- Կրթահամալիրի, հետազոտական-կրթական միջավայրի հոմանիշը միաբանությունն է: Գաղափարակիր, ոգևորված, ստեղծագործող ուսուցիչները մի՞թե վարդապետներ չեն: Բանգլադեշը այն ժամանակ մի տեսակ կղզի էր հիշեցնում, մեկուսացած էր մայրաքաղաք Երևանից, Հայաստանից: Սրան ավելացրեք մեծ ակնածանքը Մխիթար Սեբաստացու, նրա Միաբանության հանդեպ... նոր, կրթական միաբանություն ունենալու համար շատ էլ հարմար անուն ընտրեցինք: Խիզախել էր պետք, ինչպես հայր Մխիթարը:

- Իսկ ի՞նչ տեսք ուներ կրթահամալիրը ամենասկզբում:

- Ամենասկզբում Մայր դպրոցն էր՝ այն ժամանակ Երևանի թիվ 183-ը: Խելահեղ գաղափարներն անպակաս էին, բայց ցաքուցրիվ, անկազմակերպ, բավականին հախուռն: Երեխաները շատ էին, իսկ շենքը մեկն էր: Հետո մեզ միացավ մանկապարտեզը՝ այսօրվա Դպրոց-պարտեզը, այնուհետև Հիմնական դպրոցը՝ մեր Գիմնազիան, հետո՝ Նոր դպրոցը՝ մեր Նախակրթարանը, Արհեստների դպրոցը, վերջում՝ Մեդիակենտրոնը՝ մեր շախմատի և ինֆորմատիկայի դպրոցը: Այսպես կտոր-կտոր ամբողջացավ, դարձավ այն, ինչ այսօր ունենք որպես ամբողջական կրթահամալիր:

Խնդիրը, որ մեր կրթահամալիրը սովորելու համար լինի հաճելի միջավայր, որ մեր երկրի անկազմակերպ վիճակը չխանգարի սովորողին և ուսուցչին զբաղվել իրենց սիրելի գործով, դրսևորել իրենց անհատականությունը, եղել է հենց սկզբից: 23 տարիների ընթացքում հոկվել, դարձել է ձեզ այդքան գրավիչ այսօրվա միջավայրը:

- Իսկ այս 23 տարիների ընթացքում ի՞նչ բարդություններ ու խոչընդոտներ ունեցավ կրթահամալիրը:

- Շատ, շատ բարդություններ ունեցավ: Գլխավորը, իհարկե, մեր մանկավարժության պատվիրատուին գտնելն էր: Նոր հանրապետություն էր, ազատ հանրապետություն, ուր մարդու իրավունքներ և ազատությունները հռչակված են որպես միայն լոզունգ: Իսկ որպեսզի իրոք լինեինք ազատ, մենք պետք է գտնեինք պատվիրատու, այսինքն՝ ծնող, ով ուզում է՝ իր երեխան կրթվի այս ծրագրով, որ քեզ պես է մտածում: Մենք այս 23 տարիների ընթացքում կարողացանք ձևավորել պատվիրատուների մի տպավորիչ բանակ: Եվ եթե մենք կանք, ապա շնորհիվ դրա: Որովհետև կային այնքան շատ արգելքներ, այնքան մեծ էր անդունդը, որ կարող էր մեզ տանել ու հետ չբերել: Բայց պատվիրատուն մեզ պահեց:

Մեզ օգնեց նաև ստեղծականության աշխատանքի հանդեպ մեր ունեցած պաշտամունքը: Այս երկրում, որտեղ աշխատելը, կներեք, դարձել էր «էշություն», և ծուլությունը՝ մարդու կարևոր

զբաղմունքը, մենք ստեղծականության նկատմամբ պետք է պաշտամունք ստեղծեինք: Կարևոր է նաև արդիական գործիքների կիրառումը, որովհետև փոխվում են ժամանակները, և սովորողը իրավունք ունի իր ձեռքին ունենալու արդիական գործիքներ: Այսօր այդ գործիքները թվային գործիքներն են, մեդիակրթությունը, ահա թե ինչու մենք այդ գործիքները լիուլի օգտագործում ենք մեր կրթության մեջ: Եվ այդ երեք կետերի շնորհիվ՝ անհատի կրթական պատվեր, ստեղծականություն և արդիական գործիքների կիրառում, մենք կարողացանք հաղթահարել շատ խոչընդոտներ:

- Իսկ մեդիակրթությունը մի՞շտ է կրթական համակարգում առաջնահերթ դեր ունեցել:

- Այո, որովհետև Հայաստանում առաջին ուսումնական համակարգիչները՝ ճապոնական Yamaha համակարգիչներ, կային նաև մեր կրթահամալիրում: Մեզ մոտ բացվեց առաջին հանրակրթական տպարանը, առաջին ուսումնական «Շաղիկ» հրատարակչությունը մենք ունեցանք: Եվ քանի որ մեր մուտքը մանկավարժության ասպարեզ համընկավ թվային միջոցների ստեղծման ու տարածման հետ, մենք, կարելի է ասել, միասին հանդես եկանք, և այդ գործիքները սկսեցինք կիրառել կրթության մեջ: Հասկացանք, որ դրանք շատ գրավիչ են դարձնում ուսումը, ավելի արդյունավետ: Ահա թե ինչու մենք այդ գործիքները կենցաղից տեղափոխեցինք դպրոց: Իհարկե, դժվար էր, որովհետև դրանք թանկ էին, բայց մենք ցույց տվեցինք, որ կարող է մարդը տանը պրոյեկտոր կամ էլեկտրոնային գրատախտակ չունենալ, բայց երբ որ դա ունի դպրոցում, իրեն հավասար է զգում: Մեզ համար կարևոր է, որ երեխան հասկանա, որ դա ծառայում է իրեն: Ֆիզիկական վիճակի հետ զուգահեռ կա նաև առցանց աշխարհ, վիրտուալ աշխարհ, որը մեդիաաշխարհն է: Եվ կրթահամալիրը նաև այդ աշխարհում էր պետք ստեղծել, և ստեղծեցինք մեր կայքը՝ mskh.am-ը: Մենք ստեղծեցինք այն, որպեսզի ուսուցումը լինի անընդհատ, որպեսզի սովորողը կարողանա անընդհատ պատմել իր մասին, որովհետև չկա ավելի կարևոր բան, քան իրար մասին լիարժեք տեղեկություն ունենալը:

- Ի՞նչ նպատակներ է կրթահամալիրը դրել իր առջև:

- Այդ նպատակները ուսումնական նախագծերի ձևով ներկայացված են: Կան նախագծեր, որոնք սեբաստացիների օրերին հատուկ կներկայացվեն՝ որպես համատեղ աշխատանքի պատվերներ:

Ինձ համար թիվ մեկ նախագիծը կրթական պարտեզն է. Ինչպե՞ս անենք, որ մենք մեր առօրյայով հայտնվենք կրթական պարտեզի մեջ: Պարտեզ ասելով՝ նկատի ունեմ մինչև վերջ խնամված միջավայր, որտեղ մարդիկ իրար զգում են, որտեղ դու պատասխանատու ես յուրաքանչյուր ծիլի ու ծաղկի համար: Դա ամենամեծ գործն է երևի, որ մենք սկսել ենք: Եվ ես վստահ եմ, որ մոտակա 2-3 տարիները այդ առումով կլինեն վճռորոշ:

Մյուս նախագիծն այն է, որ ուսումնական առօրյան, ճանապարհորդությունները, տոները լինեն լիարժեք ուսումնական: Հայրենագիտական ճամբարները՝ մեկօրյա, երկօրյա, եռօրյա, կրթությունը դարձնում են ավելի մոբիլ, այսինքն՝ սովորողը, ուսուցիչը, ուսումը ամենուր է:

Բացառիկ եմ համարում նաև երաժշտական կրթությանը, երգչախմբի գործունեությունը: Ես ցանկացել եմ, որ տասներորդ, տասնմեկերորդ դասարանցին կատարի այդ ինտելեկտուալ

աշխատանքը: Որովհետև Մոցարտ ունկնդրողը ինտելեկտուալ մարդ է: Առանց Մոցարտ, Բեթհովեն, Կոմիտաս ունկնդրելու՝ կրթությունը, կներեք, վայրենու վերարտադրություն է: Բացառիկ ենք համարում երաժշտական կրթությունը, այստեղից էլ՝ համերգային սրահի բացումը: Ուզում ենք, որ յուրաքանչյուրը հանդես գա որպես արվեստագետ:

Եթե 3 նախագիծը հետևողականորեն իրագործվի, ապա կարճ ժամանակում դուք կզգաք էական փոփոխություններ

- Ինչո՞ւ է կրթահամալիրի տոնը նշվում հենց նոյեմբերին:

- Դա 4 տարիներին ֆիքսվեց ու ավանդույթ դարձավ: Սեպտեմբերին չէր կարող լինել, դա հաստատ եմ ասում: Նոյեմբերը իմ ամենասիրած ամիսն է: Սիրում եմ ուշ աշունը, երբ մի քիչ ցուրտ է, երբ թեթևսոլիկություն չկա, ծանրակշիռ մի բան կա: Տոնը նաև պատրաստություն է պահանջում, և սեպտեմբերի ու հոկտեմբերի պատրաստություններից հետո հարմար է նշել նոյեմբերին:

Զրույցը վարեց Լիլիթ Աղաջանյանը:

Ինչ արժեք ունի խոսքը, եթե այն գործ չի դառնալու

Սկզբում միևնույն է, խոսքն է: Ուսուցչի ծննդյան օրով խոսքս ուղիղ ու հակիրճ կլինի: Իսկ դուք՝ սիրելի սովորող, ուսուցիչ, ծնող, հետևեք իմ խոսքին, երբ համաձայն եք՝ կրկնեք ինձ հետ, անհամաձայնությունը անհապաղ ձևակերպեք: Հիմա, երբ բոլորը թութակ դարձած դարձում-հակադարձում են՝ Քրիստոս ծնաւև յայտնեցաւ...

Հիսուս Քրիստոսն իմ Ուսուցիչն է: Նա եկավ, որ մենք Մեկ դառնանք. Սուրբ Ծնունդը՝ որպես Ծես, մեր միասնականացման ձևն է: Ծեսը մեզ կրթող կենցաղ է: Քրիստոսի Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդների համար Սուրբ Ծնունդին նախորդող մեկ շաբաթը պահոց շրջան է. դեկտեմբերի 30-ից մինչև հունվարի 5-ը մենք պիտի լինենք պահքի մեջ: 2012-ի դեկտեմբերի 30-ին, ես առաջին անգամ իմ կյանքում մտնելու եմ պահքի շրջան:

Պահքը մեզ Սուրբ Ծնունդին պատրաստող ծիսական շրջան կդառնա Իմաստաբեր իր Զայնով, Գույնով, Համով, Հոտով,Վարքով ու Բարքով: Մենք՝ սովորող, ուսուցիչ, ծնող, ինչպես բոլոր պահեցողները, պահքի շրջանից դուրս կգանք հունվարի 5-ին: Երեկոյան ժամը 17:00 կհավաքվենք Սուրբ Երրորդություն եկեղեցում, մասնակից կդառնանք Ճրագալույցի Սուրբ Ծննդյան պատարագին, Սուրբ Ծննդյան Ավետիսին: Եկեղեցու խորանի վրա վառվող մեծ ջահից կվառենք մեր մոմը և ծածկած լապտերներով, զգուշորեն ու վեհ ընթացքով Ուսուցչի Լույսը կտանենք մեր՝ կրթահամալիրցիներիս Մեծ տունը, Մայր դպրոց՝ բերելով Աստծո ծննդյան Լույսը մեր օջախ: Հատուկ ծիսական պատրաստություն, ուրախ տրամադրություն, շուրջպար, Ավետիսներ... Հունվարի 6-ի առավոտյան մենք դուրս կգանք մեր տներից այլ տրամադրությամբ, նոր զգեստներով, կհանդիպենք եկեղեցու բակում, որ ողջունենք իրար.

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ. մեզ և ձեզ մեծ Աւետիս: Այսպես մենք կմիանանք հավատավոր հայ ժողովրդին ու ողջ մարդկությանը, ու բոլորիս համար **օրհնյալ** կլինի **Հայտնությունը Քրիստոսի**:

Իսկ հիմա վերցրեք ձեր սեղանից կամ գրադարակից Նոր Կտակարանը, շարունակեք կամ սկսեք ընթերցումը Ուսուցչի հրաշագործ վարդապետության:

Ողջո՛ւյն, ստեղծողների միասնության և ստեղծական աշխատանքի տոնական օրեր

Հավաքի մասնակիցներից քանի՞սն են հենց այսպես՝ որպես տոնական նվեր ընդունում կամ կընդունեն մայիսի 4-ի, 5-ի, 6-ի այս եռուզեռը. թող մեր սոցիոլոգի ծառայությունն արձանագրի: Այս հինգ տարեկան դարձած հավաքն իր բովանդակությամբ ու ձևով՝ որպես փաստ արձանագրենք: Ինձ զոհացնում է այն բարեխիղճ հետևողականությունը, որով մենք՝ հեղինակային մանկավարժության հեղինակներս՝ կրթահամալիրի հետազոտող ուսուցիչներ ու սովորողներ, հեղինակային մանկավարժության պատվիրատուները՝ սովորողների ծնողներ, իշխանության ներկայացուցիչներ, և հեղինակային մանկավարժության ամենատարբեր շահառուները՝ կրթական համակարգի աշխատողներ, դպրոցների ուսուցիչ տնօրեններ, լրագրողներ, մանկավարժությամբ հետաքրքրվածներ, համատեղ ստեղծեցինք այս նոր ավանդույթը: **Ուռա՛, ավանդույթի ուժ ստացած ստեղծագործական հավաքի առաջին հոբելյանին:**

Մայիսյան այս հավաքների բովանդակությունը որոշվել և որոշվում է կրթահամալիրի զարգացման ծրագրով: Հինգերորդ հավաքի թեման հանրակրթության մեջ տեխնոլոգիական հմտությունների ուսուցման արդյունավետությունն է: Մենք հիմնական դպրոցը դիտում ենք որպես տեխնոլոգիայի դպրոց (սովորողի ու ուսուցիչների կարողությունների զարգացման ու կիրառման դպրոց): Տեխնոլոգիական հմտությունները բաժանել ենք երեք մեծ խմբի՝ տեխնիկական, բնագիտական, ընդհանուր տեխնոլոգիական և մեդիա հմտություններ: Բնագիտությունը՝ փորձի միջոցով և փորձի հիման վրա, բնագիտական, տեխնիկապես – մանկավարժորեն խելամիտ կազմակերպված ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաներում: Սա փաստ է, որ սիրով արձանագրում եմ: Ընդհանուր տեխնոլոգիաները (դիզայներական, անհատական խնամքի, ընդհանուր խնամքի, կենդանիների, բույսերի խնամքի, նյութական միջավայրի բարելավման) մեր հանրակրթությանը տալիս են մարդկային տեսք, սովորողին և ուսուցչին դարձնում ունակ՝ իր ու իր միջավայրի վրա ազդելու, փոխելու, խնամելու: Սրանով կրթական ծրագրի բովանդակությունն ու արդյունքները դառնում են ակնհայտ՝ տեսանելի ու շոշափելի յուրաքանչյուրին: Մենք ավարտում ենք յուրաքանչյուր կրթական օբյեկտքում ջերմոց լաբորատորիայի, տնկարանի, սերմնարանի, պարտեզապուրակային տնտեսության, անձանական հիգիենայի և խնամքի կաբինետների նախագծման ու նախապատրաստական աշխատանքները, սրանց կառուցման ու ձևավորման աշխատանքները կդառնան 2010-2011 ուսումնական տարվա մեր կրթական աշխատանքի բովանդակությունը: Ծով, ստեղծական աշխատանք, որի համար ես ձեզ շնորհավորում եմ:

Իմ սիրելի «Դպիր» ամսագրի հատուկ՝ թվով երեսուներորդ համարին հուզմունքով եմ սպասում: Անակնկալների ընդունված վարպետ եմ ես, բայց այս ամսագրում այնքա՛ն անակնկալ կա հենց ինձ համար: Շնորհակալ եմ: Ու մեր կրթական առօրյան չի կորցնում իր գրավչությունը շնորհիվ առօրյա դարձող անակնկալների, որ աջ ու ձախ մատուցում են

իրենց ոգևորված, ստեղծագործական աշխատանքով մեր տարատարիք սովորողներն ու ուսուցիչները: Խոստովանեմ, ավելի ու ավելի դժվար եմ պարտադրանքով, որևէ պարտավորվածությամբ թողնում կրթահամալիրը, գնում ուրախ անակնկալները կորցրած քաղաք, ինչ-որ հարցով: Ես ինտերնետին, մեդիային, սրանց շնորհիվ մեր ինտերնետ կայքին, որ ինձ սիրելի անուն ունի **mskh.am**, շատ եմ պարտական: Ի՞նչ պիտի լիներ իմ հալը առանց քեզ, օրեցօր ինձնից ավելի հայտնի դարձող իմ հարազատ **mskh.am**: Ու հիմա էլ **mskh.am**-ի բերած TV-ն՝ իր ոգևորված Գրիգոր Խաչատրյանով, ռադիոլուրը՝ իր շատացող սովորող ռադիոլրագրողներով, իր բազմալեզու թարգմանական տեղեկատվական ծառայություններով… Սրանք, փա՛ստ է, չկային անցած հավաքին: Այնքան եմ պարտական այս ամենաթափանց մեդիային՝ իր ինքնուրույն կրթական աշխարհ դարձած **mskh.am**-ին, որ ուզում եմ ինտերնետի որակը լավացնել, մեդիան ավելի մատչելի ու առօրեական դարձնել յուրաքանչյուրի համար: Հիմա, երբ տեխնոլոգիապես այնքան հմուտ ենք, ավելի ու ավելի հմուտ, մեդիայով այսպես զինված՝ էլեկտրոնային գրատախտակով դասարան, անհապաղ ինտերնետ, նոթբուքով սովորող և ուսուցիչ, և կրթահամալիրը TV տաղավարի է վերածվում և կրթահամալիրը որպես TV տաղավար է գործում, ի՞նչ օյին պիտի ձեզ մատուցի կրթահամալիրի Տիարը: Չհարցնեք դուք, ինձս ինձ հո՞ կհարցնեմ:

Օպերատիվ մեդիա. կա՞ այս հասկացությունը: Ինչպե՞ս եմ ես այն հասկանում: Այն այսօր էլ կա: Ամեն օր, օրինակ՝ մեր առավոտյան բարի լույսի ծեսերում: Սովորողի-ուսուցչի ստեղծագործական աշխատանքի արդյունքը, երբ անհապաղ նյութականանում է, իր է դառնում տպագիր թղթի, էլեկտրոնային կրիչի թե ինտերնետային տեղեկատվության տեսքով: Երբ քո ձեռք բերած (ստեղծած) տեղեկատվությունն անմիջապես հասնում է շահառուին՝ որպես անակնկալ: Նրան, ով սպասում է կամ շնորհակալ է: Սա ենթադրում է տեխնոլոգիական նոր ենթակառուցվածքի ձևավորում (սկսած ցիկլի ավարտ) և տեխնոլոգիական- մեդիահմտությունների նոր որակ ու տեսականի: Հենց դրանով էլ, այս հավաքը վկա, մեծով ու պստիկով զբաղված ենք: Ահա ինչու՝ բռա՛վո, կրթահամալի՛ր:

Միշտ ձեր՝ Ա. Բլեյան

Նվեր՝ տարվա բոլոր օրերի համար

Այնքան եմ հավանում, հարգում մեր Ավագ դպրոց-վարժարանի սովորող Արաքս Գևորգյանին, որ պարտավորված էի զգում արձագանքել նրա «Մարտիության քննարկում» հրապարակմանը: Արձագանք չեղավ, Արաքս ջան, կամ եղավ՝ հոդվածի ձևով: Թույլ տուր այն սիրով նվիրել քեզ:

Ո՛նց չեմ սիրում մարտի 8-ապրիլի 7-ի առիթով տղամարդկային-իշխանական բաժակաճառերը, շնորհավորանքները՝ նվիրատվության ձևեր մեր կյանքում, կյանք, որ հենց ամենամեծ վիրավորանքն է կնոջը: Հայաստանում ապրող մարդկանց կեսը հանկարծ երախտագիտության շնորհ է առնում և շնորհակալություն հայտնում իրեն ծնած, պահած մյուս կեսին: Բառեր, բառեր, բառեր...: Ի՞նչ պիտի ուզի սիրելի կինը (մոր, աղջկա, կնոջ, քրոջ, ընկերուհու տեսքով), որ այն չնվիրես որպես քո ցանկություն, շնորհակալ լինես նրան նվիրելու հնարավորության համար, բաց չթողնես նվիրատվության որևէ առիթ՝ ծննդյան օր, տոն, հաջողություն: Կնոջը նվերով ուրախացնելը, այսպիսով, տղամարդու կարողության,

շնորհքի, տաղանդի, միով բանիվ՝ ուժի խնդիր է, իսկ տղամարդը, ես այսպես եմ հասկանում, ուժ է:

Լավ կոչ ստացվեց: Ուժեղ լինենք: Մեր կանայք, ի՞նչ է, ուժեղ տղամարդու՝ հոր, ամուսնու, եղբոր, որդու, ընկերոջ տեսքով, իրավունք չունե՞ն: Հերթապահ ձևով կասեն, ասում են՝ այո՛, ունե՛ն: Եթե այո, սիրելի կանայք, ձեր տղամարդկանց ինչո՞ւ ուժեղ՝ տղամարդու որակներով չեք մեծացնում, կրթում, կայացնում: Ինչո՞ւ ծնելու-խնամելու ձեր աստվածատուր շնորհով չեք ապահովում ձեզ ուժեղ տղամարդով: Պնդում եմ անում. տղամարդու այս անուժ վիճակի պատասխանատուն նախ և առաջ կինն է:

Խոստովանեմ, իմ մեջ եղած ուժով ես մորս եմ պարտական: Մանկուց ինչ ինձ հիշում եմ՝ նվնվալ չէր կարելի, նազ ու տուզ ուտելիս, հագնվելիս՝ երբեք: Ձանձրանալ թույլ չէր տալիս, հիվանդանալ, ուշանալ, որևէ պատճառաբանությամբ դպրոց չգնալ, բացառվում էր: Հենց այդպես էլ ասում էր. «Գնա, դպրոցում մեռի»: Ծուլության որևէ դրսևորում՝ դաս պատրաստելիս կամ պարտականություն կատարելիս տանը, դպրոցում, փողոցում, ամենուր, անզիջում կանխվում էր: Խոստացել ես՝ կատարիր, պարտավոր ես՝ արա ու գինը վճարիր: Ավագ եղբայրներս միշտ ճիշտ էին, բողոքելն անիմաստ էր: Ուսուցիչը պետք է միշտ զոհ լիներ՝ քիչ է, առաջինը պիտի լինեիր ուսման մեջ ու ոչ մի մանրախնդրություն, քինոտություն: Շռայլ եղիր, զիջիր, մոռացիր: Ծխել չէր կարելի, մահացու էր հետևանքներով: Ղումար, խմիչք, պարտք, ուզվորություն, արտաքին ինչ-որ բանից կախվածություն, թուլության որևէ դրսևորում՝ անկոտրում էր մայրս, դաժանության աստիճան: Մեփական քրտինքով պիտի վաստակեիր ուսումդ, հացդ, բոլոր պարտականություններդ պիտի բարեխիղճ կատարեիր: Ջուսպ, շատ զուսպ էր մայրս գովեստների մեջ: Ես չեմ հիշում ուղղակի որևէ դրական խոսք իմ կամ քրոջս՝ Էմմայի հասցեին, այնպես՝ անուղղակի, որպես իր ընկալում, որպես իր հոգեվիճակ: Չնայած երկուսս էլ օրինակելի էինք դպրոցում, թվում է՝ նաև տանը: Հիմա, երբ աջ ու ձախ լսում եմ կանանց, մայրերի, ուսուցչուհիների սաստումը՝ «Միտինգը քո տեղը չէ, կբռնեն, ով է քեզ պահողը», «Ի՞նչ գործ ունես», «Ինչի՞ ես մաքրում, հո ուրիշի համբալը չես», կամ տղայի ամեն քայլի հսկումը՝ իբր հոգատարության տեսքով, երբ բջջային մոբիլ կապը դառնում է ստրկացման արդյունավետ միջոց, երբ առողջությունը կդնի, որ որդին պարտականությունները չկատարի՝ սկսած առօրյա հոգատարությունից մինչև պարտադիր զինվորական ծառայություն ու ռեպետիտորություն, ես հաճախ հիշում եմ մորս:

Կարո՞ղ եմ հարցնել, սիրելի, հարգելի կանայք՝ քույրեր, մայրեր, ընկերուհիներ, այս ի՞նչ եք անում ձեր բերած, ձեր խնամքի տակ գտնվող, ձեր ընտրած տղամարդու հետ: Ո՞նց եք հանդուրժում ծույլ, անբան, հիվանդ, վախկոտ, սպառող, չստեղծող, փնթփնթան, աշխատանքից-ծառայությունից-ընտանիքից-պատասխանատվությունից, երկրից փախչող տղամարդուն: Ո՞նց եք ապրում վախկոտ, ստրկացող, քծնող, անուժ տղամարդու հետ: Արաքսիկ ջան, տեսա՞ր՝ որտեղից ուր հասանք: Թվում է՝ ոչ աշխատանքային օրեր են ազգային տոնացույցում մարտի 8-ն ու ապրիլի 7-ը, այս օրերի արանքում էլ, նորօրյա ավանդույթ դարձած կանանց միամսյակը: Ու ակնկալիքներ... այսպիսի տղամարդկանցով, նրանց՝ ձեզ պարտադրած այս կյանքում ինչպիսի՞ միամսյակ է ակնկալվում: Իրականում Տղամարդու վերադարձի համար քաղաքական պայքարի օրեր ու միամսյակ պիտի լիներ: Քաղաքական ամենալուրջ խոսակցություն՝ տանը, դպրոցում, հրապարակում:

Դառնանք նվերներին: Ուժեղ տղամարդու համար, ով իր ուժը կնոջը ցուցադրելու առիթներ է փնտրում, սրանից էլ լավ առի՞թ՝ այս միամսյակից, որ սկսվում է մարտի 8-ով... Կանանց միամսյակը մեր կյանքի փաստն է, չես փախչի, մնում է, որ այն դարձնենք տղամարդու ուժից ծնված, նրա տաղանդով ստեղծված, տղամարդկային մեծահոգությունից թափվող անակնկալների միամսյակ: Պատկերացնո՞ւմ եք, տղամարդուն վայել ու կնոջն արժանի ինչպիսի ծիսական շրջան կունենանք: Խոստովանեմ՝ կրթահամալիրի կրտսեր դպրոցներում այս մեկ-երկու ամսում ծնված, 2-5 տարեկանների ութ մոդել խմբասենյակները իմ նվեր անակնկալներն են կանանց՝ իմ գործընկերուհիներին, քույրերին, իմ աղջիկներին:

Ի՜նչ է մնում մեզ անելու: Չսպասենք մինչև կանայք մեզ կփոխեն, շնորհակալ լինենք, որ ծնել են, ու փոխենք նրանց կյանքը այնպես, որ մեր կանայք վերջապես արժանի կյանքով ապրեն: Նվեր նրանց՝ տարվա բոլոր օրերի համար:

Աչքներս լույս. մենք նորից միասին ենք, տոնական մարմարյա սրահում

Կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանի ողջույնը 2009-2010 ուսումնական տարվա շրջանավարտներին

Ու այս տարի ևս, ուռա, մենք մեդալակիր չունենք, այսպես ահա քանի՛ տարի, մենք կառուցում ենք մեր կրթական Տունը՝ որպես արդար համակեցություն: Փողով գնահատական չեն ստացել, ուսուցիչ աշխատանքի չենք ընդունել, գնահատանիշով, մեդալով սովորողին չենք ստրկացրել. սովորողով, ուսուցչով, ծնողով վստահել ենք:

Երեկ մի իններորդ դասարանցի տղա, դիմացի դպրոցի վերջինզանգյան աղմուկից հետո մտավ մարմարյա սրահ, որտեղ տարատարիք երեխաներ (և ոչ մի ուսուցիչ) պատրաստվում էին այսօրվա ծեսին, ու թռա՛վ սրտից՝ մեր դպրոցն ուրիշ է: «Ուրիշ» ասել է՝ ինքնօրինակ, ազատ-ստեղծող մարդու ինքնաբուխ կյանք: Այս «ուրիշն» է հենց մեր այլընտրանքը գործող պետականին, մեր հեղինակային մանկավարժությունը:

Ես ինձ լավ եմ զգում այն մտքից, որ ուսումնառության ընթացքում Ձեզ շրջապատել են լավ ուսուցիչներ, պարզապես լավ մարդիկ: Բայց մենք լավ դպրոց դառնալու ճանապարհին մի նշաձող ունենք, որ պիտի ավելի արագ հաղթահարենք. յուրաքանչյուր շրջանավարտ չի կարող չունենալ **Սեբաստացու** նկատմամբ **հիացմունքը**: Այո, ես Սեբաստացի եմ, Մխիթարն իմ հերոսն է, ես հիանում եմ այս հանճարեղ մարդով, նրա կատարած գործի գիտակցումը ինձ ոգեշնչում է: Բրավո, Մխիթար Սեբաստացի, բրավո, դպրոց, որ կրում ես Սեբաստացու անունը և բարձրացնում սովորողներին դեպի նա:

Ամենալավ բանն այն գործն է, որ միավորում է մեզ, և մենք մեր հավաքական տաղանդով, համերաշխ կառուցում ենք լավ դպրոց: Լավ դպրոցն այն դպրոցը չէ, որտեղ մենք ենք երբևէ սովորել, այլ դպրոցը, որտեղ սովորել եք դո՛ւք, ձեր ընտրությամբ՝ ձեր երեխաներն ու նրանց երեխաները պիտի ձգտեն սովորել, և այսպես հարատև: 1984թ. 183 դպրոցի հիմնադիր Աշոտները՝ Մանուչարյանն ու Դաբաղյանը, ունեին լավ դպրոցի ծրագիրը: Ինձ 1985-ին այս դպրոց բերեց լավ դպրոց ղեկավարելու վճիռը: Եվ ահա դուք՝ որպես երիտասարդ ծնողներ կամ կրթահամալիրի հնարավոր աշխատողներ, նաև ընտրության առաջ եք: Եթե սա այն դպրոցն է, որտեղ պիտի սովորի ձեր երեխան, որտեղ կարող եք տարիներ հետո վերադառնալ

որպես աշխատող, ինչպես Վահե Գևորգյանը, ուրեմն **մենք անբաժան** ենք: Իմ ձեռքին է 2010-2011 ուստարվա բուկլետը. մենք միասին ենք կազմակերպում ընդունելությունը, միասին ենք աշխատում, որ զարգացման ծրագիր իրագործենք ու ամեն քայլից հետո ավելի լավ դպրոց ունենանք՝ մեզ ու մեր երեխաներին արժանի դպրոց...

Թող գա սովորելու նա…

2013-2014 ուստարվա ընդունելությունը՝
ուսումնական նախագիծ

Ո՞վ գա սովորելու կրթահամալիրի հանրակրթական դպրոցում, դառնա կրթահամալիրում իրականացվող հեղինակային կրթական ծրագրի սովորողը: Մենք սովորող ենք համարում սկսած 2 տարեկանից, նախակրթարանի սանից մինչև ավագ դպրոցի ու քոլեջի ուսանողին: Ինչպե՞ս տեղեկանա, ինչպե՞ս գա, ինչպե՞ս ընտրվի այն նոր սովորողը, ում հետ ուզում եք ընկերություն անել ու շարունակել ուսումնական աշխատանքը: Միևնույն ժամանակ հիշեցնում եմ, որ դասարաններում, ընտրությամբ գործունեության խմբերում, ակումբներում սովորողների թվի ցուցանիշները, որոնք շատ դեպքերում խախտված են և ստեղծում են անարդար վիճակ: Մի շարք նախաձեռնություններ, ակումբներ, խմբեր չեն գործել կամ ոչ լիարժեք են գործում նաև այս պատճառով. ընդունելության միջոցով նաև այս վիճակը պետք է շտկել: Իսկ հասարակությունը մեր կրթական ծրագրին ա՞յն չափով է տեղեկացված, որ կարողանա ընտրություն անել, թե՞ մենք պիտի ապահովենք նրա տեղեկացված լինելու իրավունքը: Եթե ստեղծողի դպրոցի ու մեդիակրթության մեր ծրագիրն ընտրողը մեդիահմուտ է, ինչո՞վ բացատրենք, որ մեր կայքի շահառուների թիվը դանդաղ է աճում:
Ուսուցանում է ոչ միայն մեր դասավանդողը: Մեր բլոգեր սովորողները, մեր կրթական միջավայրը, որը ավելի մեծ չափով են ստեղծում իրենք՝ սովորողները, ավելի ու ավելի շատ են դառնում մեծի ու փոքրի ուսումնական աշխատանքի ծրագրող ու կազմակերպիչ: Սովորողներն ավելի շահագրիռ պետք է լինեն միջավայրը սնուցող կամ ձևավորող ակունքները զուլալ պահելու, ուսումնատենչ նոր անհատականություններով իրենց դասարանն ու դպրոցը համալրելու հարցում: Եթե մեր մեդիակրթության հմտություններով զինված մեր սովորողը մեդիամիջավայրում արտահայտվում է, էլ ո՞վ, եթե ոչ նա, պիտի ներկայացնի կրթական ծրագիրը: Ենթադրում եմ, որ երբեք չի խաբի իր հասակակցին, կլինի շիտակ, կոնկրետ, նախաձեռնող, ստեղծական: Կարո՞ղ ենք այս ծավալի աշխատանք կատարել որպես ուսումնական նախագիծ՝ այն դիտելով նաև մեր գործունեության հրապարակայնացման, նրա նկատմամբ հանրային վերաբերմունքի արտահայտում: Ե՞րբ, ինչպե՞ս:
Կրթահամալիրի, նրա դպրոցների, իրականացվող ծրագրերի մասին անցյալ տարի էլ ծրագրված տեղեկացրինք: Առանձնացնելո՞ւ ենք 2007թ. ծնված 6 տարեկաններին, որոնք հիմա դեռ մանկապարտեզներում են: Լինելո՞ւ են Երևանի և նրա մերձակա հիմնական դպրոցների շրջանավարտներին ուղղված հատուկ գործողություններ, թե՞ ոչ: Այդ գործողություններից ո՞րն ենք համարում արդյունավետ, ո՞րն է շարունակություն ունենալու այս տարի: Մեր փորձը համարո՞ւմ ենք հաջող: Հեղինակային կրթական ծրագրի մայիսյան հավաքն ու արտագնա կլոր սեղանները ինչպե՞ս պիտի ներառվեն ընդունելության կազմակերպման ծրագրում: Ամառային դպրոցներում նախատեսվո՞ւմ են մանկապարտեզն

ավարտած 6 տարեկանների հատուկ խմբեր, տիեզերագիտական, «Ասպետ» և այլ ճամբարներում ինչպե՞ս են ընդգրկվելու կրթահամալիրի ավագ դպրոցներ դիմող 10-րդ դասարանցիները, ինչպե՞ս են մասնակցելու «Ուսումնական ամառ» նախագծին:

Կենտրոնում Դուք եք

Կրթահամալիրի վարժարանային, Գեղարվեստի, Արհեստագործական ավագ դպրոցների 2011-2012 ուստարվա շրջանավարտներին

«Վերջին զանգ չէ, Շուշան Բլեյանն ասում է «Հրաժեշտ» էլ չէ, ու հիշել է՝ «Աչքներս լույս»-ը... Իրոք որ. ուսուցիչներով իրար աչքալույս տանք, որ խերով կամ փոքր կորուստներով ձեզանից էլ պրծանք... գոնե առժամանակ, ամիսներ, ասենք, երբ այս հոգսաշատ ամառը կթոթափեք, սեպտեմբեր-հոկտեմբերին կվայելեք ուսանողի-աշխատողի նոր վիճակն ու նոյեմբերին կգաք՝ միասին տոնելու «Սեբաստացու օրեր. կրթահամալիրի տոն» ավանդական ծեսն իր այնքան համեղ ու միավորող հարիսայով: Կգա՞ք որ: Բարով գաք: Եկեք: Ձեր դպրոցն է. եթե իհարկե մի քանի տարի հետո մեր կրթահամալիր՝ նախակրթարանի խնամքի խմբեր եք բերելու Ձեր բալիկներին... Հիշեցի՞ք՝ լավն է Ձեր դպրոցը, եթե այնտեղ են նաև Ձեր երեխաները՝ Ձեր գիտակից ու ազատ ընտրությամբ:

Մեր եռամյա ավագ դպրոցի 1-ին թողարկումը, մեր շրջանավարտների այս հոծ ու հետաքրքիր խումբը, որ ինձ սիրելի անհատականություններից են կազմված, մենք համարում ենք հաջողված, կայացած: Հիշեցի՞ք՝ մենք ընկերներ ենք, և սկսվում է գուցե միայն ընկերության շրջանը: Ի՞նչը մեզ կշարունակի միավորել... Համատեղ կյանքի հիշողությունները, հավատարմությունը...

Մայիսի 14-ից 27-ի արարողությունը, որտեղ դուք գլխավոր հերոսներն եք, մեր բազմազբաղ կրթահամալիրի առօրյայում, տեսնում եք - կտեսնեք, ամենակարևորն է. շշմելու նախագիծ է, անգամ ինձ ոգևորեց: Դուք ամենա-, ամենա, ամենան եք, իհարկե, բայց վերջինը չեք, և այս բորբ կարոտը վերջինը չէ... Այ, տեսեք. սկսվել են, հայտնվել 2012-2013 ուստարվա մեր 5-6 տարեկանները, մեր նոր 10-րդ դասարանցիները... բարով գան, օգնենք որ գան, բերեք, ուղեկցեք:

<u>Թող գա նա, ով…</u>

Ամենակարևորը հիմա <u>«Հրաժեշտ»</u> ուսումնական նախագծով միասնական փորձերն են, ձեր ընդհանուր պարապմունքները, որ ամեն օր տևելու են 2 դաս: Մարմարյա սրահը, որպես համերգասրահ, հրապարակ, տեսնում եք՝ ինչպիսի ազգային բրենդ է դառնում: Ձեր բեմելին այդ բարեխիղճ ու ոգևորված պատրաստվեք. կրթական ծրագիրը, որ կրում եք, Ոգին, որ տանում եք, պիտի համակի 1000-ից ավելի հանդիսատեսին՝ սովորողների, շրջանավարտների ծնողների, ուսուցիչների. ակնհայտ պիտի լինի՝ աչքին հայտնի-տեսանելի-շոշափելի, որպես փաստ:

Երախտագետ ու առավել մեծահոգի եղեք. նախագծի այս կամ այն միջոցառման մասին տարաձայնությունը, անհանգստությունը, որ չգիտես ինչու՝ մտասևեռմամբ կարևորվում է հանկարծ, դատարկ բաներ են, վստահ եմ: Ճաշակ ու խորհուրդ, ինքնատիպ ու ազատ, Ձեր ողջ անհատական տաղանդով, որ կարող է բազմապատկվել հավաքական ուժով... Խիզախեք: Կենտրոնում դուք եք, որպես օրվա, պահի, ամսվա, տարվա Հերոսներ...

Միշտ ձեր՝ Աշոտ Բլեյան
Կրթահամալիրի տնօրեն

Մեր ընկեր Հակոբը

Մեր գործընկերոջ պայծառ հիշատակին

Հակոբ Հակոբյան գիտնական ֆիզիկոսը սրանից 32 տարի առաջ թողեց հետազոտական լաբորատորիան ու իրեն բնորոշ հաստատակամությամբ մտավ հանրակրթական դպրոց: 1988թ., երբ կազմավորվում էր «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը, շնորհակալ եմ, Հակոբն ընդունեց իմ առաջարկը և կարողացավ իրեն հարազատ թիվ 112 դպրոցից տեղափոխվել կրթահամալիր, ձևավորել բնագիտության և տեխնիկայի ուսումնական կենտրոնը՝ որպես ուսումնահետազոտական աշխատանքների դինամիկ փոխվող արդիականացնող միջավայր, տարատեսակ և տարատարիք սովորողների ամենագրավիչ անկյուններից մեկը, ինչպես մեր «Տիգրան Հայրապետյան» գրադարանը: Տաղանդավոր ուսուցիչ էր, իհարկե, ընկեր Հակոբը. նա բոլորիս ուսուցիչն էր, ոչ միայն որպես հետազոտող-վերապատրաստող ուսուցչի դասական տիպար, այլ նաև որպես մանկավարժություն ուսումնասիրող և իր մանկավարժությունը անդադրում, ծրագրված առաջ տանող եզակի անձ: Մեր ընկեր Հակոբը կա՛մ պիտի սովորեցներ, կա՛մ սովորեր. այլ վիճակ չգիտեր: Ասենք՝ հանգիստ, ասենք՝ կենցաղ… Ահա ինչու սովորող երեխան նրա պարգևն էր, ու որպես սովորեցնող՝ իսկապես անհոգնել էր: Մենք տաղանդավոր ուսուցիչ կորցրինք: Մեր ընկեր Հակոբը ամենաջանասեր սովորողն էր. նույն անդադրությամբ սովորում էր՝ իր նույնքան տաղանդավոր մանկավարժ եղբորից՝ Գևորգ Հակոբյանից, կրթական այն միջավայրից, որ ձևավորում էինկրթահամալիրում տասնյակ օժտված ուսուցիչներ, ժամերով ինտերնետում կարդում էր, իսկ իր 10-րդ դասարանցի Վարդան Պետրոսյանը վերջին երկու տարում գործընկերն էր՝ միասին գրեցին հոդվածներ, ստուգատեսներին՝ ներկայացումներ պատրաստեցին. համակարգչային ծրագրեր ու էլ. գրատախտակ սովորեց Վարդանից: Ահա ինչու մեր Հակոբը չծերացող ուսուցչի տեսակ էր, և ինչքան անելիք թողեց այս անզանգ աշխատող ու աշխատանքը կյանք դարձրած ուսումնասիրողը…Սա այն դեպքը չէ, որ մարդ չունի իր անձնական կյանքը: Նախանձելի, հարգանքի արժանի ընտանիք՝ Սեդրակ և Արմեն որդիներով, աղջիկ Արփինեով ու Արփինեի ծնած զույգ թոռնուհիներով, Գոհար, Ազգուշ, Գևորգ եղբայր-քույրերով, մեծով պստիկով՝ մեծ ու առողջ ընտանիք: Ո՞վ կկարողանա Հակոբի գործը շարունակել. սա անփոխարինելի կորուստ է: Վերջին տարիներին մենք ունեինք միայն ծնունդներ՝ ծնունդ-երեխաներ, ծնունդ-սերմեր, տնկիներ, լաբորատորիաներ, գաղափարներ… Ի՞նչ, մա՞հ էլ կա, ընկեր Հակոբ: Ինչքա՞ն հարցեր կիսատ մնացին, անգամ նորմալ չքննարկվեցին… Ոչ միայն ես, քո սովորողները, գործընկերները սկսել են մի զրույց

քեզ հետ կայքով, ռադիոլուրով, խոսքուզրույցով: Սրանք նաև երախտագիտության հուզիչ դրսևորումներ են: Իմ ավագ եղբայր, ակնածանքը քո հանդեպ, աշխատանքով տարվածի մեր անուշադրությունը միմյանց՝ աշխատավորին, նրա հոգսին, ցավին, ներելի չէ: Կկարողնա՞նք ավելի ուշադիր լինել միմյանց հանդեպ: Հիմա ո՞նց անենք, եղբայր իմ, մարդ ումից ես միշտ ակնածել եմ: Ո՞նց ենք գլուխ հանելու քո անհաշիվ մշակումներից: Քո ստեղծած ուսումնական կենտրոնը չի կարող այլ անուն ունենալ, քան ընկեր Հակոբի անվան: Չի կարող մեր սովորողը չձգտել քո անվան մրցանակ ստանալու: Քո գործընկերները ի մի կբերեն քո թողած մշակումները. որպես ուսումնական ձեռնարկներ՝ նրանք կսկսեն գործածվել, տարածվել: Բոլորս ենք անցավոր, իհարկե: Դու անփոխարինելի ես, որպես ֆիզիկայի, բնագիտության ուսուցիչ, մեր մանկավարժության մշակ:
Բրավո՛, մեր ընկեր Հակոբ:

Կրթահամալիրի տնօրեն՝
Աշոտ Բլեյան

Մեր ավագ եղբայրն ու ընկերը՝ միշտ Ուսուցիչ Հակոբ Հակոբյանը

Այսօր մեր ֆիզիկայի ուսուցիչ, բնագիտության ու տեխնիկայի ուսումնական կենտրոնի հիմնադիր ղեկավար, մեր պայծառ ընկեր Հակոբ Հակոբյանի ծննդյան օրն է: Հակոբի դպրոցն ու ընկերները, նրա 65 ամյակի պատրաստությունը սկսել են 2013-ի ամռանը: Որքա՛ն ճիշտ էր Հակոբ Հակոբյանի անունը կրող բնագիտական- տեխնիկական- ուսումնական կենտրոնի արդիականացումը: Հակոբին արժանի կենտրոն ունենք, փաստ է: Այն անընդհատ կբարելավվի ու կամբողջանա: Որքա՛ն պատշաճ է Հակոբի ծննդյան օրը մեկնարկող բնագիտական-տեխնիկական հանրակրթական մեր այս ստուգատեսը: Որքա՛ն ակնածանքով են Հակոբին չտեսած բնագիտության մեր նոր ուսուցիչներ Գնել Հարությունյանն ու Լևոն Արամյանը կատարում ստուգատեսի ղեկավարի իրենց պարտականությունները: Որքա՛ն սիրով ու նախաձեռնողականությամբ գրադարանի ղեկավար Մարի Գաբանյանն իր ընկերների հետ ստուգատեսի շրջանակում իրականացնում է բնագիտատեխնիկական ուսուցման միջոցների առաջին ցուցադրությունը կրթահամալիրում. որքա՛ն անմիջական կրթահամալիրի դպրոցների տարատարիք սովորողները, բնագիտության, էկոլոգիայի ուսուցիչները, դասվարները ներկայացնում են ստուգատեսի մասնակցության հայտերը: Որքա՛ն արագ կենդանացավ «Հակոբ Հակոբյան» ուսումնական բլոգը շնորհիվ Հակոբի աշակերտ-շրջանավարտների, ովքեր մասնագիտական ուսուցում են ստանում հանրապետության տարբեր ԲՈՒՀ-երում. Վարդան Պետրոսյանը, Թադևոս և Սարգիս Մարկոսյանները, Արտաշես Կիզոգյանը, Գոռ Մանուկյանը այս օրերին հաճախ են լինում կրթահամալիրում: Նրանք մեր ավանդական դարձող ամենամյա ուսումնական ստուգատեսի խանդավառ կազմակերպիչներից են: Ուշադիր նայեք ստուգատեսի քառօրյա հագեցած <u>ծրագիրը:</u> Այնքա՛ն հագեցած, որ թվում էր՝ նոր բան մտածել, ավելացնել չի լինի, բայց ահա՝ մայրենիի ուսուցիչների և միջին դպրոցի սովորողների հրավերը. « *Կարդում ենք Տերյան ու նվիրում Ուսուցիչ Հակոբ Հակոբյանի պայծառ հիշատակին*»…Սուսան Մարկոսյանը ահա բացել է «Դպիր» էլեկտրոնային ամսագրի <u>հատուկ համարը</u>, կազմված դասավանդողների և սովորողների բնագիտական տեխնիկական ուսումնական նյութերից: Հակոբին արժանի մի գործ, որ կատարվում է սիրով և սուսիկությամբ: Վստահ եմ, որ այս օրերին կլինեն Հակոբին

նվիրված նոր նախաձեռնություններ: Ես բնագիտության ու տեխնիկայի նկատմամբ մեր վերաբերմունքը, բոլորիս համակած նոր խանդավառությունը՝ սկսած առաջին դասարանից, նախակրթարանից, շեշտում եմ որպես ապացույց մեր հեղինակած մանկավարժության պնդումի՝ Ստեղծողի դպրոցում առարկան մեկն է՝ կյանքը, որ քննվում է տարբեր, բոլոր կողմերից: Այստեղ և՛ ՏՀՏ-ն է, տեխնիկան, բնագիտությունը, և՛ լեզվագործունեությունը, երաժշտությունը, կերպարվեստն ու տեխնոլոգիան: Մեր 2014-ի ստուգատեսների շարքը, որ սկսվեց հանրակրթական Դիջիթեքով, ընթացող մարմնամարզական ստուգատեսով, այսօր մեկնարկող բնագիտատեխնիկականով, իմ ասածի իրագործումն է: Նորից ուշադիր նայեք մեր ուսումնական օրացույցը: Ես առանձնակի կարևորում եմ Ուսուցչի նկատմամբ սեբաստացիներիս վերաբերմունքը: Հակոբ Հակոբյանը մի խումբ կրթահամալիրի ուսուցիչների ավագ եղբայրն ու ընկերն է եղել և մնում: Մահը, տեսնո՞ւմ եք, չի բաժանում մեզ, բայց Հակոբը իր հիմնադրած ու զարգացող ուսումնական կենտրոնով, իր աշակերտ հետևորդներով, այս ստուգատեսով, «Հակոբ Հակոբյան» ուսումնական բլոգով, շարունակում է լինել բոլորիս ուսուցիչը: Նոր բան չենք անում, Հովհաննես Թումանյանի միտքն ենք հաստատում. ***գործն է անմահ, լա՛վ իմացեք***, որ ահա՝ ապրում է:

Գարնանային տոն՝ օլիմպիադա

Հանրակրթական դպրոցների բոլոր տարիքի՝ 1-11 դասարաններում սովորողների բազմալեզու, բաց օլիմպիադան մեկնարկել է: Շնորհիվ մեդիայի, Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի mskh.am ուսումնական կայքի օլիմպիական առաջադրանքները, օլիմպիադային սովորողի մասնակցությունը հասանելի է յուրաքանչյուրին՝ Հայաստանում, թե Հայաստանից դուրս: Կայքում օպերատիվ տեղադրվում են օլիմպիադային առնչվող բոլոր տեղեկությունները: Առաջադրանքները թարգմանվում են անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, գերմաներեն, վրացերեն, արաբերեն, թուրքերեն լեզուներով: Սրանով մեր օլիմպիադան կարող է դառնալ միջազգային, անկախ լեզվից, աշխարհագրական սահմաններից: Օլիմպիադայի կազմակերպիչներն առավելագույն ջանքեր են գործադրում օլիմպիադային մասնակցությունը իսկական տոն դարձնելու, ուսումնական-ստեղծական աշխատանքը գնահատող սովորողի և ուսուցչի համար: Օլիմպիադան կազմակերպող

սովորողների համար, սա ինքնաբաց ահայտման, տաղանդն ու եռանդը դրսևորելու հրաշալի հնարավորություն է, իսկ ովքեր մեդիայում չեն, կհարցնեք: Կա մեդիա, կա՝կրթություն, կրկնում եմ ես: Օլիմպիադան բազմաթիվ ուսունատենչ սովորողների համար նոր խթան կարող է դառնալ, օր առաջ մեդիայում հայտնվելու համար:
Հրապարակված 50-ից ավելի առաջադրանքները ընդգրկում են սովորողի ուսումնական գործունեության հնարավոր բոլոր բնագավառները, նրա կյանքը, իրականությունը, որում ինքը գործում է: Առաջադրանքները կազմել են կրթահամալիրի հետազոտող ուսուցիչները, կրթահամալիրում իրականացվող խորացված ուսուցման ղեկավարները, համագործակցելով մեծ խումբ համապատասխան մասնագետների հետ, գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի աշխատողների, իրենց բնագավառում հայտնի գործիչների հետ: Օլիմպիադան ֆորմալ ու ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների միասնականացման հեռանկարային

նախագիծ է, սկիզբը մեր ամբողջական կրթական նախագծի: Նախատեսվող ամառային (հունիս) , աշնանային(հոկտեմբեր), ձմեռային (հունվար) օլիմպիադաները, դրանց միջև ընկած ժամանակահատվածում օլիմպիական խմբերի, ակումբների գործունեությունը սովորելու՝ մտածելու, ուսումնասիրելու, որոնելու, հայտնագործելու, ստեղծագործելու նոր հնարավորություն կդառնան ավելի ու ավելի մեծ թվով սովորողների և մասնագետների համար, տանը թե դպրոցում, խմբային թե անհատական: Ուսումնական-հայրենագիտական-հետազոտական ճամբարները՝ ոչ միայն ուսումնատենչ սովորողին խրախուսելու և ստեղծական հավաքների հնարավորություն, այլ նաև նոր նախագծերի ու ծրագրերի խթան: Անձ թե կազմակերպություն, սովորողի ծնող թե կրթության բարեկամ՝ում ոգևորում է շարունակական-հետևողական-ներշնչված ուսումնական գործունեության հեռանկարը, կարող է օլիմպիական շարժման գործընկերը դառնալ՝ մասնագիտական աջակցություն ցուցաբերել առաջադրանքների կազմման և գնահատման հարցում, ձեռք բերել և օլիմպիադայի հաղթողին հանձնել մրցանակը՝ օլիմպիական ճամբարի ուղեգիր, օլիմպիական կամ նրա մի թիմի, ակումբի ճամբարը կազմակերպել: Բոլոր առաջարկներն ու նախաձեռնությունները կքննարկվեն: Ես դա երաշխավորում եմ, ինչպես երաշխավորում եմ օլիմպիական մթնոլորտ, արդարություն և համերաշխություն: Այնպիսին, որ յուրաքանչյուր մասնակից, անկախ արդյունքից, իրեն հաղթող զգա: Այսպիսով հաստատելով օլիմպիադաների կարգախոսը՝«Կարևորը մասնակցությունն է»: Գրեք մեզ olimpiada@mskh.am հասցեով:

Նոր գինին՝ նոր տիկի մեջ

«Մեր առջև կանգնած նշանակալի խնդիրներ չեն կարող լուծվել մտածողության այն մակարդակում, որում դրանք ստեղծվել են»:

Ա. Էյնշտեյն

Էյնշտեյնի այս ձևակերպումը ես կարդացի մեր սիրելի Նիկոլի «Հայկական Ժամանակ» օրաթերթում, հայտնի գրող-հրապարակախոս Տիգրան Պասկևիչյանի հրապարակման մեջ: Այո, մտածողության այլ մակարդակ է պարտադրում մեդիահանրակրթության կազմակերպումը: Սրանով մենք արձանագրում ենք, որ կրթահամալիրը իր 2-ից 22 տարեկան 2000-ի չափ սովորողով, նրանց ծնողներով, բոլոր տեսակի մանկավարժական աշխատողներով, գործում է այլևս մեդիագրի շրջանում՝ ետևում թողնելով կրթության ձեռագրի և տպագրի փուլերը: Սրանով այո, մեզ պարտադրված է հեղափոխություն յուրաքանչյուրիս գիտակցության մեջ: Մտքի մեջ են մեր բոլոր արատները, այստեղ՝ գիտակցության մեջ է սկիզբը, ակունքը մեր բոլոր հաջողությունների: Ուսումնական աշխատանքը նախ և առաջ մտավոր աշխատանք է: Ուսունասիրության առանձին նյութ է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում իրականացվող հեղինակային մանկավարժության հեղինակների 6-ամյա պատմությունը, նրա 6 հավաքների օրակարգը, բովանդակությունը, կազմակերպումը, ողջույնի իմ խոսքերը: Թույլ տվեք հերթական հավաքի ողջույնի իմ հերթական խոսքում որպես հավաքի առիթով աչքալուսանք, կանգ առնել միայն հավաքի կազմակերպման ձևի վրա՝ մեդիահավաք:Մեդիահանրակրթություն

բովանդակությունը մեդիահավաք ձևում: Ասել է թե՝ նոր գինին՝ նոր տիկի մեջ: Երեք օր անընդհատ կրթահամալիրի Մեդիակենտրոնի wifi ինտերնետային տարածքում մեր ուսուցիչները, սովորողները, ծնողները, հավաքի այլ մասնակիցներ, պարզապես հավաքի հյուրեր, բաց, ստեղծական ռեժիմում կքննարկեն mskh.am-ում, «Դպիր» էլեկտրոնային ամսագրի 40, 41-րդ համարներում տեղադրված հետազոտական աշխատանքները: Մեդիահավաքի աշխատանքներին հնարավոր կլինի հետևել օնլայն ռեժիմում, նաև անգլերեն, ռուսերեն, վրացերեն լեզուներերով: Հավաքի օրերին, մայիսի 12-ին, 13-ին, ժամը 09:00-ից մինչև 13:00, համեցեք «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի նյութական աշխարհ՝ ծանոթանալու մեդիահանրակրթության կազմակերպմանը կրտսեր և միջին դպրոցներում, մասնակցեք մեդիայի մեր նոր ձեռքբերումներին, շնորհանդեսներին: Եվ այս ամենը՝ ոչ միայն առանց ընդհատելու մեր օրացույցային ուսումնական աշխատանքներն ու պարապմունքները, այլև առանց փոփոխելու դրանք: Չենք ուզում և չենք կարող, քանզի մեր կրթահամալիրային կյանքն այնքան հագեցած է, ու այս հավաքը, թեկուզ շատ կարևոր, բայց միջոցառում չէ, այլ մեր ընթացիկ, բարեխիղճ, հետևողական աշխատանքի կարևոր հանգրվան: Սրանով մենք նվաճում ենք մի նոր մակարդակ, որ օգնում է մեզ մնալ մտածողության այն մակարդակում, որում կարող են ամբողջական լուծում ստանալ մեդիահանրակրթության խնդիրները:

Այո, հեղափոխություն՝ նոր գինին՝ նոր ձևի մեջ. սա չէ՞ հեղափոխության մեր նորարար Ուսուցիչ Հիսուս Քրիստոսի բանաձևումներից մեկը:

Գնալ չկա…

«Ցտեսություն» տոնախմբություն

Գնալ չկա, եթե քո կյանքը քո ընտրությունն է, քո դպրոցը…

Պարզապես մեր համատեղ կյանքի մի շրջանն ավարտվեց: Ասենք՝ շնորհավոր: Ծափահարենք իրարու:

Սկսվեց մեր գործընկերության նոր շրջան, որտեղ չկան այևս վարչական-ենթակայական կապեր, կան իրավահավասարություն-ընկերություն ու քո դպրոցը, որ այս պահից քո երեխայի դպրոցն է: Հասուն լինել՝ նշանակում է կրել նաև երեխայիդ: Հասուն ենք, չէ՞: Հասուն լինել՝ նշանակում է գործել ինքնուրույն, որպես երախտագիտություն հայտնելու միակ ձև՝ ստանձնելով քո ամենասիրելիների՝ քո ծնողների, քույր-եղբայրների, ընկերների, քո դպրոցի հոգսը՝ սկսած ամենօրյա ուշադրությամբ նրանց առօրյա կարիքները հոգալուց: Հասուն լինել՝ նշանակում է գործել՝ հավատարիմ մնալով սեբաստացիական քո արժեքներին, լինել ակտիվ, նախաձեռնող, անընդհատ սովորող ու փոխանցող, միշտ ստեղծական: Պարտիզպան, հավաքարար ու պահապան իմ ու քո դպրոցի, քո ծննդավայրի, դրախտավայր Հայաստանի…

Մեր դռները, մեր կրթահամալիրի՝ քո Գեղարվեստի, քո Արհեստների, քո Վարժարանի, մեր կրտսեր ու միջին դպրոցների, քոլեջի, գրադարանի ու մարզադպրոցի, Բլեյանի դպրոցի բոլոր դռները բաց են մնում քեզ համար… Բայց ամեն վայրկյան մենք այլ ենք:

Ահա տես՝ շատ եք՝ 174: Բայց սկսիր հաշվել. 2013-2014 ուստարվա Դպրոց-պարտեզի, Նոր դպրոցի, Գեղարվեստի կրտսեր ու Հիմնական դպրոցների ճամփան են բռնում քանի՞ 5-6

տարեկաններ, ու ավագ դպրոցներ են նոր դիմում 10-րդ դասարանցիներ... Դու նրանց ուղեկիցն ես, եթե սա քո դպրոցն է: Կգաս փոփոխվող՝ ամեն վայրկյան այլ դարձած. կաս ու կփոխես, քո թափն ու էությունը կհաղորդես մեզ: Մենք քո դպրոցն ենք:

Ողջույն 2013 թվականի շրջանավարտ սեբաստացիներին... Աչքալուսանք նրանց ծնողներին, ուսուցիչներին, բոլորիս....

Միշտ ձեր՝ Աշոտ Բլեյան

24.05.2013թ.

Ձեր կյանքի դպրոցական շրջանը փակվեց...

Ձեր կյանքի մի շրջան ավարտվեց... 2011-ի սեպտեմբերյան մեկնարկին կրթահամալիրի Գեղարվեստի ավագ դպրոցում, Արհեստագործական ավագ դպրոցում, Ավագ դպրոց-վարժարանում ձեզանից շատերը ստիպված թողել էին իրենց դպրոցն ու հայտնվել «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում: Երեք տարի ապրեցիք մի մոլորակում, մի աշխարհում, որ շատ է տարբեր: Ի՞նչ տվեց այդ կյանքը ձեզ, ձեզնից յուրաքանչյուրին, ինձ, ձեր ուսուցիչներին, ձեր դպրոցին, 2014-2015 ուստարում ձեզ փոխարինող 10-րդ դասարանցիներին. կարևորը դա է:

Դուք պատմում եք՝ ինչպես այդ երեք տարին փոխեց ձեզ՝ ներսն ու դուրսը, ձեր հայացքն ու կյանքը: Պատմում եք մեդիայում՝ Ձեր անհատական ու ակումբային, խմբային բլոգներում, մեր սիրելի mskh-ում, այս օրերի պարապմունքներում. մի՛ զլացեք. անկեղծ ու շիտակ եղեք:

Դուք էլ երեք տարի անընդհատ կարողացաք փոխել մեր-ձեր աշխարհը, ու հիմա ես գալիս եմ ձեր հետքերով՝ թարմ՝ արձանագրելու ակնհայտը:

Ընդամենը մի քանի օրում ցուցասրահը, այս սրահը, մուտքերը այլ տեսք ստացան. կեցցեք: Դուք ջնջեցիք սահմաններն իրար ու ձեր դասարանների միջև և ապրեցիք որպես մի մեծ պլեներում՝ Իջևանում, Ստեփանավանում, Թբիլիսում, Շուշիում, կրթահամալիրում՝ իր բոլոր ութ դպրոցներով... Լուսինե Մանուկյանն ու Արման Գրիգորյանը հետևողական եղան:
Երբ 2012 թ. դեկտեմբերին ձյունոտ Շուշիում էինք, ձեր մի խմբի հետ, մենք իրար հայտնաբերեցինք, և դա շրջադարձային եղավ և՛ Գեղարվեստի, և՛ իմ, և՛ կրթահամալիրի համար:

Գեղարվեստի դպրոցի և հարևան մանկապարտեզի միջև այս գունեղ կառույցը շրջադարձային նախագիծ է մեր ողջ կրթահամալիրի համար: Ամբողջ ամառ մենք համերաշխ, համատեղ, որպես ճամբարային առօրյա, որպես ուսուցում մեր կրթական պարտեզի մեջ կներառենք մեր բոլոր դպրոցները՝ իրենց բակերով, միջդպրոցական փողոցներով, հարակից տարածքներով...

Ես արհեստների դպրոցի ջերմոց-լաբորատորիայում եմ: Մենք սա էինք ուզում՝ այս հայացքը կյանքին՝ ստեղծողի, արտադրողի, արտադրությամբ սովորողի, արդեն ավագ դպրոցում սեփական քրտինքով ու շնորհքով հացը վաստակելու, մասնագիտության տեր դառնալու, օր

առաջ ինքնուրույն լինելու, ընտանիքին նյութապես աջակցելու… Արհեստագործական ավագ դպրոց-քոլեջի այս տարվա շրջանավարտներին ասում եմ՝ կեցցեք, դուք բեկում մտցրիք մեր կրթական ծրագրում, մենք ձեր սիրով պատրաստած հացը կերանք, և ծառայությունների մեր կրթահամալիրային շուկան 2014-2015 ուստարում ձերն է:

Մեր շրջանավարտներին՝ Ավագ դպրոց-վարժարանին ենք պարտական ակումբային ուսուցման կազմակերպմամբ՝ գիտակների, ընթերցասերների, տիեզերագետների, թարգմանիչների, տնտեսագետների, հայրենագետների, էկոլոգների, երաժշտական, թատերական, TV-ի… իր ակումբային միջավայրով, նախագծերով, ուսումնական պարապմունքի նոր ձևերով, կյանքի հետ գործուն կամուրջներով… Հիմա, երբ ակումբային պարապմունքների հերթական ու վերջին հինգշաբթին է, երբ Բուն TV-ն գիտակների ակումբի նախաձեռնությամբ սկսել է տեսադասերի շարքը, երբ էկոլոգները եռանդուն պատրաստվում են հանրակրթական 5-րդ ամենամյա էկոտուրին, շրջակա միջավայրի բարեկարգման հերթական ստուգատեսին, ընթերցասերները գրավել են հերթական եթերը, ես գոհունակության զգացում ունեմ, և միասին, կարծում եմ, երախտագիտության՝ ակումբների ղեկավար ուսուցիչների նկատմամբ….

Իմ սիրելի շրջանավարտ 2014, Սեբաստացի՝ որտեղ էլ որ լինես.

ճակատիդ քրտիքով վաստակիր օրվա հացը.

վարվիր մարդկանց հետ այնպես, ինչպես կուզենայիր, որ քեզ հետ վարվեն.

արդ կատարյալ եղիր, ինչպես Ուսուցիչն է իմ կատարյալ:
https://www.youtube.com/watch?v=OrxI-ZfxGhQ

Միշտ սովորողի հետքերով

Տեսա-փերֆորմանսի փորձ

Եվ հետքեր, հետքեր, հետքեր մարդկային…. Փնտրենք միասին մեր կողմից իրականացվող հեղինակային կրթական ծրագրի մարդկային հետքերը սովորողների, ուսուցիչների գործերում:

Թումանյան Հովհաննեսից եմ լսել՝ հա, ես էս երկրի պահապան շունն եմ: Հետո, երբ կրթության գործը դարձավ իմ կյանքը, և հայրենագիտությունը՝ կրթական ծրագիր, ես տարատարիք սովորողների հետ «մանրամասն սիրում էի» «մի քանի սար ու ձոր իմ հայրենիքը»: Եվ ամենուր պետք էր ընտրություն կատարել՝ հաշտվենք խոզի վիճակի հե՞տ, թե՞ բնության յուրաքանչյուր կտորը մաքրենք… Ես այս երկրի հավաքարարն եմ՝ բարձրաձայնեցի ես: Հետո իմ մանկավարժությունը պահանջեց իմ սաների հետ Բանգլադեշի քարուքոռից պարտեզ ստեղծել, կրթահամալիրի տարածքներում հողը ազատել ասֆալտից և եզրաքարերից: Կրթահամալիրը՝ կրթական պարտեզ, որ մենք մեր կրթական ծրագրով անընդհատ ընդարձակում ենք: Ես այս երկրի պարտիզպանն եմ նաև: Ահա Ձեզ մեր հեղինակային կրթական ծրագրի երկու անուն: Ստեղծողի մոբիլ դպրոց և հավաքարար, պարտիզպան, պահապան՝ հայրենատիրոջ դպրոց: Ինձ համար սրանք հոմանիշներ են:

Կասեք՝ բառեր, բառեր, բառե՛ր... Երբ հարգում ես քո կրթական ծրագրի սովորողին, քո երեխային, քո գործընկերոջը, քո ընտանիքի անդամին, հարգում նրա ջանասիրության և հայտարարված գաղափարին հավատարիմ գործունեության համար, սա ավելի է, քան երեխային, մարդուն սիրելը: Դիտեք այս տեսանյութերը, որ մեր 2014թ. հունիսյան ուսումնական ճամբարների առօրյայից են:
https://www.youtube.com/watch?time_continue=1&v=2IllQbAYrBU

https://www.youtube.com/watch?time_continue=1&v=2IllQbAYrBU

Հունիսի 2-ից 5-ը մեր կրթահամալիրի 2-5 տարեկան սաները, 6-18 տարեկան սովորողները մաքրում էին մեդիան՝ «Անտիվիրուս Կոմիտաս 2014- ավանդական նախագծի (մեր խոնարհումը քեզ, Արթուր Շահնազարյան) շրջանակում: Երգում, խաղում, ապրում էին Կոմիտաս: Տեսեք՝ ինչպե՞ս. https://www.youtube.com/watch?v=OftRxD7qsOA

Իսկ հունիսի 5-ին՝ Շրջակա միջավայրի միջազգային օրը, նրանք նույն ձևով խաղալով իստակում էին Երևանը: Օրվա վերջում ես մեկ ժամ քայլում էի մեր 5-ից 15 տարեկանների հետքերով.... Այսպես մաքուր Բանգլադեշը չի եղել: Ես հարգանքով լցվեցի իմ սաների նկատմամբ: https://www.youtube.com/watch?v=zLS-IttJSNE

https://www.youtube.com/watch?v=ZKKlWZdk-0k

https://www.youtube.com/watch?v=JRAG9fW2REc

Մայիսի 23-ին՝ 12-րդ դասարանցիների ուսումնական վերջին պարապմունքի օրը, ես «Սեբաստացի» TV-ի Միշոյի և Անիի հետ որոշեցի գնալ նրանց հետքերով: Տեսեք, թե ինչ ստացվեց... https://www.youtube.com/watch?v=2HDULDHAygQ

Ինչու միայն շրջանավարտների հետքերով: Ես առաջարկում եմ հետևել նաև կրթահամալիրի նախակրթարանների, հանրակրթական դպրոցների, քոլեջի տարատարիք սաների և սովորողների, մանկավարժական աշխատողների ամառային գործունեությանը: «Սեբաստացիներ» ուսուցչական երգչախմբին, որ սկսել է ամառային կրթամշակութային արշավ-հեղինակային կրթական ծրագրի տարածումը, այս անգամ՝ Լոռու մարզից՝ Ստեփանավանից:
https://www.youtube.com/watch?v=pcUixZPHeyk

https://www.youtube.com/watch?v=hVDh7j-VWBQ

Հետևենք մեր հունիսյան բաց ու տեղծական ստուգատես-փառատոներին՝ թարգմանական, թատերական, կինո-ֆոտո, երաժշտական, «Ուսումնական ամառ»: Անհոգնել, անդադար, ստեղծական... Այսպիսին են սեբաստացիները՝ բոլոր տարիքի, որտեղ էլ որ նրանք լինեն: Եվ այսպես, 25 տարի՝ 1989-ից, մեր ստեղծման օվանից:

Ի դեպ, հունիսի 20-ին Առնո Բաբաջանյանի անվան համերգային դահլիճում (Խ. Աբովյան 2) մենք կազդարարենք մեր հոբելյանական հանդիսավոր հանրային հաշվետվությունների մեկնարկը: Ուրիշ տարի կլինի: Սա մենք Ձեզ խոստանում ենք:

Կրթահամալիրի տնօրենի օրագրից

25 տարի մոբիլ և ստեղծական

Նայենք mskh.am-ում տեղադրված կրթահամալիրի օրացույցին՝ նոյեմբերի 13-15-ին «Սեբաստացու օրեր» կրթահամալիրի տոն է: Իսկ թիվ 183 դպրոցը Հարավարևմտյան զանգվածի կիսակառույց Բ-1 թաղամասում առաջին ուսումնական տարին սկսել է 1984թ. սեպտեմբերին. ասել է, թե «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ծնած այս, իրավական առումով արդեն գոյություն չունեցող մեր դպրոցը 30 տարեկան է:

Նկատել եք. կրթահամալիրի բոլոր յոթ կրթական օբյեկտների (ուսումնական շենքեր) դռները անպահակ են ու բաց՝ ազատ ելումուտով, սովորողների, ուսուցիչների, ծանոթ-անծանոթների համար, սկսած Մեդիակենտրոնից (Ռաֆֆու 57, Սուրբ Երրորդություն եկեղեցու դիմաց, որ հիմա կրթահամալիրի կենտրոնն է), վերջացրած կրթահամալիրը ստեղծած Մայր դպրոցով (Առնո Բաբաջանյան 25): Կենտրոնի գլխավոր մուտքի դուռը, նկատել եք, միշտ կրնկակոխ բաց է. փակում է օրվա հերթապահը ու հանձնում պահակին ժամը 20–ին: Մինչ այդ թակել պետք չէ, նեղություն մի տվեք՝ համեցեք. «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի անընդունարան տնօրենը եղել ու մնում է ամենամատչելի անձը տարատարիք սովորողի և ուսուցչի, ծանոթ-անծանոթի համար:

Իմ բլոգը ևս ընդունարան չունի, փակ դռներ, հաղորդակցության խոչընդոտներ: Ես հեռախոսով՝ 094431099, թե՝ Մեդիակենտրոնի ֆիքսված 010747246 կապով, որևէ զանգ, էլեկտրոնային հաղորդագրություն իմ ֆեյսբուքյան էջին, բլոգին, թե bleyan@mskh.am փոստին անպատասխան չեմ թողնում: Որքան նկատել եմ այդպես է գործում յուրաքանչյուր տարատարիք սեբաստացի, կրթահամալիրի ամեն մի դպրոցում: Մենք բաց ենք, պատրաստ հաղորդակցության 24 ժամ անընդհատ, ֆիզիկական թե մեդիամիջավայրում, հայերեն՝ իհարկե, և ոչ հայերեն՝ անգլերեն, ռուսերեն, վրացերեն, իսպաներեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն լեզուներով, ժեստերով, ֆոտոներով, նշաններով…

Մեդիակենտրոնը՝ Ռաֆֆու 57, Սուրբ երրորդություն եկեղեցու դիմաց, զանգե՛ք 010747276, զանգե՛ք կամ պարզապես այցելե՛ք, բաց է յուրաքանչյուրի համար, հանգիստ առնելու, ընթերցելու, կրթության հետ կապված շատ տեղեկություններ ճշտելու, կրթական ծառայություններ ստանալու: Այստեղ նաև իմ գրասենյակն է՝ բաց ու մատչելի յուրաքանչյուրին. ստուգեք:

Շնորհակալ եմ կրթահամալիրի խորհրդի նախագահ, Հրաչյայի, Լևոնի, Արեգի, Նարեի հայրիկ Արամազդ Ղալամքարյանին. նրա միջնորդությամբ հանդիպեցի առաջին դասարանցիների մի խումբ երիտասարդ (բոլորը) հայրիկների ու մայրիկների՝ առաջադեմ տղամարդու տպավորիչ գերակշռությամբ: Փոխվել է որակապես մեր գլխավոր պատվիրատուն՝ բաց հասարակության առաջադեմ անհատների՝ գործընկերների խմբի հետ

ի՜նչ թեթևությամբ շրջեցինք Դպրոց-պարտեզի բակով, որքան նրանց ուրախացրեց հեծանվուղու-հրապարակի նախապատրաստական աշխատանքների ավարտը: Նույնքան կարևոր էր մեր քայլքը թաղամասի մանկական այգով մինչև Բ-1 և Բ-4 թաղամասերը կապող այս շշմելու կառույցը՝ վերգետնյա անցումը, որ հազար Էյֆելյան աշտարակի հետ չեմ փոխի…

Ամենաշատն ուրախացնում են կրթահամալիրի ու թիվ 183 դպրոցի շրջանավարտ-ծնողները, ովքեր հայտնվում են անհայտությունից՝ երեխայի ձեռքը բռնած: Լսեք նորից. լավն այն դպրոցը չէ, որտեղ սովորել ենք մենք կամ մեր երեխաները: Լավն է այն դպրոցը, որտեղ իրենց ազատ ընտրությամբ կգան սովորելու մեր շրջանավարտների երեխաները… Ա՛յ, Մաթևոսյան Լիլիթի նման… Մեղավոր եմ, սիրելի Սատանա, չճանաչեցի, քանի՜ տարի է անցել: Բայց ճանաչեցի 4 տարեկան դստեր՝ Նարեի կերպարով… Տեսարան՝ չորս տարեկան Նարեն, բարեհամբույր-խաղաղ հոր աջակցությամբ, միայնակ նվաճել էր Դպրոց-պարտեզը… պատմում էր ու ցուցադրում… Ճիշտ ու ճիշտ իր մայրիկի նման, որի անունը մտքումս շարունակ փոխարինվում էր դպրոցական տարիների իմ դիմելաձևով՝ իսկական Սատանա… որ կարող է հայտնվել ամենուր, միշտ սպասված-հետաքրքիր…

Լավ է, որ այսօր սեբաստացիներս մեր արդիական՝ մոբիլ ու ստեղծական կրթությամբ, մեր ամբողջովին բաց կրթական համակարգով, մեր հեղինակային կրթական ծրագրերով ենք օգտակար լինում Հայաստանում, Արցախում, Վրաստանում, այլուր՝ դրանց մշակման, իրականացման ու տարածման փուլերով… Նաև ֆիզիկական մեր միջավայրով. Բանգլադեշում մեր ստեղծած կրթական փոխանակումների հարմարավետ կացարանները, բաց ու մատչելի ստեղծագործական հավաքները, ակումբները, ամառային և ձմեռային ճամբարները, մեր մեդիան՝ mskh.am-ը, հարմար ձևեր են մանկավարժության փոխանակման համար…

Կրթությունը համագործակցության դաշտ է, որտեղ այս անգամ գլխավորը Մադինայի՝ գյուղի, դպրոցի նախաձեռնողականությունն է ու գյուղական դպրոցը նորացնելու համերաշխությունը: Ահա այս աշխատանքն է, որ կարող է միավորել մեզ բոլորիս Մադինայում և Երևանում, իսկ մադինացիք՝ ցանկացած կազմով, սպասված մարդիկ են կրթահամալիրի մեր Բանգլադեշում, հատկապես այս օրերին, երբ թափ է հավաքում մեր սեպտեմբերյան ստեղծագործական բաց հավաքը: Համեցեք:

Ինչո՞ւ մենք պիտի նշենք կրթահամալիրի ստեղծման 25-ամյակը: Այս ստեղծական-համերաշխ ու հայտնի կրթահամալիրը կանգնած է Երրորդ Հանրապետության ստեղծման ակունքներում և 25 տարի ծառայել է հանրապետության արժեքներին՝ առաջադիմությանը. սրանից էլ լավ առի՞թ. իշխանություն և հասարակություն, նշեք՝ անպայման և պատշաճ, նշանավոր գործերով:

Շնորհակալ եմ, որ մեր սեպտեմբեր-հոկտեմբերի հավաքները կազմակերպելու համար սիրով, մեր գործընկերության ավանդույթով մեզ տրամադրեցին Հայ ազգային սկաուտական կազմակերպությանը (ՀԱՍԿ, խորհրդի նախագահ՝ Բագրատ Եսայան)՝ Բյուրականի սկաուտական ճամբարը, «Ժայռ» հասարակական կազմակերպությունը (ղեկավար՝ Ալեքսան Մինասյան)՝ Սևանի ճամբարը:

Մանկավարժական սկզբունքներ

Պարտիզպան-սեբաստացի, հավաքարար-սեբաստացի, պահապան-սեբաստացի, հայրենագետ-սեբաստացի, ստեղծագործ ու մոբիլ անհատականությամբ՝ ահա իմ մանկավարժական կրեդոն:

Հեգելի «Դաստիարակության նպատակը մարդուն ինքնուրույն էակ դարձնելն է, այսինքն՝ ազատ կամքով էակ» միտքը՝ մանակավարժական կրեդո...

Նախ՝ կրկնեմ կրեդոն՝ դաստիարակության նպատակը մարդուն ինքնուրույն էակ դարձնելն է, այսինքն՝ ազատ կամքով էակ: Մի՞թե սա իմն է միայն կամ մանկավարժական աշխատողների մի խմբինը. եկեք ուղիղ խոսենք: Մի՞թե սա սեբաստացիների, որտեղ էլ որ կաք, ավելի վաղ հրապարակած «Թող գա սովորելու նա՝ ով…» կանչի հոմանիշը չէ, մի՞թե սա կրթահամալիրի զարգացման ծրագրով ամրագրված, կրթահամալիրի յոթ հրաշալիքների, յոթ հոմանիշների, յոթ որակների նույն իմաստը չէ: Կուզեմ հռետորական լինի իմ հարցադրումը: Ինձ համար երեքն էլ նույնն են՝ որպես Բան, որպես մեր քաղաքական Ճիգ ու Ջանք:

Հայր իմ Շամխալ Բլեյան, ես հաստատում եմ քո երեք տաբուներից յուրաքանչյուրը կամ կրեդո հավատամքներից յուրաքանչյուրը «Ապրիր քո կյանքով, շան տղա, իմ կյանքի հետ գործ չունես. совест (խիղճ. եզակի ռուսերեն բառերից, որ ու հաճախ գործածում էր՝ սովեստ չունես) ունեցիր... Պարազիտ ա՝ պարտքով ա ապրում, ես նրան ինչ ասեմ: Ոչ մեկին պարտք չլինես...»:

Ես թանկ եմ գնահատում սեբաստացիների համերաշխությունը և հեղինակային կրթության սկզբունքներին՝ կրեդոներին, բոլորիս հավատարմությունը, ահա ինչու, ես, որպես այս համերաշխության և հավատարմության ձեր ընտրած լեգիտիմ երաշխավոր, հետևելու եմ, որ մեր կապը չընդհատվի՝ իմ օրագրով նաև արձագանքելով կոնկրետ ձեր յուրաքանչյուր տեսա-ձայնային ազդանշանին...

Կրթահամալիր՝ բաց հասարակության բաց դպրոց

Մենք օլիգարխի դպրոց չենք. չենք լինի: Մենք եղել ենք ու կանք հասարակ առաջադեմ մարդկանց ու նրանց ստեղծած առաջադիմող հասարակության դպրոց՝ մատչելի անպայման: Ահա ինչու մենք պետական ենք՝ որպես ուսումնական հաստատություն՝ սովորողների թվով ֆինանսավորմամբ, որպես հեղինակային կրթական ծրագիր՝ պետական աջակցությամբ մանկավարժական նորարարություն մշակող, կազմակերպող և տարածող, այլընտրանք պետականին: Որպես առաջադեմ անհատի կրթության ու լրացուցիչ կրթական պատվերի կազմակերպում՝ մենք մատչելի ենք, մրցակցությունից դուրս, յուրաքանչյուրինն ենք, հազարինն ենք՝ և՛ նախադպրոցական կրթությունը, և՛ 1-7-րդ դասարաններում երկարօրյա ուսուցումը, և՛ տեղափոխման ու սննդի կազմակերպման ծառայությունները, և՛ լրացուցիչ կրթությունը՝ լող, մարմնամարզություն, խաղային մարզաձևեր, երաժշտություն, կերպարվեստ, ակումբային-ճամբարային-ստուգատեսային բաց ուսուցման, կրթական փոխանակումների, սովորողի տաղանդի դրսևորման, ինքնիրացման համալիր պայմանների ապահովման միջոցով, որպես ուսուցանող կրթական միջավայր: Ահա ինչու՝ ծնողը և՛ մեր պատվիրատուն է, և՛ մեր գործընկերը...

1985-ից, 1989-ից սկսած՝ անընդհատ, մենք եղել և մնում ենք որպես հայաստանյան նախագիծ, սովորական հայաստանցու անսովոր դպրոց, անսովոր՝ մարդուն ուղղված հնարավորություններով, անսովոր՝ ուսուցման այս իրականությանն անծանոթ կազմակերպմամբ: Մենք հարուստի համար չենք եղել ու չենք, քննելով-ստուգումներով չենք ջոկում մեր սաներին (կարող էինք ու կարող ենք, չէ՞): Ավելին. մենք համոզված ենք, որ հասարակ մարդկանց միությունն է (հասարակությունը քաղաքացիական), որ չի կայանում մեզանում, և դա է հայոց նոր ողբերգությունն ու հայաստանյան հանրակրթական դպրոցի խնդիրը:

Այո, մենք մանկավարժության, մեթոդի դպրոց ենք. ինչպե՞ս ուսուցանել՝ կրթել սովորական մարդուն՝ իր նմանի հետ, իր նման մարդկանց մեջ ապրելու հեռանկարով ու ներկայով: Մենք չենք ընտրում, մեզ են ընտրում, մենք եղել ենք ու կմնանք հավատարիմ ընտանիքին, անհատին, պատանուն՝ իր այդ ընտրության համար, և մեր հավատարամության ձևը մատչելիությունն է: Մենք մատչելի ենք, միշտ բաց, հրապարակային (ինչպես զարմացած ասում է Պիետրոն. «Դուք ամենահրապարակային կրթությունն եք իրականացնում ամբողջ աշխարհում):

Ահա ինչու մեզ համեմատել չի կարելի բոլոր այն դպրոցների (անգամ հայտնի) հետ, որոնք մեկ տեղ են հավաքում հարուստ, ապահով ընտանիքների երեխաներին կամ իրենց առաջին դպրոցներում կրթական նկատելի հաջողություններ դրսևորածներին... Խոսովանենք, որ այդպես հեշտ է ցույց տալ արդյունքներ և դա վերագրել հաստատությանը: Բայց սա այլ խոսակցություն է, հանրակրթության հետ կապ չունեցող, իսկ ես խոստացել եմ խոսել միայն միշտ արդի ու հանրամատչելի մանկավարժությունից:

Մեր մեդիան՝ կրթական թե սոցիալական mskh.am-ը, որ առանց կետի չի բացվում ոչ ոքի համար (արդար է), ի սկզբանե մտածված է բաց-մատչելի եղել յուրաքանչյուրի համար, ինչպես մեր «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ֆիզիկական միջավայրը՝ դպրոց բոլորի համար, ներառող յուրաքանչյուրին՝ և՛ սեբաստացիներին՝ սովորող, ծնող, ուսուցիչ, շրջանավարտ, և՛ ոչ սեբաստացիներին՝ Երևանում թե նրանից դուրս, Հայաստանում թե նրանից դուրս: Սա վստահ կա որպես յուրաքանչյուրի դպրոց՝ ամառ թե ձմեռ, ուսումնական օրերին և արձակուրդային: Տեսա՞ք՝ մենք ողջ հունիս գործեցինք այդ ռեժիմում՝ ստուգատեսային... Բաց էին մեր բոլոր կրթական օբյեկտները: Հիմա նայեք mskh.am-ի ցուցիչին. հունիսին՝ 146 365 մուտք, մոտավորապես այնքան, ինչքան մայիսին՝ 151 600: Ունի, իհարկե, առանձնահատկություն արձակուրդային հուլիսը կամ օգոստոսը, բայց...

Ուսուցում ուսումնական օրացույցով

Տարին ունի 12 ամիս, իսկ ահա ուսումնական տարին պետական-պաշտոնական դպրոցում՝ և՛ խորհրդային, շրջանում, և՛ ետխորհրդային ազատ անկախ Հայաստանում՝ 9: Կարո՞ղ եմ հարցնել՝ ինչո՛ւ, ինչին են ուղղված ամառային երեք ամիսները, եթե դրանք ուսումնական չեն: Եվ ինչո՞ւ ենք մենք աշխատում 12 ամիս:

Մեր 2014-2015 ուսումնական օրացույցը 2013-14-ի օրացույցի հետևողական ամբողջացումն է՝ «Ստեղծողի մոբիլ դպրոցի» կազմակերպման ձևը:

Նորից նայենք mskh.am-ում տեղադրված կրթահամալիրի օրացույցին. սեպտեմբերի 4-ին կրթական շքերթ է: Սեպտեմբերի 1-ը, որքան էլ կարևոր և առանձնացող, հնարավորություն չի տալիս բոլոր սեբաստացիներին միասին հանդես գալու որպես սեբաստացիներ... Ես մի խումբ զինվորականների հետ պարտադրված էի շրջել մեր դպրոցներով այսօր. այնպես չէ, որ սեպտեմբերի 1-ի տոնականությունը շրջանցել էր մեզ: Բայց դե, ամենօրյա առավոտյան ընդհանուր պարապմունքի, ամենշաբաթյա համերգի սովորույթ ունեցող կրթահամալիրի համար՝ անզանգ, անպահակ, առանց ձևականությունների, բաց դռներով, անպատ կամ թափանցիկ պատերով միջավայրում տոնականը առօրյա է: Սեպտեմբերի 1-ը նախ և առաջ նորեկների համար է՝ կրթահամալիրի դեպքում՝ 2-4 տարեկանների, 5 տարեկանների, 1-ին դասարանցիների, 2-9-րդ դասարան տեղափոխվողների, 10-րդ դասարանցիների, 11-12-րդ դասարան տեղափոխվողների, քոլեջ ընդունվողների: Գալիս-ընդունվում են կրթահամալիրի ութ դպրոցներ՝ սեպտեմբերի 1-ին, 2-ին, 3-ին... առօրեականություն հաղորդելով այդ օրերից յուրաքանչյուրին: Ուրիշ է սեպտեմբերի 4-ը, երբ արդեն հին ու նոր չկա, երբ արդեն սեբաստացի դարձած յուրաքանչյուրին ներկայանում է կրթահամալիրն ամբողջական՝ համերաշխ, ստեղծագործական-հմայիչ... Ահա ինչու սեպտեմբերի 1-ին՝ ավանդաբար ու պաշտոնական ես հայտարարում եմ կրթական շքերթի պատրաստության ու ծրագրի մասին: Սեպտեմբերին մեր օրացույցում «Բարձունքի նվաճումն է», Կոմիտասյան օրերը, մեր հեղինակային կրթական ծրագրերի աշնանային (սեպտեմբերի 22-26) ստեղծագործական բաց՝ թվով 9-րդ հավաքը... Թեժ աշուն: Դիմացը հոկտեմբերն է՝ որպես մեր մոբիլ ու ստեղծական 25 տարիների տոնի պատրաստություն, ես ձեզ խոստանում եմ բուռն-կոնկրետ իրագործումների շրջան... Նախաձեռնության գինը՝ ծնողի, շրջանավարտի, ուսուցչի, սեբաստացու, որտեղ էլ որ լինի, կտրուկ բարձրանում է...

Սեպտեմբեր-հոկտեմբերը, ինձ համար՝ նաև նոյեմբեր-խոր աշունը, բնության ոսկի շրջանն է. տե՛ս, կանչում է զնգալեն... Հունիսին իմ ուշքը գնում է Բանգլադեշյան պլեների, ուսումնական ճամբարների համար:

Հունիսի մասին չեմ խոսում. հունիսը մեր ուսումնական օրացույցով լիարժեք աշխատանքային-ուսումնական է. ի՞նչ խաբար է երեք գյոզալ ամիս պաշտոնապես արձակուրդ հայտարարելը, արձակվում են ինչի՞ց՝ հարցնում եմ: Սրա մասին դեռ կխոսեմ: Ես պատմում եմ ձեզ հուլիս-օգոստոսին իրականացվող ուսումնական նախագծերի մասին: Այս պահին 15 հոգիանոց մի խումբ Սևանի Ծաղկունքում է՝ էկոճամբարում, սեբաստացիների 14 հոգիանոց մի այլ խումբ՝Տավուշի Կողբում՝ Կողբի արվեստի դպրոցի ամենամյա վրանային ճամբարում խփել է սեբաստացիների 4 վրանն ու փռել քնապարկերը. դռները բաց են, կարող են և հյուրեր ունենալ: Օգոստոսի 1-ից ՀՀ պաշտպանության նախարարության աջակցությամբ մենք Լոռի-Ստեփանավանի Կուրթանի տարածքում տալիս ենք 40 տեղանոց արշավախմբային ուսումնա-հայրենագիտական ճամբարի մեկնարկը... Գումարեք Մարգարիտ Հարությունյանի և Նունե Մովսիսյանի՝ Սիսիանի Լոր գյուղի ճամբարը, հետևեք, Արցախյան հայրենագիտական-ազգագրական ճամբարը անիվների վրա (այսպիսի արցախապատում), Գեղարվեստի դպրոցի Շուշիի պլեները՝ «Ավերակները շինում են», Վրաստանի Բուլաչաուրիի ճամբարը, Ջիկատարի էկոճամբարը, Արցախի «Ասպետը»... «Հուլիսի գործն ու իր գործիչը» անվանակարգի թոփ տասնյակում, իհարկե, առաջինը վարժարանի նոր սովորողներն են՝ իրենց հիմնական դպրոցներն ավարտած ու մեր ավագ

դպրոցում ուսումնառության պայմանագիր կնքած, ղեկավար Գևորգ Հակոբյանի հետ: Շատ լավ ավանդույթ է հաստատել տիար Գևորգը, որ արդեն հինգերորդ տարին վարժարան ընդունվողների մուտքն անցնում է Արագածով:

Գումարենք՝ կստացվի, որ հուլիս-օգոստոսին ամենահետաքրքիր վայրերում ուսումնական-հետազոտական, հայրենագիտական-ազգագրական գրավիչ հանգստի ու բնության վայելքի նախագծերին մասնակցում են-կմասնակցեն 400-500 սովորող ու մանկավարժական աշխատող: Ես էլ կասկածեցի, բայց որ mskh.am-ը թույլ է տալիս փարատել յուրաքանչյուր կասկած. մենք գործում ենք յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ի տես ու հրապարակային: Հուլիս-օգոստոսին յուրաքանչյուր հինգշաբթի սովորողների և ուսուցիչների մի խումբ մեկնում է Սևանի հանրային լողափ՝ հանրային լողափի մոնիտորինգ, վերահսկողություն իրականացնելու, որպես պարգևատում ամառային ուսումնական աշխատանքի համար:

Ուսուցում տոնացույցով: Ուսուցում անընդհատ: Այսպիսին է Ստեղծողի մոբիլ դպրոցն իր արձակուրդային կոչվող շրջանում...
Դպրոցը, պարտեզը, երեխայի համար կյանքն է՝ բնականոն ու գրավիչ, և լավ է, որ իրական է ամառային դպրոցը՝ իր ուսումնական, ամառային քաղաքային և արտագնա ճամբարով, արշավներով, ուսումնական-հայրենագիտական ճամփորդություններով, ամառային լիարժեք գործող 2-6 տարեկանների պարտեզներով:

Ուսուցում ուսումնական նախագծերով

Մեր կրթական ծրագրով չկան միջոցառումներ, առարկաներ, մեդալներ. կա ուսումնական անընդհատ աշխատանք՝ մոբիլ ու ստեղծական, որի իրականացման ձևն ուսումնական նախագիծն է:

«Ստեղծողի մոբիլ դպրոց» կրթական ծրագիրը պետական կրթական ծրագրից տարբերվում է իր կազմակերպմամբ, իր ուսումնական պարապմունքներով, բայց այսօր առանձնացնում եմ հեղինակային կրթական ծրագրերի ուսումնական պլաններով որոշված ուսումնական ճամբարները, որ դպրոցը դարձնում են ավելի գրավիչ ու հետաքրքիր, և ուսումնական-հանրակրթական բաց ստուգատեսները, երբ սովորողները կամավոր իրենց «արձակուրդային» շրջանում հավաքվում են՝ բերելով իրենց ստեղծագործական նախագծերը:

Տարեսկզբի տասը օր, երկու ուսումնական շաբաթ (մեր ուսումնական շաբաթը հնգօրյա է) օգնենք իրար:

Ավարտենք կրթական նյութական միջավայրի բարելավման աշխատանքները՝ ավարտուն-ամբողջական գործածման վիճակի բերելով: Կրթահամալիրի դպրոցի, քոլեջի ղեկավարը, ինձ հետ ճշտելով, կարող է մինչև առաջիկա երկուշաբթի կազմել այդ գործերի ցանկը և հրապարակել դպրոցի ենթակայքում: Անհամբեր սպասում եմ 2014-2015 ուստարվա կրթական միջավայրի բարելավման նորամուտների շքերթին:

Սեպտեմբերի 8-ից 26 երթուղով ամեն օր ավտոբուս-միկրոավտոբուսներով երթևեկող սեբաստացիները խստիվ ու համերաշխ ղեկավարվեն ահա այս նոր կարգով: Երկու շաբաթ, երբ դեռ ցուրտ չէ, շատ շոգ չէ, ձյան կամ անձրևի տեսքով ուժեղ տեղումներ չկան, կարող ենք,

չէ՞... Ունենալով-զարգացնելով մեր փորձը՝ կազմակերպենք նոր ու գործող անվտանգ-հարմար-հետաքրքիր, մանկավարժորեն հիմնավորված տեղափոխումներ՝ տնից դպրոց, դպրոցից տուն:

Սեպտեմբերի 1-ից ուժի մեջ են ըստ կրթական ծրագրի 2014-2015 ուստարվա ուսումնական պլանները, սովորող սեբաստացիների (յուրաքանչյուրի) անհատական ուսպլանները՝ իրենց ընդհանուր և դպրոցական (անհատի ընտրությամբ) հանրակրթական և լրացուցիչ կրթության բաղկացուցիչներով: Եկեք ճշգրտենք դրանք՝ ընտանիքում (բոլո՞րն են ծանոթ-ընդունում-համաձայն, պատրաստ աջակցելու) դասարանում, դպրոցում... Գլխավորն, իհարկե, սովորողի անհատական ուսումնական պլանի ամբողջական հետևողական գործարկումն է իր կյանքում՝ տանը թե դպրոցում, դրա կիրառումը: Եկեք սկսենք հետևողական կիրառել ու պատմել սովորողի բլոգում, ենթակայքում այդ ընթացքում ուրախությունների-անհաջողությունների, դժվարությունների դրանց լուծումների մասին...

Յուրաքանչյուր մանկավարժական աշխատող, այլ աշխատող (հեղինակային կրթական ծրագրի իրականացնող կրթահամալիրում այլ աշխատողը կարծում եմ, ավելորդ աշխատողն է) նույն կերպ պիտի ամբողջական-կիրառելի տեսքի բերի իր աշխատաժամանակի կառուցվածքը, աշխատաժամանակի անհատական պլանը, որոշակի դարձնի աշխատանքային պլանները. մոբիլությունն ու ստեղծականությունը հենց այն գործիքներն են, որ շատ արագ կվերացնեն անհարմարությունները, կօգնեն յուրաքանչյուրին առավել հարմար դարձնել կրթական-աշխատանքային միջավայրը տանը և դպրոցում:

Իմ փորձով գիտեմ, սիրելի սեբաստացիներ, սովորող և մանկավարժական աշխատող, ծնող, շրջանավարտ թե բարեկամ, ամենաշատ ծառ ու թուփ, ծիլ ու ծաղիկ չորանում-մահանում է սեպտեմբերին, երբ երաշտ է, երբ դատարկ են հաճախ ջրանցքները, առուները, գետերը... Այսպես է, ցավոք, հիմա: Մի ելք կա՝ յուրաքանչյուրիս սրտացավ-կոնկրետ-նախաձեռնող պարտիզպանությունը. առօրյա-սովորական դարձնենք ջրելը, խնամելը հողի որակը լավացնելը... պատրաստվենք սրանով մեր տոնին: Աշուն է, բայց ամառային անհոգությամբ և սպանիչ տոթով... օր առաջ սկսենք մեր պարտեզ-բակերի աշնանային աշխատանքները...

2014-15 ուսումնական հայրենագիտական նախագծերի ճամփորդությունների, պլեներների, ստեղծագործական հավաքների ուսումնական ճամբարների մեկնարկը սրանով տրված է: Լսեցի՞ք:

Հետո՝ «Բարձունքների հաղթահարում» բացառիկ նախագիծը, որ մեր ազատատենչ-Ստեղծագործող Ոգու դրսևորումն է ու ծնունդը, ու սեպտեմբերի 21-ի անկախության տոնն է առիթը, «Հանրակրթական Էկոտուր 2015»-ը՝ իր մինչև ապրիլյան նախապատրաստական աշխատանքներով, 2015թ. ապրիլյան բաց հավաքով, 2015թ. ճամբարներով՝ նվիրված մեր անփոխարինելի Սևանին՝ իր ավազանով, նրա մեջ թափվող գետերով, նրանից սկիզբ առնող ջրանցքով, Հրազդան գետով... «Բարձունքի նվաճում» ուսումնական նախագիծը տեսեք քանի՛ սեբաստացու է այս ազիզ (այո՛, ազիզ) օրերին միավորում: Քանի՛ բարձունքից քանի՛ սովորող, սկսած 1-ին դասարանից, քանի՛ սեբաստացի ուսուցիչ, ծնող, շրջանավարտ ու բարեկամ, ինչպես Մադինա սքանչելի գյուղի դպրոցը՝ իր տնօրենով, պիտի նայեն Հայաստանի

Հանրապետությանը, քանի՛ բարձունքից... Ուզում եմ նույնը լինի հիացումը, գործը, Սեբաստացիների կոչնակը:

Սեպտեմբերյան մեր հավաքի օրերին Կոմիտասյան օրերը՝ օրեր օրերի մեջ, ինձնից ամենաշատն ուշադրություն-վերաբերմունք պահանջողն են: Ասա, Վարդապետ, ո՞նց որպես ուսումնական ծրագիր նվաճենք քեզ... Հարություն Թոփիկյանի և Արթուր Շահնազարյանի հետ մեր հանդիպումները զարդարում-կարևոր են դարձնում մեզ, մեր կրթական միջավայրը: Արթուր Շահնազարյանը, ում նկատմամբ հայտնի ակնածանք ունեմ, գիտեք, իմ հավատարիմ սանիկն է, ես էլ՝ իր հավատարիմ քավորը, չնայած մեր անձնական բարդ կյանքին: Հարություն Թոփիկյանը՝ «Սեբաստացիներ» հիմնադրամի խորհրդի նախագահը, «Սեբաստացիներ» ուսուցչական երգչախմբիգեղարվեստական ղեկավարը, արժանիորեն մեր 2014թ. «Մուտք մանկավարժություն» մրցանակակիրն է: Շնորհակալ եմ, սքանչելի Մերի Առաքելյան, քո տոնական ջանքերի համար:

Սկսվեց... Մեր շատ սիրելի ընկեր ու վաստակով երաժիշտ-երգիչ Սեյրան Ավագյանն իր նախաձեռնած մենահամերգով կրթահամալիրի Կենտրոնում բացեց սեբաստացիների համերգաշրջանը 2014-2015 ուստարում... Ունկնդիրը, համերգի մասնակիցը տպավորված էր. ես երբեք չեմ մոռանա, սիրելի Սեյրան ու ընկերներ, ձեր այս նվերը՝ Սայաթ-Նովայի երգերի փնջի մատուցումը՝ ծննդյան օրվա իսկական ծաղկեփունջ... Համերգի առաջին մասում նվագեցին մեր երաժշտության ուսուցիչները՝ Լուսինեն (նրա բեմելն էր), որ դաշնամուր է սկսել ուսուցանել Դպրոց-պարտեզում, նշանավոր դարձող Լիլիթ Առաքելյանը, Հասմիկ Մաթևոսյանը... Հանդես եկավ Մերի Առաքելյան - Տաթևիկ Ստեփանյան բեմական կարիերա անող դուետը. նրանք ոչ միայն մեր երաժիշտներն են,Մերի Առաքելյանը եղել է և կա մեր «Համերգ» ուսումնական նախագծի նախաձեռնողն ու համակարգողը, իսկ մերՆոր դպրոցի սովորողների ու սաների վիճակախաղի տոմսը շահել է՝ ամեն օր շփվում են այսպիսի պայծառուհու հետ, լսում-տեսնում երգեցիկ-բեմական բանգլադեշցի աստղուհուն՝ Տաթևիկին...

Երկու նախագիծ, որ կուզենք՝ դառնա ավանդական ու մեզ կապի Մադինային ու մադինացիներին՝ գործընկերությամբ ու հայրենագիտությամբ.

Մադինան գործուն կմասնակցի մեր Էկոտուր 2015-ին, մենք կօգնենք մեր կարողություններով թիմին պատրաստվելու, Արգիճի գետն իր ակունքից (առաջացումից) մինչև Սևան թափվելը նկարագրելը, անցնելը... Մենք կլինենք միասին:

Մենք Մադինա-Արգիճի-Արմաղանում կանցկացնենք հունիսյան պլեներ՝ մասնակցությամբ հնգյակ-խումբ կազմող հարևան գյուղերի՝ Վերին ու Ներքին Գետաշեններ, Գեղահովիտ, Լեռնահովիտ, Մադինա նկարիչ-ֆոտոնկարիչների, նվիրված Մադինայի ու Հայաստանի ամենատաղանդավոր, իր գործնեության շրջանում Հայաստանում ու Խորհրդային Միությունում հայտնի վաղամեռիկ նկարիչ-մանկավարժին՝ Ներսես Կարապետյանին...

Վահրամ Թոքմաջյանի, ԲՈՒՀ TV-ի և կրթահամալիրի հեղինակային կրթական ծրագրերի կենտրոնի համագործակցության արդյունքները՝ «Վերընթերցելով պատմության դասագիրքը» 20 ֆիլմից կազմված շարքը, ինձ գոհունակություն է պարգևում: Նախ՝ առարկային, նյութին,

ասելիքին տիրապետող պատմաբան-հասարակագետ ուսուցիչ. ահավասի՛կ: Հետո մեր մոբիլն ու ստեղծականը՝ շոշափելի. նայեցեք... Վահրամի այս քսան հաղորդումներից յուրաքանչյուրը: Ինչպիսի՜ ծավալուն նախագիծ է ղեկավարում-իրականացնում ուսուցիչն իր սովորողների՝ «Ապոլոն» գիտակների ակումբի սաների հետ:

Սովորող սեբաստացի նորեկների մկրտության-հրապարակային ներկայացման ծեսը սեպտեմբերի 4-ի կրթական շքերթն է... «Նորեկ սովորողներ» ուսումնական նախագիծն իմ ուշադրությունը գրավեց. Երևանի, երևանամերձ բնակավայրերի տարբեր դպրոցներից 6-9-րդ դասարանցիների մեծ խումբը կարող է որպես թարմ-պակասող ավյուն՝ դինամիկա հաղորդել-ներարկել հավաքանիին...

Սեպտեմբերի 4-ին՝ ժամը 9.00, ընդհանուր տոնական պարապմունք դպրոցներում. կարող ենք ուրախանալ, պարել, ծափահարել, երգել՝ միասին ու սրտանց, 15 րոպե: Ժամը 9.20 տպավորիչ երթով յուրաքանչյուր դպրոց անցնելու է Մայր դպրոցի ճանապարհը. ուշադիր նայելու ենք ընթացքին հետիոտն. սա մեր «Պատշաճ անցում» ուսումնական նախագծի ուղին է ու բովանդակությունը:

Ուսումնական այս նախագծերը ոչ միայն ճանաչողական են: Արցախի կրթության նախարարության գործուն աջակցությամբ իրականացվող մեր նախագծերի, կրթահամալիրի՝ հարմարավետ կացարաններով կրթական փոխանակումների կենտրոնի շնորհիվ 3-4 տարվա ընթացքում հարյուրավոր արցախցի երեխաների և ուսուցիչների համար, վստահ եմ՝ անձնային-հարազատ դարձավ Հայաստանը, երևանցիների համար՝ Արցախ աշխարհը: Արցախ-Հայաստան. միասնական գործել, միասին քննարկել ու լուծել իրական խնդիրներ, միշտ պատանեկան անկեղծությամբ և ոգևորությամբ: Ստեղծողի մոբիլ դպրոցը՝ իր հանրակրթությամբ, նրա սովորողով, ուսուցչով ու ծնողով՝ փաստացի, կոնկրետ ու կարևոր մասնակցություն կունենա «անապագա ներկայի» հաղթահարմանը: Բոլոր կարգի մեծերս՝ Արցախում թե Հայաստանում, իշխանավոր թե ոչ, ազատամարտի մասնակից թե ոչ, պիտի աջակցենք հայաստանցի և արցախցի պատանիներին, որ ոչ այնքան հերոսական հաջողություններից, որքան Հայաստանում և Արցախում իրենց արժանապատիվ, ապահով կյանքը հաստատելուց խոսեն, առաջացած բարդ, մեծերիս կողմից չլուծված խնդիրները իրենց համար օրակարգային դարձնեն:

Գավառի թիվ 5 դպրոցի բնապահպանների խումբը՝ ժպտերես-նախաձեռնող Իրանուհի Խաչիկյանի ղեկավարությամբ, սեբաստացիների հետ վերադարձել եմ Կուրթանի «Հնեվանք 2014» դաշտային ճամբարից, որտեղ ապրում-գործում էին «Էկոտուր 2014»-ի հաղթողի կարգավիճակով: Փայլում էինգոհունակությունից, հուզված էին արտասվելու աստիճան, որ պիտի բաժանվեն Բանգլադեշի ընկերներից: Լավ է, որ մենք «Էկոտուր 2014»-ի բոլոր մրցանակակիրներին պարգևատրեցինք ճամբարային ուղեգրերով, գոհունակ ապրեցին իրենց ընտրությամբ Զիկատարի (Տավուշի Կողբ գյուղ), Ծաղկունքի (Գեղարքունիքի Սևանի ենթաշրջան) թե Հնեվանքի ճամբարներում՝ անվճար ու հագեցած: Լավ է, որ որևէ խտրություն չեղավ սեբաստացիների և ոչ սեբաստացիների միջև... Լավ է, որ ամենուր հարազատություն վկայող արցունքներ հոսեցին բաժանման...
Բայց սկսենք ապրել «Էկոտուր 2015»-ի հոգսերով: Իմ առաջարկը, որ Գավառը դառնա «Էկոտուր 2015»-ի կազմակերպիչներից մեկը, ինչպես Բջնիի էկոխումբը, «Սեբաստացիներ»

էկոակումբն ընդունվեց խանդավառությամբ... Սկսենք մեր գործը, նորեն սկսենք: Մինչև 2015-ի ապրիլի 20-ը, ուսումնասիրենք Սևանի ավազանի համայնքների դպրոցների էկոխմբերի միջոցով Սևան թափվող (Սևան ստեղծող) 28 գետակներից յուրաքանչյուրը: Իրենք ստեղծում, իրենք աղտոտում են: Ինչու՞: Ի՞նչ խնդիրներ ունի գետերից յուրաքանչյուրը: Ինչպե՞ս է հարաբերվում համայնքի հետ: Ինչպե՞ս կայացնենք հաշտություն-համակեցություն մարդու և իր գետի միջև... Եթե պիտի բաժանվեինք, եթե միասին գործելու ժամանակը չէ...

Ո՜նց հաստատվեց այս կալվածատիրական, ավատատիրական հատվածական Հայաստանը... ո՞նց թույլատրեցինք... Տեսեք. հայտնի կրթահամալիրը՝ իր ստեղծական ներուժով, իր նույնքան հայտնի տնօրենի առաջնորդությամբ 2-3 օրով մեկնում է նախօրոք հայտնի երթուղով, խնամքով նախապատրաստած ծրագրով՝ կրթահամալիրի mskh.am-ով և երգչախմբի հայտնի բլոգով ներկայացված, բոլոր դպրոցների ղեկավարներին, մարզի կրթության վարչության ղեկավարին, քաղաքապետ-գյուղապետերին հարգալից դիմումներով, մեր տրանսպորտով, մեր ծախսերով... Երգում ենք սիրով ու լսելի, եկեղեցիներում՝գործող ու խոնարհված, համերգային դահլիճներում ու հրապարակներում, մանկավարժական հանդիպում-քննարկումներ նախաձեռնում՝ իրական խնդիրների գրավիչ մեկնաբանություններով...

Իսկ ես շտապում եմ Բանգլադեշ, ժամը 8-ին Սուրբ Երրոդություն եկեղեցու մոտից պիտի Ստեփանավան՝ մեր կազմակերպած «Հնեվանք» արտագնա ճամբարը ճանապարհեմ 5-6-րդ դասարանցիների մի խմբի: Հետևեք նրանց, հետևեք մեր արտագնա ճամբարներին Հայաստանում և Արցախում, նրանք կշատանան: Նրանք հայրենաճանաչության, ստեղծականության, ուսուցման ամենաարդյունավետ ձևերն են, նրանք մենք են՝ սեբաստացիները՝ ստեղծական ու մոբիլ, ինչպես իրենց ծնած մանկավարժությունը:

Սրանք ուսումնական նախագծեր են. այո, ամառային, երբ արձակուրդ է և՛ սովորողների, և՛ նրանց ուսուցիչների համար: Արձակում, ազատ ինչի՞ց՝ հարցնում եմ: Առօրյայից, արհեստականությունից, պարտադիրից՝ այո, բայց ազատ արձակված մարդու՝ սովորողի և սովորեցնողի անմիջական տնօրինմանը հանձնված ժամանակը (ահա ձեզ ուսումնական արձակուրդի իմ սահմանումը) գլխավորով, իր ընտրած գործով զբաղվելու համար:

5-օրյա ճամփորդության գիշերակացի ձևը՝ խնդիր. մեր երեխաները և ուսուցիչները գիշերել են Վանքի, Ճարտարի, Շուշիի՝ իրենց մինչ այս անծանոթ հայրենակիցների (սովորողների և ուսուցիչների) տներում, կրկնում եմ՝ իրենց անծանոթ: Հիմա հարցնում եմ՝ սա չէ՞ թիվ 1 քաղաքական հարցը հայաստանցիների և Արցախում ապրող մարդկանց համար՝ հարաբերվել անհատական-մարդկային-ընտանեկան-ոչ ձևական մակարդակում: Եվ տեսեք՝ ինչ ոգևորված են դրանից երկուստեք:

Փաստագրման լավագույն միջոցը, իհարկե, թվային ֆոտոխցիկն է: Տեսեք՝ անգիրի դպրոցն իր վերջին զանգով ու տարեկան-քննական թվանշաններով ոչ ևս է, իսկ ահա Ստեղծողի մոբիլ դպրոցն ամենուր է, անընդհատ է Երևանում, Հայաստանում, Հայաստանից դուրս: Փաստենք՝ մեր «Հնեվանք» ճամբարի 6-րդ դասարանցի Դոնա Թովմասյանի օբյեկտիվում Ստեփանավանն է: Երևան-Շուշի-Երևան պլեների մասնակից մեր կինո-ֆոտոյի ակումբի սովորողների տեսադաշտում Շուշիի «Զոնտեր» կոչվող տարածքն է: Մեր սեբաստացիների

«Կարդում ենք Չարենց Կարսում» ուսումնական նախագծի ղեկավար ղեկավար Ելենա Սարգսյանի օբյեկտիվում Անիից, Կարսից հետո Բերկրին է...
...Ես, իհարկե, թվային կապով հետևում եմ արշավախմբի ավտոբուսներին, որ Սևան-Դիլիջան-Վանաձոր-Գյուլագարակ-Կուրթան-Հնեվանք երթուղին առավելագույն ճանաչողական-հայրենագիտական լինի՝ իր երկարատև հանգրվանով Սևանի հանրային լողափին, Պուշկինի լեռնանցքի անցումը չհետաձգեն...Նպատակը շուտ Հնեվանք՝ ճամբար հասնելը չէ, երբեք, այլ ճանապարհ-հայրենագիտան ճանաչողության անշտապ մանրամասն ընթացքը...

Ահա ես դիմում եմ բոլոր սեբաստացիներին՝ բոլոր տարիքի սովորողներին, ուսուցիչներին. եկեք այս հոբելյանական տարում իրար տուրիստական հանդերձներ նվիրենք: Երեք նկատառում: Նախ՝ յուրաքանչյուրս (լավ, շատերս) կարիք ունի վերականգնելու-նորոգելու իր կապերը իր ծննդավայրի, մեր սրբազան ժառանգություն Հայաստանի և մեր հռչակած Հայաստանի Հանրապետության՝ մեր հայրենիքի հետ: Երկիրը մանրամասն (ականջդ կանչեց, Վանո Սիրադեղյան) այս մի քանի սար ու ձոր (մեր մեծ ժամանակակից Հրանտ Մաթևոսյանի հետ առնչվելու տարբեր հնարավորություններ եմ ունեցել) սիրելու ավելի լավ ձև կա՞, քան վրանով-ուսապարկով, անշտապ....

Իջևան քաղաքը նոր նշաններ ունի, որ թողել են «Ստեղծողի մոբիլ դպրոց» կրթական ծրագրով սեբաստացիները 2013-ի աշնանը. մեկ ամիս կրթահամալիրի Գեղարվեստի ավագ դպրոցի նկարիչ-ձևավորողները Լուսինե Մանուկյանի, Արման Գրիգորյանի և Հերիքնազ Գալստյանի (հեյ-հե՛յ, ո՞ւր եք, ձա՛յն տվեք) հետ ապրեցին, գործեցին Իջևանում. ահա Անկախության պողոտայի 27 մետրանոց ձևավորված պատը և Իջևանի, պարզվում է, միակ կամարանցումը, որ հիմա հայտնի է ոչ այնքան իր միակությամբ... Նիկոլի հետ մանրամասն նայում ենք վիճակը: Հարգելի քաղաքապետն անելիք ունի. որպեսզի սրանք մնան նշաններ, քաղաքային հարակից շատ բաներ պիտի ենթարկվեն Արման Գրիգորյանի գեղագիտությանը. ոչ թանկ ու իրագործելի այսօր, նախագիծ...

«Հայ-վրացական հանրակրթական կամուրջներ» ուսումնական նախագիծը վերջին 4-5 տարում հնարավորություն տվեց հարյուրավոր սեբաստացիների՝ կրթահամալիրի միջին և ավագ դպրոցների սովորողների, ուսուցիչների, առանձին ծնողների, շատերին՝ առաջին անգամ, ոմանց՝ գոնե մեկ անգամ, մյուսներին պարբերաբար, որպես ուսումնական ծրագրի մասնակից, լինելու Թբիլիսիում, թափառելու, ճանաչելու, կապվելու, սիրելու, դարձնելու հարազատ այս իրոք հետաքրքիր, գրավիչ, պատմական քաղաքը: Մենք ուսումնական նախագծերի ձևով փոխանակման ծրագրեր ենք իրականացնում մեր վրաց գործընկերների հետ, փորձում միասին լուծել խնդիրներ՝ արձանագրելով դրանք որպես մեր համատեղ կյանք: Կարմուրջները, գիտեք, երկկողմանի անցուդարձ են ապահովում. տասնյակ ու տասնյակ մեր վրացի գործընկերներ, ոչ միայն վրացահայեր, մեծամասամբ հենց վրացիներ, ճանաչեցին ու սիրեցին Երևանը:

Ես, գիտեք, տպավորվում եմ այնպես, որ ազդեցությունն ինձ չի լքում երկար, ինչպես երեկ՝ կրթահամալիրի և Թբիլիսիի թիվ 24 դպրոցի պատանիների ջրագնդակի խաղը մեր ծածկած լողավազանում: Եվ գիտեք, ամենաշատը թբիլիսցի հասուն տարիքի կնոջ պատկերն է

անջինջ, ով առավելագույն ջանքեր գործադրեց, որ հարմար դիրք գրավի խաղը դիտելու համար. նա, որ գլխավոր խոչընդոտն էր թվում խաղի կայացման:

Երջանկության սահմանմանը, որ կյանքի կողմնորոշիչ է դառնում ինձ համար, ես հաճախ եմ վերադառնում՝ աշխատել ուղիղ ճանապարհի վրա և գոհ լինել ունեցածով: Սա Թումանյանի «Ոսկի քաղաքի» Գոհար թագուհու նվերն է ինձ. առաջ ես չէի կարողանում գոհ լինել ունեցածով, անգամ դժգոհ էի, հայտնի դժգոհ. հիմա կարողանում եմ, գուցե նրանից է, որ չեմ շեղվում ճշմարիտ ուղուց: Գոհունակությամբ մասնակցեցի այսօր Մեդիակենտրոնում (Դավիթ Բլեյանն ասում է՝ «մեդիայում», իսկ վարպետ Օնիկը՝ «մեձիո») Իզմիրի ամենամյա տիեզերական ճամբար մեկնող (այս տարի արդեն չորրորդ անգամ է) սեբաստացիների՝ սովորողների, նրանց ծնողների և ղեկավարների հանդիպմանը. ինչ գրավիչ, գունեղ, հեքիաթի ժանրից ճամփորդություն է, և այս՝ 12-14 տարեկանում. բռավո, կրթահամալիր, Արտակ Զարգարյան ու Շամիրամ Պողոսյան, ում ծննդյան օրն էր, և փայլուն-փայլում էր... Հանդիպեցի նաև «Հնեվանք» արշավախմբային ճամբարի երկրորդ հերթափոխի կազմակերպիչներին. հուլիսի 6-ին կվերադառնան մեր 40 արշավականները, իսկ հուլիսի 7-ին՝ ժամը 8.30 Սուրբ Երրորդություն եկեղեցու մոտից Լոռի-Ստեփանավան-Կուրթան-Հնեվանք կշարժվեն արդեն 46 սեբաստացիներ: Նրանց կսպասի արշավախմբային ճամբարը՝ արդեն ապրված, լազաթով... Գոհացա:

Մարգարիտ Սարգսյանը՝ իր խմբով (վրանով), վերադարձավ Կողբի արվեստի վրանային ճամբարից: Գոհ է, հմայքը բազմապատիկ է: Կեցցես, սիրելիս, որ այսպիսին ես, խիզախման միշտ հասու՝ չորս տարին չբոլորած Նարեկին ընդգրկած խմբում, 11-12-րդ դասարանցիների հետ: Իհարկե՛: Սեբաստացիներ՝ առանց տարիքի ու սահմանի, որտեղ էլ որ լինեք, մենք հարազատացրինք Կողբը՝ իր Զիկատարով, արվեստի դպրոցով ու նրա ամենամյա ճամբարով... Այսպես ենք մենք նվաճում-վերանվաճում Հայաստանը: Տեսաք, թե ուր հասավ իմ լուս ու մութին ասված խոսքը քաջ որսկանի գյուլի պես:
Լիքը թերություններ. և որպեսզի ո՛չ իրականությունից կտրված ինքնահիացման թմբիրին տրվենք, ո՛չ էլ, որ նույնքան վտանգավոր է, իրականության անտեսման (մեր ձեռքբերումներին անհաղորդ, դրանցից բեխաբար), թերություններն են, նույն արմատից են սնվում: Зри в корень. Կրթահամալիրի 2013-16 զարգացման ծրագրով մենք շեշտել ենք ուսուցում ուսումնական նախագծերով, ուսումնական օրացույցով, հանրակրթական-ստեղծագործական ստուգատեսներով՝ թվային միջոցների անհատական գործածմամբ: Սրանք չդառնան դեկորներ-միջոցառումներ դպրոցական, իսկ սովետը չհաղթահարած ուսուցիչը շարունակի փակված գործել բաց կրթական միջավայրում՝ իր իմացած առարկայից ինչ-ինչ ձևերով, ինչ-ինչ տեղեկություններ փոխանցի՝ քիչ է, ու դեռ սրա անունն էլ դնի հեղինակային ծրագիր: Այո, մեր կրթական ծրագրի վարկաբեկման ճանապարհը ես ներկայացրի:

Իզմիրի տիեզերագիտական ճամբարում Մարիամ Մանսուրյան և Էմիլեա Սիմոնյան սեբաստացիների ելույթն այս շարքից է. բազմազգ ճամբարում ավարտական հանդեսին երգել-պարելը, ֆիլմեր ցուցադրելը հաստատված բաներ են, ինչպես, օրինակ, տարիներ առաջ մեր Վաղինակի ելույթը, բայց, ա՛յ, վերցնել ու մարմնամարզական անպաճույճ հնարներով հանդես գալ հարգարժան «պուբլիկայի» առաջ՝ խիզախ է, իմ կարծիքով. կեցցե՛ք, աղջիկներ:

Հայաստանի պաշտպանության նախարարության աջակցությամբ օգոստոսի 1-ից Կուրթանից 5 կմ դեպի Զորագետ՝ Հնեվանքի հովանու ներքո մեկնարկող անդրանիկ հայրենագիտական-բնապահպանական-ռազմամարզական արշավախմբային ճամբարը, յուրաքանչյուր հերթափոխում 5 գիշեր և 6 օր, կընդունի այս անգամ 40 սեբաստացի ու ոչ սեբաստացի գործընկերների՝ սովորող, ծնող, ուսուցիչ, ովքեր կդիմենnikonar@mskh.am հասցեով և կստանան ճամբարի ուղեգիրը:
Ասում ենք՝ անդրանիկ արշավախմբային (դաշտային) ճամբար, անծանոթ Կուրթան-Զորագետի տարածք, և լավ է, որ սեբաստացիները նախապատրաստված են սրան. Տաթև Աբրահամյանը և Մարգարիտ Հարությունյանը, իրենց 5-6-րդ դասարանների սովորողների մեկական խմբի հետ եղել են Հնեվանքում հունիս-հուլիսին, իսկ Ստեփանավան քաղաքն ու Գյուլագարակը՝ իր նշանավոր Դենդրոպարկով, վերջին 4-5 տարում մեր Գեղարվեստի ավագ դպրոցի, բնապահպան-հայրենագետների, ստուգատեսների հաղթողների թիրախում են: Հեքիաթն այս անգամ այլ անուն ունի՝ սեբաստացիների արշավախմբային «Հնեվանք» ճամբար: Մեկնարկը՝ օգոստոսի 1-ին:

Ահա այսպիսի աշխատակարգ կունենա Հնեվանքի ճամբարը: Այս նոր տարածքում՝ Զորագետի աջ ափին, Հնեվանքի հարևանությամբ, նշանավոր Ցիցքարի ներքևում կապրենք, կուսումնասիրենք մոտիկից, շա՛տ մոտիկից կծանոթանանք: Այսպես. կիջնենք մինչև Զորագետի կամուրջ, կբարձրանանք Արևածագ գյուղ, կհասնենք Օձուն-Սանահին, հետո Ալավերդի-Ստեփանավան-Գյուլագարակով կվերադառնանք մեր արշավախմբային ճամբար: Եվ սա, շնորհիվ պաշտպանության նախարարության հուսալի փոխադրամիջոցների, կլինի առավելագույն անվտանգ: Կլինենք Ստեփանավանի հրետանային նշանավոր զորամասում, կծանոթանանք ժամանակակից զորամասի առօրյային, կկրակենք զորամասի հրաձգարանում, գնդապետ Հովհաննիսյանի հետ և՛ կճաշենք (ի դեպ, այս գործընկեր զորամասն է մեր արշավախմբային ճամբարը կահավորողը), և՛ նրան հարցախեղդ կանենք, կթափառենք Ստեփանավան սիրելի դարձած քաղաքով, կլինենք Մայորի ձորում, Լոռե Բերդում, Դենդրոպարկում, Վարդաբլուրի լճերում...
Երեկ ինձ համար ամենակարևոր աշխատանքը օգնելն էր «Հնեվանք» ճամբարի ղեկավար Գևորգ Հակոբյանին... Շնորհակալ եմ Գևորգին իր ինքնառաջարկի համար, որ անձամբ, որպես մանկավարժական գործի հմուտ հետազոտող – կազմակերպիչ, ճամբարի առաջին հերթափոխով, շատ բանով ապահովելու է օգոստոսյան չորս հերթափոխների հաջողությունները: Տասնյակ–տասնյակ ճամբարներ ենք ունեցել ու ունենք հիմա, սեբաստացիներ, բայց սա ուսումնական պարապմունք-հանգստի-ճամփորդության նոր կազմակերպում է, նոր կառույց, նոր հնարավորություններով ... Իսկ մոբիլությունը, 2-3 օրում պատրաստված վիճակ ունենալը հենց այս կազմակերպմանն են բնորոշ: Ճամբարի ֆիզիկական ուսումնական միջավայրն ապահովում է այս գործում մասնագիտացված կառույց, Ստեփանավանի զորամասը: Մենք պիտի կենտրոնանանք նոր, մանկավարժական ամբողջական միջավայրի վրա: Լավ է, որ Լևոն Արամյանը, տիեզերագիտական ակումբի հիմնադիր ղեկավարը , անմիջապես է գործում: Աստղացուցարանը, աստղադիտակը, ակումբը, մոբիլ են և կլինեն, կգործեն օգոստոսին, Կուրթանում ... Լավ է, որ հայրենագետ

Տաթևիկ Աբրահամյան, երաժիշտ Հասմիկ Մաթևոսյանը, հմուտ կազմակերպիչ Անահիտ Մելքոնյանը իրենց խմբերով անմիջապես արձագանքում են տիար Գևորգի կանչին:

Գևորգի որոշումը, արշավախմբային ճամբարը բաց պահել Կուրթանի, Վարդաբլուրի, Ստեփանավանի 5-12-րդ դասարանցիների համար, սկզբունքային է, որպես նոր ճամբարի անօտարելի հայտանիշ, որակ, առավելություն: Ինչպես չի կարելի հայրենագիտական (ազգագրական) բնապահպանական գործունեությունն իրականացնել առանց տեղացիների գործուն մասնակցության, այդպես էլ չի կարելի ուսումնա-վարժական դարձնել ճամբարն առանց Ստեփանավանի զորամասի և արտակարգ իրավիճակների համակարգի «Լոռե» ջոկատի գործընկերության: Գևորգ Հակոբյանի և իմ պատկերացումները մոբիլ ճամբարի, նրա նշանակության և հեռանկարի մասին հարազատ են ինչպես հարազատ են եղել և մնում որպես քավոր ու սանիկ: Օգնենք միմյանց այս փուլում, սեբաստացիներ, այս նախաձեռնությունը «25 տարի մոբիլ ու ստեղծական» հոբելյանական հաշվետվություն – ցուցադրություն-հանրային ներկայացումների մեջ առանձնահատուկ է: Սա սեբաստացիների մեր հավեսի անկեղծ դրսևորումն է: Հեռու մնան մեզանից անհավեսները, ինչպիսի արդարացումներով էլ իրենց զարդարեն:

Շաբաթներ առաջ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը իմ հրապարակային արված հարցադրմանը՝ Հայաստանում ունենալ ռազմամարզական պատանեկան ճամբար, օպերատիվ արձագանքեց. «Գնացե՛ք, տեսե՛ք, առաջարկե՛ք»: Արցախում հաջողությամբ գործում է «Ասպետ» ռազմամարզական ճամբարը: Ասկերանի Բալուջա գետի ափին, անտառում, հետախուզական վաշտի հարևանությամբ գործող պատանեկան ճամբարին չորրորդ տարին մասնակցում ենք նաև սեբաստացիներս՝ կրթահամալիրի ավագ դպրոցների 10-12-րդ դասարանցի տղաներով: Հայաստանյան ճամբարը, մեր պատկերացմամբ, կընդունի նաև աղջիկներին, բաց կլինի, իհարկե, արցախցի պատանիների համար, կունենա նաև ընդգծված ուսումնավարժական բաղկացուցիչ՝ իր հայրենագիտական-բնապահպանական նախագծերով: Գլխավորը, որ պատանին իրական շփում ունենա այսօրվա բանակի մասնագիտորեն պատրաստված ու կիրթ սպայակազմի հետ, նրան որպես ուսուցանող ընկալի, բանակը՝ որպես նաև ուսումնական միջավայր, զինծառայությունը՝ կրթությունը լրացնելու հնարավորություն նաև:

Գորիսի բանակային կորպուսում մեզ սպասում են. գնդապետ Հարությունյանը, նաև բանակային առաջին կորպուսի հրամանատար գնդապետ Փարվանյանը, կարևորում են «Նոր ասպետի» ծնունդը՝ վստահորեն ուզում են, որ արագ ընթացք ունենա: Մենք կստանանք կորպուսի աջակցությունը, իսկ Կարմրաքարի շինությունը նախարարի հրամանով շատ արագ գործուն տեսքի կբերեն, կկահավորեն: Մարտական պատրաստության վիճակ է ամենուր, մեր հանդիպում-քննարկումներն էլ սրան համաչափ են, գործուն, կոնկրետ:

Գորիսից Կապանի ճանապարհը բռնեցինք. Կարմրաքարը, գիտեք, Գորիսից 46 կմ է հեռու, Կապանի ճանապարհին, 20 կմ այս կողմ: Սա նախկին հայտնի արհմիութենական «Կարմրաքար» հանգստյան տունն է, որի առանձնացված շենքերից մեկը՝ նորոգված դատարկ, կարծես իր բարձունքից զանգում է՝ հե՜յ-հե՜յ ասպետներ, որտե՞ղ եք, ծուլություն-անգիտություն թոթափեք, դուրս եկեք մեյդան՝ կոփվելու, ասպետի կյանքով ապրելու: Կորպուսի առանձին հետախուզական գումարտակի հրամանատար փոխգնդապետ Վահագն

Հակոբյանը մեզ ընդունեց, կորպուսի հրամանատարի դրված առաջադրանքը՝ ամբողջ շենքին, տարածքին, տեղանքին, խնդիրներին ծանոթանալ, իր օգնականների հետ կատարեցինք օպերատիվ ու մանրակրկիտ: Վահրամ Թոքմաջյանը, ով Արցախի «Ասպետ» գիտակների ակումբի ու մրցաշարերի հայրենագիտական-ազգագրական գործունեության ուրույն փորձ ունի, միշտ էլ հետաքրքրված է եղել մեր այս առաջարկի շուտափույթ իրականացմամբ, և հիմա իր գոհունակությունն ու պատրաստակամությունը չի թաքցնում...

Զորամասն իր առօրյայով, հետաքրքիր է ամեն մի դեռահասի-պատանու համար, տղա թե աղջիկ. նա մեզնից վատ չգիտի, որ ծառայելու է, ինչպես ծառայում կամ ծառայել է իր հարազատը, հարևանը, ծանոթը: Նա ապրում է այդ բանակային պատմությունների մեջ, սա փաստ է, իր ողջ առավելություններով ու թերություններով ... Կկարողանա՞ն հանրակրթական դպրոցների ուսուցիչները որպես կազմակերպիչներ, պատանեկան ջոկերի ղեկավարներ, գործուն, լիարժեք զգալ իրենց այսպիսի ճամբարներում... Ճամբարային կյանքի օրերին պատանուն դիմավորեն զորամասում, որ կրակի զորամասի հրաձգարանում, որ զորամասի հրամանատարը, որպես ծառայության մեջ գտնվող գնդապետ, հարգալից ուղեկցի նրան, ծանոթանա զորամասի իրական զինվորին ու սպային, տեսնի գործող զինտեխնիկա, հարցեր տա ու պատասխաններ ստանա գործող զինվորականից, տեղում... Ես այդպես էլ չհասկացա, թե ինչո՞ւ ենք զենքը բերում հանրակրթական դպրոց, ինչո՞ւ ենք ուզում գրավիչ, իրական ռազմական գործն ու նրա նախապատրաստումը դարձնել հերթական դպրոցական առարկան, իր բոլոր բացասական սպանիչ կողմերով... Մի դրական կողմ ասեք «Նախնական զինվորական պատրաստվածություն» (ՆԶՊ) կոչվող առարկայի այսօրվա դպրոցական կազմակերպումից ... Զորամասերը, նրանց հրամանատարները կարող են ու պիտի ունենան օգնականներ ՆԶՊ -ի գծով, ենթաշրջանի դպրոցների համար, բայց դրանք պիտի լինեն գործող սպաներ, որոնք կարող են կազմակերպել պատանիների ճամբարային կյանքը, ուսումնա – վարժական հավաքները: Արտակարգ իրավիճակների առկա համակարգը իր ձևավորված շրջանային ցանցով հնարավորություն կունենա գործող պատանեկան ճամբարներում արտակարգ իրավիճակ ու անվտանգ գործելու, անվտանգ կենսագործունեության հմտություններ փոխանցել դեռահաս պատանիներին, սկսած, առաջին բուժօգնություն, հրդեհ հանգցնելու, ջրում խեղդվողին փրկելու հմտություններից ... Մենք իմ նկարագրած մոդելը առավելագույն չափով կգործադրենք Կուրթանի «Հնեվանք» արշավախմբային ճամբարում:

Արցախի «Ասպետ» ռազմամարզական ճամբար տարբեր պատճառներով (հարգելի-անհարգելի՝ դատավորներն ո՞վ է, իսկ ո՞ւմ ենք դատելու) չմեկնածներին՝ ամենևին չդատեցինք, այլ հնարավորություն, ընտրություն առաջարկեցինք. աշխատեց: 12-րդ դասարան փոխադրվող տղաների հետ Գեղարվեստի ավագ դպրոցում՝ Գայանե Առաքելյանը, Արհեստների ավագ դպրոցում՝ Անահիտ Մելքոնյանը, Մայր դպրոցում՝ Ավագ դպրոց-վարժարանում՝ Էմանուել Ազջոյանը վստահ, համերաշխ մեկնարկեցին ռազմամարզական ճամբարի բանգլադեշյան փուլը՝ օգոստոսի 14-19-ի երևանյան ճամբարը, իսկ օգոստոսի 20-ին, ժամը 08:30, համեցեք մեր 2014-2015 ուստարվա շրջանավարտացու 16-17 տարեկան պատանիները կմեկնեն ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ ստեղծած Կուրթանի «Հնեվանք» վրանային ճամբար՝ դաշտային նախաբանակային պարապմունքները Ստեփանավանի զորամասի աջակցությամբ անցկացնելու... Հինգ գիշեր, վեց օր՝ միասին, գեղատեսիլ Զորագետում՝ լող, հրաձգություն, վերելք, արտակարգ իրավիճակում գործելու

հմտություններ, բնապահպանական-հայրենագիտական նախաձեռնություններ, մարզական-տեխնիկական հնարներ, դաշտային խոհանոց ու կյանք...

Վահրամ Թոքմաջյանին ու իր օգնականներին կարելի է նախանձել՝ սա իրական-գրավիչ մանկավարժական հարթակ է ասպետական կրթության համար... Ամեն ինչ հո միջնադարում չի՞ մնացել... Եվ լավ է, որ հաջող մեկնարկը տրվել է օգոստոսի 14-ին, երբ Արցախի Ասկերանի Նոր Այգեստանի «Ասպետ» ռազմամարզական ճամբարում ավարտվեցին տասնօրյա դաշտային պարապմունքները: Կեցցե՛ք, շնորհակալ եմ այս գոհության համար, Արտեմ Խաչատրյան, Գնել Հարությունյան, Արման Երանոսյան և 32 ընկերներ...

Նոր ուսումնական միջավայր. «Սեբաստիա» կրթական պարտեզը՝ ուսումնական նախագիծ

Մենք ոչ միայն ասում, այլև կազմակերպում ենք, որ մեր սովորողները, սկսած 1-ին դասարանից, ստեղծեն իրենց դպրոցական միջավայրը՝ ինչպես նյութականը՝ իր ուսուցողական մասով, այնպես և մարդկայինը՝ բերելով իրենց դպրոց իր ծանոթ-անծանոթին: Գովազդին պիտի փոխարինի կրթական ծրագրի, դպրոցի ներկայացումը շահառուին՝ սովորողին ու նրա ծնողին, հանրությանը. սա ուսումնական աշխատանք է, որ նախագծերի ձևով սկսել են կատարել ավելի ու ավելի մեծ թվով սովորողներ: Բացեք ձեր դպրոցը՝ դասարանը, խումբը, ակումբը, կրթահամալիրը, ներկայացրեք ազատ և՛ մեդիա, և՛ ֆիզիկական միջավայրում. այս դեպքում շատ բան կփոխվի և՛ ձեր մեջ, և՛ կրթահամալիրում. նախ՝ կեղտը դուրս կգա տանից, իսկ այն, միևնույն է, շլակի ձևով առաջանում է, հետո՝ կգնահատեք այն, ինչ ունեք: Եվ գլխավորը՝ դուք կոնկրետ կմասնակցեք ձեր կրթական միջավայրի նորացմանը, եթե սովորող եք, քանզի միջավայրն է ձեր ուսուցիչը:
Հիմա դժվար է հավատալ, որ Մայր դպրոցում գործող խեցեգործության, փայտամշակման արհեստանոցների, նախկին ու ներկա հրաձգարանի, «հացի փուռ» կոչված տարածքի, մետաղագործության արհեստանոցի, պահեստների՝ ընդհանուր հաշվով մոտ 2500 քառակուսի մետր տարածքը նախկինում համարյա ծայրից ծայր լցված էր շինարարական լիցքով՝ հողով-քարով... Ու այդ ամենը քանդել, բարձել, տեղափոխել են թիվ 183 դպրոցի սովորողներն ու ուսուցիչները 1984-89թթ ընթացքում: Ես այսօր էլ զարմացած եմ հաստատակամության-նվիրվածության, աշխատասիրության այդ նախագծով: Սրան էլ գումարեք թ. 183 անորակ շենքի, քանդվող բետոնե հատակների վերափոխման աշխատանքերին սովորողների և ուսուցիչների մասնակցությունը:

Իմ հերթական հանդիպումը ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների խմբի հետ, որը այս անգամ ղեկավարում է գնդապետ Առուշանյանը, կայացավ մեր կառուցվող խաղադաշտերում: Որքան էլ անհավատալի է թվում, հիշեցնեմ, որ օգոստոսի 23-ին, զարմացնեմ ու հիացնեմ, որ այո, 2014 թվականի, նշանակված է կառուցվող մարզադաշտերի հանձնումը... Իսկ սա պաշտպանության նախարարի հրաման է, որը չի քննարկվում, կատարվում է: Ուրեմն, գլուխներս կախ, բարեխիղճ կատարենք օրվա գործը:

«Սեբաստիա» մարզահամալիրի խաղադաշտերի կառուցումը, երբ չունես նյութական միջոցներ ու հատկացումներ, երբ քեզնից դրա կառուցումը չի էլ պահանջվում, խիզախ ձեռնարկ է, բայց այս մեծ ծավալի մեջ ինձ զբաղեցնում են խիզախ լուծումները՝ անաստիճան,

անեզր, անցանկապատ, անբերան, անասֆալտ, անարգել… Սրան ավելացնենք ստեղծագործ երևակայության մի հոմանիշը՝ «կուտակված փորձի սովորական շրջանակները մշտապես ջարդելու կարողությունը» (Ջ. Ռոդարի):

Երեկ մարզադաշտում ամենաշատը և ուշադիրը հետևում էի (երկրորդ պլանից հսկում էի, որպես ուսումնասիրող) Ավագ դպրոց վարժարանի 12-րդ դասարանի մեր «դեզերտիր» տղաների՝ «Հայաստանյան ասպետ» ճամբարի գործունեությանը. նպատակասլաց-կարգապահ աշխատանք տեսա՝ ինքնաթափ-դեղին-անվավոր-մեծ-բեռնատար-շինարարական ավտոմեքենան էին բարձում, վարժարանային այգին բարեկարգում, ազատագրվում ծնողների պարտադրանքից ու սկսում էին գործել որպես ազատ կամքով էակներ: Եվ լավ է, որ վարժարանի ղեկավարը, մեր հասարակագետները՝ Արմանը, Էմանուելը, Վահրամը, այս տղաների կողքին, նրանց հետ են: Մանկավարժ աշխատողի նեղմտությունը կործանարար է. անընդհատ մուռ է հանում՝ ողջ աշխատանքային կյանքը գործել է այլոց կամքով, հակառակ իր ազատ կամքի ու սրա համար վրեժ է լուծում երեխաներից: Մեծահոգության մեծ պակաս կա, բարեկամնե՛ր:
Կրթահամալիրի քոլեջի շրջանավարտ-մասնագետների ցանկում անցած ուստարում մենք ունեցանք առաջին տասը պարտիզպանները՝ մեկամյա արհեստագործական ուսուցմամբ… 2014-2015 ուստարում ևս այս մասնագիտությամբ ընդունելություն ունենք. ինչպիսի՞ դիմորդներ կունենանք: Թվում է՝ նրանք պահանջված պիտի լինեն և՛ մասնավոր, և՛ պետական, և՛ համայնքային գործատուների կողմից…

Ես որոշեցի բնապահպանական տեսչական իմ ստուգայցն սկսել Արհեստների ավագ դպրոցից, հետո Նոր դպրոցի բակով իջա Մայր դպրոց, հետո՝ Բ-4 թաղամասի «Յուրի Բախշյան» մանկական այգի: Փառավորվեցի. խնամված, խուզված, ջրված ու մաքուր և բանուկ՝ առավոտյան 9.30-ին: Որքա՜ն էլ օգտատեր ունի այգին՝ տատիկ-պապիկներ՝ երիտասարդ, իրենց թոռնիկների հետ, մանչուկ-հմայիչներ՝ իրենց մայրիկների հետ, այգու տարբեր անկյուններում, ցայտաղբյուրների մոտ, անգամ՝ գնդակ տշող հայրիկ… Ես գոհունակություն ունեցա, որ հունիսին մեծ թվով սեբաստացիների մղել եմ միանալու Անահիտ Բախշյանի նախաձեռնությանը՝ հիմնովին բարեկարգելու այգին, և էական մասնակցություն ունեցանք. Արման Գրիգորյանի ու Գեղարվեստի ավագ դպրոցի ճաշակը ուրիշ արտահայտություն-ազնվություն է հաղորդում այգուն՝ որպես հեղինակային դրոշմ ու ճանաչված նշան:

Դպրոց-պարտեզի մուտքի մոտ ինձ անակնկալի բերեց սքանչելի Սոնա Փափազյանը. այսօր մեր կազմակերպիչն իր ջոկատով կմեկնի «Հնեվանքի» արշավախմբային ճամբար, ու հատիկ-հատիկ հրաժեշտ է տալիս ծառ ու թփին. «Իմ ձեռքով ջրեմ, հինգ օր չեմ տեսնելու»… Սոնա ջան, օր առաջ վայելենք երջանկությունը սքանչելի մայրությանդ…
«Հայաստանյան ասպետ» նախագծի բանգլադեշյան փուլի մեկնարկը տպավորիչ էր. գոհության պահեր ունեցա: Արցախի «Ասպետ» ռազմամարզական ճամբար տարբեր պատճառներով (հարգելի-անհարգելի՝ դատավորներն ո՞վ է, իսկ ո՞ւմ ենք դատելու) չմեկնածներին՝ ամենևին չդատեցինք, այլ հնարավորություն, ընտրություն առաջարկեցինք. աշխատեց: 12-րդ դասարան փոխադրվող տղաների հետ Գեղարվեստի ավագ դպրոցում՝ Գայանե Առաքելյանը, Արհեստների ավագ դպրոցում՝ Անահիտ Մելքոնյանը, Մայր դպրոցում՝

Ավագ դպրոց-վարժարանում՝ Էմանուել Ազջոյանը վստահ, համերաշխ մեկնարկեցին ռազմամարզական ճամբարի բանգլադեշյան փուլը՝ օգոստոսի 14-19-ի երևանյան ճամբարը, իսկ օգոստոսի 20-ին, ժամը 08:30, համեցեք մեր 2014-2015 ուստարվա շրջանավարտացու 16-17 տարեկան պատանիները կմեկնեն ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ ստեղծած Կուրթանի «Հնեվանք» վրանային ճամբար՝ դաշտային նախաբանակային պարապմունքները Ստեփանավանի զորամասի աջակցությամբ անցկացնելու... Հինգ գիշեր, վեց օր՝ միասին, գեղատեսիլ Զորագետում՝ լող, հրաձգություն, վերելք, արտակարգ իրավիճակում գործելու հմտություններ, բնապահպանական-հայրենագիտական նախաձեռնություններ, մարզական-տեխնիկական հնարներ, դաշտային խոհանոց ու կյանք...

Վե՛ր կացեք, բոլոր տարիքի սեբաստացիներ, որտեղ էլ որ լինեք, բահ, փոցխ ու գերան առեք, միացեք մեզ: Մինչև մեր տոնի օրերը մենք պիտի այլ դարձնենք մեր բակը... «Մեր բակը՝ պարտեզ» ուսումնական նախագծերի աշնանային՝ վճռական փուլն սկսնած է: Զեռքիցս չեք պրծնի. պիտի մեր բակերում համատեղ արված աշխատանքներն ամբողջական մի վիճակի բերենք... Նախակրթարանային գոտիով, ընդարձակված լողափերով, խաղալու հրճվանք պարգևող ավազե դաշտով, հեծանվաուղով, նոր ծառատունկով, բարեկարգ մուտքով... Խելացի-մտածված, իստակ-մաքուր, խնամված-ներկված, փորած-ջրած...

Սիրելի սեբաստացիներ, որտեղ էլ որ լինեք, կաք հիմա, այս ճանապարհներից, անցում-ուղիներից յուրաքանչյուրը, որ այնքան սովորական է դարձել որպես առօրյա, ինձ համար օրը օրի անտանելի է դառնում, ավելին, ես որոշել եմ չտանել այս վիճակը, փոխել այնպես, որ մինչև 2015թ. սեպտեմբերի 1-ը ուրիշ ընթացք ունենանք՝ պատշաճ... Այնպես որ սկսում ենք, սեպտեմբերի 4-ին ժամը 8.45-ի երթով սկսում ենք մեր «Պատշաճ անցում» ուսումնական նախագիծը: 9.45 բոպե մենք պիտի տոնական տողանի շարված լինենք «Սեբաստիա» խաղադաշտում. պատկերացնու՞մ եք՝ 5 տարեկան սեբաստացուց սկսած՝ բոլորս միասին... Շշմելու է... Եկեք հաղթահարենք, բացառենք ծուլության յուրաքանչյուր դրսևորում, սկսենք քայլքից, շատ քայլենք:

Գևորգ Հակոբյանի հետ խոսում էինք հեծանվակայանատեղիի մասին... Սիրով. այսօր տեղը որոշենք, ու թող Մայր դպրոցի տարածքում լինի մեր առաջին կայանատեղին, հետո՝ Կենտրոնի տարածքում, այսպես՝ հեծանվային 7 կայանատեղի: Ես, օրինակ, իմ սանիկ Գևորգ Հակոբյանին նվիրում եմ հեծանիվ, պայմանով, որ ինքն այն ուրիշին չի տա, որ 1980 թ.-ի, ես պատմել եմ, մեր սխալը չկրկնվի... Հեծանիվը, ինչպես ուսապարկ-քնապարկ-արշավականի կոշիկ-հանդերձանքը, պիտի անհատական լինի. ավտոմեքենա չէ՝ ով ուզում է, քշի: Հեծանիվ է, ինչպես ձին: Հեծանիվ եմ նվիրում, ոչ այսօր, Դպրոց-պարտեզի հեծանվուղու բացման օրը՝ սեպտեմբերի 10-ին, Դավիթին...
Ամենաշատը հիմա ինձ զբաղեցնում են մեր կրթական օբյեկտների բակերը, անխնամ դաշտերը... Մայր դպրոցի «Սեբաստիա» կառուցվող խաղադաշտը (կրկինն շնորհակալ եմ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին շարունակվող գործուն աջակցության համար) լավ օրինակ է ու խթան՝ Դպրոց-պարտեզում, Հիմնական դպրոցում, Գեղարվեստում, Քոլեջում 2-4 տարեկանների, 1-3-րդ դասարանցիների համար հարմարավետ ավազե հիմքով հարմարավետ խաղադաշտեր և հեծանվուղիներ կառուցելու, բարելավելու Բանգլադեշի նշանավոր մեր բացօթյա լողափերը, պարտեզների կանաչը զմրուխտի բերել-մշակել

(ռռոգման ջուր ունենք ու ռռոգման նոր ցանցեր ամենուր), նախշուն դարձնել մեր շենքերի էքստերիերները սովորողների ձևավորման նախագծերով...

Երեկ ես իմ ժամանակի մի կարևոր մաս Գեղարվեստում ու Նոր դպրոցում նվիրել եմ նյութական միջավայրի՝ դպրոցական բակերի բարելավման ուսումնական-նախագծային աշխատանքի կազմակերպմանը՝ ընդհանուր, պարտադիր՝ սովորողի և մանկավարժական աշխատողի համար: Հենց բակում, աշխատող սովորողների ու մեծահասակների հետ քննարկել ենք այս ուսումնական գործի կազմակերպումը. ձևականություն, կիսատ-պռատություն, ինչ-որ ձևի, անխիղճ, անբարեխիղճ, ուրիշի համար հարկադրանքով արվող աշխատանքից ազատվել է պետք, դրսում աշխատանքի անվան տակ ժամանակ անցկացնելը պիտի հաղթահարվի...

Մեծ մարզադահլիճում Գեղարվեստի կրտսերի մանկական խրախճանքի-տոնի մասին <u>այս տեսանյութը</u> հա՛ կարող եմ նայել: Հալալ է բոլորին, յուրաքանչյուրին, ով ստեղծեց այս ուսումնական-առողջարարական միջավայրը. հալալ է: Այսպիսի մի հալալ էլ դառնամ ասեմ քանդակագործության արվեստանոցին՝ Արա Թարզյան յուրահատուկ մարդով, որ մեր Կարինե Մացակյանին մե՛կ մոռանալ է տալիս, մեկ-մեկ էլ՝ մարդու երնե՛կ ասելն է գալիս...

Ուրիշ իրադարձություն էլ եղավ այս օրերին, էլի որպես բարձունքի նվաճում, բայց որպես 2014-ի մեր աշխատանքով նվաճած մեր բարձունքը: Գիտեք, Գեղարվեստի մեր դպրոցը նախկին տիպային մսուր-մանկապարտեզ է՝ ազբոթիթեղի երեսուն և ավելի տարվա թեք տանիքով: Որոշել էի նվաճել այդ տանիքը՝ որպես բարձունք: Տանիք, որը բաժանում էր որպես անջրպետ՝ շենքի աջակողմյան ու ձախակողմյան հատվածները: Գիտեք՝ ես շատ անջրպետ-հիմար պատեր, մարդկանց բաժանող ու միջավայր կտրատող գոտիներ եմ վերացրել: Այս մեկն ուրիշ էր: Ես սրա առաջ քանի՛ անգամ կանգնել եմ, մտածել նահանջի, հետաձգելու մասին... Հարցնում էի՝ նորի՞ց տանիքի գործ, դրանից բխող հետևանքներով, ինչպես եղավ 1995-96-ի կրթահամալիրի մյուս դպրոցների հարթ տանիքները, թեք, թիթեղապատ դարձնելու հետևանքը: Ինչո՞վ են արդարացված քո այս ջանքերը, կրթահամալիրի առանց այն էլ սուղ միջոցներից՝ թեկուզ և խնայող, ամենախնայող ծախսը:

Սկզբում Գեղարվեստի շենքի մի հարկանի կենտրոնից աջ ընկած հարկաբաժնի, երկրորդ հարկի բոլոր պատերը հանեցինք՝ այդ թվում հարկաբաժինը և տանիքը բաժանող: Հետո, շաբաթներ առաջ, կենտրոնից ձախ եղածինը... Բայց կենտրոնի տանիքին ձեռքներս չէր հասնում: Իմ վախերն էին չհաղթահարված: Հետո այս օգոստոսին տանիքն իրենց կյանքն ապրած ազբոթիթեղներից մաքրվեց: Կենտրոնի տանիքն ընդունեց իր նախնական տեսքը, ինչպես 1983-ին, նոր կառուցած շենքում, հարթ, փափուկ ծածկով: Նորից վախեր. այս անգամ պետք էր մաքրել տանիքը ֆիզիկապես մաշված հարթ ծածկից, բետոնապատել, ջրհորդաններ դնել: Սեպտեմբերի 23-ին mskh.am-ում ինձ անակնկալի բերեց <u>այս հայտարարությունը</u>. ո՞նց՝ հարցրի ինքս ինձ, վե՞րջ չարչարանքին, ախր այնքա՛ն գործ կա դեռ անելու, ինձնից լավ ո՞վ գիտի այդ մասին, այս տանիքում արդեն ուսումնական պարապմունքնե՞ր են, ներկայացո՞ւմ:

Ես, իհարկե, այդ օրը, նշված ժամին մտա տանիք, ինչպես վերջին շրջանում ամեն օր, ու չճանաչեցի այն: Բեմ ու թատերական հրապարակ դարձած տանիք-տարածքը բազմամարդ էր

ու տոնական: Բեմի վրա Քնարիկ Ներսիսյանի ու Սոֆյա Այվազյանի ճերմակ շորերով սաներն էին, Արշիլ Գորկուն նվիրված «Մաքրություն. տառապանք. հասունություն» ներկայացումն էին խաղում. որտեղի՞ց այսքան խիզախություն այս հմայիչ, ընդունակ անբաժան զույգին, որ տեսե՛ք՝ միշտ շրջապատված է տասնյակ ոգևորված, շնորհալի պատանիներով: Հետո, ներկայացման ավարտին մենք մոտեցանք տանիքի եզրին... Ահա, ինչու էր պետք նվաճել այս տանիքը՝ որպես բարձունք: Մեր դեմ նույն Արարատն էր, նույն աշխարհը Հայաստան, որտեղ, ավա՜ղ, քսաներեք տարի անց, նույն պարապությունն է ու կիսատ-պռատ գործերի ծովը: Այո՛, բայց այստեղից սկսվում է նաև կրթական մեր նոր կասկադը, որ հետո հաշվեցինք մեր եռանդուն Գայանե Առաքելյանի հետ, յոթ-ութ իրար հետ կապվող հարթակներ ունի: Իսկական կրթական պարտեզ: Սկսե՛լ է պետք ուսումնատենչ, ստեղծագործ, անդադրում սեբաստացիների հետ: Սկսե՛լ է պետք ապրել այս տանը: Եթե ուզում ենք տունը շեն լինի, պիտի պարզապես ապրենք այնտեղ:

Կեցցե՛ք, Քնարիկ, Սոֆյա, Գայանե, դուք այնքա՜ն տպավորիչ բեմադրեցիք այս պատգամը. մենք, թվում է, միշտ իմացել ու 1991-2014թթ. անկախության շրջանում ինչ-որ մի տեղ կորցրել էինք այն:

Շատացել են Հայաստանում դպրոցական օլիմպիադաները՝ ամենատարբեր: Վերջերս իրենց պարտադրում, իրենց գերիշխանությունը ցուցադրում են ռուսերեն անցկացվող միջոցառումները, Ռուսաստանի, այս կամային կառույցի անունից հանդես եկողները... Գևորգ Հակոբյանը կասեր՝ «Երբ են գնացել, որ հիմա էլ գան, չեն գնացել»: Սովետի նման ներկա են, մեր մեջ են՝ ստրկամտությունը, մեծապետական-իմպերիական մտածողությունը... Հակամարդը մեր մեջ է, չի հաղթահարվել, չի գնացել, զորանում է, նոր ձևեր է փոխում, իսկ ձևը խաղ է անցավոր...

Մեկ-երկու տարի մենք էլ փորձեցինք ունենալ առարկայական օլիմպիադաների մեր՝ հեղինակային այլընտրանքը, մեդիաօլիմպիադաների տեսքով: Տարին մեկից անցում արեցինք տարին չորսի՝ օլիմպիադա Գարուն, Ամառ, Աշուն, Ձմեռ... Հետո էլ Մեդիաօլիմպիկի հաստատման տիկին Աիդայի ջանքերը... Մեդիաօլիմպիադան ընտանիքում... Չեղավ, հայերը կասեն՝ չկպավ, մերը չեն՝ ստուգումներ, գնահատանիշ, ստուգող հանձնաժողով, սկիզբ-ավարտ... բացում-փակում՝ դարձավ առարկայական դպրոցական միջոցառում՝ խորքում, իհարկե, փաթեթավորում-պճնումը մի կողմ դրած: Նախագծային ուսուցմամբ, ստեղծողի մոբիլ դպրոցի անցումն ավարտվեց՝ նայեք կրթահամալիրի 2014-2015 ուս-տարվա օրացույցին. ուսումնական նախագիծ ուսումնական երևանյան ճամբար հանրակրթական ստուգատեսներ-արտագնա (ճամբար անիվների վրա, դպրոց բնության գրկում, արտագնա կամ ստուգատեսային արտագնա) ճամբարներ, ուսումնական ստեղծագործական հավաք-պլեներներ-արշավախմբային ճամբար՝ Բանգլադեշում, Երևանում, Հայաստանով մեկ, Արցախում, Վրաստանում... Նայեք օրացույցին՝ ձևավորված-ամբողջական ավանդույթի ուժ ստացած պարբերական համակարգ է դարձել, իրոք, հեղինակային կրթական ծրագրի կազմակերպում: Հետևեք մեր չավարտվող ամառային բանգլադեշյան ճամբարներին ու այսօր մեկնարկող «Հնեվանք» արշավախմբային ճամբարին՝ չորս հերթափոխով, յուրաքանչյուրում 40 մասնակից՝ յուրաքանչյուրը 5 գիշերումով, 6 օր Ստեփանավան-Կուրթան-Հնեվանքով. հայրենագիտական-բնապահպանական, ռազմամարզական, ուսումնահետազոտական.

իրական ուսումնական ընթացք... Եվ օգոստոսի 5-ին էլ Արցախ «Ասպետ» ռազմամարզական ճամբարի կմեկնի կրթահամալիրի ավագ դպրոցների ուսումնական պատանեկան վաշտը, իսկ օգոստոսի 8-ին էլ Իզմիրի միջազգային տիեզերագիտական ճամբար կշարժվի Արտակ Զարգարյանի և Շամիրամ Պողոսյանի ղեկավարած սեբաստացիների 12 հոգիանոց խումբը... Սրանք բոլորն էլ ամենամյա են, ուսումնական...

Վերը ասացի, սովետը չի հաղթահարվում, Հասմիկ Նալբանդյանն ու իր ընկերները, որ երեկ վերադարձան Վրաստանի Բուլաչաուրի միջազգային ճամբարից, ավելացրին. «Բա որ մեր ճամբարում լինեիք, Բլեյանի ասած՝ իսկական սովետը սա էր... Մեզ Բանգլադեշից ազատության դեսանտ էին իջեցրել խորհրդային անցյալ, թող մերոնք տեսնեն, գնահատեն իրենց ունեցած իրական Եվրոպան»:

Շատ բան կփոխվեր ավագ դպրոցների ցանցում, եթե նախ՝ բուհական ընդունելությամբ զբաղվեր հենց բուհը՝ յուրաքանչյուր հայաստանյան բուհ, ինչպես ամերիկյան, ֆրանսիական համալսարանները: Հետո՝ ծնողը հարգեր պատանու՝ իր կյանքը, այդ թվում՝ կրթությունը որոշելու իրավունքը, և սովորողն իրոք ընտրեր ավագ դպրոցը կամ քոլեջը կամ աշխատելը:

Բայց ինչո՞ւ չէր կարելի ընդունելություն կոչվածն այնպես կազմակերպել, որ Ավետիսին (Հարությունյան), որ ՀՀ նախագահի ամենամյա կրթական պարգևների 2014թ. մրցանակի թեկնածու է, և Վիտալիին (Գրիգորյան), որ 2013թ. մրցանակակիր է, ոչ թե քննեին, այլ հրավիրեին մասնագիտական կրթություն ստանալու լեզվաբանական թե Երևանի պետական համալսարանում, ու նրանք 2-3 առաջարկությունից ընտրություն կատարեին՝ հաստատելով Հայաստանի Հանրապետությունը, և ուրախանային ահա այսպիսի երկիր ունենալու համար:

Մեր կյանքի, մեր մասնագիտական կրթության, մեր չհաղթահարվող անպաշտպանության ու ծուլության մեխը սա է, ահա, այս «անմեղ» թվացող տեսարանը: Հինգ տարի ժամանակ ու դրամական շոշափելի միջոցներ մսխած չափահասը սկսում է գիտակցել իր ավելորդությունը, իր անպետքությունը: Լսո՞ւմ եք՝ 12 տարի հանրակրթական միջնակարգ դպրոցի աստիճաններում (կրտսեր, հիմնական, ավագ), հետո՝ բուհի (4+2+3)՝ մենք, հանուն հայրենիքի, բարեխիղճ ու բարեգործի տեսքով (ինչ է ստանում խեղճ ուսուցիչը, ինչ կարող է անել էս դպրոցը) այսօրվա ավելորդին ենք պարտակել, մարդուն «կոտել» ենք: Կներեք:

Գրավոր և բանավոր խոսքի մասին

Ես կարող եմ ամեն ինչ լինել, բայց բռնակալ՝ երբեք: Ես ուշադիր զննում եմ Կոմիտաս ու Թումանյան կուլ տվող իմ սանին ու զմայլվում... Մեծերը, հայտնի բան է, շատ են ձանձրանում ու իբր երեխայի շահերից են խոսում՝ լավ, ինչքա՛ն կարելի է Թումանյան ու Կոմիտաս, հասկացանք, էլի, թող սա էլ լսի, կարդա, իմանա... Ու ինչպես հարսանիքի սեղան՝ լցնում են խառնիխուռն.... Մենք խոսում ենք լեզվական-երաժշտական ենթագիտակցականի ձևավորման մասին, դրա սնունդի ու մեթոդի մասին՝ որպես մայրական կաթ ու ծիծ:

Աստված իմ, մենք, մեր երեխաները երջանիկ ենք, որ Կոմիտաս-Թումանյան պապիկներ ունենք.... Մեր իմացածն իրենցից է, դժվար չէ ստուգել: Միասին, որպես հավաքանի, ուրիշ ինչ գիտենք. մեր մանկության մայրենի-հայրենիքի ակունքն իրենք են: Հաստատ: Կրթության մեջ բանավորն ուսուցչի շատախոսությունն է, գրավորն էլ՝ սովորողին

պարտադրվող դասագրքային տեքստերը, որ սերտում է: Սովորողի բանավորի և ուսուցչի գրավորի արհամարհման հաղթահարումը մանկավարժության արդիականացման-նորացման մեծ հնարավորություն ունի, որը մենք հետևողական ներկայացնում ենք մեր հեղինակային կրթական ծրագրերով: Նախագծային՝ բլոգային-ակումբային-ստուգատեսային ուսուցման մեր փորձը, շնորհիվ բաց համակարգի, մատչելի է յուրաքանչյուրին:

Գրել-կարդալու դիլեման, իհարկե, հորինված է: Մեծ թվով իմ գործընկերների, սաների համար ամառը ընթերցանության ամենահարմար շրջանն է՝ ազատ ուսումնական առօրյայից, որը և՛ ժամանակատար է, և՛ հաճախ հավեսատար-էներգատար, տրվելու ընթերցանության անփոխարինելի հաճույքին: Բարի վայելում: Այնքա՜ն խելացի գիրք կա, նաև հասանելի՝ շնորհիվ ինտերնետի, շնորհիվ mskh.am-ի ու մեր մեդիագրադարանի, շնորհիվ կրթահամալիրի սովորողների և ուսուցիչների բլոգների. ձեր սեղանից մեր սեղանին՝ սեղանի գիրք: Շնորհակալ եմ:

Խնամքը բարեխղճություն է ենթադրում նախ և առաջ

Որ կրթահամալիրի երեկ՝ չորս, այսօր հինգ նախակրթարանները չլինեին, ես ստիպված կլինեի դրանք հիմա ստեղծել: Իսկ Դավիթը այնքա՜ն հավեսով է գալիս պարտեզ. ու ամեն Աստծո օր ես բարձրաձայնում եմ իմ երախտագիտությունը իր դպրոց-պարտեզի ղեկավար՝ իր քույր Տաթևիկին, իր ընկեր Մարիամին, ընկեր Նոռային: Երեխայի անօտարելի իրավունքն է այսպիսի պարտեզ ունենալը:

Խնամքը բարեխղճություն է ենթադրում նախ և առաջ, ու ես ժպտում եմ կրթահամալիրի 5 նախակրթարանների 300-ի չափ 2-5 տարեկանների երեք տասնյակ դաստիարակներին ու նրանց օգնականներին՝ երիտասարդ, սիրելի արդեն, բայց այսքա՞ն...

Ես գիտեմ, ես հարգում եմ քնի, որպես անհատական ակտի ֆենոմենը, ախր, շա՜տ յուրահատուկ բան է: Ահա, ինչու չեմ ընկալում կրթահամալիրի նախակրթարաններում 2-5 տարեկանների համարյա միաժամանակյա քունը... 300 եզակի երեխա քնում է... ա՜յ քեզ խնդիր. ոնց էլ մեր դաստիարակ աղջինկները լուծում են... Լավ է, որ մեր թափանցիկ միջավայրը թույլ է տալիս իմ ուժեղացող զարմանքն արտահայտել աննկատ, առանց խանգարելու:

Դավիթն ինքնուրույն է փողոցում ու անվտանգ լրացուցիչ. ես իրեն հարմար դիրքից հսկում եմ, առանց խանգարելու-կաշկանդելու իր ինքնուրույնությունը, որը լավագույն անվտանգությունն է ապահովում: Դավիթը բարևում է համարյա յուրաքանչյուր ոչ անհաղորդ (կամ հաղորդ) մեծահասակին՝ «Ես Սասունցի Դավիթն եմ», պատասխանում դիմացինի բոլոր հարցերին, եթե դրանք չկան, ոչինչ՝ ինքը պատմում է իր ուժեղանալու, իր Թուր Կեծակիի... մասին... Ինքնուրույն բարձրանում է մեր տան, նրա հարևանությամբ թիվ 3 դպրոցի, վերգետնյա ու ստորգետնյա անցումների, կրթահամալիրի Մեդիակենտրոնի, այլ աստիճաններով ու իջնում... «Վարորդը պետք է զգույշ քշի մեքենան, որ չկոտրվի...»:

Աստիճաններով ինքնուրույն անցուդարձը հասունության մատչելի տրենաժորներ են... Ինչպե՞ս կարելի է զանց առնել... Ես Դավթի ձեռքը չեմ բռնում (բաց թողեք երեխայի ձեռքը, մեծահասակներ՝ բոլոր կարգի): Դավիթն առաջ է անցնում, ու ես ունենում եմ կրթողի՝ Մարիա

Մոնթեսորիի վերապահած միակ դիրքը՝ 2-րդ պլանից երեխայի գործունեությունը դիտարկողի... Մնացածը հեղինակից լավ, ո՞վ կասի: ԿարդացեքՄարիա Մոնթեսորի, ֆիզարձակուրդում գտնվող սեբաստացի ու ոչ սեբաստացիներ, մանկավարժությամբ հետաքրքրված բոլոր կարգի մեծահասակներ... Այն կա՝ շնորհիվ մեր «Ստեղծողի մոբիլ դպրոցի», նրա «Դպիրի», շնորհիվ մեր ժամանակին ու բարեխիղճ արված թարգմանության... Հատկապես 27-30 (Երեխայի տունը), 22-47 (Ինքնադաստիարակությունն ու ինքնուսուցում կրտսեր դպրոցում) էջերը նորից ու նորից կարդացեք:

Ինձ հարցնում են՝ ինչո՞ւ եք մուտքը կրտսեր դպրոց սարքում 5 տարեկանից, ինչո՞ւ այդքան մեծ ուշադրություն 5 տարեկաններին... Տեսե՛ք՝ ինչ միջավայր ենք ստեղծել՝ դասարան ու խմբասենյակ չէ, աշխարհ է՝ մեծ, լուսավոր, տեխնիկապես հագեցած, հարմար ու ամբողջական գործունեության աշխարհ, հիմա էլ՝ պարտադիր լողուսուցումը, մարմնամարզությունն ամենօրյա, ուսուցման կազմակերպումը որպես անընդհատ ու բնական գործունեություն...
Դպրոց-պարտեզում ուզում ենք օր առաջ ավարտել փռված շենքն օղակող հեծանվուղու կառուցումը... Հինգ տարեկան հարյուրից ավելի սեբաստացիկների համար լողալու, հեծանիվ քշելու, մարմնամարզիկի կարողությունների ձևավորմանը, որպես ուսուցման-զարգացման հեղինակային գործոններ, հետևելու եմ անձամբ. ամսական ստուգատեսները լավագույն ձևն են՝ սեպտեմբերից հունիս տասը ստուգատես, և տասն անդրադարձ, խոստանում եմ, իմ օրագրում... Հինգ տարեկանների հինգ դաստիարակների համար փնտրում եմ հեծանիվներ. ունենք պայմանավորվածություն մեր հարևանությամբ գտնվող (Էջմիածնի խաճուղի...) հեծանվահրապարակի հետ՝ սկսելու 5 տարեկանների, 1-3-րդ դասարանների դասվարների և դաստիարակների հեծանվամարզումները, այսպիսով, 2-9 տարեկան սեբաստացիների ղեկավարները (դաստիարակ-դասվարներ) լողում են, հեծանվով մարզվում են ու բատուտների վրա են...

Մեր, այսօր՝ 115 հինգ տարեկանների, որ ամեն օր ավելանում են, ուսուցիչ-դաստիարակները վճռական են. յուրաքանչյուրը կունենա իր դպրոցի բակում իր գոտին, իր լողափով, խաղադաշտով, բաց պարապմունքների, բացօթյա կենցաղի պարագաներով... Հարմար, խնամված կանաչի մեջ: Սրանից լավ նվե՞ր մատուցեն 5 տարեկանների ծնողները իրենք իրենց, սեբաստացիկներին, կրթահամալիրին: Չե՛նք ուզում, սա է մեր ուզածը: Մեր բոլոր նախակրթարանային 15 խմբերի դաստիարակները գործունեություն են դարձնում իրենց սեմինար-պարապմունքները. մանկավարժությամբ իրենց ու այլոց փորձի ուսմնասիրությամբ, փոխանցմամբ կզբաղվեն, որպես անհատական աշխատանք, ինքնակրթությամբ, առցանց: Մանկավարժ հետազոտողի իրենց դիտարկումները կբերեն իրենց բլոգներ: Բոլորս կկարդանք: Մանկավարժությամբ զբաղվող հետազոտողի համար չի կարող լինել ավելի հետաքրքիր գործ, քան սանին դիտարկելը ու ավելի կարևոր գործ, քան իր դիտարկման մասին այլոց պատմելը: Սեմինար-պարապմունքները կանցկացվեն որպես լողուսուցման պարապմունքներ, նոր ծածկած լողավազանում, խմբերով, օրվա վերջում. լողա՛, մարզվի՛ր, սովորի՛ր ու թարմացած գնա տուն: Հեծանվային պարապմունքներ՝ մասնագիտացված հեծանվահրապարակում, մարմնամարզությունը՝ հայտնի Դավիթ Ֆահրադյանի ղեկավարությամբ, «Սեբաստիա» նախանձ շարժող մարզասրահում:

Մեր յուրաքանչյուր կրթական ծրագրում մեկն է ուսումնական գործը, որպես սովորողի և ուսուցչի մոբիլ-ստեղծագործ աշխատանքով կարողությունների զարգացում, որի արդյունքում փոխվում է և՛ սովորողը, և՛ կրթական միջավայրը: Այո, կրթական, նյութական միջավայրի զարգացումը ևս, դրա նախագծումը, դրա իրագործումը, յուրաքանչյուրիս պարտադիր ուսումնական աշխատանք է, Մեկ ուսումնական պլանով, Մեկ կրթական ծրագրով, Մեկ մանկավարժական աշխատողով, Մեկ կարևորությամբ: Այսպիսին մեր հեղինակային կրթական ծրագիրը: Ինչ-ինչ, բայց իմ 60-ամյակի, մեր 25-ամյա հոբելյանի առիթով, կիսատ-պռատություն, խոսքի և գործի հակասություն թույլ չեմ տա:

Լողափը՝ ամառվա առօրյայի կարևոր բաղկացուցիչ

Ուշադիր. քաղաքական հայտարարություն եմ անում: Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրը ես պահանջում եմ բոլոր հնարավոր լողավազան-ջրավազանների համազգային ստուգատես անցկացնել: Նոր քաղաքացիական տոն՝ յուրաքանչյուր հայ երեխա ջրում ու հոգատար ավագներով շրջապատված, խնամված: Սեբաստացիներիս օրացույցով այդպես է. հունիսի 1-ին մեր բոլոր ութ դպրոցներում, հինգ նախակրթարաններում մեկնարկում են բանգլադեշյան ուսումնական ճամբարներն ու պարտեզները՝ իրենց բաց ու փակ լողափերով: Սկսում ենք «Անտիվիրուս Կոմիտաս»-ով, երբ հազարի չափ մեծ ու պուճուր սեբաստացիները սիրով ու միասին իրենց Կոմիտասն են երգում, խաղում, պարում... Ճամբարները հետո վերածվում են ստուգատեսային-ստեղծագործական հավաքների, հետո՝ էլի ճամբարների՝ բայց ցանկացող յուրաքանչյուրի համար՝ որպես մատչելի սեբաստացիական ծառայություն... Այո, ես ջրա...ծին եմ:

Ես ջուրը, լողալը, պարզ, մատչելի լողափերը կհաստատեի որպես հանապազօր՝ յուրաքանչյուր երևանցու առօրյա՝ սկսած 2 տարեկանից: Չէի թույլատրի մանկական հաստատության գոյություն՝ առանց պարզ լողափի ու լողավազանի... Ես պնդում եմ, որ քաղաքի 180-ի չափ համայնքային ու մասնավոր բոլոր պարտեզներում մեկական հավաքովի լողավազան ու մեր լողափերի նման՝ արևով տաքացվող ցնցուղներով, մինչև 150 քառակուսի մետրանոց լողափեր լինեն: Մանկան իրավունքի այս ապահովման ծախսերը լրիվ տեղավորում են 2014թ. համաքաղաքային ծրագրերի ծախսերի մեջ և քաղաքապետի կամքի շրջանակում են: Ինչո՞ւ քաղաքապետը ձեռքը չի խփում խորհրդակցական սեղանին...

Հիմա, երբ կրթահամալիրի Բանգլադեշում ունենք (հաշվում եմ) մեկ ծածկած և 10 բացօթյա լողավազան, ութ լողափ... Մեր իրականացրած ամենատպավորիչ, ամենաէժան, ամենամարդկային նախագծերից է. մեր 300-ի չափ 2-5 տարեկանները, բոլորը, լողում են, իսկ 6-10 տարեկաններից ով չի լողում, նոր ուստարում կլողա՝ որպես հանրակրթություն: Երբ տեսնում եմ չլմփացող, տկլոր 2-12 տարեկան սեբաստացիկներին, ավագ դպրոցի սաներին, որ այնքան սիրով, շնորհքով գունավոր են դարձնում լողափերին հարակից պատերը, երբ... Ես վերադառնում եմ լողի հետ կապված անվտանգությանը: Մեր հայտնի ջրասեր տատիկ-տնօրենը հետևողական է ու նկատված անփութությունը չի ներում իր երեկվա սաներին, այսօրվա դաստիարակներին: Երբեք, երբեք, երբեք, աղջիկներ: Դարձեք 2-5 տարեկանների լողի մարզիչը, լողալով նրանց հետ, միասին որպես նախակրթարանային ամառվա առօրյա կարևոր մաս, կազմակերպեք նրանց ծովափը՝ նույնքան կարևոր, որքան ընթերցանությունը,

սնունդը: Իսկ մեր 5 տարեկանները սկսել են լողալ մեծ-ծածկած լողավազանում. սրանի՞ց ուրախ լուր՝ օրվա, տարվա:

Երեկ կրթահամալիրի հինգ նախակրթարաններում սկսեցինք լողափնյա սպիտակ ավազով մինի-դաշտերի կառուցման աշխատանքները. այս նախագծերում անպայման ներգրավենք մեր դիզայներ-շինարար-այգեգործ-վարպետ վառ երևակայությամբ ծնող-պատվիրատուին, ավագ դպրոցների, քոլեջի սովորողներին՝ վաղվա հայրիկներին ու մայրիկներին. ընդամենը 1-2 ամսում, մինչև նոյեմբերի առաջին օրերը, կունենանք թարմացված-նորացված-ընդարձակված նախակրթարանային միջավայրներ՝ ներքին ու արտաքին ինտերյերով... Այո՛, զարմացնելու ենք ինքներս մեզ:

Որտե՞ղ կարելի է լողալ Հայաստանում. վճարովի (միայն վճարովի են լողավազանները) տասնյակի չափ ավազաններում, որոնք գլխավորապես Երևանում են, Սևանի հատուկ հարմարեցված մեկ-երկու տասնյակ լողափերում... Վերջ. մնացած բոլոր գետերում, արհեստական թե բնական լճակներում, ավազաններում լողալ չի կարելի: Ահա ձեզ արտակարգ իրավիճակ Հայաստանում, լողալ չիմացող, չլողացող, փրկել չկարողացող, ջրազուրկ սերունդ ու կյանք: Այս վիճակը առանց արտակարգ իրավիճակների համակարգի գործուն մասնակցության, անլուծելի է, և արշավախմբային ճամբարները կարող են լինել այսպիսի գործի պոլիգոնները, փորձակայանները:

Կրթահամալիրի աշխատողը կամ իմ հերոսները

Ահա այս իրենց մանկավարժական անկախությունը հետևողական պաշտպանող և մանկավարժական-մասնագիտական-քաղաքացիական գործունեությամբ շարունակ դրսևորվող մարդիկ՝ սեբաստացի ուսուցիչներ են իմ ժամանակի հերոսները: Կրթահամալիրում նախագծային-ակումբային-ստուգատեսային ուսուցումը լավագույն միջավայր ստեղծեց մեծ թվով սքանչելի երիտասարդ մասնագետների համար՝ մեր մանկավարժության մեջ, մեր կրթական աշխարհում, բանգլադեշյան տարածքում շարունակ դրսևորվելու՝ գործելով ավելի ու ավելի անկախ իր անցած դպրոցից, այսօր շարունակվող ավանդույթից, տո, հենց ինձանից: Այս հունիսյան ճամբարի, Բանգլադեշյան պլեների և ամառային ուսումնական նախագծերի շրջանը, ի հեճուկս ֆորմալ, ձևական, զանգից զանգ կրթության շրջանի, երբ սովորում ես ոչ թե քո, այլ ուրիշի, գնահատանիշի համար, փաստեց մեզանում անկախ գործչի ու նրա ինքնադրսևորման գոյությունը: Պարոնայք, այդպիսի մարդիկ՝ իմ գործընկեր հերոսներն ավելանում են. դե էլ փաստ է: Սա է իմ համոզմամբ մեր հոբելյանական այս տարվա գլխավոր ձեռքբերումը, որը որոշելու է կրթահամալիրի հաջորդ 25 տարին:

Մենք ամենաերիտասարդ հավաքանին ենք եղել միշտ, թե մեզ թվացել է. մենք գործել ենք այս համոզումով: Երիտասարդ՝ թե՛ ներքին ավյունի, թարմության առումով, թե՛ պարզապես, երիտասարդ տարիքով: Գրասենյակին խնդրեցի նոր ցուցանիշներ՝ «համառ» փաստեր, և հանրապետական ցուցանիշներ, որ իրար կողքի դնենք մերն ու ավելի մերը: Ահա: Հանրապետությունում մինչև 35 տարեկան ուսուցիչները 22, 5 տոկոս են կազմում, կրթահամալիրում՝ 40,5, հանրապետությունում ամենամեծը 50-ից բարձր տարիքային խումբն է (41, 5 տոկոս), կրթահամալիրում՝ մինչև 40 տարեկանները՝ համարյա 54 տոկոս:

Դավիթ Բլեյանի ծնունդը լավ առիթ ու խթան դարձավ մանկավարժի ստեղծականությունը դիտարկելու թե՛ ընդհանուր («Ստեղծողի մոբիլ դպրոց» կրթական ծրագրի մասին է խոսքը), թե՛ ուղղակի՝ կրթահամալիրի ուսուցիչ-ծնողի, ծնելիության, սեփական երեխա ունենալու տեսակետից:

Ուշադիր: Ուսուցիչը մարդ է, ունի իր ընտանիքը, հին ու նոր երեխաներ, կենցաղ, բնակելի տարածք, տնտեսություն, և այստեղից՝ քանի՞ մարդ չունի ընտանիք, չի ամուսնանում, չունի երեխա (չի հայրանում, չի մայրանում), չունի սեփական բնակարան, ունի տնտեսական դժվարություններ... Ահա ձեզ երկու ցուցանիշ. 22-50 տարեկան կրթահամալիրի աշխատողներից 42 կին և 13 տղամարդ ամուսնացած չէ, երեխա չունի 62 աշխատող: Ի դեպ, այս գրի նկարը նշածս 42-ից մեկի՝ մաթեմատիկայի ուսուցչուհի Անահիտ Բեկյանի բլոգիցէ: Բնակարանի սուր կարիք ունի, ըստ կրթահամալիրի արհմիութենական կազմակերպության «սոցիալական բնակարան» ծրագրի տվյալների, 95 հոգի: Ամեն ինչի մասին օրվա մի գրում եթե անգամ հնարավո՛ր լիներ գրել... կլիներ իմ օրագրի վերջը: Բայց ոչ: Ապրել-գործելու եմ, որքան կամ, հաջորդ 59 տարում օրվա գրի տեսքով պատմելու եմ իմ ու ձեր օրվա խնդիրների մասին, հաջողությունների ու ոչ այնքան: 2011թ. կրթահամալիրի ծնունդների (հայրացած կամ մայրացած աշխատողների) թիվը՝ 12, 2012թ.՝ 13, 2013-ին՝ 9, 2014-ի հուլիսի 17-ի դրությամբ կրթահամալիրում նշվել է 5 ծնունդ, և 8 կին հերթի է...

Ծնունդները շարունակվում են. հիանալի է, որ mskh.am-ում ամենաշատը ծննդյան աչքալուսանքն է, այ, այսպիսի... Ատամիատիկի ծեսը՝ իր կենդանի զարգացման ու կենդանության դրսևորման՝ մեզանում ավանդույթի ուժ ստացած ձևով չի արհեստականանում-անմարդկայնանում, ինչ, ցավոք, կատարվում է ծես-տոնի հետ հայաստանյան կյանքում: Մենք գիտենք, որ դեկտեմբերի 12-ին՝ մեր Սասունցի Դավթի ծննդյան օրը, ծեսը ինքնուրույնության նոր աստիճանի ստուգատես կդառնա, մարտ-ապրիլյան միամսյակը նոր մայրիկների ու մայրացողների ձոնենք, հունիսի 12-ին ուսուցիչների երեխաների նոր խումբ հրաժեշտ կտա պամպերսին ու մայրական կաթին...Եվ երեխաների ինքնուրույնության նոր նվաճումներ, որ այլ կդարձնեն մեր կյանքը...

Հեղինակային կրթական ծրագրում հունիս ամիսը, հուլիս-օգոստոսը դառնում են իրական աշխատանքային: Սոցիալական ճամբարի այլընտրանքը նախագծային կամ ստեղծագործական ուսումնական ճամբարն է՝ ստեղծագործական հավաքը, պլեները, որպես մտածելու, քննարկելու, անծանոթ մարդկանց հետ խնդիրներ լուծելու հնարավորություն: Եվ սա անհնարին կլիներ, եթե չունենայինք ուսուցչի նոր կարգավիճակը...

Իսկ սեպտեմբերի մեկը թե չորսը (կրթական շքերթ Մարմարյա սրահում՝ ուսումնական տարվա հեղինակային մեկնարկ) նույն պահանջն ունի՝ գալիս են նոր սովորողներ, էլի սովորողներ՝ որպես առաջին անգամ, նրանք հո մեղավոր չե՞ն, որ հերթականն են: Ուսուցիչը, դպրոցը, կրթությունը, ահա թե ինչու, միշտ թարմ լինելու են դատապարտված. սա այնքա՞ն անվիճելի է, որքան էլ կյանքում անիրագործելի թվա:
Միշտ թարմ, առանց կեղծիքի, առանց խաղալու. երեխաներն ամենազգայունն են կեղծիքի հանդեպ, և այդ կեղծիքը կյանքով ու կյանքում է հատուցվում:

Տրանսպորտային կրթահամալիրի համար միասնական, ոչ ամեն դպրոցի փոխադրումների մասին ենք խոսում: Մեր դպրոցական շենքերը, բացի Մայր դպրոցից և Կենտրոնից, ընկած են Բ-1, Բ-4 թաղամասերի, «Անկախ մայլի» խորքում, մեքենայի ոլոր-մոլոր ներթաղային ճանապարհ պիտի անցնես բնակելի շենքերի միջև, մինչև ընդհուպ մոտենաս դպրոցական շենքին. երեկվա իմ գրում անդրադառնալով մեր կրթական օբյեկտների առաջացման պատմությանը՝ ես ցույց էի տալիս, որ դա եղել է պատմականորեն-բնական 25-30 տարում: Նոր դպրոցի, Դպրոց-պարտեզի շրջակա շենքերի բնակիչները մի քանի անգամ բողոքել են- կբողոքեն, իմ կարծիքով՝ արդարացի. մենք պիտի սովորողների (սկսած հինգ տարեկանից) միասնական երթուղիներով տեղափոխման անվտանգ-հարմար ու մանկավարժորեն խելամիտ երթուղիներ գործարկենք: Կրկնում եմ՝ մանկավարժական աշխատողի աշխատանքը սկսվում է (կարող է սկսել) ոչ ուշ քան 8.45, և ոչ անպայման իր դպրոցական շենքում, այլ դպրոցի ղեկավարի որոշմամբ՝ Մայր դպրոցի «բաշխման վայրից»: Մանկավարժական աշխատողը պիտի ընդունի իր խմբին, որպես աշխատանք, անգիր իմանա հետիոտն ճանապարհն ու կարողանա գրավիչ դարձնել անցումը, այդ 10-15 րոպեն: Ես խոսում եմ 10-15 րոպե (ոչ ավելի) հետիոտն, անվտանգ ուսումնական քայլքի մասին: Իսկ անցումը, յուրաքանչյուր անցում մենք սկսում ենք այդպիսին դարձնել՝ պատշաճ, ներգրավելով այդ աշխատանքներում նաև քաղաքապետարանին, նրա վարչակազմին: Կմասնակցե՞ն ծնողները, կրթահամալիրի այլ բարեկամներ այս աշխատանքին:

Դուք վճարում եք, որպես ծառայություն ստացողներ, վարորդներին, դուք որոշում եք երթուղիները, վարորդներին ու ինքներդ ձեզ՝ որպես կրթական ծրագրի ուղևորների, ներկայացնում պահանջներ: Կրթահամալիրի դպրոցների գրասենյակների ղեկավարները, Լուսինե Մամիկոնյանը, ես, մեր աշխատանքային պարտականությունների շրջանակում համակարգում, աջակցում ենք հեղինակային կրթական ամենօրյա փոխադրումներին... Վարորդները, երթուղիների պատասխանատու ուղևոր-կազմակերպիչները չեն կարող չգործել որպես մանկավարժական աշխատողներ երթուղու ողջ ընթացքում... Բոլորս օրինապահ ու ազատ պիտի գործենք մեր համաձայնությամբ ընդունված կարգի շրջանակում: Ծխելը, ուշանալը, կեղտոտելը, անբարյացակամությունը, ընթացքում բջջայինով անհարկի խոսելը վիրավորանք են միմյանց նկատմամբ. օգնենք մեկմեկու, բացառենք....

Ծաղկաքաղը՝ աշխատանքային խմբի՝
Վիկա Մարկոսյան, Նելլի Հարությունյան, Կարինե Կիրակոսյան: Ղեկավար՝ Մարգարիտ Սարգսյան

Մա իմ հայրենի հողն է, ապրում եմ, սովորում եմ, գործում եմ, որ այն ծաղկեցնեմ

Զարգացնելով ՀՀ ՊՆ հետ ամառային դաշտային ճամբարի մեր փորձը[1]՝ նախատեսում ենք 12-օրյա 2015թ. դաշտային-վրանային հունիսյան ճամբարը: Նախագիծը երեք հանգրվան կունենա, յուրաքանչյուրը՝ իր դաշտային-վրանային ճամբարով.

Եղեգիս-Արատես-Հերհերի հարթակ՝ 4 օր,

Մադինա-Արգիճի-Արմաղանի հարթակ՝ 4 օր,

Սևանա լճի հայելի՝ 4 օր:

Այս ճանապարհը ես տեսել եմ 1989-1990-ին. ու խոստացել եմ Ձեզ, չեմ կարող իմ 60-ամյակի տարում չկատարել իմ խոստումը: Ճամբարը կաշխատի ողջ ամառ և հայրենագիտական-էկոլոգիական, ուսումնա-հետազոտական աշխատանքի հնարավորություն կտա բազմաթիվ սովորողների և ուսուցիչների:

Ճամբարը կմիավորի կրթահամալիրի 2014-2015 ուստարվա բաց ստուգատեսների հաղթողներին՝Հանրակրթական Դիջիթերի, Հանրակրթական բնագիտական-տեխնիկական ստեղծագործության, մարզական, տեխնոլոգիական, «Ընթերցում ենք...», «Տիգրան Հայրապետյան», թարգմանական, երաժշտական, թատերական, կինո-ֆոտոյի, և Սևանի ավազանի, Մարտունու շրջանի, Եղեգիսի կիրճի, Վայոց ձորի կիրճի սովորողներին: Նախագծի երեք հարթակներից յուրաքանչյուրը կունենա իր աշխատակարգն ու ծրագիրը, ուսումնական-հայրենագիտական ճամփորդությունների ցանկն ու երթուղիները:

Հրապարակում եմ նաև ճամբարի, ստուգատեսների միավորող խորագիրը.

Սա իմ հայրենի հողն է, ապրում եմ, սովորում եմ, գործում եմ, որ այն ծաղկեցնեմ:

[1] «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը 2014թ. օգոստոսի 1-ից 25-ը ՀՀ պաշտպանության նախարարության, Ստեփանավանի զորամասի աջակցությամբ Լոռու մարզի Կուրթան գյուղի տարածքում կազմակերպել է «Հնեվանք» դաշտային ճամբարը՝ 4 հերթափոխով:

Հեռավար հարցազրույց կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանի հետ

Այսպիսի հեռավար հարցազրույց: «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Դպրոց-պարտեզի 3-րդ դասարանի սովորողների հարցերը հրապարակվել են դասարանի՝ դասվար Հռիփսիմե Առաքելյանի բլոգում, պատասխանները՝ տնօրեն Աշոտ Բլեյանի բլոգի օրագրում: Գումարած՝ զրույցի արձագանքները բլոգներում, ՖԲ-ում, mskh.am-ում:

-Տիար Բլեյան, ես Մանեն եմ, դե երևի ճանաչեցիք: Մեր դասարանի բլոգում ես և ընկերներս Ձեզ հարցեր ենք գրել, կպատասխանե՞ք: Այս նկարը ես եմ նկարել: Ես և դուք հարիսա ենք ուտում: Նվիրում եմ Ձեզ:
*Հարցերին կարող եք պատասխանել **այստեղ**՝ քոմենթների բաժնում:*
Անհամբեր կսպասեմ Ձեր պատասխանին:

-Մանե ջան, իհարկե չեմ մոռացել: Կեցցես, որ ակտիվ ես: Պաչիկներ իմ սիրելի Հռիփսիմեին, քո բոլոր ընկերներին, բոլոր-բոլոր հարցասերներին: Հատ-հատ կարդացի, հատ-հատ ոգևորվեցի, սիրով կպատասխանեմ: Սրանք հարցեր են, որոնք հետաքրքիր են երևի շատ

սեբաստացիների: Մի փոքր ժամանակ տվեք, ձևի մասին մտածենք ու սկսենք: Պաչիկներ:
Աշոտ Բլեյան

-Սկսեմ Մանե Աբգարյանի հարցերից. Մանեի մայրիկն էլ է իմ սանը, սեբաստացի, համ էլ Մանեի հարցերն առաջինը հայտնվեցին իմ էլեկտրոնային փոստում...

-Տիար Բլեյան , ո՞վ է կառուցել այս դպրոցը:
- Մայր դպրոցի, մեր կրթահամալիրի 1-ին քարերը, Մանե ջան, դրել են Աշոտ Մանուչարյանը, Աշոտ Դաբաղյանը... հետո... ես, հետո...

-Տիար Բլեյան, ինչո՞ւ մենք սև և սպիտակ չենք հանգնում:
-Ինչո՞ւ չենք հագնում, սև էլ ենք հագնում, սպիտակ էլ... Դուք չե՞ք ընտրում ձեր հագուստի ոճն էլ, գույներն էլ, բա ո՞վ ընտրի... Ես իմ շորերից հազիվ եմ գլուխ հանում, հիանում եմ իմ թոռնուհի Արևիկ-մոդելի ճաշակով, հիմա էլ Դավիթը Բլեյանը՝ իր արդուզարդով... Դուք պիտի անընդհատ սովորեք ընտրել՝ հագուստ, մասնագիտություն, աշխատանք, ամուսին... իշխանություն...

-Ինչո՞ւ ենք Ձեզ դիմում տիար Բլեյան:
-«Տիար»-ն իմ անուն-ազգանունն է դարձել, Մանե ջան, որպես մեր մեծ տան ավագ՝ մեծ այր... Ես մեծ եմ, Մանե ջան, մյուս տարի կդառնամ կլոր 60 տարեկան... Ինձնից մեծ մեկ էլ Տիգրանյան Աշոտն է, նա էլ սիրում է, որ իրեն «ընկերով» դիմեն... Համ էլ ինքը շա՜տ մեծ է՝ հո չես ասի տի-տի-տի-այր... Իսկ ինձ հարմար է ու կարճ՝ տիար. տի՝ մեծ+այր՝ մարդ:

-Տիար Բլեյան, ե՞րբ են բացել այս դպրոցը:
-Մայր դպրոցը, Մանե ջան, բացվել է 1984-ին, տես, այս տարի այդ շենքը քանի՞ տարեկան է դառնում... Դպրոց-պարտեզը, որտեղ դու սովորում ես, նախկինում եղել է միայն մանկապարտեզ... Հետո ես մտածեցի քո մասին... ինչո՞ւ պարտեզից հետո դպրոց էլ չլինի... Դա եղավ 1987-ին: Իսկ կրթահամալիրը, որպես բոլոր դպրոցները միավորող մի Տանիք, գործում է 1989 թ.-ից... Սա էլ իմ ղեկավարած նախագիծն է, որի 25 տարին միասին տոնում ենք, քանզի և՛ դու, և՛ քո մայրիկը, և՛ քո ընկեր Հռիփսիմեն մասնակցել-մասնակցում եք այս նախագծի իրականացմանը:

-Տիար Բլեյան, դուք ամուսնացա՞ծ եք:
-Ես, որքան ինձ հիշում եմ, միշտ ամուսնացած եմ եղել: Տաթևիկն իմ միջնեկ աղջիկն է, Արևիկի մայրիկը: Սոնուլիկի մայրիկը՝ Լիլիթ Բլեյանը, իմ մեծ աղջիկն է, երգեր է գրում ու երգում, մեր դպրոցն է ավարտել, ահա լսիր. տեսնեմ կհավանե՞ս... Իմ կրտսեր աղջիկ Շուշանիկը սովորում է Վիեննայում, կոնսերվատորիայում, ուզում է երգչուհի դառնալ օպերային: Ես հիմա էլ ամուսնացած եմ. Արմինե Աբրահամյանը՝ Դավիթի մայրիկը, ձեր դպրոցի 4-5-րդ դասարանցիների մայրենիի ուսուցիչը, իմ կինն է... բա՜...

Հետո Հայկ Աբրահամյանի հարցերն են առաջ եկել:

-Ինչու՞ ենք դպրոցում կենդանիներ պահում:

-Ճագարը, նապաստակը, թութակը, ձկները, շները, կատուները, ծովախոզուկները նաև ընտանի կենդանիներ են. այս բառի մեջ կա պատասխան քո հարցին, հակառակը մենք իրավունք ունե՞նք ընտանի կենդանուն դուրս հանել տանից:

Դպրոցը իմ, քո, ձեր տունը չի՞: Մենք ապրում ենք մեր կենդանիների հետ: Կենդանիները դպրոցում իրենց պիտի նույնքան լավ զգան, որքան ես, դու, ընկեր Հռիփսիմեն: Եվ քանի որ մենք ասուն ենք, խոսելու ունակություն ունենք և խոսքին համապատասխան գործելու կարողություններ, մենք պիտի խնամենք յուրահատուկ լեզու ունեցող մեր երկոտանի, չորքոտանի, բազմոտանի, անոտանի, թևավոր ու անթև բարեկամներին: Ավելին՝ պատրաստվում ենք ունենալ մեծ գյուղացիական տնտեսություն հենց դպրոց պարտեզի հարևանությամբ՝ ձիերով, իշուկներով, ուլեր-գառներով, իսկական գյուղացիական տնտեսություն: Ոգևորեցի՞: Կենդանիներին խնամելը ուսումնական աշխատանք է: Եվ մենք սկսում ենք այն սովորել:

-Ինչու՞ ենք գնում ճամբար:

-Հայկ ջան, ինչո՞ւ ենք ճամփորդում, ինչի՞ ենք հաղթահարում բարձունքներ, ինչո՞ւ ենք ճանաչում հայրենիքը, ինչո՞ւ ենք հայրենագետներ...

Մենք սովորում ենք ամենուր, մենք մոբիլ ենք ու ստեղծական՝ 25 տարի, վրանում, դաշտում, ավտոբուսում, փողոցում, թանգարանում, արձակուրդներին, շաբաթ, կիրակի, անընդհատ սովորում ենք ու սովորում: Սովորելը, իմանալը, ճանաչելը քեզ, քեզ շրջապատող աշխարհը, տիեզերքը ամենագրավիչ ու անվերջ մի զբաղմունք է՝ ողջ կյանքի համար: Ճամփորդները հեքիաթի նման, կարելի է դու գիտենաս, Հայկ ջան, ա՜յ էն սարի ետևում: Ուզո՞ւմ ես իմանալ: Դե ուրեմն գնացինք ճամբար՝ իմանալու:

-Ինչու՞ մեզ վրա չեն ջղայնանում:

-Կան հարցեր և կան հռետորական հարցեր, սա ես սիրով անվանում եմ հռետորական հարց, ահա ինչու լավն է քո դպրոցը, որովհետև դու ոչ թե զայրույթ, այլ ուրախություն ես պատճառում ընկեր Հռիփսիմեին, ընկեր Տաթևին, ընկեր Սոֆյային, ինձ իհարկե: Իրար ուրախություն պարգևելու մեր դպրոցը:

-Ինչու՞ է մեր դպրոցը լավը:

- Այստեղ են ասում՝ դու ասացիր, Հայկ ջան, քո դպրոցն է, և ինձ մե՜ծ գոհունակություն է պարգևում, որ դու քո ընկերների հետ, ընկեր Հռիփսիմեի հետ ձեզ լավ եք զգում: Դարձրեք այն ավելի լավը, ամեն օր: Մեր դպրոցը առանձնահատուկ է հենց սրանով, որ ոչ միայն կարող եք, այլև ենթադրում է, մղում է ձեզնից յուրաքանչյուրին նաև ձեր ծնողներին, ձեր ուսուցիչներին ձեր ջանքերով, ձեր տաղանդով, ամենօրյա ձեր գործերով ավելի ու ավելի լավը դարձնել այն: 20-րդ դարի հայտնի մաթեմատիկոս-մեթոդիստ Ջեյմ Փոյան, որ մաթեմատիկան սովորողի և սովորեցնողի մտածողության զարգացմանն ուղղված գործունեություն դարձնելու այնքա՜ն եռանդուն-հետևողական ջանքեր էր գործադրում, ով աշխարհում այդպիսի, ամենաշատ կարդացված «Ինչպես խնդիր լուծել», «Մաթեմատիկական հայտնագործություն» գրքերի հեղինակն է, մեզանում հայտնի ու տարածված ուսուցման պատվիրանների հետ թողել է մեկը, որի կարիքը հիմա զգում եմ՝ երբեք մի՛ պատասխանեք հարցերի, որոնք սովորողների

մոտ չեն առաջացել: Սուսան Մարկոսյանի հետ կարծեմ խոստացել էինք մեր հեղինակային մանկավարժության սկզբնաղբյուր աշխատությունների գրադարանում նորից անդրադառնալ Փոյայի ժառանգությանը, Փոյա թարգմանել... Չկան տեղին ու անտեղի, լավ ու վատ, հիմար ու խելացի հարցեր (դատավորը կա այս դասակարգման մեջ), կան իմ հարցեր, կան քո հարցեր, կան հնչած հարցեր, և կան, այո, արհեստական-անանուն հարցեր... Ասյա Միրզոյանի այս չորս հարցերին, ես, իհարկե, կպատասխանեմ, քանզի դրանք Ասյայի հարցերն են:

-Ինչու՞ է մեր դպրոցը տարբերվում ուրիշ դպրոցներից:

-Մեր դպրոցը ստեղծվել է հենց այդպիսին՝ որպես ուրիշ: Մեր բոլորիս դպրոցը, որ որպես «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր 1989թ. սկսեց գործել, եզակի է, առաջինն է Հայաստանում, որտեղ ուսուցման ողջ գործի պատասխանատուներ-հեղինակներ դարձան կրթահամալիրի ուսուցիչները՝ տիկին Աիդան, Մարիետ Սիմոնյանը, Սուսան Մարկոսյանը, Գևորգ Հակոբյանը, Աշոտ Տիգրանյանը, Նաիրա Նիկողոսյանը.... հիմա նաև՝ ընկեր Տաթևը, ընկեր Հռիփսիմեն, տիկին Սոֆյան... Թող ընկեր Հռիփսիմեն շարունակի՝ ինչ է անում ինքը, որ ուրիշ են դառնում ձեր պարապմունքները, ձեր դասարանը: Դժվար-հետաքրքիր է, երբ դու ես սովորողների, նրանց ծնողների հետ քո անելիքը որոշում-քննարկում, ստեղծում, ընտրում, պատասխան տալիս քո սխալների համար:

-Տիար Բլեյան, ինչու՞ ենք մենք ընդհանուր պարապմունք անում:

- Ուրիշ դպրոցներ ինձ հիշեցնում են բազմաբնակարան շենքերը. ամեն դասարան «ապրում է» մի բնակարանում: Մենք մեկ ենք, առանց ներքին պատերի ենք, իրար ճանաչում ենք, իրար հետ հանդես գալիս, ուրախանում իրար հաջողություններով: Օրինակ, դու որտե՞ղ պիտի ծափահարեիր 4-րդ դասարանի Արայիկին շախմատի չեմպիոն դառնալու առթիվ, կամ որտե՞ղ հանդիպեիր կրթահամալիրում ստեղծվող ռոբոտներին: Միասին ուրախանալը, միասին նույն երգերը երգելը, պարելը, միասին ներկայանալը մենք անում ենք նաև, որպես դպրոց՝ ամենօրյա ընդհանուր պարապմունքների և, որպես կրթահամալիր, ամենուրբաթյա համերգ-պարապմունքների միջոցով: Տեսեք՝ մեր Տոնն էլ այդպիսին է՝ որպես միասնական ուսումնական նախագիծ:

-Ինչո՞ւ ենք մենք երգում, հետաքրքիր պարեր սովորում:

-Ուրախությունը, միասնականությունը, համերաշխությունը ամենահեշտը ինքնաբերաբար դառնում են երգ, պար, ծափ, հավաք, տոն... Ուրիշ է, երբ ինչ-որ մարդիկ գնում են պարի, երգի խմբեր, ուրիշ է, երբ դա քո առօրյան է:

-Ինչո՞ւ է մեր դպրոցի գրատախտակը էլեկտրոնային, իսկ մյուս դպրոցներինը՝ ոչ:

-Էլեկտրոնային են ոչ միայն Դպրոց-պարտեզի գրատախտակները, այլև Նոր դպրոցինը, Հիմնական դպրոցինը, Գեղարվեստի կրտսեր դպրոցինը, Միջին դպրոցինը, Ավագ դպրոց-վարժարանինը, Գեղարվեստի ավագ դպրոցինը, Արհեստագործական դպրոցինը, Քոլեջինը... Հետաքրքիր կլինի՝ կապ հաստատել բոլոր էլեկտրոնային գրատախտակների միջև: Իսկ մենք լավ ճանաչո՞ւմ ենք մեր գրատախտակները, ամբողջությա՞մբ ենք օգտագործում նրանց հնարավորությունները: Խնդրեմ, հաշվեք, թե քանի էլեկտրոնային գրատախտակ կա կրթահամալիրում, դասարանով մտածեք՝ ինչպիսի միասնական առաջադրանքներ կարող եք հորինել, ինչպես միասնական հանդես գալ այս տոնին մեր գրատախտակներով: Ի՞նչ են

փոխում նրանք ձեր կյանքում, ի՞նչ կլիներ, եթե հանկարծ մի օր կրթահամալիրի բոլոր էլեկտրոնային գրատախտակները վերցնեին ու չքվեին:
Մենք չե՞նք մոռացել՝ ունենք անխոնջ Էլեն Միրզոյան, որ Դպրոց-պարտեզում 1-ին դասարանից ամենուր էր՝ մեր բոլոր ստուգատեսներում, ընդհանուր պարապմունքներում, հավաքներում... Կա՞ կապ Ասյա և Էլեն Միրզոյանների միջև: Որտե՞ղ է հիմա նշանավոր Էլեն Միրզոյանը, ինչո՞ւ նրա զվարթ ձայնը չի լսվում մեդիայում: Էլե՛ն, որտեղ էլ դու կաս աշխարհում, արձագանքի՛ր. հիմա, Սեբաստացու օրերը, կրթահամալիրի տոնը Տոն է դառնում քո ձայնով, քո տեսքով...

-Ողջո՛ւյն, տիար Բլեյան: Ձեզ գրում է Միրզոյան Էլենը:
Կարծում եք, թե կորել, մոռացե՞լ եմ ձեզ, մեր ՄՄԿՀ-ը: Ոչ ես շատ եմ հիշում, կարոտում եմ ամենքիդ ու ամեն ինչ: Մոսկվայի ռուս դասընկերներիս անընդատ օրինակ եմ բերում մեր դպրոցը, էնքան եմ պատմում… էնքան եմ խոսում, հենց բառերը չեն հերիքում հայերեն եմ խոսում: Անցյալ տարի հաղթել եմ Կենգուրու մրցույթին գրավել եմ առաջին տեղը Մոսկվայի թիվ 1141 դպրոցում, որտեղ հիմա սովորում եմ: Իսկ Եղեռնի օրը էնպես ներկանացա պատմության դասին, որ միակ ադրբեջանցի դասընկերս ստիպված սկսեց արդարանալ: Մոսկվայում չկան ընկեր Տաթև, ընկեր Կարինե, Տիար Բլեյան, բայց ես գիտեմ որ դուք կաք այդտեղ՝ Երևանում, իմ ՄՄԿՀ-ում, ու ես ինչքան էլ մեծանամ, միշտ կհիշեմ Ձեզ բոլորիդ, ու երբ որ գամ Հայաստան, անպայման ձեզ կայցելեմ, որովհետև ես Ձեզ շատ եմ սիրում ու կարոտում:

Էլեն Միրզոյան

-Մեր լավ, պայծառ Էլեն ջան, կեցցե՛ս՝ ուրախացրիր քո գրառումով: Մենք՝ քո դասընկերները, քո դասավանդողները, քեզ ժպիտով ու կարոտով ենք միշտ հիշում: Էլեն ջան, դու հաջողակ ու հրաշալի Էլեն ես: Համբուրում եմ:

Տաթև Բլեյան

-Ապրես Էլեն ջան, որ մեր դպրոցը ներկայացնում ես արտերկրում, ուրախ ենք քեզ համար, մենք էլ քեզ ենք կարոտում:

Էլլադա Բաբայան

Եվ <u>ահա</u> քեզ ուսուցիչ՝ երկրորդ պլանում հմուտ գործող, ահա քեզ մեդիատեխնոլոգիաներն իրական կյանքում. կեցցե՛ս, Հռիփսիմե Առաքելյան, այս տեսանյութի համար.
<u>https://youtu.be/p__6uifpWpc</u>

«Պուպուշ» երևալու սինդրոմը, ակամա յութուբ-ֆեյսբուք ընկնելու վախը հաղթահարած պիտի լինեինք. հաղթահարե՞լ ենք: Ես մնում եմ իմ կարծիքին, մեր ֆիզիկական միջավայրը, մեր մեդիան՝ բաց ու ազատ <u>mskh.am</u>-ը, լիուլի հնարավորություններ է տալիս ցանկացած հարց առաջադրելու և անաչառ քննարկելու համար: Բայց իրավունքը գերակա է. արտահայտվելու ազատությունը ենթադրում է արտահայտվողի կողմից տեղեկատվության միջոցի ընտրության ոչ միայն հարգում, այլև ապահովում: Մի խումբ 11-րդ դասարանցիներ, տեսա՞ք, օգտվեցին և՛ ֆիզիկական միջավայրում, և՛ <u>մեդիայում</u> իրենց կարծիքի

արտահայտման ազատությունից: Սա էլ ուսուցման արդյունք է. տեսեք՝ տեխնոլոգիական ինչ հմտություն, երաժշտության ինչպիսի ընտրություն... Մնացածը մանկավարժություն է՝ ինչպես ազատության պայմաններում, առանց բռնության ձևավորել ազատ կամքով քաղաքացիներ...

Վահե Մուսայելյան, ողջո՛ւյն:

-Տիար Բլեյան, ինչու՞ եք ձեր աղջկան տնօրեն նշանակել:

-Այդպես է ստացվել. կրթահամալիրի բոլոր աշխատողներին՝ և՛ Հռիփսիմեին, և՛ Սոֆյային, և՛ ընկեր Վարդուհուն, ես եմ աշխատանքի ընդունում... Տաթև Բլեյանի դեպքում այդպես ստացվել է... Ամենաշատը ուզում էր-պնդում էր առաջարկում էր Տաթևի ուսուցիչ՝ տիկին Աիդան, հետո՝ տիկին Մարիետը, ընկեր Սրբուհին, ով հիմա իր Մինա բալիկին է մեծացնում... -Տաթևը, գիտե՞ք, սկզբում ավարտել է Երևանի թատերական ինստիտուտը, հայտնի Երվանդ Ղազանչյանի կուրսը, հետո աշխատել է դերասան, հենց Երվանդ Ղազանչյանի մոտ՝ Երևանի Կոմեդիայի պետական թատրոնում... Եղե՞լ ես այդ թատրոնում... Վահե ջան, Տաթևի դերասան դառնալն իմ սրտով չէր, բայց ես հարգել եմ նրա ընտրությունը բոլոր հարցերում... Հետո Տաթևը կազմակերպիչ աշխատեց Դպրոց-պարտեզում, ինչպես հիմա՝ Սոնա Փափազյանը: Սոնայի՛ն էլ եմ ես ընտրել՝ Տաթևի առաջարկությամբ: Հետո, Տաթևը կապվեց մանկավարժական աշխատանքին, Դպրոց-պարտեզին... սովորեց մեր քոլեջում... Լավ է, որ իմ երեք աղջիկներից մեկը՝ Տաթևը, զբաղվում է մանկավարժությամբ: Հաճույքով փորձում է կազմակերպել 2-11 տարեկանների դպրոցա-պարտեզային կյանքը... Շաբաթներ առաջ Տաթևն ինձ խնդրեց՝ գրավոր ու բանավոր, ազատել աշխատանքից... ես չհամաձայնեցի. այ, այդ օրը արդեն ես Տաթևին վերանշանակեցի Դպրոց-պարտեզի ղեկավար:
Դուք մեծ, հասուն մարդիկ եք: Կարևորը հիմա ձեր կարծիքն է: Վահե Մուսայելյան, քո՛ կարծիքը: Հավանո՞ւմ եք ձեր ղեկավարին, այնպիսի՞ն է, ինչպիսին կուզեիք, փոխո՞ւմ եք նրան, օգնո՞ւմ՝ միասին ձեր ուզած դպրոց-պարտեզը ստեղծելու: Արմինեն՝ Դավթի մայրիկը, շատ է հավանում Տաթևին. լավ, հավատարիմ ընկերներ են: Ահա ինչու, Արմինեն ուզեց Տաթևի կողքին լինել, օգնել Տաթևին, որ Դպրոց-պարտեզում իր հոգսերը թեթև, իր սրտով լինեն... Երկա՛ր պատմեցի, շնորհակալ եմ, Վահե, դո՛ւ առիթը ինձ տվեցիր:

-Տիար Բլեյան, ինչո՞ւ եք այս դպրոցը բացել:

-Այս դպրոցը, հետո էլի դպրոցներ, ես բացել եմ իմ երեխաների, իմ երեխաների երեխաների, քո եղբայր Վլադի, որ կարծես Արաքսյա Հովհաննիսյանի դաարանից է, քո համար... Լավ պարտեզը, լավ դպրոցը, պիտի շատ լինեն, այնքան, որ ոչ մի երեխա զուրկ չմնա... Քանի ես տնօրեն եմ, ամեն երեխա, ընտանիք, ով ազատ-գիտակից կընտրի մեր դպրոցը՝ բարով գա... Ահա ինչու, մեր դպրոցը դպրոց է դպրոցի մեջ, ընդարձակվող...

-Տիար Բլեյան, ինչո՞ւ եք մեզ սիրում:

-Վահե ջան, ինձ հետաքրքիր է ձեզ հետ: Մեծերի աշխարհից, կենցաղից, միօրինակությունից շուտ հոգնում եմ... Դուք գարնան երկնքի պես եք, անմիջական, փոփոխվող: Ինձ զոհացնում է ձեր՝ աշխարհի կառուցմանը մասնակցելը, ձեր կյանքի խնդիրները դպրոցում-պարտեզում լուծելը... Ես միշտ այլ աշխատանքի հնարավորություն եմ ունեցել, հիմա էլ երևի ունեմ: Ես ամեն օր հավեսով եմ գալիս Բանգլադեշ ու անմոռաց տրվում ձեր բերած բազո՛ւմ-բազո՛ւմ հոգսերին...

-Տիար Բլեյան, ինչո՞ւ մեր դպրոցում պահարաններ կան:
-Անհատական պահարաննե՞րը նկատի ունես: Ամեն սովորող ունի կրթահամալիրում իր պաշտպանված անկյունը անձնական իրերի համար, որ ձեռքերը ու մտքերը ազատ լինեն, որ նոթբուքը-թվային միջոցը չխանգարեն արագ մարզանքով-լողով զբաղվելու, խաղալու...
Ողջու՛յն տիար Բլեյան: Շնորհակալություն,որ իմ հարցերին պատասխանեցիք: Իմ հարցերին պատասխաններից ես շատ բաներ իմացա: Իսկ ընկեր Տաթևը ինձ համար ամենալավ տնօրենն է, ես նրան շատ եմ սիրում և ես գիտեմ, որ ինքն էլ ինձ է սիրում: Նա շատ ընկերասեր է, բարի, ուրախ, մեզ հասկացող, և մենք միասին շատ բաներ ենք անում դպրոցի համար: Ես շատ ուրախ եմ, որ սովորում եմ Դպրոց-պարտեզում և ուրախ եմ, որ իմ ուսուցչուհին ընկեր Հռիփսիմեն է: Մայրիկս՝ Ալլան, նույնպես կարդացել է բոլոր երեխաների նամակները: Մայրիկիս շատ-շատ է դուր եկել, թե մենք ինչպես ենք իրար հետ շփվում: Նա նույնպես շատ է ուրախ, որ ես սովորում եմ Դպրոց-պարտեզում: Շնորհակալություն և ցտեսություն:

Վահե Մուսայելյան

Շարունակենք:

-Ինչո՞ւ են մեզ մոտ թխելով բարևում:
- Իմ սիրելի Հրանտ ու Հրաչյա, շատ ուզում եմ, որ սեբաստացիներն իրենց ողջագուրման (բարևի) յուրահատուկ ձևն ունենան... Մեծերից (փողոցից) ընդօրինակվող պաչ-պռոշտը՝ ընդգծված ձեռքսեղմումով, ինձ վանում է, խորշում եմ մի ուրիշ տեսակ... Ափը ափին, միաժամանակ, թե հերթով... Ե՛վ ձեռքսեղմում է, և՛ իրար աչքերի մեջ նայելու, իրար վստահելու հնարավորություն... Դուք պիտի ասեք. ես իմ դիրքն օգտագործել, օգտագործում եմ ողջույնի «թխոց-բարևը» (ես ասում եմ՝ ափը ափին) շրջանառելու համար: Փորձեք նկարել ֆոտոշարք Հռիփսիմեի հետ, խաղացեք-ներկայացրեք, մեր Տոնի այս օրերին կարելի է հանրաքվեի նման մի բան կազմակերպել. Սյուզի Մարգարյան ջան, ես շատ կուզեմ, որ բացի աղոթքից, այլ նշանակություն ևս իմ գիրն ունենա... Չնայած աղոթքից դեն, ու աղոթքից բացի, ի՞նչ է լինում...

-Ինչու՞ մեզ մոտ լողավազան կա:
-2014-15 ուստարում չափելու, գրանցելու ենք բոլոր հինգ տարեկանների և չորրորդ դասարանցիների լողալու կարողությունները՝ որպես ուսումնական... Ցանկացած տարիքի սեբաստացին, հարկ է, որ ոչ միայն լողա, այլև, հարկ եղած պահի որպես փրկարար աշխատի: Ես նորից պատրաստվում եմ մոտիկից զբաղվելու մեր ուսումնական լողավազանով և լողուսուցումով... Ամառային բանգլադեշյան մեր լողափերը, Հրաչ, Վահագն, ընդարձակելու ենք. «Սեբաստիա» մարզադաշտը մինչև 2015-ի հունիսի 1-ը պիտի ունենա իր բացօթյա մոբիլ պատանեկան իսկական բաց լողավազանը... Առնոլդ Բլեյանն այս խնդրի լուծմանը պիտի ներգրավի մեզնից յուրաքանչյուրին. այդպես կառուցվեց նաև ձեր Դպրոց-պարտեզի ծածկած լողավազանը...

-Տիար Բլեյան, ինչո՞ւ մենք չունենք մեզ մոտ Մխիթար Սեբաստացու արձան:
-Վահե և Միքայել ջան, այս օրերին նորամուտ կլինի և՛ Դպրոց-պարտեզում, և՛ Արհեստագործականում, և՛ Նոր դպրոցում, և՛ Հիմնականում... Մխիթար Սեբաստացին իր

իմաստուն-խաղաղ ներկայությունը կունենա մեր բոլոր յոթ ուսումնական շենքերում... Քիչ մնաց, պատրաստվենք...
Ես ասում եմ՝ Լուսինեի, Ասյայի, Վահագնի «Ինչո՞ւ ենք մենք համակարգչով դասերն անում» հարցը ստուգատեսային դարձնենք տոներից հետո. ծրագրերի կենտրոնի և դպրոցների ղեկավարներ, սեբաստացի սովորողներ և ուսուցիչներ, ինչպե՞ս ենք մենք մեր ուսումնական պարապմունքներն անում՝ թվային, անհատական միջոցների գործածմամբ: Ինչպե՞ս է օգնում անհատական համակարգիչը լրացուցիչ կրթության (տնային պարապմունքներն անելիս) ժամանակ. ինչպե՞ս է այն փոխում պարապմունքների դպրոցական կազմակերպումը... Դուք պիտի զգալ տաք դրանց առավելությունները... Ոչ մի արհեստականություն, ոչ մի ցուցամոլություն-ձևականություն, բայց անհատական-խմբային-դասարանական պարապմունքների կազմակերպումը, տանը թե դպրոցում, պիտի ներկայացվի, փոխանցվի, յուրացվի, ինչ չի լուծված, լուծվի, քննարկվի, շտկվի, ինչը խանգարում է, վերացվի: Մենք ունենք մեր կյանքը տանը թե դպրոցում փոխելու բացառիկ շնորհ, չենք կարող մեր ողջ կարողությամբ այս շնորհը չշատացնել...
Հրանտ ջան, *ինչո՞ւ պետք է անպայման տողանին պարենք,* հարցնում ես... Որ պարելով՝ պարել սովորես, ամեն օր քո ընկերների հետ քո դպրոցում 5 րոպե պարես, 5 րոպե երգես, 5 րոպե՝ ամենատարբեր, ընդհանուր վարժություններ անես... Պարող, երգող, միասին ուրախացող դպրոց դառնաք, ձեր պարը, երգը, ձեր ուրախությունը, ձեր գիտելիքները տարածեք Հայաստանով մեկ՝ ձեր հասակակիցներին... Հետո կմեծանաք ու ձեր ընկերների հարսանիքներին, կարևոր օրերին կպարեք, կերգեք, քեֆ կանեք ուրախ...

- *Մենք ինչո՞ւ կավիճով գրատախտակ չունենք,*- հարցնում է Վահագնը Փանոսյան:
-Ինչ են եղել ձեր կավիճով գրատախտակնե՞րը. կարծեմ դրանց փոխարինելու եկան մարկերովները, հիմա՝ էլեկտրոնային գրիչներովը... Մեր հինգ տարեկանները սկսել են մատով գրել ավազե դաշտերի վրա... Կարծում եմ՝ հարմարը ստեղնաշարով գրել-կարդալն է, էկրանին...

- Ինչո՞ւ է մեր դպրոցը կոչվում «Մխիթար Սեբաստացի», – հարցնում է Լուսինե Հակոբյանը:
-Ովքե՞ր են Մխիթար Սեբաստացին ու Մխիթարյանները, որոնք միաբան գործեցին Մխիթարի մահից հետո՝ նշանավոր պահելով-դարձնելով իրենց ուսուցիչ բաբունապետ Մխիթարի անունը... Այս օրերին կրթահամալիրի կայքում կհանդիպենք շատ ու շատ նյութեր՝ Մխիթար Սեբաստացի հայագետ-գիտնականի, նրա ստեղծած միաբան գիտնականների մասին... Անգամ Դավիթ Բլեյանենց խմբում են քննարկել Սեբաստացու ով լինելը: Հետևիր այդ նյութերին, ինքդ էլ ինտերնետից կարող ես դուրս բերել այդպիսի նյութեր՝ քո ծնողի և ուսուցչի աջակցությամբ: Փորձիր: Մխիթար Սեբաստացին իր ժամանակի հերոսն է, ով իր գիտնական ընկերների հետ պահպանեց ու զարգացրեց հայագիտությունը, ով իր ստեղծած միաբանությամբ ոգևորել է ինձ՝ դպրոցներ ստեղծելու, մանկավարժությամբ հայագիտությունը զարգացնելու-տարածելու, մեր կրթահամալիր-միաբանությամբ անխոնջ, նվիրված, համերաշխ զբաղվելու մեր մանկավարժությամբ: Բա՞րդ ստացվեց: Աշոտ Տիգրանյանի այս ուսումնասիրությունն ավելի կխճճի քո գործերը, ոչինչ, կարդա:

Այ, հոկտեմբերի 6-ին մեկնարկող հինգ խաղահրապարակներն ու 2-5 տարեկանների խմբերն են նվերը: Արդեն սկսեցի ոգևորվել ձեր, սեբաստացիներ, ոգևորված, նախաձեռնող մասնակցությունից՝ Գեղարվեստից սկսված, Հիմնականով ավարտված: Իհարկե՛: Խաղահրապարակների հայտարարված մեկնարկը ընդամենը սկիզբ համարեք. դրանց գործիքավորումը, հանդերձավորումը և՛ միտք է պահանջում, և՛ կենդանի մարդու մանկավարժության յուրահատուկ-էժան նյութականացում... Բացօթյա մարզանք-խաղերը պիտի օր առաջ դառնան մեր առօրյան: Լսե՛ք, անպայման անվտանգ, զգուշությունը խելքի հատկանիշ է, ինչպես խիզախությունը: Խիզախ և զգույշ՝ միասին:

Այսպիսի կրթական ակցիաներ, երբ միանգամից կրթահամալիրի մեր Բանգլադեշում մեր հինգ դպրոցներում միաժամանակ աշխուժով են լցվում՝ սկսում են գործել մանկա-պատանեկան պարզ, գրավիչ մարզահրապարակներ, մեր կրթահամալիրի սկեղծման 25-ամյակին ընդառաջ, լավ նշան է: Մեզ, Երևանին, Հայաստանին, բոլորիս փոքր-մեծ այսպիսի կենդանի ներարկումներ են պետք: Ամենաշատը տպավորվել եմ մրջնանոցից, որ տասնյակ ու տասնյակ տարատարիք սեբաստացիներ որպես մրջյուններ կրում էին սպիտակ-կարմիր ավազը, հարթեցնում իրենց հրապարակները, հետո այն վայելքից, որով անջատվում էին աշխարհից, ընկնում իրենց խաղի՝ մեծերի աշխարհից կտրող մանկական աշխույժի մեջ:

Բոլոր ավազե հրապարակները տափակացնենք, գրատախտակ դարձնենք, ու թող մեր հինգ տարեկան հոկտեմբերիկները գրեն (նոր՝ ավազի գրիչներով). հերիք են, էլի, էլեկտրոնային գրիչ, մկնիկ, սենսորային գրիչներ... Ոչ էլ վերադարձ գնդիկավոր գրիչներին. լավագույն գրիչ, նկարիչ, քանդակիչ, ջնջիչները պիտի նախատեսված լինեն սպիտակ, սև ավազի վրա գրելու-նկարելու-ծեփելու համար... Սկսեցի՞նք:

***

Երեկ էլ, ինչպես ամռանը, առտու ժամը 08-ին իմ օրը սկսվեց մարզադաշտում. Հիմնական դպրոցի, Դպրոց-պարտեզի, Նոր դպրոցի, Գեղարվեստի և Մայր դպրոցի ավազե ծածկով մարզահրապարակներում անցնող մեկ օրում նկատելի աշխատանք է կատարված. սահմանափակ մեր նյութական միջոցները պարտադրում են մշտապես գտնել խելամիտ լուծումներ: Սևանից բերված լճի լվացած սպիտակ ավազը լավագույն լուծումն է մեր մարզահրապարակների համար: Հոկտեմբերի 6-ից, մենք սկսում ենք գործածել մեր մարզահրապարակները՝ շարունակելով դրանց բարելավման, ավելի ու ավելի գրավիչ-հարմար դարձնելու գործը, որպես ամենօրյա ուսումնական աշխատանք: Մեր ուսուցիչն ու սովորողը շարունակ պիտի ակտիվ լինեն իրենց շրջապատող նյութական միջավայրի նկատմամբ, փոխեն այն. անշարժ՝ ասել է պատրաստի ստացած, շահագործողի կրավորական (չմիջամտող) վերաբերմունքով: Բնակարաններում-առանձնատներում մեր վերաբերմունքը մեծ չափով այդպիսին չէ՝ ակտիվ է. ինչ-որ բան փոխում ենք շարունակ... Կրթահամալիրն էլ՝ իր դպրոցներով ու միջդպրոցական անցումներով, մեր տունն է. այստեղ ապրում ենք սեբաստացիներով, ոչ թե սպասում, որ ինչ-որ ժամանակ մեկը գա ու հարմարեցնի այն մեր կյանքին:

Այսպես մտքերով, աննկատ դուրս եկա մարզադաշտ: Մի խումբ մարզչի հետ ֆուտբոլ է խաղում, մի այլ խումբ՝ վարժասարքերի վրա է... Ես մոտեցա, իհարկե, աղջիկների մի փոքր խմբի, որ լողափնյա վոլեյբոլի դաշտի ավազներին էր՝ ոտաբոբիկ: Հայտնի բակունցասերս ուզում եմ գտնել այն զգացողությունը, որ ունեցա՝ միանալով այս խմբին: Այնքա՜ն հաճելի էր դաշտում... իսկական դաշտեր... Այնպիսի խաղաղություն էր, որ տղաներն իրենց ֆուտբոլային ճղճղոցով կամ ռազմատեխնիկական թխկադմդմբոցով ազդեցություն չէին ունենում:

- Հավանու՞մ եք մարզադաշտը...
- Շա՜տ: Այսպիսի զգացողություն, տիար Բլեյան, չեմ ունեցել, ոնց որ բնության մեջ լինեմ. չեմ ուզում տուն գնալ...
- Ջուրը պակաս չէ՞... Ավազան լիներ, գետ...
- Պակաս է: Դուք կարող եք, չէ՞... ի՞նչ եք մտածել...
- Գնանք, հրեն՝ Զանգուն մի փողոց այն կողմ է, «Ադմիրալ Իսակովին» զուգահեռ գնում է... թեքենք, թող մեր Զանգուն մեր դաշտերի բնական սահմանը գա դառնա, մի պտույտ անի... էլի գնա՝ Արաքսը թափվի...

- Գուցե լողավազա՞ն բերենք հավաքենք, այ, էն լողափով ու պրծնենք, Զանգվի հունին ձեռք չտանք...
Աղջիկները՝ 7-րդ դասարանցի Դոնան Թովմասյան և 8-րդ դասարանցի Անի Ջանոյանը, նայում են իմ ցույց տված կողմը, որտեղ հարթ, խիճով ընդարձակ դաշտն է...
- Լավ լողափ է... Կլինի, լավ կլինի...

Ե՛վ Դոնան, և՛ Անին, մեծացել են, լավ է, որ ընկերներ են. մեկը՝ Գեղարվեստից, մյուսը՝ Միջինից, որպես առուներ եկել-լցվել են «Մայր»-ի ավազանն ահա... Էլ չխանգարեմ աղջկական մեկուսացմանը, ես իմ չափով համն առա՝ անուշ էր:

Ես տեսա նետաձգության նոր դաշտը... Ի՞նձ եք սպասում, ինչո՞ւ: Մարզամշակութային կենտրոնը, որի կազմում են նաև մարզադաշտերը, նոր Բլեյան պատասխանատու ունի... Կպեք գործի, տեղից շարժեք. ի՜նչ կա այստեղ անելու, արված է: Սևակը, ում ես շատ եմ քննադատում, երբ սովորող-ուսուցիչ նրան բերում, Չարենց է դարձնում, կասեր՝

Թող որ ամեն բան բաց պատկերված չէ,
Սակայն ամե՛ն բան պատկերացված է:

Սիրեք, կարդացե՛ք Սևակից կարևորը, բայց, դե մեկ-երկու, այն էլ՝ ոչ բանաստեղծություն, խրատաբանություն, խոսքակոտրուկներով: Ինչո՞ւ եք այդքան հեշտ «հանճար» բնորոշմանը դիմում: Կարդացեք պարզապես. ես դեռ չեմ հանդիպել մարդու, ով Սևակ ինձնից լավ է կարդացել, ամբողջական գիտի Սևակի գործը՝ «Մարդը ափի մեջ»-ից մինչև «Ականջդ բեր, ասեմ», հոդվածներով, նամակներով... Բանագետ Հովիկ Չարխչյանին հանած...

Ու ես շարժվում եմ մեր դաշտի Բաբաջանյան պողոտայի երկայնքով, վերգետնյա անցումով դեպի Բ-4-ի դաշտեր... Հոկտեմբերի 14-ի հեծանվուղու նորամուտը չի փոխվելու...

***

Էրեբունի-Երևան տոնակատարությունը չի կարող ձևական-արհեստական անցնել, չդառնալ ուսումնական աշխատանք՝ սրա լավագույն, մեր կողմից վերջին երկու տարում զարգացվող ուսումնական նախագծերի տեսքով... Հայտարարում եմ ուսումնական նոր նախագծի մեկնարկի մասին՝ «Երևանյան բլուրներ. Երևանը բլուրների վրայից». մի քանի նախագծեր ես ներկայացրի «Սեբաստացի TV»-ին, Սուսան Մարկոսյանին, Նառա Նիկողոսյանին և Սուսան Ամուջանյանի «կինոֆոտո» ակումբին՝ «Մեդիա» կենտրոնում, Գեղարվեստի ավագ դպրոցի կինոֆոտո դասընթացի պարապմունքին... Մեկնաբանեցի, պատասխանեցի հարցերին, ոգևորեցի...

Ես խոստացել էի ու հրապարակում եմ նոր ուսումնական նախագիծ. «**Արարատին, Արագածին նայող դիտակներ**»... Սկսենք կրթահամալիրի մեր Բանգլադեշից: Հիմա դուք իմացաք ճշմարտությունը Գեղարվեստի դպրոցի տանիքի մասին. դպրոցն ունի Արարատին նայող ընդարձակ, հանրային (բաց) դիտարան... Պիտի մտածել հատուկ սարքերի՝ դիտակների, հեռադիտակների մասին... Պատկերացրի՞ք՝ ինչ ազնիվ շարժում է սկսվում քաղաքում... Գնանք Գեղարվեստի դիտարան, Արարատի հետ լինենք...

Հիմա դուք գիտեք՝ ինչու է քանդվում Դպրոց-պարտեզի մետաղե ցանկապատը. դիտարանի ճանապարհն ենք բացում... Մեր տանն էլ կար մի անկյուն, միակը, որ կարող էր լավ-վատ դիտարան ծառայել Արարատի համար՝ իմ աշխատանքային անկյունը... Դրա համար, տեսեք, քանի՛ պատ, դուռ ու լուսամուտ քանդվեց... Չնայած մեր շենքի տանիքին ի՞նչ է եղել, որ...

Այդպես էլ, ոչ այս տարի, երևի, կսկսվի Դպրոց-պարտեզի և մեր բնակելի շենքի հանրային դիտարանի կառուցումը...

Իսկ Մայր դպրոցի դիտարանի գործն էլ թող Առնոլդ Բլեյանը մտածի. ի՞նչ մարզամշակութային կենտրոն, ի՞նչ Մայր դպրոց (Առնոլդը սիրում է կարճել. «ես մայրում եմ»)՝ առանց հանրային դիտարանի... Տեսեք՝ ո՛նց կհարստանա, յուրահատուկ կդառնա իմ օրագրում հայտարարած ֆոտոպատում-ստուգատեսը՝ «Հայացք Արարատին, Արագածին իմ դիտարանից» ձեր ֆոտոշարքերով:

Քնարիկ Ներսիսյան ջա՛ն, մենք մի քանի անգամ նախաձեռնեցինք բազմաձև տիկնիկային թատրոն... ու ի՞նչ եղավ: Վերադառնանք նորից. հիմա, երբ ստեղծվել ու հաջողությամբ գործում է կրթահամալիրում Լևոն Աբրահամյանի անիմացիայի լաբորատորիան...

***

Զայրույթը չի զարդարում. տանում է: Զայրույթը մսխում է: Ոչ մի արդարացում: Երեկ ես զայրացա և չմասնակցեցի կրթահամալիրի Գեղարվեստի ավագ դպրոցի ցուցասրահում սպասված ցուցադրության բացմանը: Հետո մտա Գեղարվեստ. այնքա՛ն լուռ էր, ես միայնակ անցա ցուցասրահով, մեկիկ-մեկիկ կանգնեցի մեր 10-12-րդ դասարանցիների աշխատանքների առաջ... Միայնակ, անշտապ քո սաների աշխատանքներով զմայլվելն էլ ուրիշ հաճույք է. սա ասում եմ ոչ իբրև արդարացում, կրկնում եմ՝ ոչ մի արդարացում, ես անընդհատ մեղավոր եմ զգում, անհարմար, որ չեմ մասնակցել այսպիսի կրթամշակութային իրադարձության, հատկապես, որ Սամ Գրիգորյանին «Դալանում» բացված իր

անհատական ցուցահանդեսի դիտման ժամանակ խոստացել էի: Խոստումները քաղաքով մեկ շաղ տալու համար չեն, այլ՝ կատարելու: Սամ Գրիգորյանը, որ 1992թ.-ից ապրում և աշխատում է Բեռլինում, 1995թ.-ից ակտիվ մասնակցություն է ունեցել բազմաթիվ միջազգային ցուցահանդեսների Գերմանիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Ավստրալիայում և այլ երկրներում, Գերմանիայից ժամանած արդեն երկրորդ արվեստագետն է այս տարի, որ Գյոթեի անվան ինստիտուտի «Brain Map» ծրագրով վարպետության դաս է անցկացրել «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Գեղարվեստի ավագ դպրոցի սաների հետ: Գագիկ Բաբայանի վարպետության դասի մասին իմ բլոգում պատմել եմ, հիշում եք: Սամ Գրիգորյանի առաջարկած դեկոլաժ տեխնիկայի միջոցով սովորողները մեծ ոգևորությամբ հասան այն արդյունքին, որ ցուցադրվեց ցուցահանդեսում:

Կրթահամալիրը չի կարող չլինել համերաշխ, գնահատող միջավայր յուրաքանչյուրի համար: Գյոթեի խոսքն է կարծեմ՝ գնահատել նշանակում է ստեղծել: Սեմինար-պարապմունքի՝ մի վարպետության դասի կարիք էլ կա. այս անգամ, երևի, միջին ու բարձր դասարանների դասավանդողների համար: Տեսեք, ուսումնական տարվա ընթացքում, ավանդաբար, ուսումնական օրացույցով նախատեսված ստեղծագործական հավաքների, ճամբարների, ստուգատեսների օրերին հաճախ են կազմակերպվում «վարպետության դասեր» անվանումով պարապմունքներ: Գեղարվեստի ավագ դպրոցում արվեստաբան Եվա Խաչատրյանի համադրմամբ Գյոթեի ինստիտուտը ցուցադրում է նկարիչ-արվեստագետի վարպետության դասի այլ, մեզ անծանոթ կազմակերպում (եռօրյա, օրական 3-4 ժամվա աշխատանքի արդյունքը՝ ցուցադրություն): Երեկ, երբ Նառա Նիկողոսյանի, Սուսան Մարկոսյանի հետ պատրաստվում էինք կրթահամալիրի մանկավարժական աշխատողների այսօրվա (ամեն շաբաթ, չորեքշաբթի օրը կրթահամալիրում մանկավարժական աշխատողների դպրոց է) միասնական սեմինար-պարապմունքին, քննարկում էինք «Սեբաստացու օրեր. կրթահամալիրի տոն»-ի շրջանակում 2014-ի նոյեմբերի 10-12-ին Ավագ դպրոցում «Մխիթար Սեբաստացի միաբանություն» վարպետության այսպիսի դասի կազմակերպման օգտակարությունը... Քննարկումը՝ սրտից, մտքից եկող, կպավ, չէր կարող ոգևորություն առաջ չբերել:

Շախմատը, որպես հանրակրթական դասընթաց, առաջինը Հայաստանում մեր հեղինակային մանկավարժությամբ կարևորվեց, 1988-ից դարձավ հանրակրթության բաղկացուցիչ... Շախմատի դպրոց ենք ստեղծել՝ հայտնի ու լեցուն մանուկներով, նվիրյալ մասնագետ-ուսուցիչներով... Ի դեպ, կրթահամալիրի շախմատի այսօրվա ակումբի ղեկավարը, շախմատի մեր մասնագետ ուսուցիչ Առնոլդ Միքայելյանը, ով ամեն օր ավելի ու ավելի հայտնի, սիրված, կարևոր անձ է դառնում կրթահամալիրի ու Բանգլադեշի տարածաշրջանում, հենց մեր շախմատի դպրոցի սան է, Թևան Դավթյանի աշակերտը... Թևանի հեղինակած «Սովորենք շախմատ խաղալ» չորս գրքույկները, որ ստեղծվեցին կրթահամալիրում, տպվեցին, ձևավորվեցին կրթահամալիրի «Շաղիկ» հրատարակչությունում, այսօր էլ շախմատասերների փնտրած ձեռնարկներից են, շախմատի ծրագրով, մեթոդականով, սիրով-խնամքով արված հանրակրթական փաթեթ. այսօր էլ մենք նվիրում ենք աջ ու ձախ. սովորեք ու տարածեք... Անդրանիկ Քեհյանին, Մուշեղ Մինասյանին, Սամվել Միսակյանին, Ռոբերտ Հովսեփյանին՝ Թևանի ընկերներին ու հետևորդներին, բոլորին սիրով ողջունում եմ.

լավ է, որ նրանք Երևանով մեկ զբաղված են շախմատով՝ իրենց շուրջ ստեղծելով մտածումի ու խոհի կենտրոններ… Կրթահամալիրի 1-3-րդ դասարաններում իրականացվող «Իմացումի հրճվանք» կրթական ծրագիրն ունի շախմատը, որպես բաղկացուցիչ, դասարանում կրթական ծրագրի կազմակերպիչ-դասվարը, որպես ինտեգրված դասընթացի անբաժանելի մաս, վարում է շախմատի պարապմունքներ, ինչպես մաթեմատիկան, հայերենը, տեխնոլոգիան, բնագիտությունը (ես և շրջակա աշխարհը)՝ ունենալով Առնոլդ Միքայելյանի նման մասնագետ-նվիրյալի մշտական աջակցությունը… Իսկ այսպիսի, տեսեք՝ ինչ պարարտ հող է անհատի լրացուցիչ կրթության, շախմատային հետաքրքրությունների դրսևորման համար. տեսեք՝ ինչ արագ, կրթահամալիրի չորս կրտսեր դպրոցներում, Մեդիա կենտրոնում միավորներ են դառնում՝ շարժվելով ձիու քայլերով, շախմատային ակումբներն ու խմբերը, տեսեք, ի՜նչ տպավորիչ բաց հանրակրթական մրցաշար՝ 1-3-րդ դասարանցիների համար, այսօր, ժամը 10.00-13.00, Մեդիա կենտրոնում, շախմատի ակումբների կենտրոնում վայելք են, իհարկե, մրցաշարի եզրափակիչ ակորդները: Առնոլդի մրցաշարը շարունակություն կունենա, որպես դասվար-մարզիչների անդրանիկ, բայց ամենամյա առաջնություն, հետո կմրցեն շախմատի հանրակրթական հնարավորությունները սրանով խրախուսող 1-3-րդ դասարանցիների ծնողները… Սա է ուղիղ ճանապարհը, որը շախմատը կունենա որպես գործիք-միջոց՝ ուսումնական բազում գործիք-միջոցներից մեկը, իսկ նպատակը երեխան է, սովորողը, նրա մտածողությունն ու զարգացումը, նրա տաղանդի դրսևորումը… Հաջողություն ցանկանալով Երևանում այս օրերին միջազգային կոնֆերանսի աշխատանքներին՝ մեր «Դպիրը» զուգահեռ կլոր սեղանի ձևով կներկայացնի մեր հեղինակած այլընտրանքը:

***

Հիմա, երբ աչքս mskh-ից չեմ կարողանում կտրել, այս աշնանապատումից, տեսեք՝ 100-ի չափ սեբաստացիներ Տավուշ-Լոռիում, Զանգեզուրում (վաղը Վահրամ Թոքմաջյանի արշավախումբը կմեկնի), Արցախում իրոք ուսումնական են դարձնում միշտ պայծառ հայաստանյան աշունը, ես, հուզվելու աստիճան, կարոտում եմ բոլորիդ՝ իմ սեբաստացի ուսուցիչ-ընկերներ. մենք սովորական Հայաստանցիների համար քսանհինգ տարի ստեղծում ենք, այո, տպավորիչ-շոշափելի հաջողությամբ, ցավոք, ոչ սովորական մանկավարժություն, նոր կրթական աշխարհ, նոր Հայաստան… Մենք շատ ջանք ենք թափել, և տեսեք, հաջողում ենք, որ Բանգլադեշի պատանիներն այսպես անպաճույճ, հայտնագործողի նման մտնեն Ստեփանակերտի իրենց հասակակցի տուն ու միասին հայտնագործեն հայկական աշխարհը, միասին պաշտպանեն ոչ միայն զենքով, այլև նոր կյանքով… Ես ուզեցել եմ, որ նրանք շիտակ, մարդավարի-գործընկերային կապեր հաստատեն Արցախում, Հայաստանով մեկ, իրենց ավագ սերնդի նման հաճախ կեղծ-պաթետիկ-անպատասխանատու չլինեն…

Իսկ mskh-ում այս մի ֆոտոշարքի համար, որ կոչվում է «Դետալիզացիա», ես ծափահարում եմ կինոֆոտո ակումբի հիմնադիր ղեկավար Սուսան Ամուջանյանին ու սեբաստացի սաներ Արեգին ու Բագրատին՝ կեցցեք. այսպիսին է, այո, այս ուսումնական «Զանգու» նախագծի իմաստը՝ դետալ-դետալ ներկայացնել, դետալ-դետալ ամբողջացնել Զանգուն՝ իր զարմանալի կիրճով ու այսպես, ձեր «գտած դետալներով, որպես լեգո» հավաքել ու ամբողջական վերադարձնել, տիրել վերջապես քանի՜ սերունդ կորսված Զանգուն…

Սա հայրենիքի պեղում է ու հայտնաբերում, իշխում: Իշխեք, սեբաստացիներ, եթե ոչ դուք, ապա էլ ո՞վ...

Թող կենտրոն գա անհատը

Մարդիկ հակված են իրենց ստացած կրթությունը, սրանով՝ իրենց դպրոցը, իրենց ուսուցիչներին, իրենց գրքերը, իրենց ժամանակը, իրենց «սովետը» բացառիկացնելու: Ես այդ ախտով վարակված չեմ եղել երբեք, թեև իմ բլոգապատումից երևում է, ունեցել եմ լիարժեք մանկություն, պատանեկություն, երիտասարդություն: Արդար լինելու համար վստահաբար ասում եմ, որ Վահան Տերյանի անվան թիվ 60 դպրոցը, որտեղ սովորել եմ հավեսով 1962-72թթ, քաղաքի լավ համարում ունեցող դպրոցների շարքում էր:

«Բա որ խորհրդային կրթությունից բողոքում ես,- հարցնում են,- որտեղի՞ց քո գիտելիքները»: Ա՜յ, այստեղ է արատը, և այստե՛ղ է կրթության նորացման, հեղաշրջման ակունքը:

Ինչպե՞ս է մարդը, սերունդը, հասարակությունը նոր գիտելիք ստանում: Նախ և առաջ՝ ինքնուսուցմամբ: Լավ ուսուցիչներ եղել են ու կլինեն, թող շատ լինեն, բայց վտանգավոր է, որ հայաստանյան հասարակությունը, նրա դպրոցը, նրա ուսուցիչը, մասնագիտական հաստատությունը, նրա դասավանդողը շարունակում են անտեսել ինքնուսուցման գործոնը, մեր կյանքի վերափոխման բոլոր ոլորտներում: Մարիա Մոնթեսորիի «Ինքնուսուցումը և ինքնադաստիարակությունը կրտսեր դպրոցում» աշխատության վերնագիրը կարող է լինել մեր հեղինակային մանկավարժության անվանումը. նույնը՝ միջին դպրոցում, նույնը՝ կրտսեր դպրոցում, եթե իհարկե մենք կարողանանք գործել կոնկրետ ու փոքր քայլերով: Ավելին ասեմ, լավ դպրոցը վատ դպրոցից, լավ ուսուցչին վատ ուսուցչից կարելի է զանազանել այդ ինքնուսուցման, ինքնադաստիարակության նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Իմ ասածը ամբողջությամբ վերաբերում է նաև նախադպրոցական զարգացմանը, նախակրթարան կամ մանկապարտեզ կոչվող հաստատությանը: Ուրիշ ինչպե՞ս շրջանցես մեր խորհրդային անցյալի՝ իր մսուր-մանկապարտեզի, տասնամյա դպրոցի, հնգամյա բուհի, իր՝ խորհրդային իներցիայով ու մեր մտավոր, հոգևոր ծուլությամբ պարտադրված ներկայի փակուղին: Ինչպե՞ս օգտագործես յուրաքանչյուրիս մտավոր ու հոգևոր ներուժը, ուղղորդված ահա՝ այսպիսի մանկավարժական տրակտատներով:

Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում ես մանկավարժական որևէ դասընթաց չեմ անցել: Հետագայում ևս, ես մանկավարժություն յուրացրել եմ ինքնուսուցման միջոցով: Թիվ 183-րդ դպրոց, վստահ կարող եմ ասել, 1985-ին եկա իմ հայտնի մանկավարժական գրադարանով՝ Ղազարոս Աղայան, Ջոն Դյուի, Ջանի Ռոդարի, Մարիա Մոնթեսորի, Սելեստան Ֆրենե, Ջեյմս Փոյա... 1978-85թթ ես ագահ-անհագ էի մանկավարժական ինքնակրթության մեջ և առանձնացրել, կոնսպեկտավորել էի իմ՝ ձեր հայտնի մանկավարժների, ինձ հայտնի՝ հայերենով, ռուսերենով առկա աշխատությունները... Հետո, շնորհիվ իմ 1985-89թթ ինքնակրթության ավելացան նոր աշխատություններ՝ գլխավորապես նշված հեղինակների:

Ես մանկավարժական ճաշակս, ինչպես տեսնում եք, չեմ փոխել: Այդպես և գրականության, երաժշտության, ճարտարապետության մեջ: Լավ է քիչ, բայց լավ: Խորանալ է պետք: Յուրաքանչյուրս վարձատրվում ենք խորասուզման վրա ծախսած ջանքերի համար,

հայտնագործություններով ու ձևավորվող համոզմունքներով, առանց որի ի՞նչ հետազատող ու հետազոտական աշխատանք: «Դպիր» ամսագիրն ավելի ուշ եղավ՝ իր տպագիր (1992-97) և էլեկտրոնային փուլերով (2006-ից), հետո եկան կրթահամալիրի գրադարանը, իմ գործընկերների բլոգները... տիար Գևորգ Հակոբյանի ու Սուսան Մարկոսյանի նման մշտական ընթերցողների օրինակն ու աջակցությունը...

Ես հիմա տեքստեր եմ կարդում՝ սեբաստացիների հոդվածների, թե նրանց հրամցրած թարգմանությունների տեսքով: Ու տեսեք՝ դժվարությամբ, բայց հիմնավոր վերադարձել եմ Մարիա Մոնթեսորիի կոթողային այս աշխատության ընթերցմանը: Շատ եմ ուզում՝ միասին կարդանք: Այս անգամ ես ընտրեցի «Երեխայի իրավունքները xx դարում» գլուխը: Ընթերցանությունը որպես մտավոր ամենալուրջ աշխատանք չի կարող անհատականության դրոշմը չունենալ: Ինչպե՞ս եք դուք այն ընթերցելու, վերընթերցելու՝ ձեր իրավունքն է և ձեր ռեժիմը՝ իր կիրակիով: Մի բանում ես համոզված եմ: Պիտի կարդաք այս կոթողային նշանակության ախատությունը, եթե գործընկեր եք: Շնորհակալություն մեր «Դպիր»-ին, մեր ինքնուսուցումը այսպիսով կազմակերպելու համար:

Ահա ինչպիսի գործուն-սոցիալական-կրթական-մշակութային բաց համակարգ է մեր mskh.am-ը, հեղինակային կրթական ծրագրի մշակման, իրագործման և տարածման՝ բազմալազու, անխոչընդոտ... Ազատ հանրային տարածք՝ մանկավարժական գործունեությամբ զբաղվողի համար՝ տարատարիք սովորողի, դասվար-դաստիարակի, բոլոր բնագավառների ուսուցչի, ծնողի... Խնդրեմ, մեր 8-րդ դասարանցի Արեգ Գալոյանը կարգին միջամտել է հանրակրթության չափորոշչին՝ 10 թվարկումներով, թե ինչ պիտի կարողանա մինչև 10 տարեկան երեխան: Հիմնական դպրոցի 2-րդ դասարանը, դասվար Թամար Մարիմյանը, տեսեք, ինչ ուսումնական միջամտություն-մխրճում է իրականացրել թաղի կյանք. իսկական բնապահպանական ակցիա... Այ, եթե այս նախագծի մշակում-իրականացում, արդյունքների ամփոփումն էլ հոդված դառնա, «Դպիրում» կարդանք...

***

Կրթության մեջ, հանրակրթական դպրոց՝ որպես աշխատանք, ես մտա ազգային դպրոց ստեղծելու որոշումով՝ «սովետում», նրա ծաղկուն շրջանում ազգային դպրոց... Այս դպրոցը, Բլեյանի դպրոցը, ստեղծողի մոբիլ դպրոցը, որ այսօր ունենք, ես հավանում եմ. մենք ուղիղ ճանապարհի վրա ենք, իմ համոզմամբ, զբաղված մանկավարժությամբ, որտեղ գլխավորը դիտարկող-հետազոտող անձն է, ու հարկ է, որ գոհ լինենք ունեցածով, օրվա հոգսով զբաղվելու համար:

Երեկ ես մասնակցել եմ երկու հեռուստահաղորդման, մեկ հարցազրույց եմ տվել, երկու պաշտոնական ընդունելություն եմ պատվել իմ համեստ ներկայությամբ, վայելել եմ մեկ հանդիսության՝ սեբաստացիկ-սեպտեմբերիկ հինգ տարեկանների ամենամյա հավաք-ստուգատես-խաղը: Ազգային կրթություն կոչվածը, այո՛, այսպես է կենդանի-աշխույժ, ծիսական-ակամա-ինքնաբուխ (սպոնտան) իրականություն դառնում, այսպիսի խաղերի միջոցով... Ղազարոս Աղայանն իր մանկավարժությունը զարմանալիորեն, ոչ միայն հայոց մեջ առաջինը, այլև 19-րդ դարում առաջինը (ես գոնե չեմ ճանաչում, ցույց տվեք) կարևորեց խաղերգերի, խաղ-պարերի, խաղ-խոսքերի, խաղ-ներկայացումների նշանակությունը և թողեց

ինչպիսի՜ անգերազանցելի մշակում-օրինակներ... Ուրախացնում են տիկին Աիդան (կրթահամալիրում նախադպրոցական կրթական ծրագրի ղեկավար) ու ընկեր դաստիարակ-օգնականները, ո՜ւխ, ոնց են առաջադիմում՝ խաղալով- հավեսով զարգացման ծրագրում... Եվ նրանց հավաքանի-մեծ խաղը, նրա նախապատրաստության շրջանը, նախակրթարանում 2-5 տարեկանների գործունեությունն ավելի ու ավելի լավ է ներկայանում մեդիայում, ավելի բաց ու մատչելի:

Կրթահամալիրից, նրա Բանգլադեշից դուրս իմ գտնվելը, ուզում է դա լինի TV հաղորդում, հավաք-հանդիպման հրավեր, իմ աշխատանքն է. ես գործում եմ, տարածում եմ կրթական-հասարակական հայացքները, մեկնաբանում, շրջանառության մեջ դնում իմ-մեր-ձեր նախաձեռնությունները: Ինքնուրույն լինելը, հեղինակային լինելը ոչ միայն չի թույլատրում մեկուսացում, այլև պարտադրում է գործընկերային մշտական վիճակ. հակառակ դեպքում մենք կմնանք մեր հռչակումների, բանաձևերի, ցանկությունների ծիրում, չենք իրացվի-իրականացվի: Ափսոս ենք: Մեր բոլորիս կյանքի ժամանակը հաշված է, իսկ 60 տարեկան ամեն օր համառորեն դարձող Տիարի[1] համար՝ հատկապես: Ամենաղժվարն ինձ համար, հարգելի գործընկերներ, սիրելի սեբաստացիներ՝ բոլոր տարիքի, որտեղ» էլ որ լինեք, տարիներ արածի կիսատ-պռատությունն է, որ անգամ մեկ օր, ևս մեկ հետաձգելը-հանդուրժելը անտանելի է, տանելի չէ այլևս: Աշխատանքը, այո՝ ստեղծական և մոբիլ, իհարկե, բայց և... բարեխիղճ: Ահա և երրորդության մեր այս շրջանի խորհուրդը. կարծեմ փնտրում էիք:

Երեկոյան Մեդիա կենտրոնից քայլում ենք Գեղարվեստ՝ դաստիարակի հնարավոր տեղափոխման առիթով, ծնողների նախաձեռնությամբ՝ հավաք է 2-4 տարեկանների խմբում: Դավիթն էլ երեխաների հետ խաղալուց գերադասում է ինձ հետ ժողովին մասնակցելը: Իր ազատ ընտրությունն է: Կարող է, իրեն ավելի հետաքրքիր է, կարող է՝ ուզում է ինձ հետ լինել: Ես համբերատար հարգում, ապահովում եմ իր ընտրության իրավունքը. իր կյանքն է: Ինչո՞ւ իմ ուզածով պիտի լինի. ինչո՞ւ շտապել...

Ծնողները խոսում են իրենց դաստիարակի տեղափոխման անթույլատրելիությունից... Ես, իհարկե, հարգանքով լսում եմ, բայց ուզում եմ, որ իրենք էլ հարգանքով լսեն մեր փաստարկները... Չեմ ուզում՝ հակառակվող կողմեր լինենք. հումորն օգնում է...

Ես այժմ ավելի, քան երբեք քննարկման կողմնակից եմ, երբ բոլոր հնարավոր մասնակիցները փաստացի օգտվում են արտահայտվելու հնարավորությունից: Կասեն՝ «մեկ ա ձեր ասելով է լինելու»... Ուզում եք ասել կամ ճիշտ է ասել՝ մեկ է, կայացված որոշումն իմ հրամանով է գործադրվում... Այո, ես գործատուն եմ, չի կարող ձևակերպումն իրավական չլինել, բայց այս դեպքում էլ որոշումը նախօրոք ինձ հայտնի չէր... Երեք-չորս շրջանով քննարկում եղավ, որքա՜ն խոցելի առաջարկներ ի դերև ելան: Լավագույնս օգտվեք կրթահամալիրում հաստատված կլոր սեղանից. նախ՝ ուշադիր լսեք, հասկացեք՝ ինչ է կատարվում: Հետո՝ մեկ նախադասությամբ, մեկ մտքով, եթե արձագանքե՜ք...

Մարդկային՝ սեբաստացի սովորողի, աշխատողի, ծնողի գործոնը կարևորելու, գործողություն դարձնելու շրջան ենք թևակոխել: Վճռական եմ ես տրամադրված. քո կրթահամալիրն է, քո ընտրած, քո յուրացրած մանկավարժությունը, քո կյանքը կրթահամալիրում՝ գործիր:

Տարիներ առաջ, շախմատային մրցաշարի ծրագիրը կրթահամալիրի տնօրենի հրամանով կհաստատվեր... հանդիսավոր, որպես թիվ մեկ կարևորության իրադարձություն կդառնար... Հիմա տեսեք, մեր շախմատի մասնագետ, ակումբի ղեկավար Առնոլդ Միքայելյանն անցկացնում է մրցաշար, իր բլոգում էլ լուսաբանել է. կդիմի մրցանակների համար՝ խնդրեմ. կառաջարկի ու կանցկացնի նոր, ուսուցիչների մրցաշար՝ կունենա առավելագույն աջակցություն... Ինքն է գործիչը, իր գործն է անում իր աշխատավայր կրթահամալիրում... Այդ չէ՞ր ուզում Առնոլդը, երբ մի տարի առաջ եկավ կրթահամալիր...

Կամ Դպրոց պարտեզում այսօրվա հեծանվուղու բացումը... Ո՞ւմ գործն է. Տաթևի ու իր ընկերների. ես իմը իմ աշխատակազմով արել եմ, կանեմ: Բայց դպրոց եք, չէ՞, գործեք: Իմ վերաբերմունքն աշխարհին է հայտնի՝ բոլոր տարիքի սեբաստացիներն ամեն տեսակի անիվների վրա... Հա, չմոռանաք կանչել մեր լավ բարեկամ, հայտնի հեծանվորդ-չմշկորդ Լևոն Աբգարյանին:

Բայց սա հենց այն հարցն է, որին նվիրված է իմ օրապատումը՝ մարդկային գործոնը (սովորողի, ուսուցչի, ծնողի, կրթահամալիրի բարեկամի) կրթահամալիրի զարգացման այս փուլում. թող գա կենտրոն անհատը, աջակցենք անհատին՝ ցուցադրի իր ունեցածը, կարողություններով հանդես գա, դրսևորվի: Ինչ չկա՝ չկա: Դե, չկա: Մենք ստեղծում ենք աջակցող միջավայր՝ անհատի մեջ եղած բանի դրսևորման համար:

***

Մենք ընկերնե՞ր ենք, հարցնում եմ՝ ես, Դավիթ Բլեյանը, Կարինե Խառատյանը, Նոր դպրոցի 5 տարեկան Դավիթն ու Նելլին, Աշխեն Թադևոսյանն ու իր 5 տարեկանները, տիկին Աիդան ու 5 տարեկանսեպտեմբերիկները, Սուսան Ամուջանյանն ու Գեղարվեստի կրտսեր դպրոցի Ռոզա Խաչատրյանը, Լիլիթը Մեղրյանն ու քոլեջի սեբաստացիկները… Գրիգոր Խաչատրյանը…

Մերը ընկերավարության մի տեսակ է. հավասարություն՝ անպայման, համերաշխություն՝ իհարկե, փոխօգնություն՝ անշուշտ, փոխվստահություն՝ առանց դրա ո՞նց... «Ստեղծական ու մոբիլն» էլ այս ամենի բրենդային (ապրանքային) ցուցանակն է 2014-2015 ուսումնական հոբելյանական տարում:

Ընկերները, ինչպես գիտեք, վիճում են. էլ ո՞ւմ հետ իմաստ ունի վիճելը, եթե ոչ քո ընկերոջ: Նեղանում են, խռովում են ընկերներով...

Մի քանի օր առաջ ես Ռոզա Խաչատրյանից (Գեղարվեստի կրտսեր դպրոցի սովորող) ու իր մայրիկից նեղացել էի: Իմ ընկեր Արմինե Թոփչյանի պատմածից հասկացել էի, թե իմ ընկեր Ռոզան ու իր մայրիկը գործերն առել ու գնացել են... չգիտեմ՝ ինչի ետևից (իներցիայով ասում են՝ սովորելու) թիվ 181 դպրոց... Երեկ ես Ռոզային եմ հանդիպում Գեղարվեստի աստիճանների մոտ ու համարյա բարև չեմ տալիս... Հետո, Արմինեից պարզում եմ եղելությունը. չէ, շփոթել եմ... Պայծառանում եմ... Կորած ընկերոջ պատմություն է, ինչպես Կտակարանում. նրան գտնողի ուրախությունն աննկարագրելի է: Վա՜յ, էս ի՜նչ լավ օր

ստացվեց, աշխարհ, կորցրել էի 8 տարեկան Ռոզա ընկերոջս ու գտա: Եվ քանի՜ անգամ զմայլանքով նայում եմ իմ ընկեր Ռոզայի 1-ին ֆոտոշարը mskh-ում:

Սուսան Ամուջանյանը հիացնում է, ու այն հաճույքը, որ ստանում է 4-րդ դասարանցու կամ 5-րդ դասարանցու հետ ֆոտոապարատով թափառելուց... թեթև, ուրախ, չըրխկ հա չըրխկ, թե չէ մեր Միջին դպրոցի 9-րդ դասարանն ավարտած Գրիգորյան Միխայելի կամ Բլեյան Հայկի նման... Մեկ էլ վերցրին ու գնացին չգիտեմ ինչ անունով ակադեմիա... Պահ-պա՛հ, զարմացրիք ձեր ակադեմիաներով. գիտեինք, թե ինը տարում չտեսություն եք հաղթահարել էս աշխարհի կենտրոն՝ մեր կրթահամալիրի Բանգլադեշում... Ի՜նչ են կորցնում մարդիկ ու ինչ են ման գալիս...

Սիրելի, հարգելի սեբաստացիներ, բոլոր տարիքի, որտեղ էլ որ լինեք, մեր տոնից առաջ, մեր տոնին ընդառաջ, ուզում եմ երեք անաղմուկ, բայց կարևոր հայտարարություն անել, չնեղանաք, խնդրում եմ:

Մեկ՝ որ շարունակում ենք մանկավարժությամբ զբաղվել և, խոստովանեմ, այս փաստն ինձ գլխավոր ոգևորողն է ու իմ կյանքին իմաստ հաղորդողը: Երբեք այսքան հմուտ, հաճախ, կոնկրետ, հետևողական չենք զբաղվել մանկավարժական գործով (արվեստով, գիտությամբ) որքան հիմա: Այ, ես Նոր դպրոցի դիտարանից հետևում էի Անահիտ Հարությունյանի, Աշխեն Գրիգորյանի 2-րդ դասարանցիների, նրանց ծնողների մի խմբի, երկարօրյայի կազմակերպիչ-բնասեր Շուշան Ալեքսանյանի ուսումնական ճամփորդությանը դեպի Ջրվեժի արգելոց: Ահա այսպիսի գործողություններով, երբ գործիքներն ընտրում, գործածում, դրանց արդյունքներն իր բլոգում և «Դպիրում» ներկայացնում է հեղինակը (խումբը), ես սա եմ համարում կոնկրետ հետևողական մանկավարժությամբ զբաղվել... Օրեր առաջ Մեդիաուրբաթի պարապմունքին ես քարացել, զարմացել էի դասվար-դաստիարակ-օգնականների, Մարինե Մկրտչյանի «Շրխկան» համույթի ելույթի ժամանակ... Կրթական ծրագիրը դասվար-դաստիարակը խաղում է, որպես համերգ, Մարմարյա սրահում՝ գունեղ ներկայացնում, որպես ուսումնական մեթոդական աշխատանք, որպես իր հեղինակային մանկավարժության բաց, մատչելի փոխանցում... Ես այսպիսի օրինակներ կարող եմ բերել... Երեկ, հեծանվաուղու բացման առիթով, ես ականատես եղա, թե ինչպես է Դպրոց-պարտեզի 2-րդ դասարանցիների խումբը պատրաստ մոտենում ընդարձակ բակի իրենց գրավիչ անտառային հատվածին (հաճույքով անվանեցինք Բ-4-ի Դենդրոպարկ)՝ բացօթյա նկարչական-տեխնոլոգիական պարապմունքի...

Երկու՝ երբ խոսում ենք միջազգային կրթական ծրագրերի մասին (ուշադիր, ես շեշտում եմ), այս ինտերնետի ու լեզվական հաղորդակցության մատչելիության շրջանում հանրակրթական ծրագրերին պիտի ծանոթ լինել, ամոթ է, երեխան մեկ է, ու մանկավարժության, կրթության գործի համար ի՞նչ աշխարհագրական սահմանափակումներ... Երբեք. կրթությամբ, հանրակրթությամբ նաև պիտի խորտակենք միջազգային հաղորդակցության խոչընդոտներ-անջրպետները և զցենք, բանուկ դարձնենք կամուրջները: Իհարկե: Բայց հանրակրթությամբ նաև ավանդույթ, մշակույթ, լեզու, գրականություն, առանձնահատկություն, հայրենագիտություն ենք փոխանցում, և սա յուրահատուկ է. մենք չենք կարող չհեղինակել, չզբաղվել, որպես անհատներ, մեր

մանկավարժությամբ: Ես ասում եմ՝ զարգացնելով, հաստատելով Յուրա Գանջալյանի միտքը, պետք է ավելի ու ավելի շատ մեր մանկավարժությունը թարգմանել, հասանելի դարձնել, ներկայացնել այլոց, օտարներին, Ֆինլանդիայում, թե Վրաստանում, մեկ է:

Երրորդ՝ մեր մոտեցող տոնը դիտում եմ որպես մի լավ հնարավորություն՝ բոլոր տարիքների շրջանավարտներին, սեբաստացիներին օգնելու, որ հաղթահարեն մոլորությունը, որ կարող է խորն է նստած: Մեր կրթահամալիրն է, բայց եթե քո երեխան կարող էր ու չի սովորում կրթահամալիրի դպրոցներից, կրթական ծրագրերից մեկում, որպես քո գիտակից, ազատ ընտրություն, քո կրթահամալիրը չէ, քո դպրոցը չէ: Մի տեղ պիտի սովորեիր, սովորել ես, ծնողներդ բերել են՝ մի շրջան դարձել է քոնը: Մենք պիտի տոնին մասնակից դարձնենք այսօր կրթահամալիրում սովորող, աշխատող սեբաստացիներին, շեշտը դնենք այսօր իրենց երեխաներին կրթահամալիր բերողների վրա. այստեղ է թաքնված ռեսուրսը, որ տոնի միջոցով կարող է դրսևորվել, գործարկվել... Իսկ սա հնարավոր է, եթե տոնն անհատականացվի, եթե տոնի գործողությունը, ժամանակը, կոնկրետ հասցեական լինեն... Այստեղից՝ եթե..., ապա... Մենք չենք կարող այդքան անպատասխանատու լինել, որ ուսումնական արձակուրդի տասնօրյակը (հոկտեմբերի 18-27-ը) չօգտագործենք այս անհատական, կոնկրետ հասցեական՝ հեղինակային մանկավարժության ներկայացման պատրաստության վրա: Կրթական ծրագիր՝ իր կրթական միջավայրով, տոնական հանդերձանքով...

***

Այնպիսի մի դրական լիցք-ազդեցություն ստացա գերմանացի նկարիչ, սեբաստահայ Հովհաննես Ազատյանի (թուրքական ազգանունը՝ Թափյուլի) երեկվա այցելությունից: Մենք գեղարվեստի դպրոցում սովորողներով և ուսուցիչներով նշեցինք մեր հայրենակցի 70-ամյակը:

Երկու ժամը նկարչի աչքով-ձիրքով-կյանքով, աշխարհ տեսած, Սեբաստիայից-Պոլիս-Շտուրգարդ-Ամն-Կանադա-Հոլանդիա-Գերմանիա հասած մարդու համար բավական ժամանակ է հետևության համար. լսեք՝ հրաժեշտին ինչ ասաց.
- Աշոտ, ես այստեղ հայրենիք ձեռք բերեցի: Այստեղ է իմ հայրենիքի ապագան: Սա իմ տեսած ամենահեռանկարային կենցեպտն է՝ հայրենիք՝ կրթության միջոցով ու արդյունքում...

Ինձ համար մեկ է՝ ծափահարում են թե սուլում. երբ ինքնագնահատական չէ նաև, ի՞նչ տարբերություն:

Մարդը, կենսագրությամբ տպավորիչ, կենսունակ, լեցուն կյանքով ու գործերով, ով առաջին ազամ է Հայաստանում, Երևանում, Բանգլադեշում, կրթահամալիրում, տեսավ ու գնահատեց կրթահամալիրի Բանգլադեշը: Մենք գործընկերներ ենք, եղբայրներ այսուհետ, Հովհաննես, դու քո նկարիչ կրտսեր եղբոր հետ, ով նույնպես Հայաստանում չի եղել և, վստահ եմ, քո միջոցով կանցնի այս ճանապարհը, կապաքինվի, հայրենիք ձեռք կբերի, Սեբաստացի ես, որտեղ էլ որ լինես... Արի շարունակենք սկսած գործը՝ միշտ շնորհակալ այս հանդիպման միջնորդ Սարգիս Հացպանյանին:

Կրթահամալիրը յուրաքանչյուրիս դրսևորման և ապրելու թանկ, շատ թանկ հնարավորություն է... Ինչքա՜ն մարդ հենց այդպիսի հաստատություն-միջավայրի կարիք-պակաս-անհրաժեշտություն ունի... Բայց ինչո՞ւ ենք արագ դառնում սպառող-մարազմատիկ-սովորական, որ կարող ես և լինել, բայց ինչո՞ւ կրթահամալիրում... Ներառում է, երբ գումարվում ես, ամեն օր ես ուժ տալիս ու ստանում... Ծերանալ չկա, ծերացել ես՝ գնա. կրթահամալիրը մեծապարտեզ չէ, ես դա չեմ հանդուրժի, որևէ տեսքով, որևէ ազգանունով... Հենց հիմնադիր տնօրենից սկսած: Կտեսնեք ծերացածին՝ հարվածեք...

---

[1] Կրթահամալիրում տնօրենին դիմում են «տիար Բլեյան»:

Կղզի, բայց ոչ երբեք կղզիացած

Բաց կրթական համայնքի մեր՝ սեբաստացիների մոդելը բացառիկ է ոչ միայն հայաստանյան իրականության համար. կարդում ենք, շփվում ենք, արձագանքներ են գալիս... Տեսական մոդելների և հիմնավորումների մակարդակի մասին չէ իմ խոսքը, այլ լուծում-իրագործումների: Մեր բաց կրթական համայնքը մշակում-լուծում-իրագործում է: Բաց, մինչև վերջ բաց, որ ... պաշտպանված լինի: Մենք կղզի ենք այսպիսով, բայց ոչ երբեք կղզիացած հայաստանյան կյանքից. ավելին՝ մենք շարունակ նոր կամուրջներ ենք հաստատում մեր ժամանակի գործիչների (անհատներ, խմբեր, հաստատություններ) և նրանց գործի միջև, հետևողական խորտակում դրվող-առաջացող-դեռ գոյություն ունեցող-փոխանցված պատերը՝ մեկուսացման-անհաղորդության անջրպետները: Ու գիտակցումը, որ յուրաքանչյուր սեբաստացի պաշտպանն է իր այս հայրենյացի, որ շարունակ բաց ու բաց դարձող համակարգը՝ ինչպես հուսալի հսկվող-սարքերի-ազդանշանների ցանց, մեր տան պաշտպանության, ներքին ու արտաքին անվտանգության ամենագործուն միջոցն է հաստատ: Իսկ վտանգները միշտ կան, քանզի որպես կղզի ենք շարունակում լինել, քանզի հայաստանյան իրականությունը՝ կյանքն ու պատվիրատուի վիճակը վիճակ չեն. ներկայի ու ապագայի կամուրջները այրված են-այրվում են-չեն կառուցվում: Ու այսպես երկար-երկար...

Մեր Տոնը՝ «Սեբաստացու օրեր. կրթահամալիրի տոն», որ այս տարի հոբելյանական էր, նվիրված կրթահամալիրի ստեղծման 25-ամյակին և հեղինակային կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական յուրօրինակ հաստատություն-փորձարարական կրթահամալիր ծնած թիվ 183 դպրոցի 30-ամյակին, անցկացվում է 1994-ից, բայց ընդհատումներով: Պարբերական, որպես կրթահամալիրի ուսումնական օրացույցով որոշված ուսումնական նախագիծ, անցկացվում է 2009թ.-ից, միշտ նոյեմբերի կեսերին, այս օրերին: Որպես ուսումնական նախագիծ, այն ամենածավալունն է՝ ընդգրկուն մասնակիցների, աշխարհագրության առումով... Մեկնարկը այս հոբելյանական տարում տրվեց, հիշում եք, 2014-ի հունիսի 20-ին, Ա. Բաբաջանյանի անվան համերգային պատվավոր դահլիճում «Մոքիլ ու ստեղծական 25 տարի» հոբելյանական հաշվետու համերգ-ներկայացում-ցուցադրությամբ: Տարին կավարտենք մի այլ համերգ-ներկայացումով, Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տանը, դեկտեմբերի 16-ին... Համերգ-ներկայացման պատրաստությունը թափով սկսելու առաջարկը ահա ես արեցի, սեբաստացիներ, լսում եք: Թող ամեն սովորող-ուսուցիչ-դասարան-խումբ իր բլոգում ամփոփի իր մասնակցությունը այս

շարունակվող ուսումնական նախագծին, թող տա իր գնահատականը, իր առաջարկներն անի: Ես դա անում եմ տևական ժամանակ, գիր առ գիր և կշարունակեմ ուսումնական նախագծի կարևոր փուլի ամփոփման, արդյունքների վերլուծման, առաջարկների ներկայացման փուլը. առանց սրա ի՞նչ զարգացում և ամբողջականություն, առանց այս սկզբունքային նշանակություն ունեցող աշխատանքի մենք չենք ունենա-զարգացող, առաջադիմող ավանդույթ, որպես պատվիրատու ու մեր իրական կյանքի կազմակերպիչ: Այստեղից էլ այն մեծ ուշադրությունը, որ մենք արժանացնում ենք կրթահամալիրի ուսումնական օրացույցին և նրա կազմակերպման ծիսականացմանը:

Ես Նոր դպրոցի ռադիոյի հարցախեղդը լսեցի. «Ո՞վ է սեբաստացին... Ես եմ սեբաստացին... Իսկ ո՞վ է Մխիթար Սեբաստացին ու մյուս մխիթարյանները...»: Հեշտ չէ, երևի, 5-6 տարեկաններին ներկայացնել, իսկ 4-5-րդ դասարանցո՞ւն, 6-8-րդ միջին դասարանցո՞ւն... Ավելի հե՞շտ է դա անել ավագ դպրոցում... Իսկ ես ու դուք այդքան գիտե՞նք, ճանաչում, անհատապես արժևորո՞ւմ ենք մխիթարյանների գործը, նրանց ներդրումը հայագիտության, հայոց կրթության, լուսավորության և գիտության մեջ... Այնքա՜ն ու այնպես գիտե՞նք, որ համակել է մեզ պատմելու-փոխանցելու աշխատանքը... Մեր տոնը, սիրելիներս, եթե ստուգատես չի դառնում, այսպիսի անընդհատ մի աշխատանք, պիտի մեկնարկը դառնա ամենատարբեր նախագծերի... մեզ կօգնեն, մեզ մենակ չեն թողնի այսօր գործող հայագետները... Որևէ լարում, արհեստական ջանքեր պետք չեն, իհարկե, եկեք ապավինենք բնական-կենդանի ուրախ ընթացքին: Դրա համար անհատականացրեք, խնդրում եմ, տոնի պատրաստությունն էլ, անկախ տարիքից՝ Տոնին մասնակցությունը յուրաքանչյուրի անհատական գործը դարձրեք: Դրա համար պիտի կոնկրետ լինել. ո՞վ ասաց, որ Տոնն ինչ-որ մեկի գործը չէ, չի ուզում: Անհատական մոտեցեք, ու կոնկրետ յուրաքանչյուր սեբաստացի կմասնակցի, կունենա հնարավորություն մասնակցելու իր Տոնին: Իսկ այդ պատրաստությունը նաև ուրախություն պիտի բերի յուրաքանչյուրին: Այսպիսի ուրախությունն է, ըստ մեր օրերի բուդդայական լամայի, և՛ ցուցանիշը մեր ջանքերի, և՛ ուղեցույցը:

Տոնի հնարավորությունները սպառենք, Տոնը, որպես խթան, յուրաքանչյուրս լիուլի օգտագործենք, ինչպես դա անում են Միջին դպրոցի Ադելն ու Մարգարիտը՝ իրենց անհատական ցուցադրություններով (անդրանիկը՝ Մայր դպրոցում), այսօր մեկնարկող գրքի տոնը... Մարի Գաբանյանն անսպառ է՝ ակումբ-ընթերցարան, այն էլ՝ ինչպիսի՜, վարպետության դասեր, նոր գրքի վաճառք... Ես անհամբեր եմ բոլոր դպրոցներում միաժամանակ սկսվող, մշտական դարձող ցուցադրություն-վաճառքների այսօրվա մեկնարկով...Զարինե Պապոյանի 3-4-րդ և 5-6-րդ դասարանցիների մաթեմատիկական մրցաշարով, հաշվեցի՝ 37 խումբ (թիմ), 148 սովորող մասնակցության հայտ է ներկայացրել... Կկարողանա, իհարկե, Զարինեն, դասվարների, մաթեմատիկայի ուսուցիչների, տիար Գևորգ Հակոբյանի, Նառա Նիկողոսյանի աջակցությամբ՝ քաղաքային երևույթ դարձնել մրցաշարը, այնպես, որ Ավստրալիայի բոլոր կենգուրուները ողջունեն...

Ես հասցնում եմ արձագանքել Տոնի ծրագրով բոլոր նախաձեռնություններին... Երաժշտության ուսումնական կենտրոնն այսօր համերգ-նորամուտի է հրավիրում...

Մարմարյա սրահում նոյեմբերի 11-ին գիտակների մրցաշարում ելույթ ունեցավ Կարեն Խաչատրյանի երաժշտության լաբորատորիան, նոյեմբերի 12-ին՝ ժամը 13.30, տեսեք, սեբաստացի շրջանավարտների համերգն է, իսկ նոյեմբերի 13-ին՝ ժամը 15.15, Նարեկացի Արվեստի միության նվագախմբի… Ինձ հիացնում է բազմազան-բազմաձև ստեղծական-երաժշտական ձևերի ու խմբերի այսպիսի խճանկարը. հաստատ է երաժշտական կյանքի, երաժշտական հանրակրթական ուրույն համակարգի առկայությունը կրթահամալիրում, իսկ հանրակրթական համակարգերի ներկայացումն իմ օրագրում՝ որպես հեղինակային մանկավարժության սյուներ, առջևում է…

Մարմարյա սրահի Վահրամ Թոքմաջյանի լսարանը տպավորիչ էր. գիտեք, ես հանգստանում էի, ինչպես, վստահ եմ, շատերը… Այս կոմֆորտի մանկավարժությունը գուցե խոչընդոտ է, ոչ թե խթանող, այլ «ցրող», շեղող, ընդարմացնող… Անհատին պատրաստի տրվում է. հատկապես դեռահասության շրջանում չեն ճնշում, հրահրում…

Պետք էր հասցնել կարգի բերել Հիմնական դպրոցի կացարանը. Համո Սահյանի ծննդավայր Լոր գյուղը գալիս է մեծ խմբով. բարով գան, առ՛, Մարգարիտ Հարությունյան և ընկերներ, պատրաստվեք պատվով ընդունել… Պետք է հասցնել մեր ուսումնական մասնաշենքի տանիքային նորոգումները՝ ջրհորդաններով, կաթոցների բոլոր վերացումներով, հիմա, երբ ջեռուցվում են կրթահամալիրի բոլոր յոթ մասնաշենքերը… Եվ ո՞վ է վճարելու «Ռուսգազարդին»՝ խոր. մետրը 156 դրամի չափով, երբ մեր յոթ կաթսայատները սկսեն միասին անընդհատ ջերմություն արտադրել…

Կրթահամալիրի mskh.am-ի օգտատերերի օրվա թիվը անցավ 7500-ը՝ սա 2014-ի սեպտեմբերից սկսած մեր ռեկորդն է և խոսում է, իհարկե, մեր Տոնի, մեր մանկավարժության նկատմամբ հանրային աճող վերաբերմունքի մասին. ակտիվ եղեք, մեդիայում, սիրելիներս, մեզ հետևում են, մեզ կարդում, լսում, տեսնում, և դա լավ է… Իմ բլոգի օրվա մուտքերի թիվն էլ սկսել է աճել… մոտենում է 500-ին…

Մեր Տոնական շաբաթում կարևորում և ուշադիր հետևում եմ **ծնվող նախաձեռնություններին**, Տոնի ներշնչանք՝ կրթահամալիրի զարգացումն ապահովող նոր գործերին, նախագծերին… Այսպիսին է հայագետ Մերուժան Կարապետյանի կոչը՝ կրթահամալիրի այսօրվա ողջ ներուժով, հմտություններով սկսել մեր ուսումնական գրականության մեդիականացումը… Մեդիագրադարանի Զառան ու իր ընկերները ոգևորվեցին, թողեցին հետոյին, թե՞ հենց այս նախագծի իրագործումն է տոն դարձրել նրանց աշխատանքը…

Գևորգ Հակոբյանը Վարժարանում ուսումնական գործի կազմակերպման մի նախագծով է ապրում, որի մի դրվագը խանդավառ ներկայացրեց Ավագ դպրոցի Վահրամ Թոքմաջյանը՝ իր երեկվա դաս-հանդիպումով… Կարո՞ղ է սա դառնալ 2015-ի ամանորյա նվերը մեր ավագ դպրոցականներին, 9-րդ դասարանում սովորողներին….

Մի նախաձեռնությամբ էլ Միջին դպրոցի 9-րդ դասարանցի Տիգրան Աբրահամյանը և Աշոտ Տիգրանյանն են հանդես գալիս՝ կրթահամալիրի խաղարկային դատարանի գործունեությունը նորոգելու, այն վերսկսելու. արդեն երկու՝ լուծման ու հետևանքների

առումով կարևոր, հայց ունենք՝ հունվարյան և հունիսյան ճամբարների ուսումնական լինելու և տրանսպորտային փոխադրումների մասին: Հետևենք զարգացումներին:

Այս օրերին մեր Տոնի ծրագրով անցկացվեց նաև «Վահան Ասատրյան» բասկետբոլի բաց առաջնությունը, որը երեկ ավարտվեց մրցանակաբաշխությամբ:

Մայր դպրոցի՝ Ավագ դպրոց-վարժարանի նորանորոգ 3-րդ հարկ մտա որպես օտար՝ իրավունքի դասընթացը պարապելու. անգամ կրթահամալիրի համար ամբողջական թարմ ու հետաքրքիր կրթական միջավայր է ստացվել՝ տրամադրող, թափանցիկ, արևոտ էր հարկը, Գեղարվեստի ավագ դպրոցի դիզայնի խումբը նոր ոճի տարբերանշան-ցուցանակներ էր փակցնում: Իսկ ո՞ւր են ծաղիկները, կոնֆետները, շնորհակալությունը, ինքնաբուխ կարող էի՞ն արտահայտվել վարժարանի սովորողները և ուսուցիչները... Սա ասում եմ մարդկության-երախտագիտության պահպանման համար. միևնույն է, 2015-ի իմ կարևոր գործերում Մայր դպրոցի 2000 քառ. մետրանոց տանիք-հարթակ-կրթական պարտեզի գերակայությունը կա...

Ուռա՛, «Սեբաստացի» ռադիոդեբյուտը և՛ հաջողված է, և՛ սպասված. ես հեռանկարային և ոգևորող եմ համարում ոչ վարչական (վերից վար) այսպիսի լուծումները. իրար ճանաչում ենք, իրար օգնում ենք, իրարով ուրախանում ենք՝ եկեք համատեղ նախագծի վերածենք: Նախագծի իրագործման ընթացքում լիդեր (լիդերներ) կառաջանա՝ նա, ով անձնային պատասխանատվություն կստանձնի նախագծի զարգացման համար: Ես շատ ուզում եմ և հետևելու եմ, որ մեր ջանքերը հասնեն իրական օգտատերին՝ կոնկրետ սովորողին և ուսուցչին, նրանց որոշակի խմբին, ծնողական հանրույթին, սրանց միջոցով՝ մնացածին... Հիմնական դպրոցի Թամար Մարիմյանի դասարան-թատրոնի նախաձեռնությունը ես «ուսումնասիրում էի» հենց այս հայացքով. ոչ մի արհեստական-ձևական-ցուցադրական տեսարան... Ապրի մեր Թամարը՝ իր դասարանով ու Հիմնական դպրոցով...

Ոգևորված էր մեր կրտսեր դպրոցի տեխնոլոգիայի ուսուցիչ Զառան՝ տոնավաճառի եռուզեռը Դպրոց-պարտեզում արհեստական ո՞նց կստեղծես. ակտիվ-գործող սովորողը չի կարող անտարբեր թողնել իր ծնողին, հարազատներին, մեր հասարակությանը...

Շնորհակալ եմ «Դպիրին» իմ ու 3-1-ի հեռավար զրույցը պարբերականում ամբողջական՝ որպես մանկավարժական ինքնուրույն աշխատանք ներկայացնելու համար: Ինքնին, որպես առաջին փորձ, կարևոր էր ինձ համար էլ, ահա, «Դպիրի» համար էլ: «Դպիր» ամսագրին ես միշտ մոտեցել եմ ընդգծված հարգանքով՝ մանկավարժական առաջադեմ պարբերականի հարկի-դերի գիտակցմամբ: Ովքե՞ր են «Դպիրի» հեղինակներն ու ընթերցողները: Կրթահամալիրի յուրաքանչյուր մանկավարժական աշխատո՞ղ: Ինչպե՞ս են կարդում, ի՞նչ են կարդում, ի՞նչ է «Դպիրը» նրանց համար, նրանց մանկավարժական կյանքում: Մեր սովորողներից կա՞ կայուն-աճող խումբ՝ «Դպիրի» ընթերցողներ: Ի՞նչ տվեցին «Դպիրին» նրա օտարալեզու՝ անգլերեն, ռուսերեն, վրացերեն հավելվածները. թղթակցող-կարդացողների թի՞վը մեծացավ, առաջացա՞վ «Դպիրի» միջազգային համագործակցությունը իր տիպի մանկավարժական պարբերականների հետ: Ինչպիսի՞ք կան: Ինչո՞ւ «Դպիրը» իր էջերում չի անդրադառնում այլալեզու մանկավարժական էլեկտրոնային պարբերականներին:

***

Մեր Տոն-ուսումնական նախագծի 6-րդ օրը, հարիսայի ծեսը, խաղաղ-ուրախ-միաբանող եղավ. ո՛չ մի լարում, ո՛չ մի արհեստականություն չնկատեցի, չզգացի: Ստացվեց՝ ինչպես շաբաթն էր, այնպես և շաբաթ օրը: Սա ընդհանուրիս համակած տրամադրությունն էր ու միասնական գնահատականը:

Ժամը 09:00-10:00-ը եղա Հիմնական դպրոցում: Այստեղ, մեր կացարանում 3 օր է բնակվում են Հ. Սահյանի համագյուղացիները՝ Լոր գյուղի սովորողները և ուսուցիչները՝ իրենց տնօրենի հետ: Ի՜նչ լավ է, որ շատ գոհ են Տոնից, կրթահամալիրից, ընդունելությունից, ուզում են էլի մնալ: Մնացե՛ք, եթե ոչ՝ էլի եկեք, հետևե՛ք մեր օրացույցով ստուգատեսներին ու համեցեք... Ինչո՞ւ չեն հավատում էլի գալուն, երբ կացարանն անվճար՝ իր հյուրասիրությամբ, կա. մնում է Սիսիանից, միկրոավտոբուսով Երևան հասնելը... Առաջիկա երկուշաբթի, կրթահամալիրիմասնաժողովում ներկայացվելու են 2015-ի հունվարի ճամբարի, հանրակրթական Դիջիթեք, բնագիտատեխնիկական ստուգատեսների ծրագրերը...

Հետո ես եղա Դպրոց-պարտեզում և Գեղարվեստում: Դպրոց-պարտեզում բակային աշխատանքների ծավալն ու ամբողջականությունն ինձ ոգևորում են. պիտի մինչև վերջ ունենալ նոր որակի բակային տարածք: Մեր գյուղացիական տնտեսության աշխատանքները ևս բուռն ընթացքի մեջ են. ես խոստացել եմ, Տոնի օրերին, 2015-ի մեր Տոնին, հարիսայի սեղանին մեր պատրաստած «Սեբաստացի» շշերով գինին կլինի, վեցը ձիով ձիանոց կլինի ու... էլի՜, էլի՜... Գեղարվեստում և Հիմնականում վթարներ ունենք, պիտի օրվա մեջ վերացնել. 30 տարվա շենքեր են՝ իրենց 30 տարվա կոմունալ տնտեսությամբ, 30 տարի չեն հիմնանորոգվել, ընթացիկ խնամք են պահանջում...

Ամենուր հարիսայի ծեսի, հարիսայի սեղանի պատրաստություն է՝ արևոտ, աշխույժ, առատ, սրտաբաց... Սուրբ Երրորդություն եկեղեցում, ժամը ուղիղ 11:00 «Սեբաստացիներ» ուսուցչական երգչախումբը՝ իր հոգևոր-կոմիտասյան երգերի շարքով սկսում է ծիսական օրը... Եկեղեցու սրահը լեցուն է. իսկական համայնքային կյանքը այսպիսին է լինում... Վեհացած երգում են մեր ուսուցիչները. հիացած, խոնարհ լսում ենք... Հետո քահանան՝ կրթահամալիրի խորհրդի անդամ մեր տեր Եսային, կատարում է հարիսայի օրհնության արարողությունը... Ի՜նչ անաղմուկ, կլանված դահլիճ է եկեղեցում... Հետո օրհնված հարիսայով առաքելական սեբաստացիների ծիսական երթն է Մայր դպրոց... Նախկինում մենք այս բոլորը Մարմարյա սրահում էինք կատարում՝ և՛ հարիսայի օրհնությունը, և՛ երգչախմբի ելույթը. իզո՜ւր... Այսպես արդար է, պարզ. առաքելական սեբաստացին, որպես համայնք՝ իր եկեղեցում է...

Հարիսայի մեր համտես-ցուցադրությունն է ավանդական. ութ դպրոց՝ ութ սեղան, ութ ձևավորում, և միասնական համտեսում հարիսայի պարատնից առաջ... Ես կատակով չասացի.
- Չշփոթեք գրադարանի տեսադարանը պարատան հետ. պարատունը չպիտի ունենա պասիվ նայող-հետևող:
Միասին ուրախանում ենք՝ պարում ենք, երգում ենք, ցուցադրում... Ախր ամեն ինչ այնքա՜ն տրամադրող է, անարգել, միավորող...

Մեր ութ դպրոցում միաժամանակ սեբաստացին՝ իր սովորողով, ուսուցչով, ծնողով, շրջանավարտով, հյուրերով նստեց հարիսայի սեղանի և ծեսը ժամ-երկու ժամ՝ իր առանձնահատկություններով, շարունակվեց, ավարտվեց նույն գոհունակությամբ-ուրախ՝ ինչպես ամբողջ օրն էր, ինչպես մեր Տոնի շաբաթվա յուրաքանչյուր օրը... Զարգացնող ավանդույթի ուժը այսպիսի կարողություն է դրսևորում...

***

Տոնական ուրբաթ-համերգի տպավորություններն ուժեղ են. հյուր-անծանոթներից մեկը, ով համառորեն ուզում էր, որ ես ճանաչեմ-հիշեմ (մեղավոր եմ, ու այդպիսի մեղավորության պահեր հաճախ, շատ հաճախ եմ ունենում), ոչ մի կերպ չէր հավատում, որ ասում էի՝ ամեն ուրբաթ, ժամը 15.15, համերգ-պարապմունք-հաշվետվություն է Մարմարյա սրահում: Ես խոստացա նրան անդրադառնալ իր քանի իր հարցերին իմ օրագրով: Դրանք, իմ նկատառումները, մանկավարժական են:

Մեր յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի համար մեդիաուրբաթը նաև սեմինար-պարապմունք է՝ կրթահամալիրի տարբեր օղակներում, խմբերով և անհատական իրականացվող կրթական գործունեության արդյունքների հրապարակային ներկայացում՝ հանրակրթական (ուսպլանով նախատեսված) գործունեություն, ինքնուսուցում, ինքնակրթություն, ինքնազարգարցում, ազատ ժամանց... Մեր բոլոր համերգ-ներկայացումներին սովորողները և ուսուցիչները՝ որպես մասնակիցներ, համերգային գործունեության կողմեր, հավասար են և՛ միասին հանդես գալու, և՛ ինքնուրույն ներկայանալու առումով: Տեսեք «Շրխկանը», «Սեբաստացիներ» երգչախումբը, Նոր դպրոցի ուսուցիչների պարային-երաժշտական ելույթները, անհատական կատարումները ուսուցիչների.... Մեր համերգների ժամանակ տեսանելի է գործունեության զարգացումը. սովորողների նույն խմբի, ասենք՝ երաժշտական լաբորատորիայի, Միջին դպրոցի թատերական կամ կրտսեր դպրոցի խառը խմբերի ելույթները չեն կրկնվում, արգելված է կրկնելը՝ նոր ելույթ է, նոր համար, նոր գործիք, նոր կատարող, կատարում.... Սրանցով նրանք միշտ հետաքրքիր են, անձանձրույթ, գումարած գրավիչ մեդիան, մեծ էկրանի, իմպրովիզի իրական ազատությունը, Մարմարյա սրահը՝ որպես ամենագրավիչ կենտրոն-դահլիճ... Մեդիաուրբաթը նաև դասարան-համույթների ձևավորման պատվիրատու է, խթան ու կողմնորոշիչ: Այս օրերին, տեսեք, Անահիտ Գրիգորյանի 3-րդ դասարան ու էլի շատերին հանդիպեցինք:

Կրթահամալիրի 25-ամյակի առթիվ նոյեմբերի 19-ին՝ կրթահամալիրի մանկավարժական աշխատողների միացյալ պարապմունքի օրը, ժամը 15.15, Մեդիակենտրոնում համերգ-նվերով հանդես է գալիս «Կաղանս» համույթը: Սա արդեն երրորդ հայտնի խումբն է Con Alma ջազ խմբից և «Նարեկացի» համույթից հետո, որ շնորհավորում է մեզ: Եվ այդ համերգների կազմակերպումը՝ որպես ուսումնական նախագիծ, ստանձնում են կրթահամալիրի ուսուցիչների-սովորողների խմբերը: «Կաղանսի» համերգը, օրինակ, սկսել է կազմակերպել Կարեն Խաչատրյանի «Երաժշտական լաբորատորիա» ակումբը:

Մենք Հայաստանում ապրող մարդու կրթության իրավունքի ապահովողն ենք, հուսալի անդավաճան ենք մեր պատվիրատուի համար: Մենք չենք նեղանում, պատվիրատուի հետ

վեճերի և տարաձայնությունների ժամանակ չենք մոռանում գլխավոր հերոսին՝ տարատարիք սովորողին, սանին, երեխայի ետդարձի-հաշտության դուռը միշտ բաց ենք պահում. միշտ կա կապող ճանապարհ: Խնդրեմ լրացուցիչ կրթությունը՝ արտադպրոցական մեր հաստատությունները, նախակրթությունը՝ նախադպրոցական կրթական ծրագրերը, ակումբները, ճամբարները, ստուգատեսները, mskh.am-ը իր մեդիագրադարանով... Ահա մի բաց դուռ էլ, որից օգտվեցին բազմաթիվ նախկին սովորողներ, Տոնի ծրագրով տոնական մեդիաուրբաթ-համերգը: Սրանք բոլորը և՛ մեր դպրոցներում այսօր սովորողների, և՛ աշխատողների, և՛ նախկին՝տարբեր պատճառներով տեղափոխվածների համար են: Լրացուցիչ կրթության ծրագրերը (երաժշտության, գեղարվեստի, տեխնիկական ստեղծագործության արտադպրոցական պարապմունքներ) ևս մենք ենք՝ մեր հեղինակային մոտեցմամբ, էլ չեմ ասում մեր 2-5 տարեկանների զարգացման և ուսուցման մասին: Այդպիսին կարող է լինել և մեր երկարացված օրվա ուսուցման ծառայությունը:

Հետևեք ինձ, մտնում եմ իմ ու ձեր երկիր դրախտավայր՝ Բանգլադեշ

Վահրամ Թոքմաջյանը, ում ղեկավարած «Դավիթ Բեկ-Մխիթար Սպարապետ» ուսումնական նախագծի արշավախումբն առաջին գիշերն էր անցկացնում Դավիթ Բեկ գյուղում, պատմեց, որ ճանապարհին Զորաց քարերում հանդիպել են Ստեփանակերտից վերադարձող Մարթա Ասատրյանի էկոհայրենագիտական խմբին... Օրեր առաջ Տավուշի Բլդան գետի մոտ, Ջուխտակ վանքի ճանապարհին գրկախառնվել էին Գեղարվեստի ավագ դպրոցի՝ մեկնող ու Նոր դպրոցի՝ վերադարձող բազմօրյա ուսումնահայրենագիտական ճամփորդության խմբերը... Ափսոս, որ մենք մեզ ենք հանդիպում, ուրիշները պարզապես ուսումնական այս արձակուրդին չեն ճամփորդում...

Հիմա, երբ մեր ճամփորդող խմբերը Երևանում են, երբ արցախյան հաջող մեկնարկից ոգևորված՝ Հանրակրթական էկոտուր 2015-ի կազմակերպիչ էկո-հայրենագիտական ակումբը Կոտայքի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Լոռու, Արցախի, Վրաստանի իր գործընկերների հետ պատրաստվում է հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 2-ը Կողբի Զիկատարում իրենց աշխատանքային հավաքին, հիմա, երբ հայրենիքի ու աշնան տպավորություններով, ուսումնական նախագծերի հաշվետվություններով լցված են մեր mskh.am-ը, սովորողների և դասավանդողների ուսումնական բլոգները, ասենք, որ մեր շատ նախագծեր չէին լինի կամ կլինեին ոչ մատչելի շատ սովորողների, եթե չլիներ ՀՀ պաշտանության նախարարության աջակցությունը: Այ, որ Հայաստանում քիչ են անցկացվում կամ չեն անցկացվում այսպիսի հավաքներ-ճամփորդություններ, դրա պատճառը նաև այն է, որ տրանսպորտային փոխադրության հարցը լուծված չէ: Հանրակրթական ծրագրերում հայրենագիտությունը, կրթական փոխանակումները աջակցության կարիք ունեն, և պաշտպանության նախարարը այդպիսի աջակցության կոնկրետ ու տպավորիչ օրինակ է ցույց տալիս:

Մենք էլ, ո՛չ Հին Խնձորեսկում, ո՛չ Զորաց քարերում, ողջ Ստեփանակերտ-Գանձասար-Շուշի-Երևան 750 կմ-ոց ճանապարհին, բոլոր հնարավոր գեղատեսիլ դադարներով՝ ճամփորդող խմբերի՝ ավտոբուսով, միկրոավտոբուսով չհանդիպեցինք... մեկ-երկու մարդատար մեքենա ճամփորդ ու վերջ... Այսպիսի աշուն, այսպիսի երկիր (երկրներ), այսպիսի հնարավորություն՝

ուսումնական արձակուրդի տեսքով, ու այսպիսի վերաբերմունք՝ անվայելք-անհաղորդ իր բնությանը, իր հողին, իր մշակութային նյութական ու ոչ նյութական արժեքներին, ինքն իրեն...

Նոյեմբեր ամիսը, գիտեք, իմ ամիսն է: Տրամադրությունը, որ ունենում եմ այս ամսին, Հ. Թումանյանի «Պատրանք»-ով և Կոմիտասի «Չինար ես» երգով է արտահայտվում... Բակունցի «Միրհավ»-ով... Ուզում ես առանձնանալ ամենահարազատներից անգամ ու քայլել. ոտքով՝ անծանոթ ճանապարհ, անտառ, բարձունք հասնել... Տաք-հարմար հագնվես ու քայլես երկա՛ր, անշտապ, քո ականջում մնացած էն զիլ ձայներով միայն:

Անցյալ տարի այս ժամանակ էր կարծես, Արմինե Թոփչյանը թող ճշտի, ես առաջարկեցի մի ուսումնական նախագիծ... երևանյան այգիներում, պուրակներում, անտառային գոտիներում (հա՛, հա՛ անտառային գոտինե՛ր) լինել խմբով, դասարանով... ու պատմել: Իջնենք, սարերից, դաշտերից, մեր տուն ու բույն, բայց չկտրվենք բնությունից:

Առաջարկում եմ տարատարիք խմբերին, ակումբներին (բոլորն անելիք ունեն՝ զինված մեդիամիջոցներով, նկարակալներով) այսպիսի մի երթուղի՝ հետիոտն, քայլարշավ, թափառում՝ անշտապ, շուրջը զննելով, գրանցելով ձայներ, գույներ, տեսարաններ... Սկսում ենք Լունապարկից (Լուսնայգուց) Խանջյան փողոցի՝ Զորավար Անդրանիկի արձանին հարող հատվածից, գրանցում ենք ժամանակն ու քայլում այգով մինչև Վ. Մամիկոնյանի արձան, անցնում նշագծած կամ ստորգետնյա անցումով Մամիկոնյան փողոցը, մտնում նորից Օղակաձև այգի՝ մինչև Սայաթ-Նովա փողոց, հետո, Եղիշե Չարենցի արձանի մոտ դադար առնում, նստում խոտերին, մի քիչ կարդում-զրուցում, շարունակում ճանապարհը Ալեք Մանուկյան և Խանջյան փողոցների միջև ընկած այգով (ուսանողականով), Կամերային երաժշտության տան այգով, Իսահակյանի արձանով (տեսեք, կա՞ հարմար միջավայր՝ «Ավետիք Իսահակյան» գյոզալ նախագծի ներկայացման համար), անցեք Օղակաձևի Առագաստանավային հատվածը մինչև Թամանյանի արձան, շուռ եկեք, նայեք Օպերայի շենքին, կարդացեք Չարենցի քանաստեղծությունը՝ *«Նա տեսել է երևի արևային մի քաղաք…»*, հետո՝ Կասկադով վեր... մինչ «Խորհրդային Հայաստան» հուշարձան ու Հաղթանակի այգի... Նայեք ժամացույցին... Կարելի է նույն ճանապարհն անցնել հեծանվով, անիվներով, պատանիները, երիտասարդ մեր ուսուցիչները՝ զույգերով, թևանցուկ... Ես վստահ եմ, որ այս հետիոտն-քայլքային ճանապարհը չենք կարող չդարձնել ամենաբանուկը. բացենք հետիոտն երևանցու առաջ մի առանցք, մի ճառագայթ՝ ճանապարհին հաղթահարելով բազում խոչընդոտներ...

***

Ես հիմա պատրաստվում եմ դիլիջանյան ամենամյա 2-րդ բիզնես ինովացիոն ֆորումին՝ «2018թ.՝ Հայաստանը 20 ամենանորարար երկրների շարքում» խորագրով անցկացվող դիլիջանյան բաց միջազգային հավաքին, որին կազմակերպիչ տնօրեն Հայկ Չոբանյանի՝ մեր միջին դպրոցի Արփիի և Հարությունի հայրիկի նախաձեռնությամբ այսօր ֆորումի 2-րդ օրվա՝ կրթությանը նվիրված աշխատանքներին կմասնակցեն Հերմինե Անտոնյանը, Նարե Տիգրանյանը, Առնոլդ Բլեյանը և Գնել Հարությունյանը: Ես, որ որոշել էի շաբաթ-կիրակի անկողնային ռեժիմում անցկացնել, ֆորումի ծրագրից տեղեկացա, ոչ միայն ֆորումի մասնակիցների թվում եմ, այլև ելույթ ունեցողների... Մոբիլ ու ստեղծական, տիար պապիկ

Բլեյան (նորույթ. Դավիթի վերջին դիմելաձևն է), մենք քիչ ժամանակ ունենք հարգելի-մասնագիտական լսարանին պատշաճ մի բան ներկայացնելու համար:

Կրթահամալիրի 25-ամյա անվանը պատշաճ, մեր կրթական ծրագրերի ոչ միայն ներկայացում-տարածումը, այլև մեր գործի անընդհատ զարգացումը ենթադրում են կրթահամալիրի մանկավարժական աշխատողի ինքնակրթություն, անհատական ու փոքր խմբերով ստեղծական աշխատանքի կազմակերպման նոր աստիճան: Ես սրան եմ գնում. և վստահության, իրավահավասարության պակասը չի խոչընդոտը, ուրիշ տեղ մի՛ փնտրեք, փնտրեք ձեզանում. ինքնուրույնության և նախաձեռնողականության, ինքնավստահ ու թափով գործելու բոլոր կարողությունները դրսևորելու ժամանակում ենք: Դուք պիտի ուզենաք, ձեզանից յուրաքանչյուրի շահերից է բխում, որ ես գործունեության առաջին պլանը զիջեմ ձեզ՝ ուսուցչին ու դպրոցի ղեկավարին, այլ մանկավարժական աշխատողին:

Ես սկսել եմ երկար ժամանակ անցկացնել դպրոցական կայքերում, դասարանական-խմբային բլոգներում, ուսուցիչների անհատական բլոգներում... Ինձ իմ դիրքում չի կարելի թերագնահատել, չգիտենալ, վրիպել: Այ, ասենք, շնորհակալ եմ Նառա Նիկողոսյանին, նրա նախաձեռնությամբ «Մեբաստացիներ» ուսուցչական երգչախմբի փորձին մասնակցելը ու կարճատև, կոնկրետ հանդիպումը, Տաթև Մելքոնյանի բլոգի բոլոր նյութերի ուսումնասիրումը,գեղարվեստի կրտսեր դպրոցի կայքի ամբողջականության հետազոտումը... Առաջ ես դրանք չէի անի, հիմա անում եմ ու գոհունակության զգացումով: Շնորհակալ եմ:

Անգիրի (անշարժության կամ վերարտադրության) դպրոցից անցումը գործունեության դպրոցի՝ անցում է մի միջավայրից մի այլ միջավայրի, մի վիճակից՝ մի այլ վիճակի, ճիշտ է, բայց սա դինամիկ ու անընդհատ ընթացք է: Ահա Մարմարյա սրահի բաց սրճարանը այս դինամիկ փոփոխվող ընթացքի մեջ սկսում է գործել որպես ակումբ-խոհանոց, ուր կարելի է և՛ թեյ ու սուրճ խմել, ընթերցել, գրքային նորություններին ծանոթանալ, հանդիպումներ, անհատական ցուցադրություններ կազմակերպել, պարզապես հարմար տեղավորվել և հետևել Մայր դպրոցի հրապարակում ծավալվող իրադարձություններին...

***

Շաբաթ երեկոյան, Դիլիջան-ֆորումի ավարտին, ֆորումի կազմակերպիչներն առաջարկեցին լինել Դիլիջանի միջազգային դպրոցում... Լավ առիթ է, որքան էլ չեմ սիրում, երբ զարմացնում են: Զարմանալու ի՞նչ կա, կամ Բանգլադեշի կրթահամալիրի կամ կրթահամալիրի Բանգլադեշ աշխարհի տեր մարդուն ինչո՞վ կամ ինչպե՞ս կզարմացնես... բայց ծանոթանալ, իմանալ, իհարկե, սրանից էլ լավ առի՞թ... Մենք կարող էինք ու եղանք Դիլիջանի միջազգային դպրոցի շենքային-գույքային-նյութական միջավայրում... Շատ հետաքրքիր, գրավիչ նյութեր, հատկապես հատակի հիգիենիկ ծածկեր, սեղան-աթոռներ դարակներ... Ինձ զգում էի օդանավակայանում, երկաթուղային կայարանում՝ սպասասրահում, էքսպո մեծ տաղավարում, լա՜վ, հա՜, ժամանակակից տեխնոպարկում... Ես այն սիրով առաջարկեցի Վանաձորի կառուցվող տեխնոպարկի ընկերներին, ինչը ընդունվեց մեծ գոհունակությամբ: Սրտանց հաջողություն եմ ցանկանում այս մեծ բիզնես նախագծին: Սա ավարտուն-պատրաստի, ծավալուն մի կառույց է. ես, գոնե, այստեղ անելիք չունեմ...

Դաստիարակության նպատակը մարդուն ինքնուրույն դարձնելն է. այսինքն՝ ազատ կամքով էակ:

Երեկվա գրում ես խոսում էի կրթահամալիրի աշխարհների մասին... Չգիտեմ՝ հաջո՞ղ հասկացություն է. բայց ի՜նչ լավ է, որ ես երեկ մտա Մայր դպրոց՝ եղած չափերով անտանելի դարձած ռոբոտաշինության մեր սրահը... Բովանդակությամբ, այո՛, աշխարհ, բայց, ախր, ֆիզիկապես ճնշող չափերով... Ուրախ եմ, որ այն այսօրվանից կրկնակի մեծ է. հանդիպեցի ոգևորված Գնելին Մեդիակենտրոնի մուտքի մոտ, ողջ Մայր դպրոցը, Մեդիակենտրոնն էլ հետը, տեխնիկայի, տեխնիկական ստեղծագործության տուն է՝ ոչ մի խոչընդոտ դրա ճանապարհին... գործի՜ր...

Գնել Հարությունյանը մեր պայծառանում է, հենց լեգո-ռոբոտներից ես խոսում: Մե՜ծ ուրախություն բոլոր սեբաստացիներիս տներում. բաժակ բարձրացրեք, ասեք՝ բարով եկար, մեր երկրորդ լեգո-ռոբոտին, որ երեկ ժամանեց ինքնաթիռով, հատուկ չվերթով, արդուզարդով, տուփով, հանդերձանքով...

Գործ է անում Գնելը՝ իսկական ստեղծականություն դարձնելով ուսուցումը տասնյակ 4-8-րդ դասարանցիների համար... Փնտրվում է ծրագրավորող-մասնագետ, ով կթափանցի այս աշխարհը, կկանգնի Գնելի կողքին, ու կրթահամալիրում կսկսեն իրական կյանքով ապրել տասնյակ լեգո-ռոբոտիկներ՝ նկարել, տեսագրել, ահազանգել, ծիծաղեցնել...Շնորհակալ ենք «Սեբաստացիներ» արհմիութենական կազմակերպությանը և կրթական հիմնադրամին: Մի կողմից՝ այսպիսի նվերներ, մյուս կողմից՝ իրենց վերջին դրամներն են ծախսում... Է՜հ, հարստացե՛ք, փող աշխատեք, Հասմիկ Նալբանդյան, Առնոլդ Բլեյան ու ընկերներ. աղքատ սեբաստացի չի լինում, և աղքատը հոգեպես՝ ի՞նչ սեբաստացի: Երբեք ձևական չէ, էական է սեբաստացին...

***

Հետևեք ինձ, հիմա ես մտնում եմ իմ ու ձեր երկիր դրախտավայր՝ Բանգլադեշ...

Հիշո՞ւմ եք Դպրոց-պարտեզի (Բաբաջանյան 38/1) այսօրվա մուտքը մեկ տարի առաջ... Գոհար Եղոյանից ու Տաթև Բլեյանից լավ ո՞վ կհիշի, չէ՞... 2014-ի մարտին, Հանրակրթական էկոտուր 2014-ի ապրիլյան շնչառությունն զգացվում էր, Դպրոց-պարտեզի՝ այսօր արդեն նախկին մուտքը շրջանցելով եկա ետնամուտք՝ այսօրվա գլխավոր մուտքը... Գյոզալ քարափը՝ Բ-4-ի, Բանգլադեշի, ալամ աշխարհի ամենագրավիչ բազալտե բնական թեքալանջը, որ օտարվել էր՝ աշխարհից ու կրթական ծրագրից, մեր պատասխանատվությունից դուրս մնացած, մետաղե անճոռնի-անիմաստ մեր ցանկապատով մեզնից մեկուսացած, ամեն օր ավելացող կեղտի մեջ կորած... Հիմա գնացեք, կանգնեք, զմայլվեք... չեք կշտանա՝ որքան կյանք, թովիչ, գրավիչ բան կա:

Մի այլ աշխարհ էլ՝ Գեղարվեստի գունաթերապիայի կամ արտթերապիա-աշխարհ՝ Արմինե Թոփչյանը, Արա Թարզյանը, իրենց ընկերներով՝ Գեղարվեստի դպրոց-պարտեզի ուսուցիչներով, դաստիարակներով, 2-ից 10-11 տարեկան սաներով են ստեղծել, ստեղծում... Տեսե՛ք... Սա մանկավարժություն է...

***

Այս տարի աշունն ուշ եկավ, տեսեք՝ ծառերին ինչքա՜ն կանաչ սաղարթ կա, աշունը կերկարի ու կերկարի... Նոր-նոր քաղաքում ծառերի աշնանային էտման ու այլ բարեկարգման աշխատանքներ են տարվում... Կրթահամազիրի միջդպրոցական պատշաճ անցումների, մեր նորաստեղծ այգու, գյուղացիական տնտեսությունների նախագծերի իրականացման լավ շրջան է նոյեմբերի կեսն էլ, դեկտեմբերի սկիզբն էլ...
- Արևը մայր մտավ, լուսինը դուրս եկավ, ի՜նչ պակաս լույս է... Սիմոն ջան...
- Բա պայմա՞նը...

Շատ քայլեք օրվա մեջ, սիրելիներս, դպրոցների բակերով, միջդպրոցական անցումներով՝ զննող հայացքով քայլեք... հա՛մ կուրախանաք՝ իրոք շատ գործ ենք արել այս տարում էլ, սեպտեմբեր-հոկտեմբերին էլ, համ էլ կիսատն ո՞ւմ թողնենք. նոր տարին իր հոգսերն ունի բազում, անցնող տարվա հոգսը թող նրան չմնա... Արտեմ Խաչատրյանը թող այս հինգշաբթի մեզ ուղեկցի... Դուրս գանք Արհեստներից ու թափառելով, անցենք Նոր դպրոցով դեպի Գեղարվեստ կամ Նոր դպրոցով Մայր դպրոց ճանապարհը... Կամ դուրս եկեք Դպրոց-պարտեզից ու այգով, անշտապ հասեք Մայր դպրոց... Թափառեք. մեր այս ճանապարհներին էլ արդեն նկատելի փոփոխություններ կան. դրանք կամուրջներ են, որ կապում են... ուսումնական դրսևորման ինչպիսի՜ միջավայրեր... Իսկ հաջորդ օրը, Մեդիաուրբաթ-համերգից հետո ես կրթահամալիրի վարչակազմին հաճույքով կուղեկցեմ մեր գյուղացիական տնտեսություն... Քայլենք միասին, միասին տեսնենք, ուրախանանք արածով, միասին որոշենք անելիքը: Այսպես է ստացվել. մենք Հարավարևմտյան զանգվածի տարբեր թաղամասերով՝ մի ուսումնական ցանց ենք ու պիտի ազդենք ողջ ցանցով մեր միջավայրի վրա... Սա անքննելի ու անդարձ է այլևս: Եղել է այդպիսի շրջան. մի տեղ՝ Մայր դպրոցի շուրջ հավաքվելու: Մերը ցանցային զարգացումն է՝ մեր անմիջական ու մեծ թաղային միջավայրներով, մեր Հարավարևմտյան զանգվածի ութ կրթական օբյեկտների շուրջ... Միջավայրի զարգացման մյուս ուղղությունը կապվում է ութ շինություն-բակերից յուրաքանչյուրի հնարավորությունների առավելագույն-ամբողջական օգտագործման հետ, որպես հետաքրքիր-զարգացող կրթական միջավայրեր. որպես կրթական պարտեզներ... Այո՛, բոլոր նկուղները պիտի կապվեն իրենց անմիջական բակերի հետ, շենքերի տանիքները՝ բակային տարածքների հետ բազմահարթակ ու բազմակապ լուծումներ առաջարկեն-դառնան, իսկ սրանք միասին, որպես նոր-գրավիչ-խնամված-արդիական միջավայրեր ազդեն ուղղակի իրենց շրջակա տարածքների («Շրջակա աշխարհ» դպրոցական դասընթաց կա) վրա... Այս ամենը, իհարկե, կրթահամալիրի զարգացման ծրագրի ուղղություններ են 2015-16 թթ. համար, բայց էական անելիք կա 2014-ի նոյեմբեր-դեկտեմբերի համար... Ես ասացի, դուք լսեցիք, հիմա չգիտեմ՝ իմ երկուշաբթիի անելիքը որն է...

***

Մեր հոկտեմբերիկները՝ հինգ տարեկան սեբաստացիները, <u>զույն և իմաստ են հաղորդում մեզ</u>՝ ավանդական դարձած իրենց ամենամյա հավաքներով, որպես մեկ ամսվա գործունեության հրապարակային ներկայացում... Հինգ խումբ, 122 սան, ամբողջական կրթական միջավայրում, տիկին Աիդայի ու իր <u>«Պարտեզի»</u> ուղղորդմամբ պատրաստված

ոգևորված դաստիարակ ուսուցիչների և ուսուցիչների օգնականների, ուշադիր կոնկրետ ծնողների ներկայությամբ՝ տանը թե դպրոցում...

Հինգ տարեկանների ուսուցման ծրագիրն ինձ ավելի ու ավելի շատ է հետաքրքրում-զբաղեցնում, որպես մուտք կրտսեր դպրոց. 2-4 տարեկանների ընդհանուր զարգացման խմբերը մսուր-պարտեզային են... Տոլստոյն ասում էր. «Հինգ տարեկանից մեծահասակ՝ կես քայլ է»... Այս տարին, միևնույն է, լիարժեք ուսումնական է, անհրաժեշտ է, որ մանկավարժական միջավայրը համապատասխան լինի հինգ տարեկանի կայտառ, գլորվող, հոսող-թռչող մարմնին... Ու դառնում է... Ահա քեզ մեր հեղինակային մանկավարժության մշակման, իրականացման, ներկայացման մի կարևոր ծրագիր-նախագիծ...

Գեղարվեստի կրտսեր դպրոցում ինձ կրկին բռնեցին մեր հինգ տարեկանները. նրանք, Աիդա ջան, մեր Գնելի «ռոբոտիկների» նման շատանում-տարածվում են, ամենուր են, նրանք շատ հետաքրքրասեր են, զվարթ, շատակեր, Գնելի նման, մարդամոտ... Ահա խոհանոցում ինձ բռնեցին, կերան-խոսեցին-ծիծաղեցրին, աշխարհի բոլոր հարցերը տվեցին-ստացան-վերադարձրին... Ի՜նչ սիրելի-դաժան գործ է շաբաթը հինգ օր ժամը 8.30-17.00 այսպիսի աշխարհում ապրելը, Անուշիկ Աթայան ջան: Ու ես հիշում եմ «Բզեզի դպրոցը»...

Վարպետ Բզեզն ամռան մի օր
Դրպրոց բացեց մեծ ծառի տակ
Ու հավաքեց թիթեռ, ճանճ, բոռ,
Մրժեղ, մրրջյուն, մրլակ, մոծակ…

- Գիտե՞ք, ասավ, իմ փոքրիկներ,
Պիտի սովրեք, սովրեք անվերջ,
Որ իմանաք ինչ է ձեզ պետք,
Ինչ կա ձեր շուրջն ու կյանքի մեջ:

Իսկական բզեզի դպրոց՝ բը՜զզ հա բը՜զզ... Սա էլ քեզ Օրագրի 141-րդ գրի վերնագիրը՝

Ո՜ւհ, մարդ քարից պիտի լինի,
Ձեր մեջ գըլուխ կըճաքի:

Ահա հինգ տարեկանները՝ բոլոր 122-ը կթահամալիրի հինգ նախակրթարաններում իմացան, որ խոհարար ընկեր Նունեի, Վարդուհու, Մարիետի, Հիմնականի Նունեի, Վարսիկի պատրաստած ճաշերի առաջին ամանները սիրելու համար չեն, այլ ուտելո՜ւ, ձեր ուսուցիչ ընկեր Անուշիկին, Լուսինեին, Հասմիկին, Աշխենին, Տաթևին, նրանց օգնականներին սիրեք, մայրիկ-հայրիկներին, տատիկ-պապիկներին քույրիկ-եղբայրներին .... սիրեք, իսկ ճաշերը՝ բոլոր տեսակի, կերեք մինչև վերջ ու դրանց փայլուն մաքրած ամանները՝ որպես շնորհակալություն հանձնեք հատ-հատ... Ի դեպի, տիկին Աիդա, իսկ ե՞րբ ենք բացելու վեցերորդ խումբը: Հակառակը չանեք, հետևելու եմ մեկիկ-մեկիկ, Գնելի ռոբոտներին կարգելու եմ ինձ օգնական՝ ամեն ինչ նկարեն-ձայնագրեն-տեսագրեն- պատմեն... Ես էլ ինձ համար պարտեզի ծառերից մեկի տակ քեֆ քաշեմ... Տեսաք՝ ռոբոտները ոնց էին իրենց նոր ընդարձակ սրահից դուրս եկել ու բռնել Մարմարյա սրահը, դարձել ընդհանուր

պարապմունքի հերոսները... Կրթահամալիրի ռոբոտացումը այլևս անշրջելի մի ընթացք է, ուռա՜...

***

Երեկ ես խոսում էի ուսուցիչ-սովորողների համատեղ ստեղծած աշխարհների մասին, որոնցով ձևավորվում է կրթահամալիրի «Աշխարհացույցը»... Ամեն մեկի և՛ ստեղծման, և՛ օգտագործման, և՛ զարգացման համար. մենք պարտական ենք կոնկրետ ուսուցիչ-կազմակերպիչին... Մեր կյանքի լիարժեք կազմակերպումը կրթահամալիրում ենթադրում է նոր աշխարհների ստեղծում: Օրակարգում մարզաշխարհի, ռազմաշխարհի ստեղծումն է, որը պահանջում է ռազմագիտության իր ուսուցչին, սովորողների հետ ռազմական գործի կազմակեպիչին... Ու փնտրում ենք: Ովքե՞ր են մասնակցում այս որոնմանը... Թվում է՝ եթե ոչ յուրաքանչյուր սովորող, ասենք, սկսած 5-րդ, 6-րդ դասարանից, նրանց միջոցով շատ ընտանիքներ, գոնե յուրաքանչյուր մանկավարժական աշխատող... Կա՞ այսպիսի փնտրտուք՝ բաց ու շահագրգիռ, կոնկրետ... Ավա՜ղ, ես հիմքեր ունեմ պնդելու, որ այս փնտրտուքը սահմանափակվում է աշխատողին ներկայացվող պահանջների հրապարակմամբ, մեզ հասու ԶԼՄ-ով տարածման շրջանակներում... Ձևական մի տիրույթ, մի տեսակ փակ տարածք, որից դուրս է շարունակում ապրել, ու գուցե այսպիսի գործի (իր կյանքի գործի) մասին մտածել մեր կրթահամալիրի ժամանակի նոր հերոսը՝ տվյալ դեպքում զինվորական գործի ուսուցման կազմակերպիչը... Մեծահասակ, որ դեռահասների, պատանիների մեջ է ուզում լինել, նրանց դժվարություններ հաղթահարելու իր փորձն ու հմտությունները փոխանցել, հայրենիքի պաշտպանության համար անհրաժեշտ հմտությունները՝ որպես գրավիչ ուսումնական աշխատանք կազմակերպել, դժվարություններից ոչ միայն չփախչել, այլև իր վրա հրամատարի պատասխանատվություն վերցնել, իր անձնական օրինակով զինապարտությունը՝ պատանու ազատ ընտրությամբ քաղաքացիական ծառայություն դարձնել... Միացե՛ք մեր փնտրտուքին՝ և՛ այս, և՛ սովորողի տեխնիկական ստեղծագործության կազմակերպման, ծրագրավորման ուսուցչի գործին... Ովքե՞ր են, որ իրենց կյանքով հանգել են, կարող էին մտածած լինել ու պատրաստ են այսպիսի խիզախ գործ սկսելու... Հիշում եմ՝ ինչպես ամիսներ առաջ զանգեց ինձ անիմացիայի հայտնի դարձող նկարիչ-մասնագետ Լևոն Աբրահամյանը... Այն աշխույժը, որ հասել է նաև մեր դասվար-դաստիարակներին, ոգևորիչ է... Ես գիտեմ, որ նման ուսումնական աշխարհներ ստեղծողների ճանապարհները տարբեր են լինում, մինչև վերջ անիմանալի... Բայց սեբաստացիներ բոլոր տարիքի, միացեք այս փնտրտուքին, արեք այս գործը կոնկրետ ու հետևողական, այլապես... սկսում ենք ծերանալ ձգտումներից. ես գրող-հրապարակախոս Վարդգես Պետրոսյանից եմ լսել, ում, գիտեք, պարտական եմ Բանգլադեշի ուսումնական աշխարհի կազմակերպիչը դառնալու համար՝ տարիքից չեն ծերանում, այլ երբեմն հոգնում են ձգտումներից...

***

Աչքալուսա՜նք, Սվետա Ճաղարյանը, կրթահամալիրի երաժշտության ուսումնական կենտրոնի ղեկավարը, Կարեն Խաչատրյանը՝ նշանավոր Կայը, երաժշտության լաբորատորիայի ղեկավարը, և Լիլիթ Առաքելյանը՝ իմ սիրելի Պիլոն դաշնակահար, հասան

իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին... Երեկ սպասված գնում իրականացրինք. մեր նշանավոր Մարմարյա սրահն էլեկտրոնային (թվային) ռոյալ ունի՝ տեղով մեկ կուկլա. ո՛չ կեր, ո՛չ խմի, մի գլուխ նվագի՛... Մենք մեզ պարգևատրեցինք մեր Տոնի առիթով. այ, էստեղ ու սրան են ասել՝ հալալ է... Ուսումնական գործիք է:

Ամենուր այնքան լավ գործիքներ, ուսուցման գրավիչ ու հարմար միջոցներ կան, որ ժամանակին կարող էինք երազել... Ուսումնակա՞ն են սրանք. ուսուցիչ-մասնագետը պիտի որոշի. մոբիլությունը, գրավչությունը, անվտանգությունը, հեշտությունը, բազմաֆունկցիոնալությունը և մատչելիությունը բավարար հատկանիշներ չե՞ն... Ի՞նչ ասել է՝ ափսո՛ս է. օր առաջ պիտի գործիքների և նյութերի առումով նորացվեն-ամբողջանան ուսուցման միջոցների մեր լաբորատորիաները, արհեստանոցները... Արագ-արագ պիտի մտնենք ֆիրմաներ, թերթենք կատալոգներ, այցելենք ցուցահանդեսներ, փնտրենք՝ մեդիայով մեկ նույն սարքի էժան անալոգները... Որտե՞ղ, եթե ոչ լավ դպրոցում, երեխան պիտի հաղթահարի չտեսությունը, հանդիպի իր կյանքը փոխող, այլ դարձնող տեխնոլոգիական ուսուցում, հմտությունների փոխանցում ապահովող միջոցների...

Ես ներողություն եմ խնդրում Մայր դպրոցում պարապմունքներ անցկացնող սովորողներից և ուսուցիչներից վերջին մի քանի շաբաթների անհարմարությունների համար, որ պատճառում է մեզ Ավագ դպրոց-վարժարանի «Երրորդ հարկ ուսուցման միջավայր» նախագծի ավարտական փուլը: Պիտի մինչև նոյեմբերի 10-ը՝ Տոնի մեկնարկը, ավարտել... Երկարեց... Յոթ ամիս սպասել ենք այս օրվան. մեր Ավագ դպրոց-վարժարանի կրթական միջավայրի արդիականացումն ամբողջական տեսք է ստանում... Չպատմեմ, կտեսնեք: Գեղարվեստի ավագ դպրոցն իր Արման Գրիգորյանով, Միջին դպրոցն իր Թամար Հարությունյանով, և Ավագ դպրոց-վարժարանի սովորող դիզայներների խումբը (Նարե Ղալամքարյան և ընկերներ, առո՛ւ) զուգահեռ պիտի արագացնեն գեղագիտական-գեղարվեստական նոր լուծում-նախագծերի իրականացումը... միջավայրի ստեղծումը: Եկեք գնահատենք. առանց պետական միջոցների, ուսումնառության պայմանագրով որոշված ամսական լրավճարները ներդրում դարձնելով, տեսեք, երեք տարում կրթահամալիրի Մայր դպրոցն (կրթահամալիր ստեղծած թիվ 183 դպրոցը, որը, եթե կենդանի լիներ, կլիներ 30 տարեկան) ամբողջովին դարձրինք ամենաէժան, ամենաինքնուրույն, ամենահետաքրքիր հանարակրթական միջավայրներից մեկն ալամ աշխարհի...

Այսօր ԱՄՆ-ից մեզ էր այցելել մեր 15 տարվա շրջանավարտ Մուշեղն ու զարմացել՝ դպրոցն անճանաչելի է դարձել... Այ, ինքնազարմանքի պարգևը (ոչ թե մեզ այլոց կողմից զարմացնելու անհեռանկար զբաղմունքը) մեր դինամիկ-ստեղծական-ինքնավար կրթահամալիրում ցուցանիշ է դառնում... Երեկ մի խումբ վարժարանի սաներ զարմացել էին Գեղարվեստի դպրոցի «Տանիք» ուսումնական նախագծից, այս ե՞րբ, այս ո՞նց... Նորամուտների ցանկը, որը, իհարկե, լրիվ չէ, կրթական աճը մեզ ու մեր շրջանավարտներին, բոլոր կարգի սեբաստացիներին ուսումնական նախագծերի ձևով ներկայացվող գործերի բաժինն է... Մեկ էլ տեսար՝ ամենահիշվողը... Ոչինչ չի կարելի թողնել վերջին կամ նախավերջին օրվան. Մարի Գաբանյան ու ընկերներ, Առնոլդ Բլեյան ու ընկերներ, Գրիգոր Խաչատրյան ու ընկերներ՝ կիսատությունը մերժելի ցուցանիշ է թե՛ Տոնի համար, թե՛ կրթական նոր միջավայրի գործածման առումով... Կարևորո՞ւմ է մեր պատվիրատուն՝ մեր սովորողի հայրիկը, մայրիկը,

հենց սովորողը, այն ջանքերը, որ մենք դնում ենք կրթական միջավայրի նորացման-ամբողջականացման վրա... Մենք գործում ենք՝ հավատարիմ մեր կրեդոյին՝ կրթական միջավայրն է ամենագործուն ուսուցիչը... աներևույթ, բայց գործուն: Իսկ մեր մարզական ակումբներն առաջիկայում, պիտի, այ, կոնկրետ ու գործուն մասնակցեն «Մեբաստիա» մարզադաշտի ամբողջականացման աշխատանքներին... Տեսեք, նոր շինարարական եռուզեռ է մարզադաշտում, մարզահամալիրում, ջեռուցման համակարգի ամբողջացումը խոսում է այն ուշադիր վերաբերմունքի մասին, որ կրթահամալիրի տնօրենի աշխատակազմին պատիվ է բերում...

***

Երբ կա կասկած, որպես հիմնական չափանիշ ընդունում եմ իմ սեփական ուրախությունը... Սրանից իրական անխափան ցուցանիշ ու կողմնորոշի՞չ... Ավելին ասեմ, ես ուրիշի (այլոց) համար ոչինչ չեմ անում, և այլոց գնահատականն ավելի ու ավելի քիչ բան է նշանակում... Կանխեմ՝ ամեն մի աշխատանք պահանջում է մասնագիտական բարեխղճություն, նույն է թե՝ մասնագետի ներգրավում, խորհրդատվություն, գործից հասկացողի աչքեր ու ականջներ... Բայց սա՝ գործի կատարման փուլում... Իսկ գործը, ցանկացած գործ, ես անում եմ ինձ համար, լավ եմ անում, ես ինձ պարգևատրում եմ: Ես միշտ վարձատրված եմ, ու ինձ գործը պարտք չէ:

Պատրաստվեք «Մեբաստացիներ» երգչախմբի՝ Տոնի շրջանակում արվող բացառիկ համերգաշարի երկրորդ ելույթին՝ այս անգամ Դավիթաշենի Նահատակաց սրբոց եկեղեցում: Իմ ձեռքով տեղադրեմ այս տեղեկությունը. ես և՛ մասնակցեմ, և՛ տարածեմ: Լսեք առաջին համերգի տեսագրությունը Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցում. ինչ լավ է, որ ունենք այսպիսի TV՝ մոբիլ-հասանելի, մարդկային... Թե չէ՝ ժամը քանիսն է, պտտում եմ ալիքից ալիք... ինձ հարմար քիչ բան եմ գտնում, շարունակում եմ գրել ու գրել իմ օրվա գիրը...

***

Հեգելը՝ Նունե Մովսիսյանի միջոցով, փոխանցել է կրթահամալիրին թռիչք՝ մտքի, սրտի, հավեսի ճախրանք: Ես էլ ահա՝ այդպիսի թռիչքի համար նոր հարթակներ հայթայթել-նվաճել-մաքրելով եմ զբաղված. Գեղարվեստի տանիքը՝ չէիք հավատում, Արման Գրիգորյանը՝ իր ավանգարդիստական կոմպոզիցիոն լուծումների մեջ անգամ չէր պատկերացնում-տեղավորում, Արհեստների դպրոց-քոլեջի կասկադային հարթակը... Գլխավորն իհարկե Մայր դպրոցի՝ Մայր հարթակի, դեռ կտեսնեք, տանիքից ճախրանքն է թումանյանական «Դեպ անհայտը սուրբ, աշխարհքը պայծառ...»

Ահա այսպես էլ՝ «Դեպ անհայտը սուրբ, աշխարհքը պայծառ», թող լինի մեր կիրակնօրյա պատումի վերնագիրը: Իսկ Նունեի առաջարկը՝ համաձայնեցված Հեգելի հետ, ընդունենք ու մեր մանկավարժությունը հաջորդ զարգացման շրջանի համար անվանենք *բռնության-բռիության բացասման* մանկավարժություն...

Հիմա, երբ Ավագ դպրոցը քաշվեց նորանորոգ երրորդ հարկ, ելք ունեցավ դեպի Մայր դպրոցի տանիքի ընդարձակ հարթակ, ազատվեց ամբողջ առաջին հարկը երաժշտության կենտրոնի համար, շունչ քաշելու և վարժարանի զարգացման մասին քննարկում սկսելու շրջան է:

Կարծեմ, Գևորգ Հակոբյանն այդպիսի խորքային զրույց է պատրաստում: Երաժշտության ուսումնական կենտրոնի՝ մեզանում ճանաչված ու հարգանք վայելող Սվետա Ճաղարյանն ու իր ընդունակ երաժիշտ ընկերները ևս կենտրոնի ընդարձակմանը միայն ծավալային չափումով չեն կարող մոտենալ: Մեր սովորողը՝ տարատարիք, մեր ուսուցիչը, լրացուցիչ կրթության կազմակերպման մինչ այս չտեսնված միջավայր է ստացել:

***

Այս օրերին կրթահամալիրում նկարահանում-ուսումնասիրություններ էին իրականացնում «Շանթ» TV-ն՝ մանկավարժության մեջ մեր գունաթերապիայով, Հանրային հեռուստաընկերությունը՝ 4-7-րդ դասարանցիների տեխնիկական ստեղծագործությամբ՝ ռոբոտաշինության մեր առօրյայով, 1in.am-ի TV-ն՝ 5-10-րդ դասարանցիների հանրային խնդիրների արձագանքումներով... Այս օրերին երկու նշանավոր ու հաջողված համերգ կայացավ. Մեդիա կենտրոնում ելույթ ունեցավ նշանավոր, Հայաստանի լավագույն ջազ խումբ ճանաչված «Con Alma» խումբը, Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցում՝ «Սեբաստացիներ» երգչախումբը... Խնդրեմ, մեկնարկում է մեր կրտսեր դպրոցների 1-3-րդ դասարանների դասվարների շախմատի մրցաշարը, կրտսեր դպրոցները նոր աշխույժով ու կյանքով լցված թթուդրեքը, սկսվել ու իր իրավունքների մեջ է...

Այսօր թատրոնի օր է: Այն մտքից, որ Գեղարվեստի ավագ դպրոցի Հայկն ու Սուրենը իրենց հմայիչ ուսուցչուհու հետ մասնակցելու են միջազգային փառատոնի, դեռ պիեսն էլ թարգմանել է իրենց կերպարվեստ-կոմպոզիցիայի ուսուցիչ Արման Գրիգորյանը, լավ եմ զգում՝ անհանգստանալու աստիճան, հատկապես որ փառատոնին մասնակցում են Գեղարվեստի դպրոցի շրջանավարտները՝ կինոյի-թատրոնի ինստիտուտի շրջանավարտներ Սոնա Արսենյանն ու Տիրուհի Հակոբյանը:

***

Ափսոսանքի և մեղավորության օրեր տևող զգացում եմ ունենում, երբ չեմ կարողանում մասնակցել կրթահամալիրյան որևէ նորամուտի, մեկնարկի, հավաքի... Դրանում միշտ մեղավոր է լինում կրթահամալիրի տնօրենի պաշտոնը... Ինչպես այս անգամ. ես թերի մասնակցեցի «mskh.am բազմալեզու կայք» նախագծի ներկայացմանը Մեդիա կենտրոնում, չմասնակցեցի Գեղարվեստի կրտսեր դպրոցի ցուցահանդես + դաշնամուրային համերգին՝ Արսեն Մինասյանի անհատական ցուցահանդեսի բացմանը, դրան հաջորդած՝ Հասմիկ Մաթևոսյանի և սաների դաշնամուրային համերգին: Ո՞րն է իմ արդարացում-«բժշկի թուղթը». օրեր առաջ ես գրավոր հաստատել էի, որ մասնակցելու եմ նույն օրը նույն ժամին Մատենադարանում սկսվող «Կրթության գերազանցության ազգային ծրագրի» հանրային ներկայացման մեկնարկին... Էլի անհետաձգելի գործեր՝ ու ես ուշացա երաժշտության ուսումնական կենտրոնի նորամուտ-համերգից... Հետո, չնայած իմ խիտ ու հետաքրքիր օրվան՝ է՛լ ընդունելություն ԱՄՆ դեսպանի առանձնատանը («ՆԱՏՕ-ի օրեր Հայաստանում» ծրագրի շրջանակում), է՛լ ընդունելություն իմ տանը («Աստղային օրեր կրթահամալիրում» տոնի շրջանակում), մնացի մեղավորի իմ չհաղթահարվող զգացմամբ... Ինչպես հիմա՝ առտու

ժամը հինգին, երբ ես սկսում եմ իմ նոյեմբերի 13-ի գիրը: Գուցե գիրն օգնի նոր՝ այսպիսի մեղքից ազատ օր սկսելու...

«Այբ» կրթական հիմնադրամի՝ ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ու պետական ֆինանսավորում ունեցող ծրագրին ես հաջողություն եմ ցանկանում: Դեռ կունենանք առիթ ու հնարավորություն՝ ավելի մասնագիտական մասնակցություն ունենալու, եթե նախագծի պատասխանատուները դրա կարիքը զգան. ծրագրի անունը՝ «Կրթության գերազանցության ազգային ծրագիր» ես, մեղմ ասած, չեմ հասկանում: «Այբ»-ի խորհրդի նախագահ Տեր Մեսրոպի երկարաշունչ ելույթը ծայրից ծայր փրկչական գործունեության ավետում է մեզ. սրա հետ, մեղմ ասած, հաշտվել չեմ կարող: Գրիգոր Խաչատրյանի թևավոր խոսքերից երեկ ես շրջանառեցի. «Ես ավելի մեծ եմ, քան կարծում եմ, հետևաբար, ես համեստ եմ»...

20-րդ դարի հայտնի մաթեմատիկոս-մեթոդիստ Ջեյմ Փոյան, որ մաթեմատիկան սովորողի և սովորեցնողի մտածողության զարգացմանն ուղղված գործունեություն դարձնելու այնքա՜ն եռանդուն-հետևողական ջանքեր էր գործադրում, ով աշխարհում այդպիսի, ամենաշատ կարդացված «Ինչպես խնդիր լուծել», «Մաթեմատիկական հայտնագործություն» գրքերի հեղինակն է, մեզանում հայտնի ու տարածված ուսուցման պատվիրանների հետ թողել է մեկը, որի կարիքը հիմա զգում եմ՝ երբեք մի՛ պատասխանեք հարցերի, որոնք սովորողների մոտ չեն առաջացել: Սուսան Մարկոսյանի հետ կարծեմ խոստացել էինք մեր հեղինակային մանկավարժության սկզբնաղբյուր աշխատությունների գրադարանում նորից անդրադառնալ Փոյայի ժառանգությանը, Փոյա թարգմանել...

Ջա՜ն, ճամբար ջան

Հունվարի 19-ին մեկնարկել են մեր ուսումնական, հունվարյան ճամբարները՝ որպես ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևեր: Թափ, ծավալ ու խորք են հավաքել տարատարիք սովորողների ուսումնական կարողությունների դրսևորման ստուգատեսները... Գեղարվեստի, Արհեստագործական, վարժարանային ավագ դպրոցներում ճամբարային կյանքի հեղինակային-ուսումնական լինելը որոշելու են հենց ակումբները՝ իրենց ղեկավար-կազմակերպիչ ուսուցիչներով, ակումբի անդամ սովորողների ինքնավարության-ինքնուսուցման-ինքնուրույնության-նախաձեռնության ձևավորված կարողություններով... Իսկ որտե՞ղ, եթե ոչ կրթահամալիրի ուսումնական կենտրոններում, կրտսեր ու միջին դպրոցականների ճամբարային գործունեությունը թարմ-ուսումնական կազմակերպում ստանա... Կրթահամալիրի զարգացումը պայմանավորելու են, կրթահամալիրի որպիսությունը որոշում են ավելի ու ավելի մեծացող-զարգացող ուսումնական կենտրոնները, ակումբները, ճամբար-ստուգատեսները... Երաժշտության, գեղարվեստի, տեխնոլոգիայի, բնագիտության ու տեխնիկայի, մարզական, գրադարանային, ծեսերի-հանդիսությունների ուսումնական կենտրոնները նոր տարվա առաջին օրերից իմ ուշադրության կենտրոնում են: Երեկ Սվետա Ճաղարյանի հետ հանգիստ-կոնկրետ երաժշտության կենտրոնի պայմանների, նյութական միջավայրի ամբողջականությունն էինք առարկա դարձրել՝ իր համերգային դահլիճով, ակումբ-խոհանոցով, երաժշտության պարապմունքների սենյակներով, պարտեզով... Երաժշտական հանրակրթության գրավիչ-հարմար միջավայր,

մասնագիտացված պատշաճ միջավայր երաժշտության լրացուցիչ կրթության՝ թե՛ տարատարիք սովորողի, թե՛ ուսուցիչների համար, երաժշտական-արվեստի ամենատարբեր նախաձեռնությունների՝ կյանքի կենտրոն... Արհեստների դպրոցը ավելի ու ավելի խելամիտ կազմակերպված ու խնամված միջավայր է, տեխնոլոգիական բազմաբնույթ հանրակրթության և մասնագիտական լրացուցիչ կրթության համար... Գեղեցկության սրահը, ջերմոց-լաբորատորիան, կար ու ձևի մոդելավորման արհեստանոցը, գործիքաշինության-ինժեներիայի արհեստանոցը, դիզայնի լաբորատորիան... համեցե՛ք ճամբարի օրերին, հիացե՛ք, համոզվե՛ք, իրենց այսօրվա տեսքով, պայմաններով, և՛ քաղաքում նախանձ կարող են շարժել, և՛... վատ են օգտագործվում... Կարինե Մացակյանը և Արտեմ Խաչատրյանն ի՞նչ օգնության կարիք ունեն, որ չեն ստանում կրթահամալիրի տնօրենից, դպրոցների ղեկավարներից. պիտի ձևակերպեն: Ահա մեր կենտրոն-ակումբների ճամբարային նախագծերը...

Քո կյանքն է, քո կյանքի գործը, քո ուսումը, և լավ է, որ այս մոտեցմամբ կրթահամալիրում որակապես նոր փուլ է մտնում սովորողի, կրթական ծրագրի, մանկավարժական աշխատողի կիսամյակային գործունեության ամփոփումը, որին հատկացված է հունվար ամիսը: Հիշեցնեմ, որ մեր կրթական ծրագրով 10 ամիս տևող ուսումնական տարին բաժանված է երկու ինքնուրույն կտորի՝ յուրաքանչյուրը՝ 5-ական ամիս տևողությամբ: Հունվար և հունիս ամիսներին անցկացվող ուսումնական ճամբար-ստուգատեսները՝ 1-12-րդ դասարանների սովորողների, ուսուցիչների, դպրոցի, խմբի գործունեության գնահատման՝ ուսումնական կարողությունների դրսևորման, կրթական ծրագրի իրականացման ցուցանիշների հրապարակայնացման միջոցներ են. պատրաստում ենք և մոտ ենք հեղինակային կրթական ծրագրի, նրա սովորողի և ուսուցչի գործունեության՝ ինքնագնահատման, կրթական ծրագրի իրականացման ցուցանիշների մշակման ամբողջական ու հավաստի համակարգին:

Ապրելը, կյանքը, մեր առօրյան, մեր օրը, ճամբարը մեր, ստուգատեսները մեր սկսվում են ոգևորությունից ու ավարտվում-անիմաստ դառնում, բեռ դառնում, ինչպես բովանդազուրկ ձևերը, երբ ոգևորությունն ավարտվում է... Միրում-կարևորում եմ սեբաստացիական նախաձեռնությունները, ահա ինչու՝ ուշադիր եմ դրանց հետևողական իրագործման սեբաստացիական ջանքերի նկատմամբ. վստահեք ինձ, նախաձեռնության իրագործման յուրաքանչյուր փուլում ես ձեր հուսալի գործընկերն եմ...

Պետական կրթական ծրագիրը, որն այսօր էլ իրականացվում (մշակվում, հաստատվում, կազմակերպվում է ԿԳ նախարարության կողմից) ՝ հանրապետության 1300-ից ավելի հանրակրթական դպրոցներում, ունի, ստեղծել է իր տնային աշխատանքը՝ պարտադիր ու... կամայական. սրանց չափն ու ձևը չեն կարգավորված ո՛չ ՀՀ հանրակրթության մասին օրենքով, ո՛չ հանրակրթության պետական չափորոշիչով, ո՛չ այլ նորմատիվ իրավական ակտով. ուսուցիչն ու դպրոցն են տիրում այստեղ, անհսկելի-անպատժելի տնօրինում են սրանով սովորողի, ընտանիքի կյանքի ժամանակը նաև դպրոցից դուրս՝ արտադպրոցական շրջանում: Մեր հեղինակային կրթական ծրագիրը երկար ժամանակ երկնչում էր, չէր հանդգնում ուսուցման-դաստիարակության-կրթության իր գործին համապատասխան տնային աշխատանքի կազմակերպում ունենալ... Տարբեր կիսատ-պռատ շտկումներով մենք մեր ուսուցչի ձեռքին էինք թողնում այս անհարգանքի ու վախի գավազանը... 2014-15-ում

այսպես չէ. սովորող-ծնողն են տնային աշխատանքի պատվիրատուն, սրանով սովորողի աշխատանքը տանը ձեռք է բերում լրացուցիչ կրթության (կրթական ծառայության) կարգավիճակ, սովորողը սրանով ինքնուսուցման-ինքնակրթության նոր, մինչ այս իրեն չպատկանող ժամանակի և ուժային տարածքների տեր է դառնում... որպես սեփականություն տիրապետելով իր կյանքի արտադպրոցական ժամանակին... Ճամբար-ստուգատեսները, որ նախատեսված են և իրականացվում են հեղինակային կրթական ծրագրով, ուսումնական օրացույցով, սովորողի դպրոցական գործունեության այնպիսի ձևեր են, որ խթանում են ընտանիքով (խմբային) ստեղծական աշխատանքը՝ ընտանիքով իրականացվող ուսումնական նախագծերով՝ սկսած 2 տարեկանից... Սրանք գրավիչ-հարմար-բաց հարթակներ են հանրակրթության բոլոր մասնակիցների՝ ուսուցիչ-սովորող-ընտանիք-հասարակություն (իր ակտիվ խմբերով ու անդամներով) հանդիպման, կրթական ծրագրի միասնական ընկալման, մեկնաբանման ու համերաշխության հաստատման համար: Լիուլի օգտվենք 2015-ի հունվարի ընձեռած հնարավորությունից:

Սկանդինավյան հրաշքը... Շվեդիան, Ֆինլանդիան կարողացան որպես պետություն միջավայր դառնալ՝ մարդու տաղանդը լիարժեք դրսևորելու համար... Մենք էլ մի պետություն ենք կրթահամալիրով. սրան են ուղղված հեղինակային մանկավարժության հիմնական ռեսուրսները՝ մեզանում ապրող՝ սովորող-աշխատող մարդու դրսևորման համար... Ստուգատեսային-ճամբարային-նախագծային կազմակերպումն էլ այստեղից է եկել. սա այնքան պարզ է, ուրախ եմ դրա համար, որ ստուգատեսին մասնակից Շուշվա և Սպիտակի պատվիրակները միանգամից որսում են. տեսեք՝ ինչ լավ են զգում մեր «պետությունում»... Օգտվո՞ւմ են սեբաստացիներն այսպիսի հնարավորությունից, ինչպե՞ս են օգտվում՝ ահա խնդիրը. սրան եմ նվիրելու Ղափամայի ծեսի շրջանում հրավիրվելիք ակումբ-կլոր սեղանի պարապմունքը:

Իսկ ճամբար-ստուգատեսն իրական ու գրավիչ է դառնում նախագծերով, մտահղացում-նախաձեռնություններով, ինչպիսին Գեղարվեստի կրտսեր դպրոցի 4-րդ դասարանցի Նարեկ Արշակյանի ցուցադրությունն է:

Հաջողված դարձավ «Ծաղկաձորյան տրամադրություններ» նախագիծը... Շնորհիվ Մարթա Ասատրյան-Մարգարիտ Սարգսյանի, Անահիտ Եղյան-Տաթևիկ Աբրահամյանի, Անահիտ Մելքոնյանի խելացի ջանքերի, ձյունառատ Ծաղկաձորը փափկություն-սիրունություն հաղորդեց մեր ճամբարին՝ 70-ի չափ սեբաստացիներ օրեր գործեցին արտագնա ճամբարում, ստուգատեսները տարան Հրազդանի և Ծաղկաձորի դպրոցներ, հնարավորություն տվեցին ստեփանակերտցի մեր գործընկերներին միացյալ հայրենիք-Հայաստանի իրենց շատ լսած չտեսածը սիրելի դարձնելու...

Մի ուսումնական ճամբարային նախագիծ օրերս քննարկում էինք Գրիգոր Խաչատրյանի հետ... Տեսե՞լ եք հին Բանգլադեշի (Շերամի փողոցում) բացօթյա մեծ լողավազանի հարևանությամբ տնկված նախկին կենտրոնացված կաթսայատան մեծ շենքն ու նրա կիլոմետրանոց խողովակը... Լքված մեծ շինություն ու քաղաքից երևացող խողովակ... Այսպիսի կառույցներ էլի կան երևանյան արվարձաններում... Ինչո՞վ ուսումնական ճամբարային գրավիչ նախագիծ չէ՝ ուսումնասիրել 25 տարի անտերության մատնված

կառույցն ու առաջարկել նոր կյանք հաղորդելու-կենդանացնելու նախագծեր՝ Բնագիտատեխնիկական ու Հանրակրթական դիջիթեք ստուգատեսների արժանի հայտի հեռանկարով...

«Կրկին ոգեշնչված», այո... «Շողակնի» սեբաստացիական շողերով. Նունե Մովսիսյանի ոգևորվածությունը, որպես շունչ, որ փոխանցվեց 8.3-ի Էրիկ Թելունցին, Էրիկինը՝ Լուսինե Ալեքսանյանին, Լուսոյի շունչը՝ ինձ, դե, ես էլ, գիտեք, հայտնի կուտակիչ-տրանսֆորմատորով բոլորիցդ հավաքում, կուտակում, ձևափոխում, իր միջավայրով դարձնում եմ ուսումնական աշխատանք՝ ոգեշնչման մշտական աղբյուր-կրթական միջավայր, մի իսկական պերպետուում մոբիլե՝ արժանի Գնել Հարությունյանի ստուգատեսին ներկայացվելու... Էրիկ Թելունցին՝ ով «Շողակն» է, ու «Շողակն»-ը՝ իր մեջ, ես փնտրեցի, փնտրեցի ու գտա Միջին դպրոցի ճամբարի սենյակներից մեկում՝ ինքնամոռաց խմբով ... «Մոնոպոլիա» խաղալիս... Ճանաչում էի, իհարկե, Էրիկին, քույրիկին, իրենց ընտանիքին... Բայց, այսպես մոտիկից, ուղիղ հայացքով չէի չափել՝ որպես «Շողակն» նախաձեռնած ու «Շողակն» խմբագրող մարդու... Ա՜յ, քեզ բան... Ես եմ հայելու մեջ.... 8-րդ դասարանում հենց այսպիսին չե՞մ եղել՝ փոքր-մոքր ու վտվտիկ... Դու ունես մի մեծ առավելություն, Էրիկ ջան, իմ նկատմամբ, ես այսպիսի դպրոց, ինքնարտահայտման խթանիչ-աջակից ուսումնական միջավայր չեմ ունեցել... Եվ դու լիուլի օգտվում ես քո առավելությունից... Հիմա, երբ ես կարդացել եմ Էրիկի բոլոր նյութերը, ի՜նչ ասեմ, հալալ է քեզ, Էրիկ ջան, քեզ էլ, քո ընկեր 8.3-ին էլ՝ համերաշխ ու ստեղծական... Լուսավորեք ավագ տարիքում ձեր անցնելիք ճանապարհը, որ ունենանք ձեզ արժանի Ավագ դպրոց: Սկսեցի՞նք ճամբարային նոր նախագիծը...

Սարգիս Հակոբյանի «Գիտե՞ք, թե ինչու եմ սիրում մեր ճամբարները...» հրապարակումը երեք առումով պիտի գրավեր, ոգևորեր ինձ: Նախ՝ վերնագիրը ճամբարային է. այսօրվանից սկսած՝ ստուգատեսային դարձող մեր ճամբարները ձեռք են բերում լրացուցիչ գրավչություն: Սարգիսն իր վարժարանի էկոհայրենագիտական ակումբի ալամ աշխարհով տարածված ընկերներից կուզենա՞ ձևավորել որևէ ուսումնական նախագծի վրա աշխատող խումբ, այնպես, որ հասցնի հայտագրել աշխատանքը մինչև սահմանված ժամկետը՝ հունվարի 30-ը, ժամը 24:00, Բանգլադեշի ժամանակով ներկայացնել Հանրակրթական դիջիտեք 2015-ին: Տեսնե՜նք-տեսնե՜նք. ես էլ, Ասատրյան Մարթան էլ, Ժաննա Ալբերտովնա մայրիկն էլ, Գրիգոր Խաչատրյանն էլ, սիրով կօգնենք... Հետո՝ Սարգիսը թեթև-կիրակնօրյա պատում է բերում սրանով... իսկը իմ գրի համար, շնորհակալ եմ... Եվ իհարկե, Սարգիսն իր տեսակով ոգևորող, դրական աուրա փոխանցող մարդ է, ես նրա հետ Մադինա եմ գնացել. պատահական չէ, բոլոր նշած ճամբարներում էլ նա սպասված ճամբարական է եղել՝ աստղով այր է: Իսկ առավելությունները, որպես բնական ներդրումներ, մեր նեղացող-ոգու սով կյանքում պիտի ամբողջական գործածել. դրանից, Սարգիս ջան, դրանք կբազմապատկվեն: Ջա՜ն, ճամբար ջան. «Ես շատ եմ սիրում ճամբարները. դրանք մեր դպրոցական կյանքի լավագույն մասն են կազմում»: Նորից սիրով կարդացի Սարգսի հրապարակման ավարտը: Գիտե՞ք՝ ինչքան ջանք դեռ պիտի ներդնենք սեբաստացիներով բոլոր տարիքի, որտեղ էլ որ լինենք, որ այս գնահատականի մեջ մտնեն նաև մեր ուսումնական օրացույցով, ուսումնական պլաններով, կրթական ծրագրով նախատեսված ամենամյա հունվարյան և հունիսյան բանգլադեշյան ուսումնական ճամբարները՝ իրենց արտագնա ճամբարային բաղադրիչներով,

ինչպես Սարգսի համար ծաղկաձորյան ճամբարը եղավ: Ես հուշեցի՞ խմբային աշխատանքի վերնագիրը… տեսնե՛նք, տեսնե՛նք…

Ողջ օրվա իմ կիզակետում մարմնամարզության մեծ դահլիճն է՝ անընդհատ իրար փոխարինող կրտսեր դասարաններով… Ժամը 15.30 ես չէի կարողանում հայացքս կտրել դասվարների մարմնամարզական խմբից, ովքեր պատրաստվում էին հանդիսավոր ելույթի՝ նույնպիսի լրջությամբ, ինչպես քիչ առաջ Մարմարյա սրահում ելույթ էին ունենում ուսուցիչները՝ իբրև վոկալ ութնյակ… Լավ է, իհարկե, հոյակապ է, կասեր իմ վաղեմի ընկեր Զարեհ Սարգսյանը…

Ճամբարն այլ կդառնա բազում նախագծերի իրականացման հեքիաթով… Այս կենդանի քննարկումը կայացավ երեկ Միջին դպրոցի ակումբ-խոհանոցում՝ ճամբարային օրվա վերջում… Ճամբարում գործեն նախագծային ջոկատներ, որոնք ձևավորվում են տարատարիք-տարադպրոց ջոկատով, նախօրոք հրապարակված նախագիծ իրականացնելու սկզբունքով՝ «Ես կարողանում եմ իմ ընտրած նախագծի իրագործումը դարձնել բազմաբնույթ գործընկերության առանցք»-ով… Անշարժ ճամբարը կդառանա մի վատ հաստատություն, որից ազատվելու համար էր այն ստեղծվել. երբեք, փոխեք, մի՛ վախեցեք փոփոխություններից, վախեցեք ստատուս քվոյի հաստատումից… 2015թ. մեկնարկին ուզում ենք ունենալ 2015-2016 ուստարվա ուսումնական գործի կազմակերպման համար կարևոր փաստաթղթերը՝ ուսումնական պլանները՝ իրենց պարզաբանումներով, ուսումնառության պայմանագրերը՝ պարզաբանումներով, ուսումնական օրացույցը. կրթահամալիրի խորհրդի հայտարարված օրակարգում նախատեսված են նշված հարցերի քննարկումը-հաստատումը… Ժամանակ, ինչպես տեսնում եք, քիչ կա՝ բեկումը 2015-ին պահանջում է, որ այսպիսի որոշումները կայացվեն սովորողի, ուսուցչի գործուն մասնակցությամբ. նկատի ունեմ ոչ միայն ավագ դպրոցի սովորողին, ուսուցչին ու ծնողին, սա բնականոն է, այլև միջին դպրոցի: Սա էլ 2015-ին դարձնենք բնականոն. միջին դպրոցը՝ իր ուսուցչով, սովորողով ու ծնողով դառնա ավագ դպրոցի հիմնադիրը… Ահա ինչու ես վճռականորեն դիմում եմ ձեզ, *Միջին դպրոց՝ մեծով, պստիկով, ձեր անհատական ու խմբային՝ ինձ այդքան ոգևորողբլոգներով, TV-ռադիոյով, ենթակայքով, կլոր սեղաններով ճանաչեք կրթահամալիրի, ձեր Ավագդպրոցը՝ իր այսօրով, առկա զարգացումներով, դարձեք Ավագ դպրոցի պատվիրատուն, ձեր ուզածԱվագ դպրոցի հիմնադիրը. սա իմ փետրվարյան օրակարգի թիվ 1 խնդիրն է…*

Շնորհիվ ընտանեկան աջակցության, ստուգատեսների, ջնջվեցին բոլոր տարիքային սահմանափակումները, ու ընտանիքները հայտնվեցին ստուգատեսների խաչմերուկում… Կրտսեր-միջին դպրոցներում ճամբարային մասնակցություն-հաճախումը հավասարվեց ոչ ճամբարային՝ սովորական ուսումնական օրվա հաճախումներին… Ցուցանիշ է: 2016-ի հունվարը կանմահանա, ստուգատեսյան-ճամբարային-նախագծային կրթության կարևոր բնագիծ կդառանա, ինչպես 9-րդ դասարանցի հայցվոր Տիգրան Աբրահամյանը նշեց խաղարկային դատարանում՝ իրեն զարդարող ազնվությամբ-կոնկրետությամբ, սեբաստացիների համար սկսեց դատ, և նոր մակարդակում յուրացվեց հեղինակային կրթական ծրագրի ստուգատեսային ուսուցման՝ նախադեպը չունեցող կազմակերպումը: Այստեղից առաջացավ նաև երևույթ՝ նոր ուսումնական նախագծերի, նորամուտների, նախաձեռնությունների՝ ստուգատես ստուգատեսի մեջ… Հորինված ոչինչ. ստեղծագործ-

դինամիկ ճամբարային հավաքանու էֆեկտներ են սրանք՝ հայտնի դոմինոյի էֆեկտ անունով... Ծնողական ակումբ-համույթը, որի բեմելը կտեսնեք-կլսեք Ղափամայի ծեսին, չմշկավոր սեբաստացիները, ռազմամարզական ստուգատեսը, որպես բանակին նվիրված օր, ճամբարը՝ անիվների վրա, «Մոնոպոլիա» ուսումնական խաղը, ամենակարող օբյեկտիվը, ընտանեկան անիմացիոն լաբորատորիան... 5 տարեկան Անիի մենաթատրոնը, դասվարների մարմնամարզական խումբը... 2-6 տարեկանների ռոբոտիքսը, նոր ընթերցարան-տոնավաճառը, գեղարվեստական անդրանիկ ֆիլմի նկարահանման մեկնարկը... Առանց ճիգի և դժվարության կարելի է շարունակել և պետք էր անել՝ մեղքի զգացման ծավալը փոքրացնելու համար. որքա՛ն ավելի կոնկրետ ու հեռանկարային նախաձեռնության անուն ես բաց թողեցի, մեղավոր եմ: Ամեն ինչ առջևում է, բարեկամներ՝ և՛ ուսումնական ստուգատես ճամբարները, և՛ իմ օրագիրը: Մնում է, որ առօրյա ուսումնական գործ դառնան թե՛ ստեղծականությունը, թե՛ իմ օրագիրն ընթերցելը...

Շնորհակալ եմ՝ ինձ ուշադիր լսելու համար: Ինչպե՞ս պահպանենք ստուգատեսային-ճամբարային այս լիցքերը՝ անընդհատ ուսումնական կազմակերպումը դարձնելով մարդու դրսևորումը:

Հանրային միասնությունը դաստիարակություն է

Հունվարի 12-ից 30-ը՝ որպես կրթահամալիրում 2014-2015 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ավարտական շրջան՝ սովորողների ուսումնական կարողությունների հանրային ներկայացման համար է՝ իր բոլոր փուլերով. «Ես կարողանում եմ» անունը ստացած նախապատրաստմամբ հանրակրթական բնագիտատեխնիկական, մարզական, Հանրակրթական Դիջիթեք ստուգատեսներով, դրանց ծրագրերով որոշված կրթական փոխանակումներով... Ահա ինչու, անհրաժեշտ եմ համարում, որ ծանոթանաք կրթական ծրագրերի-մանկավարժության կենտրոնի նամակին՝ կարդաք-յուրացնեք-մեկնաբանեք-առաջարկեք-գործեք սխեմայով... Սովորողների հետ միասին. միայն ու միայն այդպես. եթե սովորողների հետ, միասին չենք անում որևէ ուսումնական-հասարակական գործը, որտեղից ու ինչպես գիտեք, մեծեր տարբեր կարգի, որ այն սովորողների համար է, որ սովորողի կյանքում պիտանի է լինելու... Ուղղակի մեծերը շուտ են հոգնում սովորողներից և գերադասում են իրենց համար «հեշտ» ու մանկավարժորեն դատապարտելի «ես կանեմ, դու գնա քո գործով զբաղվի, մեկ է՝ քեզնից խեր չկա» գործելու ձևը... Այս հանրային միասնության մեջ է դաստիարակությունը, նրա կոչումը, իմաստը, ուսումը, դպրոցում թե տանը, որպես սովորողի և մեծահասակի կյանք, միասնական պիտի գործվի-ապրվի՝ սկսած լուծելիք խնդրի առանձնացումից, ձևակերպումից, խնդրի լուծման եղանակների քննարկումով, գործիքների ընտրությամբ, փոխօգնությամբ, արդյունքների ու դժվարությունների քննարկմամբ, ուսումնական համատեղ աշխատանքով ստացվածի հետագա կիառմամբ...

Ինչո՞ւ այսքան քիչ թվով սովորողներ էին մասնակցում ձմեռային մանկավարժական դպրոցին, սիրելի Նառա Նիկողոսյան, Սուսան Մարկոսյան և դպրոցների ղեկավարներ, ուսուցիչ-կազմակերպիչներ... Չզարմացա՞ք...Քանզի դրանք մանկավարժական աշխատողի՞ն են ուղղված... Ինչո՞ւ մեկուսի... Ես ահա առաջարկում եմ մեր Օրացույցով ուսումնական

մանկավարժական ճամբարները բացել նաև սովորողների ու ծնողների համար. ում հարմար է, թող մասնակցի լիարժեք կամ իր ընտրած չափով...

«Շրխկան» համույթում, որում ընդգրկված են մեր բոլոր 2-5 տարեկանների տասնհինգ խմբերի դաստիարակները՝ այդ թվում երաժշտական, դաստիարակների օգնականները, Աիդա Պետրոսյանն ու Մարինե Մկրտչյանը կարողացել են բեկում առաջացնել... Իսկական խաղի՝ մեծ երաժշտական խաղի մասնակից եղա, իսկ «Շրխկանի» ուղղակի շշմելու ազդեցությանը խմբում տեսեք՝ նույն մթնոլորտն էր տիրում նաև այդ տեսանյութում, ջա՛ն...

Մարմնամարզական մեծ դահլիճում՝ Դավիթ Ֆահրադյանի սաները՝ 1-3-րդ դասարանների դասվարները, հաճույքով էին մարզվում-խաղում... Դասվարը նաև մեր 6-9 տարեկանների հանրակրթական մարմնամարզության ուսուցիչն է և պիտի տիրապետի այդ գործին նույն կերպ, ինչպես մայրենիին, մաթեմատիկային..., տեխնոլոգիաներին, այդ թվում՝ թվային ու դիզայներական... Հակառակ դեպքում չի աշխատի որպես դասվար... Բեկում է պետք, որ արդարացի լինենք. որևէ խտրականության, այս սկզբունքի անարդարացի-ընտրողական վերաբերմունք չեմ հանդուրժի... Ահա քեզ և բնական ընտրության ճանապարհը, ուսուցչի ատեստացիա կոչվածը՝ ուսուցչի ստուգատեսային-նախագծային գործունեության արդյունքները... Ահա ուսուցիչ-դասվարը բատուտի վրա, մարմնամարզական գորգի, գերանի, սա էլ՝ «Արվարձան» հանդիսությունների կենտրոնում, մեր մյուս դահլիճներում նրա թատերական-համերգային ելույթները, սա էլ՝ բնագիտատեխնիկական-մաթեմատիկական-շախմատի-բնապահպանական ստուգատեսներում նրա լուծած խնդիրները, ահա «Դպիրում», իր ուսումնական բլոգում նրա հոդվածներ, տեսա-, ռադիոնյութերը... Սրան ավելացրեք նրա սաների անհատական մասնակցությունը ստուգատես-ուսումնական նախագծերին, դրանցից յուրաքանչյուրին ուսուցչի ունեցած մասնակցությանը՝ ուղղակի-անուղղակի, որպես համակարգող թե կոնկրետ աջակից...
- Գժությո՛ւն...,- կբացականչի Նազենի աստղ Հովհաննիսյանը...

Եթե երկու կյանքով ես ապրում, մեկը՝ իբր ուսումնական (պետական ծրագրով անգիրի դպրոցը), մյուսը՝ իբր հեղինակային (արտաուսումնական)՝ ստուգատեսներ, մեդիաուրբաթ-համերգներ, ձմեռային-ամառային դպրոցներ, էդ զոռին ո՞նց կդիմանաս... Երկատվածության հաղթահարման բեկումնային տարի է՝անկեղծ-բարեխիղճ-հրապարակային գործունեությամբ...Լսո՞ւմ եք, սեբաստացիներ, բոլոր տարիքի, որտեղ էլ լինեք՝ Վլադիկովկասում թե Չինումաչինում...

Մի կյանք, մի կրթական ծրագիր, մի վարք... Այսպիսի միաստվածության տարի է 2015-ը:

Սեբաստացիական մեր աշխարհը այլ է...

Փոխվել է մեր սեբաստացիական աշխարհը, սիրելիներս, բոլորիս հեղինակային համատեղ նախագծի իրագործման որակապես նոր փուլ ենք թևակոխել: Հաշիվ պիտի տանք, որ փոխենք մեր վարքը, մեր աշխատանքը՝ այս նոր վիճակին համապատասխան: Ալեքյան Հովհաննեսի մայրիկի՝ Նաիրա Դալուզյանի խոսքերը ճշգրիտ են վիճակը նշում. «Համոզված ենք, որ մեր

կրթահամալիրը մանկավարժական մոտեցումներով, իր կրթական ծրագրերով և դպրոցական իր առօրյայով չի զիջում որևէ միջազգային կրթական հաստատության»:

Եվ չգիտեմ որտեղ արհեստական միջազգային ծրագրեր փնտրող-անող մեր մարդուն ես ասում եմ՝ արի կրթահամալիր, եթե անկեղծ ես, եթե այսօր Հայաստանում ապրող մարդուն է ուղղված քո հայացքը... Սովորողի, ուսուցչի, դպրոցի գործունեության մասին այսօր ով ասես չի խոսում. խոսելուց անցել են գործի, վարկանիշավորում են կպցնում. վարկանիշավորեմ՝ ընկնես – վարկանիշավորեմ՝ բարձրանաս... Գիտեք, ապրեցինք մի շրջան, երբ առանձին անհատներ բիզնես նախագծեր են իրականացնում, ամենատարբեր անուններով՝ «Տարվա մարդ», «Դարի գործիչ», «Ամենադպրոց», «Լավագույն տնօրեն» ու, անգամ, «Լավագույն նախարար», կոչումներ սահմանում-բաժանում... Բայց որ ուսումնական հաստատությունների «Դպրոցների ազգային վարկանիշավորման համակարգով» կզբաղվի կրթության և գիտության նախարարությունը... այդ ժամանակն է, ափսո՜ս: Իմ օրագրում ես կանդրադառնամ հեղինակային կրթական ծրագրերով «գնահատում» կոչվածին ու, ամեն անգամ, կոնկրետ օրինակներով. մանկավարժությունն այսպիսի գործունեություն է՝ մարդու հետ, մարդու մասին:

Գիտեք, ես միջազգային կրթական ծրագրերով ոգևորված չեմ, երբ դրանք դառնում են պետականի պես՝ թելադրող, քեզ վերապահելով լոկ կազմակերպողի-կատարողի դերը... Ես, մենք այդ ճանապարհով չգնացինք ի սկզբանե. մենք ստեղծվել ենք 1989-ին՝ իբրև հեղինակային կրթական ծրագրեր մշակող, կազմակերպող, տարածող մի ուսումնական հավաքանի և շարժվել ենք այդ նեղ-դժվար ճանապարհով միշտ դեպի լույս՝ մեր ուխտով: Հիմա եկել է մեր հեղինակային ծրագրերի միազգայնացման շրջանը. կկարողանա՞նք այստեղ էլ բեկում արձանագրել 2015-ին: Սկսել ենք հաջողությամբ, Վրաստանով... Բեկում «Հայ-վրացական հանրակրթական կամուրջներ» նախագծում: Այս հայտարարությունն անում եմ կիրակի օրով՝ մարտի մեկին, կրթահամալիրի գեղարվեստի դպրոցում, ուր Թբիլիսիի վրացական պետական մանկապարտեզների, դպրոցներից 35 տնօրեն-փոխտնօրեններ, դասվարներ-դաստիարակներ, կրթության գործի կազմակերպիչներ, աննման Քեթևան Աբեսաձեի և Վիկտորյա Բալավաձեի նախաձեռնությամբ, տեսեք՝ հեղինակային կրթական ծրագրերի հեղինակ սեբաստացի մասնագետների խիտ-արդյունավետ կազմակերպած դասընթացով յուրացնում են մեր մանկավարժությունը մի շերտում՝ դպրոց-պարտեզ միջավայրում, 5-6 տարեկանների անցումը, 2-10 տարեկանների զարգացումը... 35-ից 30-ը վրացի, առաջին անգամ են Հայաստանում, Երևանում, Բանգլադեշում, կրթահամալիրում... Տաշի-տուշին, ժողովուրդների բարեկամության՝ հաճախ կեղծ ու արհեստական բաժակաճառեր չկան, կա համատեղ ուսումնական աշխատանք, համատեղ պարզ կենցաղ մեր կացարաններում, համատեղ մշակութային ծրագիր...

Բոլոր տեսակի փաստաթղթերից, ծրագրերից, որ, աշխատանքի բերումով, հա՛մ պիտի գրեմ, հա՛մ կազմակերպեմ, որ գրվի... նախընտրում եմ ուղեցույցները... Եթե հիշում եք՝ 1993-97 թթ բլեյանական նշանավոր, աղմուկ հանած, հասարակական գիտակցության մեջ հետք թողած ուսումնական գրականությունը՝ «դասագիրք» կոչվածները և մեթոդականները՝ ուղղված ուսուցչին և մեր դեպքում, նաև ծնողին, սովորողին, կազմված էին որպես ուղեցույցներ... Ահա, 1-4-րդ դասարանների աշխատանքային տետրերը (գրքերը), 5-9-րդ դասարանների

թվաբանության, հայոց լեզվի և ռուսերենի խնդրագրքերը, ընթերցարանները նույնպես ուղեցույցներ էին... Դե, ամոթ էլ է, մասնագետ ուսուցիչը եթե չի կարողանալու ուղեցույցների օգնությամբ կազմակերպել դասընթացի ծրագիրը կոնկրետ դպրոցում, դասարանում, սովորողի համար, էլ ինչի՞ եք դպրոցի վրա ծախսեր անում... 1-4-րդ դասարանների մեթոդական ծրագիր-ուղեցույցները, 5-9-րդ դասարանների լեզվի ուսուցման ուղեցույցները հիմա էլ հաճույքով եմ թերթում, շուռումուռ տալիս՝ մարդավարի, մարդու կողմից ու մարդու համար արված կենդանի գործեր են... Ահա և ոչ առարկայական, ոչ կոնկրետ դասընթացի հետ կապված երկու ուղեցույց, որ այսօր էլ հավանում եմ, գործածում: Մայիսյան հավաքի պատրաստության այս շրջանում շտկել-ամբողջացնելուց հետո դնեք նորից շրջանառության մեջ, որ այն շարունակի մեր սեբաստացիական աշխարհի փոփոխությունների վեկտորն ու կերպը որոշել... ինչպես ահավասիկ տարատարիք սովորողին, ընտանիքին ուղղված «Թող գա սովորելու նա…» ուղեցույցը... Ու սրա կողքին՝ համարժեք, հանրակրթական պետական չափորոշիչով հաստատված-որոշված (նորմատիվ՝ Հայաստանով մեկ)՝ սովորողին ներկայացվող ընդհանրական պահանջները... Ո՞ւմ են ուղղված, քանի՞ ուսուցիչ, այլ քաղաքացի է կարդացել, որ կարդա, ի՞նչ անի, սրանով ի՞նչը չափես, ինչպե՞ս, ինչպիսի՞ գործունեություն կազմակերպես... Կամ «Կրթահամալիրի 2013-2016 թթ զարգացման հիմնադրույթները»... Եթե 2013-ին կարդացել, գործել, շարժվել եք սրանով, չեք ափսոսա. հասել ենք մի կետի, որտեղից կարելի է և՛ ետ նայել, և՛ առաջ՝ տեղում չմնալու համար... Հիմա սրա կողքին փորձեք ՀՀ օրենքի ուժ ունեցող լուրջ պետական ծրագիր դնել՝ «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը»: Իմ նման ծրագրասեր, գրասեր մարդն անգամ սրա կարիքը չունի. ո՞ւմ է ուղղված՝ հարցնում եմ... Սեբաստացի ուսուցիչներ, 2015-ի մայիսյան հավաքին պիտի ներկայանաք ձեր կազմած ուղեցույցներով՝ ձեր ու ձեր գործընկեր ուսուցիչների և սովորողների համար արված... Մայիսյան հավաքին մենք պիտի ներկայանանք մանկավարժության նոր սերնդի՝ ուսումնական գործի հեղինակային կազմակերպման համապարփակ ուղեցույցներով՝ տարատարիք սովորողի, ամեն ուսուցչի, ծնողի, մանկավարժական աշխատողի համար գործածական... Ես միշտ եղել եմ այն համոզման, որ դաս-դասարանային ուսումնական համակարգում մեկ դասագիրքը ենթադրում է, որ սովորողի պես ուսուցիչն իր առարկայի համար միայն դասագիրքն է գործածում, մեկ էլ «թեմատիկ» կոչված պլանը՝ որ թեմային քանի ժամ... Ահա ինչու սրա այլընտրանք մեր հեղինակած կրթական ծրագիրը «ինչպեսն» է՝ կազմակերպումը...

Արժե հիշել. 3-4 տարի առաջ, երբ մեկնարկեց նախագծերով ուսուցումը, որքան կասկած կար, որքա՛ն արժե-չարժե-գուցե... Հիմա ձեզ, չգիտեմ, բայց իմ աշխատանքի բնույթն այդ նախագծերը՝ անվերջ-զարմանալի, փոխել են. ես սկսել եմ հանդես գալ որպես տարատարիք սովորողների և մանկավարժական աշխատողների անհատական-խմբային բազմաբովանդակ ուսումնական նախագծերի աջակցության գրասենյակի ղեկավար...

Որքա՛ն տպավորիչ են Արման Երանոսյանի, Մերի Թելունցի նախաձեռնությամբ «Տնտեսական միամսյակի»՝ մեկը մյուսին հաջորդող հավաքները: Հավաքներ եմ ասել՝ որպես ուսումնական պարապմունքի հեղինակային ձևեր, երբ տարատարիք սովորողները՝ սկսած 6-րդ դասարանից մինչև 12-րդ դասարան ու քոլեջ, կարողանում են իրենց ազատ

ընտրությամբ, իրենց հարմար ժամանակացույցով ու տեղում ուսումնական-անձնային կյանքի հետաքրքրությունն ագահ բավարարել... Եվ ի՜նչ արդիական են և՛ թեմաները (բովանդակությունը), և՛ ներկայացման կերպը. երիտասարդ, հմայիչ, բարձրակարգ մասնագետներ՝ մեդիայի ու ռիթմի, լսարանի ակտիվ մշտական ռեժիմի պայմաններում: Ինձ համար հեշտ է այսպիսի միջավայրում. ես ներառված եմ լիարժեք՝ որպես անհատ մասնակից. և՛ հետաքրքիր է, և՛ ես իմ ակտիվությամբ կարող եմ փոխանցել, առաջարկել, զարգացնել...

Ինձ այնքան լավ զգացի հասարակագիտական ստուգատեսի մեկ ժամում՝ իրար հաջորդող վարպետության դասերի մեջ՝ Գրիգոր Ջանշյանի «Եղբայրական օգնություն հայերին» գրքի հովանավոր-հրատարակիչ Արամ Կարապետյանի, հայագետ Արտակ Մովսիսյանի, լրագրող Հակոբ Բաղալյանի... Ուրիշ Հայաստան է: Շնորհակալ եմ... Ստուգատեսի՝ այս անգամ, հասարակագիտական շաբաթի և առարկայական օլիմպիադաների տարբերությունը՝ ոնց որ սար ու ձոր, ոնց որ անգիրի (վերարտադրության) պետական դպրոցն ու համառորեն, և, այո, տպավորիչ հաջողությամբ կայացող նրա այլընտրանքը՝ մեր հեղինակած մանկավարժությունը... Քանի՜ մարդ՝ ուսուցիչ-տարատարիք սովորող, ու հասարակությունը՝ իր ամենագործուն հասարակագետներով մասնակցում է այս՝ հասարակագիտություն կոչվող ուսումնական հանրակրթական ստուգատեսին... Հաշվեք... Բաց-գրավող-ամենամյա... Քանի՜ սովորող առաջին հետազոտություն-ուսումնասիրությունը կանի ու կհավակնի մրցանակների՝ ամառային ճամբարների ուղեգրերի ձևով... Ի՜նչ նոր խթաններ-մտքեր-հավես կառաջանան այս ընթացքում՝ իրենց կյանքի ավազան-հասարակությունը ճանաչելու, ինչ-ինչ խնդիրներ ձևակերպելու-լուծելու... Լրագրողը, հավաքին մասնակից, շատ բան տեսած Նազենի Ղարիբյանը, Օլյա Ազատյանը, ես, այո, ես, անգամ Աշոտ Տիգրանյանը, անակնկալի էինք եկել 6-7-րդ դասարանցիների զրույցի անմիջականությունից, կոնկրետությունից: Դուք թեմայի՜ն մտիկ արեք՝ «Հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարները և վտանգները»...

Ամենատարբեր-բազմազան-համապարփակ տեխնոլոգիական ստուգատեսը, տեսեք, նաև ամենաթափանց է, ու ոնց է գարնան նման կենդանացնում կրթահամալիրը, նոր բնություն հաղորդում... Անի Հովհաննիսյանի դեմն անհնար է առնել, չի կարելի «չէ» ասել Անիի մտահղացումներին, անիմաստ մի՛ վատնեք ձեր էներգիան... Գործակցեք յուրաքանչյուր դպրոցում՝ կրտսերում թե Միջինում, Անի տեխնոլոգի հետ. 2-4 տարի հոգատար մայրիկություն անցկացրած, մեզ Լալիկ ու Վաչե խնամած-պարգևած Անին այնքա՜ն մտահղացում ունի ամբարած, որ շոնդալից բաժանում է, ստացեք: Մենք ստուգատեսի արդյունքում կունենանք, պիտի ունենանք, չենք կարող չունենալ ռոդարիական տիկնիկային-խաղարկային թատրոն-ծես-կյանքը՝ բոլոր տարիքների սեբաստացիների համար՝ տանը թե դպրոցում, անիվների վրա, բակում... Անիմացիոն թե կենդանի, ծիսական թե ստվարաթղթե, խամաճիկների թե սովորական տիկնիկների՝ ընտրության հարց է, օրվա, եղանակի, հավեսի, տեղի... Գլխավորը՝ խաղալով, հավեսով, թափով, ինքնաբուխ, անմիջական, ստեղծական... Ռոդարիական՝ ասել է թե՝ ստեղծագործելն առաջին տեղում: «Ծաղկաձո՞ն», թե՞ ծաղկով ձոն... Բայց ձոն-նվեր՝ մայրիկին-տատիկին-ուսուցչին-կնոջը՝ իր ստեղծագործությամբ, հիմա՝ ծաղկով (թաղար, ծաղկաթումբ, ծաղկային այլ լուծումներ), սրանից առաջ՝ իր կարդալով, Տերյան-Թումանյան-Չարենցով, իր թատրոնով, սրանից հետո՝ իր համերգով, իր ձեռագործով, կավե ամանով, գեղանկարով, այնպես, որ սովորողը կենտրոնանա ոչ թե պարապ, հաճախ

խեղճությունից եկող ինչ-որ նյութական փոխանակման, այլ տղամարդկային ուժի-շնորհի-հանճարի դրսևորման վրա... Կնոջ առաջ իր շնորհով հպարտանա՝ տես, ինչեր եմ կարողանում ես... Ահա ինչու «Զոն», ինչու տեխնոլոգիական կրթության ստուգատես-նախագիծ, ինչու մարտից սկսվող ու մինչև ապրիլի 10-ը ձգվող... Ես այս ուսումնական նախագծի սկզբում արձագանք գտած հրապարակումով հանդես եմ եկել «Դպիրում»: Վերադարձեք, խնդրում եմ: Մեզնից է կախված, մեր մանկավարժության նախագծային ուսուցման ղեկավարից, ով, այս դեպքում, միայն տիկին Շողիկը չէ՛, 2-6 տարեկանների յուրաքանչյուր դաստիարակ, ամեն մի դասվար, 4-5-րդ դասարանցիների կազմակերպիչ, երկարօրյա ուսուցիչ, ակումբի ղեկավար, պարզապես այս նախագծի հեռավարությամբ, հանրամատչելիությամբ ու կոնկրետությամբ խանդավառ տարատարիք սեբաստացի... Ամեն մի սեբաստացի՝ իր շնորհով, եթե չհամակվի ուսումնական աշխատանքով այլ միջավայր ունենալու մարմաջով, ցույց տվեք այլընտրանքի ու պետականի մի տարբերություն... Ստեղծագործելն առաջին տեղում. նախագծային ուսուցումը, այսպիսով, այս ժողովրդական-իրավական-մանկավարժական կոչը դարձնում է սովորողի ուսումնական գործունեություն... Մեր սովորողը պիտի կարողանա ընտանիքին հետևողականորեն ներգրավել այսպիսի հանրակրթական նախագծերի իրագործման մեջ, որ միասին տեսնեն, գնահատեն՝ ուսուցման արդյունքում փոխվող, այլ դարձող ընտանեկան-դպրոցական միջավայրը:

Այն, ինչ ցցուն արեցին մայրենիի ուսուցիչներ Հասմիկ Ղազարյանը, Նունե Մովսիսյանը, Սոֆյա Այվազյանը, ես նկատի ունեմ «Հրաչյա Աճառյան. հայոց լեզվի օր», «Ռաֆայել Իշխանյան», «Խաչատուր Աբովյան» ուսումնական նախագծերը, մեկ բառով ասած՝ հարգանքի արժանի է. ես ինձ լավ եմ զգում այսպիսի կրթական հաստատության գոյության փաստով, լսեցի՞ք, շնորհակալ եմ: Ուսումնական հուզմունքն էլ, գիտեք, ուրի՛շ վայելք է, ուրիշ շռայլություն, տիար տնօրենին վայել ապրում. անգամ կարող է դիտվել որպես հեղինակային կրթական ծրագրով ձեռք բերվող ցուցանիշ... Երեկ, Վարժարանի ընթերցասրահում, Աճառյանի ծննդյան օրվա առիթով մեծ հավաքում, հուզված էի: Ինքնաբուխ-կիրթ-ազնիվ եղավ այդ 45-50 րոպեն: Հասմիկ Ղազարյանի հետ համակարծիք ենք՝ այսպես հնարավոր է միայն գործընկերային համերաշխության միջավայրում, երբ Մարգարիտ Սարգսյանը, Ելենա Սարգսյանը, Թամար Ղահրամանյանը, Մարիետ Սիմոնյանը... առանց աչքի ընկնելու, երկրորդ՝ կարևոր պլանից աշխատում են, որ առաջին պլանում՝ կենտրոնում, լինի Հասմիկ Ղազարյանը: Երեկ՝ Նունե Մովսիսյանի համար, այսօր՝ Սոֆյա Այվազյանի, վաղը՝ Մարգարիտ Սարգսյանի... Յուրաքանչյուր սեբաստացի՝ ցանկացած տարիքում, յուրաքանչյուր տեղում, պիտի կարևորի իր մասնակցություն-նպաստը երկրորդ պլանից: Դուք տեսած կա՞ք, որ ես հենց այնպես ներկա լինեմ. պիտի գործես-լինես աջակցման ռեժիմում, լավ է երկրորդ պլանից, միշտ պատրաստ՝ նախաձեռնությամբ առաջին պլան մղվելու... Առանց համերաշխության-փոխօգնության ո՛նց առաջ մղվես, ի՞նչ թիկունքով...

Հիմա, երբ հաստատված են 2015թ. կրթահամալիրի աշխատողների պարտադիր սոցիալական ապահովություն ստանալու փաստաթղթերը, իմ ուշադրությունը համացանցում գրավեց այս հաղորդումը և տեսանյութը: Կարդացեք, դիտեք: Վստահ եղեք, որ կրթահամալիրի տնօրենի աշխատակազմը, «Մխիթար Սեբաստացի» արհմիութենական կազմակերպությունը 2015-ին առավելագույն ջանքեր կգործադրի փոքր-ինչ, բայց նկատելի

բարելավելու ձեր, սեբաստացի ուսուցիչներ բոլոր կարգի, առողջությունը, ֆիզիկական ինքնազգացողությունը... Երբ նայում եմ օրը մի քանի անգամ Մայր դպրոց մտնող-վերադարձող դասվար-դաստիարակ-կազմակերպիչ-գրասենյակների-ուսկենտրոնների ղեկավարներին, ծիծաղում եմ. տեսնես հայհոյո՞ւմ են, թե՞ շնորհակալ են այս մարտական-շարժուն վիճակի համար: Կրթահամալիրի մանկավարժական աշխատողների մարմնամարզական օրվա ուսումնական կարգը սեբաստացիական է. կուզեմ, որ այն, որպես ստուգատես, ամիսը մեկ, ինչպես համերգ, լինի, երբ յուրաքանչյուր աշխատող մեկ մարզական-առողջարարական խմբում է, պարբերաբար, շաբաթը մեկ օր պարապում է: Աշխատող տղամարդկանց – վարժարանի մի խումբ սովորողների ֆուտբոլային խաղն ու, ահա, այս կադրերը՝ մեր կին ուսուցիչների, կարող եմ նայել ու նայել... Զմայլանք, առողջության-գեղեցկության-ստեղծականության աղբյուր... Օրվա, շաբաթվա, ամսվա կտրվածքով ամենաշատը ես կանգնում եմ մարմնամարզական մեծ դահլիճի առաջ. անհամբեր եմ՝ այս մեծ մասնագիտացված սրահի լույսի-ջերմության-տանիքի հետ կապված աշխատանքների մեկնարկով...

Բլեյանի դպրոց. մասնավորի կրթական ծրագիր

Կարո՞ղ ենք լիարժեք գործարկել մասնավորի անհատական պատասխանատվության ներուժը

Հունվարյան ստուգատեսյան-ճամբարային օրերին ի՜նչ հաճախ-անկեղծ էին զարմանում մեր հյուրերը՝ իմանալով, որ Բլեյանի դպրոցը Բլեյանի սեփականությունը չէ՝ մասնավորեցված չէ, որ մենք պետական կազմակերպություն ենք, որ մեր հիմնադիրը Հայաստանի կառավարությունն է... Մեր մշակած, կազմակերպած ու տարածած կրթությունն է մասնավոր, որպես ստեղծագործ անհատի հեղինակային գործ, որպես դինամիկ զարգացող հավաքանիի՝ իրականացվող պատասխանատվություն: Իմ օրվա՝ այս օրվա, վաղվա, բոլոր գործերի-ջանքերի կիզակետում են սեբաստացի ուսուցչի, ծնողի՝ իր ընտրած կրթության մասնավոր լինելը, իր ապրածի հեղինակը լինելը, կրթահամալիրում որպես հեղինակ գործելը. միայն այս ճանապարհով մենք կարող ենք գործարկել ինքնուրույնության, ինքնակարգավորման, ինքնակազմակերպման այն ահռելի ուժը, որ 25 տարում կուտակվել է կրթահամալիրում: Այստեղ է համապարփակ ճգնաժամի պայմաններում ապրելու-գործելու, վիճակի հաղթահարման գործուն մասնակիցը լինելու ներուժը: Կրթական ծրագրերի հեղինակների խմբի հետ քննարկման մի թեմա է, մի խնդիր՝ *մասնավորի անհատական պատասխանատվության ներուժի լիարժեք գործարկումը*:

Հեղինակային կրթական ծրագիրը՝ որպես պետական կրթական ծրագրին այլընտրանք, պիտի ապահովի «առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների և մեթոդների բազմազանություն» Հանրակրթության մասին ՀՀ օրենքի հոդված 3-ի պահանջով: Ուսուցման գործի մասնավորեցմամբ, երբ հեղինակ-պատվիրատու-կատարող դառնում են ուսուցիչ-սովորող տանդեմը, մի կողմից՝ ծնողի, մյուս կողմից՝ կազմակերպություն-կրթահամալիրի պայմանագրային գործող

հարաբերություններով, կրթահամալիրն էլ պայմանագրով է կարգավորում իր հարաբերությունները հիմնադիր լիազոր մարմնի՝ կրթության և գիտության նախարարության հետ, լինում է այն, ինչ ունենք այսօր՝ կենդանի-գործող-ապրող-զարգացող-արձագանքող խճանկար-կազմակերպում՝ իր բազում չլուծված, ընթացքի մեջ լուծվող խնդիրներով... Իմ օրագրի ուշադիր ընթերցողը՝ տարատարիք սովորողի, ուսուցչի, ծնողի կամ այլ մասնագետի տեսքով, կվերցնի 2015-2016 ուստարվա սովորողի ուսումնառության պայմանագրի, նրա անբաժանելի հավելված ուսումնական պլանների և կազմակերպման բազմազանության ապահովման կարգերի նախագծերը... Այս ամբողջությունն է հեղինակային կրթական ծրագիրը: Ցավոք, մեզանում տեքստ կարդալու սովորույթ, պայմանագրի կողմին անհրաժեշտ հմտություններով, դժվար է առաջանում... Բայց այս արտահիրավականությունը հենց պետական կրթական ծրագրի արատն է, որի հաղթահարման խնդիր ունի և մեր ծրագիրը, մեր աշխատանքը ամենօրյա... Սա՝ իրավականությունը, հավասարությունը կողմերի՝ սովորող և ուսուցիչ, ծնող և դպրոցի ղեկավար, կրթահամալիրի տնօրեն և ԿԳՆ նախարարություն՝ ի դեմս նախարարի, աշխատակազմի ղեկավարի, տեսչության պետի... Բայց մենք ունենք շոշափելի առաջընթաց, ի պատիվ և՛ նախարարության, և՛ մեր իրականության...

Կրթահամալիրի մասնագիտական ժողովը երկու շաբաթը մեկ, փոխեփոխ վարչական խորհրդի հետ, նույն ժամին՝ 16.00, երկուշաբթի, մեդիակենտրոնի կլոր սեղանի շուրջ, նախօրոք հայտնի-հրապարակած օրակարգով և պատրաստած նյութերով սկսում են հեղինակային կրթական ծրագրերի բովանդակաստեղծ մշակումների համաձայնությունները: Կրթահամալիրի առաջատար բովանդակաստեղծ մասնագետների 21 հոգիանոց այս խումբը մասնաժողովն է, իրավասու՝ փորձարարական-հետազոտական միավորում կրթահամալիրի կանոնադրությամբ, նրա ստեղծման 1989-ից, իրավասու՝ իմ միջոցով կրթահամալիրի խորհրդի հաստատմանը ներկայացնելու ուսումնական պլաններն ըստ կրթական ծրագրերի, պարզաբանումներով, դասընթացների ծրագրերը, ուսուցման բովանդակությունը կազմող նյութերի ցանկը... Այսպես է ձևակերպվում, իրավական դառնում պետական այլընտրանք հեղինակային կրթական ծրագիրը: Հեղինակն էլ կրթահամալիրի դասավանդողն է՝ դաստիարակը, դասվարը, ուսուցիչը, այլ մասնագետ, ով իր տաղանդով, իր ազատությամբ, իր պատասխանատվության իրացմամբ մշակում, կազմակերպում, տարածում է հեղինակային կրթական ծրագրի առանձին բաղկացուցիչներ... Որևէ ստուգում, վարկանիշավորում, որևէ ձևաթղթեր՝ իրենց արհեստականություն պարտադրող գործակիցներով չեն կարող մեզ շեղել ապրելուց, կյանքից՝ կրթահամալիրի Բանգլադեշում, տանը, փողոցում...

Մեր խորհուրդը՝ որպես կառավարման բարձրագույն կոլեգիալ մարմին, յուրահատուկ է: Նրա հետաքրքիր դարձող բլոգը, վստահ եմ, շնորհիվ Հերմինե Անտոնյանի՝ խորհրդում ուսուցիչների ներկայացուցիչ-քարտուղարի, արագ կզբաղեցնի ամենամուտքային-մարդաշատ տեղերից մեկը և՛ մեդիայում, և՛ կրթահամալիրում... 2015-ի փետրվարի 6-ի նիստը կարևոր արձանագրում արեց. խորհրդի անդամները՝ նախագահ Արամազդ Ղալամքարյանով, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր Արեգ Գրիգորյանով, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի դեկան Հեղինե Խաչատրյանով ու Ս. Երրորդություն եկեղեցու առաջնորդ Տեր Եսայի քահանայով, ձևական պարտավորված կապով չեն խորհրդի կազմում. մասնավոր, կոնկրետ ու նրբանկատ էին խորհրդին ներկայացված հարցերի առնչվող նրանց դիտողությունները:

Խորհուրդն առաջարկեց կրթահամալիրի տնօրենին՝ անդրադառնալ ընդհանուր պարապմունքների առավոտյան կազմակերպմանը նորից՝ պահպանելու համար այն միասնականության-ոգեղենության լիցքը, որ իր մեջ կրում է հեղինակային կրթական ծրագրի կազմակերպման այս միջոցը: Խորհուրդը պաշտպանեց կրթահամալիրի գործադիր մարմնի՝ 2015-2016 ուստարում ուսումնական պլանում և սովորողի ուսումնառության պայմանագրում առաջարկվող փոփոխությունները, փոքր-մեծ՝ գնահատականի հարց է, կարևորեց՝ դրանք սեբաստացի համայնքի ակտիվ վերաբերմունքին ներկայացնելու ջանքերը: Ու, տեսեք, ինչպես անելը հիմա իմ մտահոգության առարկան է, եկել-հասել է ինձ աշխարհին կապող ամենակարճ-ամենաանկեղծ Օրագրին: Ահա, եկող տարվա ուստարվա ուսումնառության պայմանագրերը, ուսումնական պլանները, նախագծերը՝ ըստ կրթական ծրագրերի. սիրելի տարատարիք սովորող, ուսուցիչ, ծնող, դնում եմ ձեր սեղանին: Մեր կյանքում դրական-դինամիկ փոփոխությունների կարևոր ցուցանիշ եմ դիտում դրանց անհատականացումը, դրանք ձեր միջով անցկացնելը, ձևակերպման այս փուլից սկսած՝ դրանց որպես կողմ մասնակցելը: Պիտի կարողանանք իրար օգնել, իրական տեքստ կարդալու անհարմարությունը հաղթահարել, կեղծ-վիրավորական, իբր՝ դե լավ, վստահում ենք, ինչ կարդանք, տվեք՝ ստորագրեմ... Վստահությունը կոնկրետ օգնություն է ենթադրում՝ որպես փոխադարձ հարգանքի դրսևորում: Մենք՝ ես, յուրաքանչյուր դպրոցի ղեկավար, հեղինակային կրթական ծրագիրը, կրթահամալիրի նոր թափով զարգացումն այդպիսի օգնություն ենք խնդրում: Շիտակ-անխնա-մտավոր ներուժի առավելագույն դրսևորմամբ անհատական-իրական-էական դարձնենք պայմանավորվածությունը կրթության գործի կազմակերպիչներիս, մասնակիցներիս միջև՝ որպես մեկ համայնք: Ինչպե՞ս այս գործը դարձնենք առաջիկա տասնօրյակի կարևոր ուսումնական աշխատանքը և՛ դպրոցում՝ որպես պարտադիր, և՛ ընտանիքում՝ որպես լրացուցիչ, ֆիզիկական թե մեդիա միջավայրում: Ահա խնդիր, որով համակված եմ ես և ուզում եմ համակել ձեզ: Սովորող անհատի հետ քննարկում ենք իր անհատական կրթական պատվերը, որոշում դրա կազմակերպման առանձնահատկություններն այս փուլում: Լսելի ու կոնկրետ խոսելու ձեր ժամանակն է, սիրելիներս: Ես ուշադիր լսում եմ:

«Հեղինակային կրթության կազմակերպում» ստուգատես

Չկան սեղաններ-աթոռներ, ու նրանց բերած «չի կարելիների»-սահմանափակումների խոշտանգող աշխարհ.. Վերարտադրման (պատճենահանում-քոփի փեյսթ) պարտադրա՞նքը... Երբե՛ք... Ավելի լավ ճանաչելու համար նույն իրականությունն ու իրերը՝ պիտի տանը թե դպրոցում մթնոլորտը երեխայի նախաձեռնությամբ կենդանացնելու և հարստացնելու փորձեր անել... Այ, վերջապես, աջ ու ձախ, մեր կրթական աշխարհում ամեն ինչ սկսում է կենդանանալ՝ այլ դառնալ... Բրավո՛, նախակրթարան...

Գույն TV, Գույն ռադիո, Գույն լաբորատորիա, Գույն ջերմոց-պարտեզ, Գույն համերգ-դահլիճ, Գույն մարզանք, հիմա էլ հիացեք՝ Գույն խամաճիկների թատրոն: Այնքան գունեղ է, կենդանի-ստեղծական 2-րդ դասարանցիների աշխարհը, ու Կարինե Բաբուջյանը, իր մեծ ու պստիկ ընկերները ամեն օր ընդարձակում են իրենց կյանքը Գեղարվեստում: Ինչ ասեմ՝ մեկ նստած նայեցի, որ չխանգարեմ, չշեղեմ որպես հանդիսատես, մեկ վեր կացա, սկսեցի գնալ-գալ ոգևորված... Արհեստականությունը, մերս կասեր՝ «ձև քշել», որ օրգանապես տանել չեմ

կարողանում, չշփոթեք արտիստիզմի հետ... Այսպիսին է ահա մեր մանկավարժության շոշափելի ցուցանիշը՝ անձնական-անհատական՝ որպես ներքին պահանջմունք, Կոմիտասն ասում էր՝ երգեք ձեր տանը, ձեզ համար, այլք ականջներ ունեն, կլսեն... Չե՞ն լսի... Մենք սեբաստացիական աշխարհի ժողովրդով ինքնաբավ ենք՝ որպես գնահատող հանրույթ, իրար լսենք՝ անտարիք, անսահման, անհոգնել... ինչպես՝ ես ձեզ եմ լսում, տեսնում, արձագանքում: Ընտրված բնագավառում, օղակում ուսումնական գործիքակազմը նվիրատվությամբ միանգամից որակապես փոխելու տոնական ակցիաներ կրթահամալիրում հետևողական են իրականացվում: Որքան էլ դրանք արտիստիկ-սպոնտան են ներկայացվում, խնամքով նախապատրաստվում են իմ «իմաստուն ղեկավարությամբ» (մեջբերում Գրիգոր Խաչատրյանից)՝ որպես ներդրումային ծրագրեր: Այս օրերին «Հեղինակային կրթության կազմակերպում» ստուգատեսի շրջանակում մենք ունեցանք ոսկերչության նորացած իսկական արվեստանոց-լաբորատորիա. Արհեստագործական ավագ դպրոցի 20-ի չափ սովորողներ, իրենց եռանդուն ոսկերիչ-մասնագետ Հայկ Սարգսյանի կազմակերպմամբ, եկեք՝ տեսեք, ոնց են թևերը քշտել աշխատում՝ մեզ մոռացած...

Միանգամից «Սեբաստացի» ռադիոյի բոլոր ութ դպրոցական խմբագրությունները ունեցան թվային մոբիլ ձայնագրիչներ՝ վաճառքում ներկայացված արդիական մոդելներ: Սրանց համար ինձ շատ օրինեցիք-գովեցիք, շնորհակալ եմ. գործեք, ես համակ աչք ու ականջ եմ: Իմ աշխատակազմով կարողանում եմ լրացուցիչ կրթական ծառայությունների համար սեբաստացի ծնողների ամենամսյա ուսումնական պայմանագրային լրավճարներից ձևավորել հեղինակային կրթություն ներդրումային ծրագիր, վերադարձնել ձեր ծնողների գումարները ձեզ, որպես ուսումնական աշխատանք, ձեր խմբային-անհատական արտադրողական-ստեղծական գործունեության լաբորատոր-արհեստանոց-արվեստանոցային միջավայրում... Ստացվում է:

Միշտ ուզեցել եմ, որ կրթահամալիրն ունենա ճարտարապետական նախագծային արհեստանոց-լաբորատորիա, որ այդտեղ ծնվեն, քննարկվեն-գծագրվեն նախագծերի տեսք ստանան այն գործերը, որոնք միասին պիտի իրականացվեն... Հայերիս համար, ավա՜ղ, շատ հաճախ, նախագծման փուլը կա՛մ շրջանցվում է, կա՛մ անփույթ է արվում... Վոլֆգանգ Գյոթեի հուշապատումը ինձ համար եղավ բանալի, թե ինչպես է կառուցվել Գերմանիան. ի՜նչ խնամքով գերմանացի մարդը Գյոթեից առաջ, Գյոթեի ժամանակ, Գյոթեից հետո ու հիմա մոտենում է իր կառուցելիք տան նախագծմանը: Անպայման Գյոթե կարդացեք: Կկարողանա՞նք հեղինակային ուսուցմամբ աշխատանքի նախագծման մշակույթ ձևավորել, կկարողանա՞նք նախագծման համար անհրաժեշտ պատրաստություն՝ հմտություններ փոխանցել այնպես, որ սովորողը՝ վեց տարեկանից սկսած, մատիտով թե մկնիկով մտմտա կառուցվելիքի-անելիքի նախագծման վրա, փորձի պատկերացնել ամբողջը, անգամ եթե հմտությունները առայժմ բավարար չեն այն պատկերացնելու համար...

Կկարողանա՞նք 2015-ի մարտ-ապրիլին իրականություն դարձնել ճարտարապետի նախագծային արվեստանոցի ստեղծումը... «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հետ մեր համագործակցության մեկնարկն այսօր տրվեց համաձայնագրով: Երկու կողմից ուզեցել ենք, որ այսպիսի գործընկերություն հաստատվի և հեռանկար ունենա: Տեխնոլոգիական հանրակրթության

մարտ-ապրիլը ամենալավ շրջանն է համաձայնագրի ընթացքի համար. պատկերացնենք մի պահ վարպետության աշխատանքային օրեր, երբ համալսարանի ապագա ճարտարապետ-ուսանողների ու ավագ դպրոցի նախագծող (նկարող) սովորողների համատեղ խմբերը մասնագետների ղեկավարությամբ սկսում են 2015թ. կրթահամալիրում նյութական միջավայրի բարելավման նախագծերի վրա աշխատանքը... 2014թ. հունիսը հիշո՞ւմ եք, բանգլադեշյան պլեները ինչպիսի աշխուժություն-զովություն բերեց, որը կշարունակի արդյունավետությամբ-թափով 2015-ի հունիսյան պլեները, եթե դրան նախորդի անելիքի նախագծման մարտ-ապրիլը:

Պետական կրթական ծրագիրը իրական կյանքում հենց հանդիպում է դժվարության, ասենք ամեն օր՝դասարանում, նույն պահանջ-պայմանն է ներկայացնում՝ մի խանգարիր, եթե չես օգնում, չես կարող օգնել... Մեր հեղինակային կրթական ծրագիրը՝ իր հիմնադիր տնօրենի ուժով, Մայր դպրոցի Մարմարյա սրահում ընդհանուր պարապմունքի՝ ամենուրբաթյա, 15:15 սկսվող 45 րոպե տևողությամբ համերգ-ներկայացման ժամանակ տարատարիք (չկան սովորողներ և ուսուցիչներ ռանգավորված, կան մասնակիցներ) մասնակիցներին կոչ էր անում խանգարելու՝ ինչով կարող էին, երբ ելույթ էին ունենում պատանեկան երգչախումբը կամ կրթահամալիրի նախակրթարանների դաստիարակների «Շրխկան» համույթը... Ու խանգարում էին, ով ինչ շրխկան ուներ ձեռքին, չունեցողները՝ մշտական երաժշտական գործիքներով՝ձեռք ու ոտքով... Իսկական համույթ... Ով չէր լսում՝ սկսեց, ով չէր համաձայնեցնում իր գործողությունները, սկսեց... Կենդանի-զարգացնող համույթ: Մյուսներն էլ մարզական գործիքներով, օղակներով ու թունելներով կրկեսային համարներ էին ցուցադրում: «Նոր դպրոցի» 5²-ի Արարատ Քելեշյանի մոր անհանգստությունն առիթ դարձավ, որ Արարատը, երիտասարդ-ընդունակ-կազմակերպված մայրիկը՝ տիկին Սոնան, կազմակերպիչ Անահիտ Գևորգյանն ու ես երկար ու կոնկրետ քննարկենք Արարատի ուսման հետ կապված խնդիրները կենտրոնական ընթերցարանում... Մանրամասներով չեմ ծանրաբեռնի... Արարատն այնքան ինքնուրույն է, իսկական սկաուտ, որ Զեյթունից մենակ գալիս ու գնում է, ընթացքում հաճախում շախմատի ակադեմիա, առաջադիմում, հետ չի մնում երկարօրյա մնացող ընկերների ֆուտբոլային խաղերից, ու ... հայտնի ձախողակ է... Ինչ գորովանքով-շիտակ-կոնկրետ է մայրիկը մոտենում թե՛ դպրոցին, թե՛ Արարատին, թե՛ իրենց. կարծես ստուգում է իմ վերաբերմունքը-դիրքորոշումը այս ամենին: Այսպիսի պահանջկոտությունն է, որ սկսվում է ընտանիքից, տարածվում սովորողի ու դպրոցի վրա, անխնա ու մարդկային միշտ, որ որպես պատվիրատու՝ զարգացնում է մանկավարժությունը: Չի կարելի այսպիսի պատվիրատուին հարգանքով չվերաբերվել, նյարդայնանալ նրա՝ մեր իրականության համար անսովոր բծախնդրությունից ու կոնկրետությունից, ինչ է թե մեր երևանյան ավանդույթն այլ է, չի կարելի ասել՝ դե, լավ, էլի, բան է, եղել է... անցել է: Եղել է, բայց չի անցել. կողմերի գործողություններին գնահատական չի տրվել, չի որոշվել՝ ինչու է եղել, ինչու պիտի չկրկնվի... Ես անշտապ խորանում եմ, պարզում ամեն մի դետալ՝ ինձ շարունակ լավ զգալով, որ հենց «մանրունքներից» ենք խոսում. ինչո՞ւ արտակարգ պատահարը՝ սովորողի քթից արյուն գալը (ում մեղքով, որտեղ՝ կարևոր չէ) չի գրանցվել սահմանված կարգով, ինչո՞ւ ֆուտբոլի մարզիչ-ուսուցիչը չի ուղեկցել տղաների խմբին մինչև հանդերձարան... Ես լավ եմ զգում, որ Անահիտը Արարատի, նրա ընտանիքի մասին գիտի հնարավոր առավելագույնը, միշտ խանդաղատանքով է վերաբերվում նրան, նրա կողքին է՝

հաճախ ի վնաս իրեն... Ընտանիքն էլ է գնահատում սա, Նոր դպրոցը ու էլի շատ կարևոր բաներ, որ երկու երեխային թողնում է Զեյթունից ամեն օր ինքնուրույն այսպիսի ճանապարհ կտրել... Մի՛ խուսափեք կոնկրետից, լուծեք այն, հաստատեք ընտանիքի ընտրության ճշմարտացիությունը, ու վերջ

Մեր ժամանակների տիրակալները

1994-1996 թթ, չե՛ք մոռացել, ստեղծվեցին-հրապարակվեցին, իմ նախարարությամբ հանրայնացվեցին երկու տասնյակի չափ, ուրիշ անուն ման չգամ, դասագրքեր կամ «Բլեյանական» անունը ստացած մանկավարժական գրքեր, որ մտան ամեն մի գյուղ-քաղաք-դպրոց-դասարան: Քսան տարի է անցել, անցնում է, ահա, կանցնի... Առիթներ եղել են, մեղադրել ենք՝ ինչո՞ւ նոր գրքեր չեն գրում մեր դասական դարձած ծույլերը՝ Գևորգը Հակոբյան, Սուսաննն ու Մարիետը, Աիդան... որ նայում ես, այդքան էլ ծույլ չեն իրականում՝ առավոտից իրիկուն ժրաջան բանում են, խմբագրում, թարգմանում, կարդում, դասավանդում, մանկավարժության մեջ են ու բեղուն են հաստատ, բայց դասագիրք, ուղեցույց չի գրվում... Այն էլ, ինչ Աիդայի ձեռքից թռչում է, իմ հանդիմանությանն է հանդիպում... Համ, համ, համ, համ... քանի՛, ախպեր, գնամ ու գամ... Փորձեր եղան այս ընթացքում՝ Դալուզի (Նաիրա Դալուզյան), կարծեմ, ... էլ չեմ ասում՝ մեր Անահիտ Արնաուդյանի ու Գայանե Բեղիրյանիկողմից... Մենք կիրթ օտարվեցինք, հանդուրժող լռեցինք... Չխրախուսվեցին, սպառվեցին 20 տարեկան դարձած, ֆիզիկապես մաշված, թարմությունը կորցրած, լեզուս չի բռնում, թե մի վատ բան ասեմ, գրքերը... Թվայնացվեցին-պատճենվեցին, հեղինակային իրավունքները պահվեցին. մանկավարժության մեջ հեղինակություն են եղել ու մնում են սան-գործընկերների, դասվարների, մայրենիի ու թվաբանության վառ-գրավիչ երիտասարդ ուսուցիչների խմբի համար: Այսպես ընդհանրապես քիչ է լինում, եզակի է. իմ քսան տարեկան ուրախությունը փոխանցեմ...

Ինձ համար այն ժամանակ էլ, հիմա էլ, հեշտ է. հեղինակ չեմ, հեղինակային խմբի ծառայությունների կազմակերպման տնօրեն եմ: Հիմա էլ այդ դիրքից եմ հանդես գալիս: Ասի՝ մի գնահատեմ վիճակը քսան տարի անց: Նախ մեր՝ 1994-1996-ի մի կարճ շրջան պետականի այլընտրանք դարձած դասագրքերը, որ վաղուց պետական են, և իբր իրար հետ մրցում են տարբեր անուն-ազգանուններով, ի՞նչ վիճակում են: Վերցրի 2014-15 ուստարում 1-ին դասարան գնացած 6 տարեկան սովորողներին անվճար տրված գրքերը՝ «Այբբենարան», մաթեմատիկայի 1-ին, 2-րդ մասերը, մայրենիի 2-րդ մասը... Հեղինակներին ճանաչում եմ, հետները կռիվ չունեմ, հատկապես հայտնի են այսքան տարի նույնանուն գրքերի այլ հեղինակների դեմ հաջողությամբ պսակված պայքարով... Ի՞նչ է փոխվել. կներեք, բան չի փոխվել, հինգ րոպեից ավելի անելիք չեմ տեսնում... Նույն մանկավարժությունն է՝ ինձ համար այդպես էլ անկազմակերպ մի շարադրանք... ոնց էլ որոշում են հերթականությունը... Նկարչական առումով էլ վանող են. քսան տարում սա է մեր հրատարակչական-մանկավարժական ձեռքբերումը՝ մեդիայի այս պայմաններում... Այսպիսով, մենք դասագիրք չստեղծեցինք-չհրապարակեցինք-չտպագրեցինք, այլոց (պետական) արածն էլ իսկի չենք հավանում, որ մեր հեղինակային մանկավարժությունն ընտրած սովորողի ձեռքը, ձեռքներս չի գնում, լեզուներս չի բռնում՝ ուղղորդենք... Խանդ չէ, հաստատ, անկարողություն էլ չէ... Այ,

սրա մասին է, որ ուզում եմ պատմել. մի կողմից՝ չեմ էլ սկսել պատմությունը, մյուս կողմից՝ կարծես, սովորեցի...

Այ, այսպիսի տպագրական անշարժություն հաստատեց մեզանում մեր հավատարմությունը մանկավարժությանը, հատկապես, վերջին տասը տարում բուռն զարգացավ-նորացավ-ամբողջացավ մեր հեղինակած մանկավարժությունը, նախագծային ուսուցման ստուգատեսային-ճամբարային-օրացուցային մեդիակերպը ստացավ՝ միշտ վանելով մեկ դասագրքի, մեկ հեղինակության պարտադրանքի ստեղծումը՝ տպագիր թե էլեկտրոնային ձևով՝ մեկ է, շարունակ մնալով որպես ուղեցույց-աջակցություն, յուրաքանչյուր սկսնակ թե փորձառու ուսուցչի վերապահելով և՛ դասընթացի ծրագրի, և՛ ուսումնական նյութերի ստեղծման (ընտրության) իրավունքը... Այն, ինչ արել ենք, արվել է, հասկացանք, քսան տարի առաջ էր, դուք հիմա ձերը ստեղծեք, ձեր որոշումները կայացրեք...

Թվում է՝ ուսումնական ամենօրյա պարապմունքների ժողովածու ստեղծում է մեր դասվարներից, մայրենիի-մաթեմատիկայի-հասարակագիտության-օտար լեզվի ուսուցիչներից յուրաքանչյուրը... Մայիսյան հավաքին կարելի է ներկայացնել յուրաքանչյուր դասավանդողի ուսումնական պարապմունքների, ուղեցույցների անհատական ժողովածուն: Ջանի Ռոդարիի «Երևակայության քերականությունը», Ջ. Փոյայի «Ինչպես լուծել խնդիր»-ը, Օշականի ընթերցարանը մեր հեղինակած (հավատարմության երդումի պես ստացած) մանկավարժական սկզբունքների ազդեցությունը մնում են հիմքում. ո՛չ ուզում ենք, ո՛չ էլ մանկավարժությանը հավատարմորեն ծառայելու պարագայում հնարավոր է հաղթահարել: Տեսաք, չեղավ: Ինչ ասեմ, ուրախ եմ. առանց այսպիսի հավատարմության այսօրվա կրթահամալիրը՝ իր այսօրվա խնդիրներով, կյանքով, չէր լինի, ոչինչ էլ չէր լինի, ավերակ կլիներ՝ հոյակապ, բայց ավերակ: Մեր ունեցածը կենդանի, ապրող, առաջացած ավերակները մաքրած, նորի-նորոգվածի-նորացվողի ամբողջական պատկերով կառույց է՝ տեսանելի, գրավիչ համայնապատկերով՝ հասարակական անգամ այսպիսի կյանքի պայմաններում... Մայիսյան հավաքը, սիրելիներս, որ 10-րդն է, պարտադրում է այսպիսի մի պատրաստություն՝ քսան տարվա մեր չարածի (կեցցե՛ք), ու յուրաքանչյուրիս անհատական արածի ժողովումով:

Յուրա Գանջալյանը ճշգրիտ է, անկեղծ՝ իր այս հրապարակման մեջ... Այո, միայն միջազգային-մեկ չափում կարող է լինել այսօր մեր հեղինակած մանկավարժության համար. այս չափումով-պահանջով այսօր պիտի հանդես գա յուրաքանչյուր սեբաստացի, ինչպես Հռիփսիմե Առաքելյանն է իր երրորդ դասարանով ջանում Երևանում ու Թբիլիսիում, ինչպես Մարթա Ասատրյանն է իր դեռահաս պատանեկան-ակումբային նոր միաձուլմամբ հանրակրթական-բնապահպանական ճակատի առաջին գծերը նվաճում... ամենուր՝ Հայաստանով մեկ, հիմա էլ՝ Վրաստանում: Իհարկե: Մեզ ինքնավստահության պակասը, ագահության՝ խիզախության չհասնելը կարող են խանգարել ու... բարեխղճությունը՝ քո ու քո ընկերների 25 և ավելի տարիների ստեղծական աշխատանքի ներկայացման համար...

Ինչպե՞ս ենք հաղթահարելու փակ շրջանը

Ծրագրի, դպրոցի ղեկավարն ունի հարմար գործիք (ֆոտոապարատ, ձայնագրիչ), որին (որոնց) նա լավ է տիրապետում. սա մեդիակրթության պարտադիր պահանջ է, որ պիտի ապահովվի կրթահամալիրով մեկ: Դպրոցի հարգելի ղեկավարներ-կազմակերպիչներ, եկեք Մայիսյան հավաքի պատրաստության այս ընթացքում ապահովենք այս ստանդարտը: Ծրագրի ղեկավարը, այսպիսով, մասնակից է դառնում կրթական առօրյային կոնկրետ՝ ամբողջությամբ սուր աչք ու ականջ դառնալով, տեսնում-լսում-գրանցում, մեկնաբանում-տարածում, անդրադառնում, կարևորում, շեշտադրում... Ես մասնակից դարձա ներկայացված պարապմունքին. տեսարան էր, տպավորված եմ, Արմինե ու ընկերներ, այնքան, որ շնորհակալ եմ: Կրթական օբյեկտի ներսի ու դրսի անջրպետները՝ և՛ նյութական, և՛ հոգեբանական, և՛ կազմակերպչական, պիտի հիմնովին-հետևողական ջնջվեն, որ գործուն դառնանք ամբողջական-ներառական կրթական միջավայրի հետ: Ապրիլյան աշխատանքները պիտի Մայիսյան հավաքի օրերի կազմակերպման այսպիսի նպատակ հետապնդեն:

Ընտանիքի ու պարտեզի սահմանները, պատերն այսպես են քանդվում. ահա ինչու եմ պնդում համառորեն, որ ամեն խմբի դաստիարակ ու օգնական, 1-3-րդ դասարանի դասվար կրթական ծրագրի փաստացի ղեկավար է իր 20-25 սան-սովորողների համար, ահա ինչու նրանցից յուրաքանչյուրը պիտի Մայիսյան հավաքին ինքնադրսևորվի-ներկայանա ամբողջական՝ որպես կրթական ծրագրի մշակող, կազմակերպող, տարածող՝ տանը թե դպրոցում, Հայաստանում թե Վրաստանում:

Այսպիսի նախագծային-ակումբային աշխատանքները մեզանում կամավորական աշխատանքի հեղինակային կազմակերպման նոր մշակույթ են ձևավորում կրթահամալիրում, Մարգարիտ Սարգսյան ու ընկերներ. Մայիսյան հավաքին 2014-2015 ուստարվա Վարժարանային-կրթահամալիրային փորձը պիտի ի մի բերվի-պատշաճ ներկայացվի. սա նաև հեղինակային մանկավարժության՝ որպես տեխնոլոգիայի փոխանցում է, որ նման ձևերով գրավիչ ներառվում է ավագ դպրոցականի (վաղվա հոր-մոր, հասարակության ավագ անդամի) անհատական կրթական պլանում...

Կրթահամալիրում, որպես ուսումնական պլանով «Տեխնոլոգիայի» բաղկացուցիչ, ավելի պիտի կարևորվի ազգային խոհանոցի ուսումնասիրումը, որպես մեր կենցաղային մշակույթի յուրացման կարևորագույն տարր: Աչք շոյող խոհանոց-լաբորատորիաներ ունենք մեր բոլոր դպրոցներում՝ 10 խոհանոց՝ չհաշված խմբասենյակների խոհանոցները... Այսպիսի նյութական միջավայրը, գործիքակազմն ինչպիսի՜ ուսումնական-բիզնես-նախաձեռնողական խնդիրներ են լուծում... Բավարա՞ր են ջանքերը, արդյունքները... Զատկական օրերի այս շրջանի պատշաճ հարցադրումներ են, որ պիտի զարգացվեն-ձևի բերվեն մինչև Մայիսյան 10-րդ հավաք...

Նորաստեղծ պտղատու ուսումնական այգու տարածքը՝ ցանցապատ, մաքուր, փոսերը՝ փորված, սնահողը՝ բերված, տնկիները՝ Կարբիի տնկարանից մեկիկ-մեկիկ ջոկված-բերված... պատրաստ է կանգնելու գեղեցիկ ու կենտրոնական, բացառիկ դիրքով ու նշանակությամբ: Արտեմ Խաչատրյանը՝ ուսումնական պտղատու այգու համակարգողը, Արհեստագործական ավագ դպրոցի-քոլեջի իր ընկերների հետ նոր մշակույթ է բերում բնակելի զանգված,

կրթահամալիր… Այգին պտղատու գալիս է կանգնելու կրթահամալիրի գյուղացիական ուսումնական տնտեսության կողքին՝ պարտադրելով 2015-ի հունիսին նախատեսված սեբաստացիական ուսումնական ճամբարները կազմակերպել աշխատանքային-ստեղծական նախագծերի իրականացման տարատարիք ջոկերի-ջոկատների ձևով… Իմ 288-րդ գրով հաստատում եմ 2015-ի հունիսյան այսպիսի բաց, ուսումնական, տարատարիք սովորողներով ճամբարների նախագծման փուլի մեկնարկի մասին: Կայցելենք մեր նոր գործընկերներին՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ, ճարտարապետա-շինարարական ֆակուլտետ. մենք պայմանավորվել ենք նախագծման աշխատանքներում ներգրավել ուսանող-դասախոս ճարտարապետներին, մասնագիտական-բարեխիղճ մոտենալ շրջակա միջավայրի բարելավման-բարեկարգման-էսթետացման՝ հունիսին կատարվելիք գործերին: Երկու հազարի չափ սովորող-ուսուցիչ սեբաստացիներ, մեր ճամբարում ներգրավելով Արցախի, Վրաստանի, Երևանի, Հայաստանի մարզերի սովորողների և ուսուցիչների, ճամբարային գործունեությունը կդառնա իսկապես գրավիչ-ուսումնական-իրական…

Մենք չենք կարող չունենալ մեր տնկարանը՝ որպես ամենախնամված, կրթահամալիրի խորհրդանիշ դարձող ուսումնական տարածք… Երկրագործությունը, որպես ուղիղ ճանապարհ, թե՛ դեպի Հայաստան, թե՛ Հայաստանը փոխելու, ենթադրում է, որ այն պիտի դառնա, չի կարող չդառնալ կապ երկրի ու իր գործչի միջև, կրթության բովանդակություն ու կազմակերպում: Տեսեք՝ մի կողմից «Ես և շրջակա աշխարհը», բնագիտություն, կենսաբանություն, կենդանաբանություն, անատոմիա, աշխարհագրություն դասընթացների ձևով որքա՜ն ժամանակ է հատկացվում մարդու, բույսի և կենդանու ուսումնասիրմանը… մյուս կողմից՝ որքա՜ն անկարող է պետական հանրակրթական ծրագրով անցած մարդը՝ ինքն իրեն խնամելու, առողջ ապրելակերպի, ինքն իր բժիշկը լինելու հարցում… Որքա՜ն թույլ է կապված իր հողի, պարտեզի, կենդանական աշխարհի հետ, չի ճանաչում-չի կարողանում-չի խնամում… Այդքան ժամանակ հատկացնում է գնահատականներ ստանալու, քննություններ հանձնելո՞ւ համար: Սրա այլընտրանքը մեր հեղինակային կրթական ծրագրով կարողություններ ձեռք բերած սովորողն ու մանկավարժն են, մեծահասակը: Ահա ինչու պարտեզները, ջերմոց-լաբորատորիաները, պտղատու այգիները, տնկարանը, գյուղացիական տնտեսությունը, ընտանի կենդանիների խնամքը-բուծման արհեստանոցները, առողջագիտության կաբինետները, տեսեք, իսկական ուսումնական վարժարաններ են դառնում, իսկական ուսումնական-ստեղծական աշխատանքներ: Հեռուն տանող ու ճիշտ հանգրվանի հասցնող նախաձեռնություններ են, որ ուշացած, երբեմն ձախողված, բայց հետևողական, մի գծով շարվում են՝ սեբաստացիների ուղիղ ճանապարհ դառնում: Հետևողական գործենք: Ե՛վ բնապահպանական նախագծերի ապրիլյան ստուգատեսը, և՛ Մայիսյան ստեղծագործական հավաքը, հունիսյան աշխատանքային ջոկատները մի կարևոր հարթակ են մեր կանաչ-կենդանի-խնամված երկրի՝ կրթահամալիրի Բանգլադեշի, ձեռք բերված ինքնազարմանքի համար՝ մեր ուսումնական երկրագործությամբ: Ես որ այսպիսի ինքնազարմանքի պահանջով եմ ապրում… Հետևողականությունը մեր երկրագործի հաջողության պսակն է:

Արտեմ Խաչատրյանը՝ կրթահամալիրի Քոլեջ-արհեստագործականի ղեկավարը, որ նկատելի օգնում է ինձ պարտեզա-պուրակային աշխատանքներում, համակարգում գյուղացիական

ուսումնական տնտեսության ստեղծման նախագիծը, կարևոր մի պատմություն արեց Քոլեջին հարող շենքերից մի բնակչի մասին, որ Քոլեջի «Կասկադ» պտղատու այգու տարածքից պարկերով սնահող է տարել իր բոստանի համար... Այգին հանրային է, Աստծունն է, վերևից բարիք է թափվում, ու «պարտավորվածներն» աշխատանք են կատարում ո՛չ իր համար. այգին իրենը չէ, իրենը բոստանն է, ու ինքը՝ բոստանի պատասխանատուն... Ու սա համատարած մտածողություն է, կրթահամալիրի դպրոցներին հարող շենքերով մեկ... Չգնանք մոտակա-հեռավոր անցյալ, օրվա նյութի վրա շարունակեմ ասելիքը. ապրիլին հազարավոր բնակիչների մեջ՝ ունևոր ու չունևոր, զբաղված ու գործազուրկ, տարատարիք, կուսակցական-անկուսակցական, չգտնվեց մեկը (ոչ սեբաստացի ծնողների մասին է խոսքը), որ գար ասեր՝ այս 6-ից 18 տարեկան տղաներն ու աղջիկները, ուսուցչուհիները մեր աչքի առաջ, բոլորիս համար ի՛նչ կարևոր-պայծառ գործ են անում, բարեկարգում-կանաչապատում-ծառապատում, մեր շենքերի շրջակա միջավայրն աչքահաճո ու փոշիազերծ դարձնում, ես էլ միանամ՝ մի բահ, մի փոցխ, մի փոս, մի գործ... մի օգնություն... համերաշխության մի դրսևորում... Չիք:

Առանց տնտեսական ազատության, առանց ինքնուրույն փող աշխատելու, ձևակերպում եմ, առանց քո՝ կյանքով, կրթությամբ ձեռք բերած կարողություններով գործելու-բանելու-նախաձեռնելու-բիզնես անելու՝ տնտեսապես ինքնուրույն լինելու՝ ի՞նչ ազատություն-ինքնորոշում. հարցնում եմ: Այս օրերին իմ հարազատի հետ կապված, իմ հին ընկերոջ տղայի ու ծանոթ մեկի աղջկա հետ կապված՝ ես բախվեցի այս խնդրին, խորությամբ շարունակում եմ ապրել այս ողբերգությունը. լավ, չափահաս են, լավ, սովորել են՝ բարձրագույն կրթություն ստացել, ծառայել բանակում, հեռակայում են, 20-30 տարեկան են, տանը նստել չեն կարող-չեն ուզում-անհնար է, բայց ի՞նչ անեն, ի՞նչ աշխատեն... Մի գործ, մի բան, մի զբաղմունք... Ասեք՝ խորհրդային ավանդության իներցիայով, տիրապետող սպառողի դպրոցով, երկրից փախչող հասարակությամբ ինչպե՞ս ենք հաղթահարելու այս փակ շրջանը...

Արհեստագործականի մեր ջերմոց-լաբորատորիայում՝ դրախտի մի անկյունում, Շողիկ Պողոսյանի հետ սուրճ էինք խմում, ու ես, Շողիկի օրինակով, Շողիկին ներկայացնում էի այս խնդիրը, դրա կարևորությունը, կրթության կազմակերպման համար սկզբունքային նշանակության, մեր առջև հաստատված փակուղին հաղթահարելու առաջնահերթության մասին: Ինչպե՞ս մարդուն պոկես գետնից, ինչպե՞ս նոր՝ այլ ընթացք հաղորդես, ինչպե՞ս անես, որ ձեռքերը քոր գան, ինչպե՞ս երկրագործությունը դառնա հանրակրթություն, ինչպե՞ս երկիրը մշակողի գործիքները դառնան ուսումնական, ինչպե՞ս ուսուցիչ ու սովորող, հանրակրթական դպրոցի շրջանավարտը երկրագործությամբ փող աշխատեն... Ասել եմ, չէ՞, հաստատելով Միքայել Նալբանդյանին՝ երկրագործությունը ուղիղ ճանապարհ է: Այո, ես խոսում եմ քաղաքային դպրոցի մասին. քաղաքաբնակ սովորողի համար երկիր է ոչ միայն դպրոցը, դպրոցական բակը, տունը-տնամերձը, սեփական բիզնեսը, այլև շրջակա միջավայրը, փողոցը, քաղաքը, հանրապետությունը...

Կարո՞ղ է լինել ավելի պատշաճ-համապատասխան արձագանք իմ 300-րդ հոբելյանական գրին, քան «Բանգլադեշ անիվների վրա» ապրիլի 17-ի երթ-ակցիան... Մեռել է հանրային, անծանոթին, պարզապե՛ս աջակցությունը, ապրումակցությունը, ոգևորվածությունը, խանդավառությունը... Ահա ինչու մեր բոլոր ծրագրերի, անելիքի աղբյուրը մեր մեջ, մեր

երեխաների՝ սովորողների մեջ փնտրեք... Տեղեկացնենք, իհարկե, հարգանքով դիմենք, պատկան կոնկրետ ու անհասցե, ալամ աշխարհի ու հայաստանյան հասարակությունը, ինչպես «Բանգլադեշն անիվների վրա» նախաձեռնության ակտիվիստները՝ Արմինե Թոփչյանի համակարգմամբ, բայց... գործներիդ մնացեք, չշեղվեք, մաճը ձեռից բաց չթողնեք, ինչպես ես, որ երեկ իմ նոր հեծանվով ու երթով ամենուր տարածեցի... Մեր գործընկերոջ՝ Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի դեկան Սարգիս Թովմասյանի զանգն ամենասպասվածն էր՝ Արմինե Թոփչյանի ու ընկերների «Բանգլադեշն անիվների վրա» նախագծի իրագործման հաջորդ քայլի համար. մենք պիտի միջթաղային-ներթաղային-միջդպրոցական-ներդպրոցական անվավոր երթուղին նախագծենք՝ մաս-մաս իրագործելու համար... Պատվիրատուն երթուղու նախաձեռնող խմբերը կլինեն, անշուշտ, բայց նախագծումը պիտի մասնագետներն անեն... Ճարտարապետության ֆակուլտետի երիտասարդ դասախոս-ճարտարապետը մի խումբ նախագծող ուսանողների հետ կայցելի մեզ՝ նախաձեռնությանը ծանոթանալու, երթուղու նախագծումը սկսելու համար...Ես, անկասկած, մասնակցելու եմ երթին իմ նոր ամերիկյան հեծանվով: Ինձ համար սկզբունքային նշանակություն ունի, որ «Բանգլադեշ անիվների վրա» ուսումնական նախագծի նախաձեռնողները՝ Մարիետը, Ռոզան, Դավիթը... Գեղարվեստի կրտսերի 4-րդ դասարանից, Արմինե Թոփչյանը, ոչ մեկից ոչինչ չեն պահանջում-հիշեցնում. նախագծի իրականացումը քայլ առ քայլ սկսել են, ամեն օր տեղից շարժում են, գործում են՝ բաց, հավեսով, թեթև... ճիշտ-ճիշտ անիվների վրա...

«Հայ-վրացական» կամուրջները մարդկային հարազատությամբ կամրապնդվեն-ավելի բանուկ-կենսական կդառնան

Հայոց-վրաց մրցակցությունը միշտ կա. ինչո՞վ ենք եկել վրաց մայրաքաղաք, ի՞նչ ենք բերել երկու դար մեր մշակութային մայրաքաղաքը եղած Թբիլիսի: Սեբաստացի ուսուցչով ու սովորողով, առաքելական ուսուցչական հավաքանիով, այս, որևէ խտրություն-սահմաններ չճանաչող մշակութային-կրթական գործունեության տարածման մեկ չափանիշով ու մեկ մղումով ենք եկել... Երբ ջնջված լեզվական-պետական սահմաններով մարդկային ուշադրության կենտրոնում հայտնվում է ուսուցիչը՝ իր մասնագիտական գործունեությամբ՝ ուղղված մարդուն տարատարիք՝ երեխային ու նրա ծնողին, երեխա ձևավորող հասարակությանը: Այո, մենք ուսուցչական մեծ խմբով Թիֆլիս նշանավոր քաղաքի կենտրոնում էինք օրեր, ու տեսաք, չէ՞, ինչ լավ էինք նայվում: Ես որ բոլ-բոլ հիացա սեբաստացիներով:

Այս համերգի համար 300 կմ-ի չափ ճանապարհն ես հաղթահարել, բազում արգելքներ... Թբիլիսիի ազատ համալսարանի ու ագրոհամալսարանի միացյալ դահլիճը 400-ից ավելի տեղ ունի, իսկական համերգային-թատերական դահլիճ: Մեր Սեյրան Ավագյանը, համերգից առաջ, համերգին, համերգից հետո, միշտ ընկեր է, առանց ում, հաստատ, այս խաղաղ, վստահ ընթացքը չի լինի: Հիմա էլ երկրորդ պլանից կարևոր շտկումներ է անում. ակուստիկան լավ է, երգչախմբի վիճակը՝ տեղում, երգում ենք առանց բարձրախոսների...

«Բրոյի-բրոյի» հայ-վրացական միասնական մշակութային անիվների վրա (մոբիլ) համույթի ստեղծման ոչ միայն գաղափարը ողջունվեց-ընդունելի եղավ երկու կողմի համար էլ, այլև մեր երկու կողմի համերգային գործունեությունը Թբիլիսիում՝ Գլդանի թաղամասի դպրոցներում, Ազատ և Ագրո համալսարանների դահլիճում, Հավլաբարի Սբ. Էջմիածին հայկական եկեղեցում, ճանապարհին, դադարների ժամանակ այդպիսին եղավ: Ինչու «Բրոյի-բրոյի» կամ շարան-շարան. դա Սայաթ Նովայի սիրելի, մեր կողմից շատ կատարվող, մատչելի խմբային երգ է... Մեզ միավորեց իսկական հայկական երգը, իսկական հայկական երգ-պարը սիրելի, յուրացնելի եղավ թիֆլիսցիների, մեզ հանդիպած բոլոր վրացիների համար, խանդավառության-միասնության պարգև դարձավ ամենուր: Ե՛վ Կոմիտասը՝ իր աշխարհիկ ու հոգևոր երաժշտությամբ, և՛ Սայաթ-Նովայի, Էդգար Հովհաննիսյանի, Տիգրան Մանսուրյանի, պարզապես լավ քաղաքային հայ երգերը ժողովրդական՝ շարան-շարան, մեզ՝ հայերիս ու վրացիներիս մեկ դարձրին, անջատ պահելով հայկական կոչված երաժշտական համարվող խայտառակությունից, ամոթից: Վրացի տարատարիք մարդիկ՝ սովորողներ, ուսուցիչներ թե ծնողներ, Սեյրան Ավագյանի, մաեստրո Հարություն Թոփիկյանի խմբավարությամբ հաճույքով ու հաջողությամբ սովորում էին իսկական երգերը... Բեմից ամենակարևոր խոսքն եմ ասում՝ այնպիսին, որ տպավորվել է նաև մաեստրո Թոփիկյանի մոտ: Սա է հայկական երաժշտությունը, ասում եմ, իսկականը, իմացեք, մնացածը՝ հարգելի Թիֆլիսի հասարակություն, ինչ քեզ այնքան տարբեր առիթներով, հատկապես քո կենցաղում, քո առօրյա բեմերում մատուցում են, ոչ միայն հայկական չէ, այլև հակահայկական է...Նույն ազդեցությունն ունեցավ իսկական վրացական երգի՝ մեր կատարումը: Իսկական երգը ժողովուրդների բանուկ կամուրջ դարձավ այսօր:

Իմ ավարտական խոսքում, մեր իրոք կայացած-տպավորիչ համերգից հետո, «Ռուսթավի 2» և հանրային հեռուստաընկերությունների ներկայությամբ բեմից հրապարակեցի մեր եղբայրության 2015-ի ապրիլյան օրակարգը՝ առանց մեկնաբանության... Ապրիլի 8-10-ը կրթահամալիրում վրացերենի պետական տոնն ենք նշում՝ որպես ավանդույթ, ու հյուրընկալելու ենք հիսունի չափ պարող սովորողների նշանավոր պարի խմբի... Ապրիլի 13-ից կրթահամալիրում կսկսվեն ֆոլկլորային ուսանողական համույթի հյուրախաղերը... Ապրիլի 22-ից մեկնարկում է ամենամյա բաց հանրակրթական, բնապահպանական նախագծերի ստուգատեսը՝ թվով հինգերորդը, որին կմասնակցեն ոչ միայն մեր հին, հավատարիմ գործընկեր 98-րդ դպրոցի պատանի էկոլոգները, այլև խմբեր Թբիլիսիի Բանգլադեշի՝ Գլդանի թաղամասի դպրոցներից... Ապրիլը դարձավ հայ-վրաց ժողովուրդների ապրելու, միասին գործելու ստուգատես...

Իսկ ժամեր առաջ Հավլաբարում ավարտվեց մեր էկոակումբի և թիվ 98 դպրոցի էկոլոգների համատեղ, ավանդական դարձած դասը:

Հայաստան-Վրաստան միջպետական համագործակցության օրակարգում երեք կոնկրետ անելիք կա: Ավտոմայրուղու Պտղավան (Բագրատաշեն) – Աշտարակ հատվածը վատ վիճակում է. Սադախլու-Թբիլիսի մայրուղին անհամեմատ լավ վիճակում է. և՛ ճանապարհի որակն է ուրիշ, և՛ ճանապարհն ազատ է, որևէ տեսակի արագաչափ չկա, երթևեկությունն ինքնակարգավորվող է: Ամոթ է, միկրոավտոբուսով 8 ժամ տևեց Երևան-Ալավերդի-Թբիլիսի՝ ընդամենը 288 կմ ճանապարհի հաղթահարումը: Արագընթաց էլեկտրագնացքի մասին

անգամ չի խոսվում մեզանում՝ ո՛չ Հայաստանում, ո՛չ Վրաստանում. նստեիր Թբիլիսիում, Ալավերդի, Վանաձոր հինգրոպեանոց կանգառներով, գոնե, երեք ժամից իջնեիր Երևանի կայարանում: Բա ո՞ւմ համար են մեդիայում աչք շոյող, եթերով զայրացնող, անընդհատ նորացվող էլեկտրագնացքները (սրընթացները)՝ որպես մասնավոր ընկերություն, եթե ոչ Երևան-Թիֆլիս-Բաթումի երթուղու համար: Միշտ մարդաշատ կյանքի ճանապարհներ...

Վատ վիճակում են Վրաստան-Հայաստան Սադախլու-Պտղավան (Բագրատաշեն) սահմանային ելքեր-մուտքերը... Սանհանգույցներից սկսած, մաքրությունով, անխնամ բնություն-շրջակա միջավայրով, սպասարկման արագություն-ձևով վերջացրած: Ե՞րբ ենք անցնելու՝ չզգալով սահմանը, կամ շեշտված՝ սա նոր Հայաստանն է ու վերջ... Բա ճանապարհի երկայնքով մեքենաների հանգստի-դադարի կայանատեղիների բացակայությո՛ւնը... Տանելի սանհանգույցներով մի տեղ կա միայն՝ Ապարանի «Գնթունիք»-ը: Էլ չեմ խոսում Այրումի, Ալավերդու, Վանաձորի մուտքերի վիճակի, անշարժ-մեռած կյանքի մասին. ե՞րբ եմ եղել վերջին անգամ... Կյանքը կանգ է առել, մի տեսակ. ես շատ ուշադիր եմ, ու ինձ իհարկե, ուրախացնում են փոփոխությունները, փնտրում եմ մաքրված փլատակ, թարմ մի կառույց, կենդանացնող մի նախաձեռնություն, ներկված խողովակաշար, նոր գցված կամ նորոգված կամուրջ, անգամ, խանութ նոր, կամ ժամանցի վայր... Դեբեդի ողջ հովիտը՝ Փամբակ գետով շարունակած, մռայլ տրամադրություններով է օրորում: Ավա՜ղ:

Թիֆլիսյան մեր ուղևորությանն անդրադարձներ հետո էլի կունենանք, ինչպես ես, այնպես և իմ ճամփի ընկերները, բայց հետաքրքրվածներն ամբողջական տպավորություն կունենան մարտի 25-28-ի կրթա-մշակութային նախագծից՝ իմ օրագրում կարդալով մարտի 26-29-ի գրերը.

Մենք, այո, Թիֆլիս նշանավոր քաղաքի կենտրոնում ենք. մարտի 26

Համերգից առաջ, համերգին ու համերգից հետո. մարտի 27

Մեդիաուրբաթ-համերգների փունջ-շարք Գլդանում եղավ… տիար ջան. մարտի 28

Իսկական երգը ժողովուրդների բանուկ կամուրջ այսօր. մարտի 29

Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ոգևորվածությունն անափ է, խոսքը՝ հայրական ասելիքով-կյանքով... Թեմին կից գործող «Հայարտան» բազմամարդությունը, Հավլաբարի Նոր Էջմիածին եկեղեցու ներսի-դրսի մարդկային մեծ աշխույժն այնքան տպավորիչ են. չգիտեմ՝ այսպե՞ս պիտի լիներ հրաժեշտի մեր համերգը, բայց իսկական-տպավորիչ-որևէ մեկին անհաղորդ չթողնող տոնախմբություն եղավ: Ուղիղ 10-ին, առավոտվա եկեղեցական ժամերգությունից, Սրբազան հոր և իմ կարճ ողջույնի խոսքերից հետո Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի «Սեբաստացիներ» ուսուցչական երգչախմբին արտոնվեց խորանից ելույթ ունենալ. խմբավարի արդուզարդով, իր ստեղծած կարմիր-խորոտիկ երգչախմբով մաեստրո Թոփիկյանը ներկայանալի է, վեհ ու լսելի: Հայ եկեղեցական, հոգևոր երգեր եկեղեցում՝ լեցուն հավատացյալ ժողովրդի քար կտրած ներկայությամբ: Համերգ-հաղորդակցությունից հետո սրբազան հայրը, ով լավ է ճանաչում և՛ պարոն Թոփիկյանին, և՛ ինձ, և՛ կրթահամալիրը, շռայլ է իր գնահատանքի մեջ:

Ուզում էի, ու այսպես եղավ. մարտի 25-ին մեկնարկած մեր քառօրյա ուսումնական նախագծի ավարտը նման միջավայրում եղավ, հանդիսավոր նվերներ հանձնվեցին Վիկտորյա Բալավաձեին, Քեթևան Աբեսաձեին, Գեորգի Մոմցելիձեին, Սրբազանին... Իսկ այն, ինչ հետո կատարվեց եկեղեցու հարևանությամբ գործող, միշտ կենդանի «Հայարտուն» մշակութային կենտրոնում, տեսնելու, մասնակից լինելու բան էր... իր ուժը-կենսունակությունը ցուցադրեց «Բրոյի-բրոյի» նորաստեղծ հայ-վրացական համույթը: Մասնակիցներն էին նախակրթարանի սաները՝ 40-ի չափ 3-6 տարեկան հայ մանչեր, ու նրանց ծնողները, եկեղեցու կիրակնօրյա դպրոցի 30-ի չափ տարատարիք դեռահասներ, առաջնորդարանն ու «Հայարտունը»՝ ողջ կազմով, հյուրեր, ծանոթ-անծանոթ: Կարդացեք իմ կիրակնօրյա ձոնը՝ շարան-շարան ընտրված բառեր են, կապեր: Մեր ուսուցիչները՝ համակված իսկական հայ երգի ուժով, հրաշք գործեցին՝ կենդանացրին, ցնցեցին, աշխույժով լցրին Հավլաբարը...

Ի՞նչ պիտի նվիրեի մասնակից մեր հայրենակիցներին՝ օրով, մեզանով խանդավառ, որ և՛ ավարտվեր հանդիպումը (մենք ճամփա ունեինք անցնելու), և՛ հեռանկար ունենար մեր կապը: Լուծում գտնվեց, իհարկե. համեցեք Երևան, մեր կրթահամալիրի Բանգլադեշ, համեցեք կիրակնօրյա դպրոցի սաներով, ուսուցիչներով, նախակրթարանի դաստիարակներով-ծնողներով... Համեցե՛ք, Սրբազան հայր, որպես 2015-ի շրջանավարտների պարգևատրում, թող Վրաստանում բնակվող մեր հայրենակիցներն իսկական հայ երգի, իսկական հայ մշակույթի, մայրենի գրական խոսքի ու մարդկային շփման՝ մանկավարժության հետ հարաբերվեն... Համեցեք՝ Հայաստանին մեր աչքերով նայելու, մեր Հայաստանը մեզնով ճանաչելու. դուք մեր թանկագին հյուրն եք, մեր սպասված գործընկերները: Սրբազանը խոստացավ անձամբ ընտրել մասնակիցներին, միացնել նաև թեմի Ջավախքի, Ախալցխայի կազմին՝ կիրակնօրյա դպրոցի սաներին, մասնակիցներին... Քանի մարդ ու խումբ լինի, սիրով, Սրբազան հայր, մեր հաստատած հայ-վրացական կամուրջներից, հայրենի սեբաստացիական աշխարհից լիուլի պիտի օգտվեն մեր հայրենակիցները՝ Վրաստանում բնակվող: Եվ լավ է, որ Սրբազան հայրը կանգնում է այսպիսի գործի գլուխ՝ իսկական հայապահպան, հայ և վրաց ժողովրդասեր, մարդուց եկող ու մարդուն ուղղված առաքելության...

Ապրիլի 8-10-ի «Վրացերենի տոն կրթահամալիրում» պարատոնի 2-րդ օրվա վերջում ընտանեկան հարկի ներքո հյուրընկալվել էր իմ վրաց ընկեր Թբիլիսիի թիվ 98 դպրոցի տնօրեն Գեորգի Մոմցելիձեն՝ իր 8-ամյա Նիկոլոզի հետ: Առնոլդ, Աննա, Դանիել Բլեյանների հետ փառավոր երեկո անցկացրինք: Գիտեք, Դավիթ Բլեյանն ու Նիկոլոզ Մոմցելիձեն արդեն վաղեմի ընկերներ են և գոնե տարին մեկ անգամ հանդիպում են. լավ է, որ Դանիելն ավագություն կանի, իսկ Առնոլդի ու Գեորգիի՝ հասակակիցների ընկերությունն էլ կամրապնդի «հայ-վրացական» կամուրջները. մարդկային հարազատությամբ կամրապնդվեն-ավելի բանուկ-կենսական կդառնան: Լավ է, որ «Սեբաստացի TV»-ն, ռադիոն, դպրոցական ու անհատական TV-ներն ավելի ու ավելի մոբիլ, բազմազան-անհատական-հետաքրքիր են լուսաբանում մեր տոն-ստուգատեսները... Նիկոլոզ Մոմցելիձեն, Բլեյան Դանիելն ու Դավիթը՝ տարատարիք, առանց որևէ լեզվական խոչընդոտի, կենդանի-անմիջական շփմամբ այնքան հեշտացրին, մարդկային շփման տոնի-վայելքի վերածեցին մեր երեկոն, որին մասնակցեց և Վրաստանի լավ բարեկամ Շուշան Բլեյանը՝ Վիեննայի

նշանավոր օպերայից... Իսկ Արմինե Սեբաստացի տիրուհին ցույց տվեց, որ մենք խոհանոցում էլ կարող ենք (պարտավոր ենք) առաջինը լինել... Բա հո երկրորդը չե՞նք լինի...

Իսկ ապրիլի 13-ից հայ-վրացական երկարատև ստեղծագործական համագործակցության նոր շրջան է... Թբիլիսիում. մեր համերգ-ելույթների ընթացքում ձեռք բերեցինք նոր պայմանավորվածություններ նոր գործընկերների հետ: Բեկում՝ Վրաստանի հետ մեր հարաբերություններում. դրանք, նախ և առաջ, ուսումնական են՝ համատեղ կրթամշակութային նախագծերի-խնդիրների ձևով, որ վրացի և սեբաստացի սովորողներն ու ուսուցիչները միասին ձևակերպում, լուծում և տարածում՝ հանրայնացնում են Թիֆլիսում և Երևանում... Խնդրեմ. Թբիլիսիի դպրոցների երաժշտության ուսուցիչների խումբը կաշխատի մեր դասվար-դաստիարակների «Շրխկան» համույթի հետ, որ պատրաստվում է համերգային շրջագայության... Խոստացել եմ, կլինի...

Ապրիլի 15-ին Երեկ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը սովորական մի համերգի էի իմ վրաց ընկերների հետ. լսեցի Էդգար Հովհաննիսյանի խմբերգերն ամբողջական՝ Երևանի կամերային երգչախմբի կատարմամբ: Ինչ անզուգական տպավորություն էր. վրացի մի ուսանող երգիչ ամեն համարից հետո ոտքի էր կանգնում ու ապշահար ծափահարում...

Կտրվենք գետնից, նոր թափ ու թեթևություն մեր գործողություններին, մեր ընթացքին...

Շնորհակալ եմ ավագ եղբորս. ես միշտ, որքան ինձ հիշում եմ, հեծանիվ ունեցել եմ, մեր թաղում՝ Սևանի փակուղում, պատմել եմ, իմ մանկությունն անցել է հեծանիվների վրա... Հեծանիվը փոքրերի համար է եղել և մնում հայոց մեջ. մեծացա, ավագ դասարաններում, 16-17 տարեկանում զրկվեցի «անլրջությունից», իջա գետնի վրա, դարձա, ինչպես բոլորը՝ ոտնավոր. անվաչմուշկները, սքեյթները, ինքնագլորները եթե 1960-70-ականներին կային, ապա «երկաթյա վարագույրից» այն կողմ կամ ինքնաշեն... Ես սարքել-քշել-կոտրել եմ բազում փայտե «սամոկատներ» ու այլ ինքնագլորներ...

Հեծանիվ մեկ էլ ունեցել եմ 25 տարեկանում, երբ ընկերներով-հասակակիցներով իրար հեծանիվներ նվիրեցինք ու ձևավորեցինք հեծանվային ակումբ: Ի՜նչ փառահեղ ընթացք էր, ափսո՜ս՝ կարճ տևեց... Մեկն էլ, ահա, 30-35 տարի անց... Ես հեծանվի վրա եմ, ասեմ՝ անբաժան... Կփոխվի հեծանիվը. գործիք է, փոխադրամիջոց, կլինի ավելի ու ավելի հարմար-համապատասխան...

Պետք էր նայել, թե ինչ անսովոր զգացում էր պատել Դավիթ Բլեյանին. անկեղծանամ՝ նաև ինձ. հայր ու որդի հեծանիվների վրա, իրար կողքի: Հեծանվաերթը միավորող, մեր կյանքին համերաշխություն ու տոնականություն-զվարթություն կարող է հաղորդել, մոբիլության այլ վիճակ է, նոր հանդերձանք, ոչ թե միջոցառում... Նախանձով-հիացմունքով եմ նայում անվաչմուշկով ու սքեյթով, տարբեր ինքնագլորներով մարդկանց... Լավ եմ զգում մտքից, որ Շուշան Բլեյանը Վիեննայի փողոցներում գործածում է ինքնագլոր, ապրում եմ Դավթին այլ անիվների վրա տեսնելու ժամանակը... Իմն այսօր հեծանիվն է:

Այո, ես հրահրեցի այս ընթացքը, սեբաստացինե՛ր բոլոր տարիքների, տանը թե դպրոցում՝ ղեկավարն եմ, չէ՞. ես ղեկավարում եմ այս փուլում կրթահամալիրը ավելի շատ այսպես՝ նախաձեռնություններով, դրանց իրագործման հանգրվան ակցիաներով, իմ հեղինակությամբ, իմ օրինակով... Վարչարարությունից՝ հրամանից, ցուցումից, այլ պարտադրանքից խորշում եմ, իմացեք, որքան էլ դա անբաժան է իմ գործառույթից... Մի՞թե իմ հեղինակությունը-օրինակը-ավագությունը բավարար չեն այսպես՝ նախաձեռնություն-օրինակ-ակցիաներով ղեկավարելու համար... Ես գիտեմ, որ բոլոր տեղերում բոլոր տարիքի սեբաստացիները՝ ֆեյսբուքներում, բլոգներում, օրագրերում, բջջայիններում, խոսում-պայքարում են անիվների համար բոլոր տեսակի՝ հեծնելու, գլորվելու, քշելու, օրորվելու... Գիտեմ, տեսնում-ուրախանում եմ. ընտանիքները գնում են զոհողությունների, գնում են, նորոգում, փոխանակում, ձեռք բերում, պատրաստվում են: Մոտեցե՛ք սրան ոչ իբրև միջոցառման-ցուցադրման. սովորողը, երեխան յուրաքանչյուր տարիքում պիտի ունենա հարմար փոխադրամիջոց անվավոր, մինչև ավտո-մոտոն ունենա դրան զուգահեռ: Հարմար, առօրյա անվավոր փոխադրամիջոց ընտրեք: Ես գիտեմ, որ «Բանգլադեշն անիվների վրա» նախագիծն ուսումնական (շեշտում եմ՝ ուսումնական)՝ սկսած 2 տարեկանից, անխտիր ընդգրկումով, լիքը հոգսեր է ավելացնելու: Ես գնում եմ, տանում եմ դրան, արագացնում՝ միացե՛ք, օգնե՛ք, ճշտե՛ք, ուղղե՛ք, ձեր ուժով զորություն հաղորդեք նախաձեռնության ընթացքին, անձնական օրինակով, բոլոր տարիքների սեբաստացիներ, որտեղ էլ որ եք, որևէ կարգավիճակով... Ես գիտեմ, որ իմ սիրած «Ոսկե ցլիկ» կինոնկարի՝ «լողալ սովորեք, նոր ավազանը ջուրը լցնեմ»-ն պետական տիրապետող մանկավարժությունն է՝ երեխայի երկատված կյանքով, դպրոցի գործը չեն լողը, անիվը... մարդու կյանքն իր բոլոր դրսևորումներով. դպրոցի գործը դաս սովորեցնելն է: Պիտի հայտնվեն անիվներով սովորողը, ուսուցիչը, տնօրենը՝ որպես պատվիրատու շահառու-օգտատերեր, որ նոր ենթակառուցվածք առաջանա, որ կրթական միջավայրը համապատասխան դառնա-դարձնի: Այո՛, մեր դպրոցական բակերին պիտի կարողանանք անվավոր մարդու՝ երեխայի աչքերով նայել ու արագ, օր առաջ, էժան-հարմար համապատասխան լուծումներ տալ: Մեր բոլոր 2-6 տարեկան սաները նախակրթարանում պիտի հարմար հեծանիվներ ունենան անհատական՝ որպես ուսումնառության պայմանագրի անփոփոխ պայման...

Մեր գործընկերոջ՝ Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգայինհամալսարանի ճարտարապետության ֆակուլտետի դեկան Սարգիս Թովմասյանի զանգն ամենասպասվածն էր՝ Արմինե Թոփչյանի ու ընկերների «Բանգլադեշն անիվների վրա» նախագծի իրագործման հաջորդ քայլի համար. մենք պիտի միջթաղային-ներթաղային-միջդպրոցական-ներդպրոցական անվավոր երթուղին նախագծենք՝ մաս-մաս իրագործելու համար... Պատվիրատուն երթուղու նախաձեռնող խմբերը կլինեն, անշուշտ, բայց նախագծումը պիտի մասնագետներն անեն... Ճարտարապետության ֆակուլտետի երիտասարդ դասախոս-ճարտարապետը մի խումբ նախագծող ուսանողների հետ կայցելի մեզ՝ նախաձեռնությանը ծանոթանալու, երթուղու նախագծումը սկսելու համար...

Մեր պարտեզներում շատացել են, ավելանում են ազգությամբ ոչ հայ, ենթադրում եմ, ռուս կամ մոլոկան երեխաները... Ես ուրախ եմ սրա համար. լավ ցուցանիշ է: Երեկ, երբ քոլեջի նախակրթարանում վատ օդափոխվող խմբասենյակի համար դիտողություն էի անում Լիլիթ-

Օլյա դաստիարակների զույգին, հետաքրքիր զարգացում եղավ... Մինչև Օլյան կբացեր լրացուցիչ պատուհաններ, 3 ոչ հայ երեխաները դարակների վրայով հայտնվեցին պատուհաններից կառչած...
– Այ, տեսնո՞ւմ եք՝ ինչու չենք բացում...
Ինձ հիացրեց եռյակն իր բնականությամբ, աշխուժությամբ, ճարպկությամբ, ինքնուրույնությամբ. դաստիարակչական ընտանեկան այլ համակարգի հետ գործ ունենք:

Որտեղի՞ց այս մրսկանությունը հայ ծնողների մոտ, այս վախը-դողը-սվսվալը երեխայի համար նրա ծնվելու օրվանից՝ կմրսի հա կմրսի, փակեք հա փակեք դուռ ու լուսամուտ, կընկնի, զգույշ... Զգուշությունը պատիվ է ու պահանջ ծնողի, որևէ կարգավիճակով ավագի համար, անվտանգության համար պատասխանատվության իրացում, բայց զրկել սրանով առողջ ու թարմ միջավայրից, կազդուրված մարմնից, ինքնուրույնությունից, ճարպկությունից՝ կներեք, հարգելի հայրենակիցներ, չի կարելի: Եվ մեր դաստիարակները ծնողների հետ պիտի կարողանան այս արմատացած մոտեցումը հաղթահարել... Մշտապես օդափոխված տարածք՝ միջանցք, կաբինետ որևէ, խմբասենյակ, խոհանոց: Մշտապես ինքնաբուխ, շարժուն, առավելագույն ինքնուրույնությամբ երեխա, դուրս ու ներսի, սահմանների-արգելքների վերացում, մշտական կազդուրիչ-կոփիչ-մարզիչ նյութական միջավայր ու ռեժիմ՝ ներսում թե դրսում, անվտանգության միջոցների առավելագույն պահպանությամբ: Այս երկուսն իրար հակոտնյա, հակառակ, իրարամերժ չեն, ինքնաբուխություն-ինքնուրույնություն-ինքնահիգիենան՝ որպես կրթական ծրագիր, ենթադրում է անվտանգ-հետաքրքիր-հիգիենիկ միջավայր՝ դրսում թե ներսում...

Ահա ձեզ ուսումնական նոր գործիք, որ պարտադիր է դառնում յուրաքանչյուր սեբաստացու համար՝ սովորող թե ուսուցիչ: Նոր հայացք, նոր վիճակ, նոր կազմակերպում՝ կրթություն անիվների վրա...

Ինչ-որ մի պահի ինչ-որ մի օր ես էլ անխուսափելիորեն պապիկ կդառնամ: Լավ, մատով ցույց տալու պապիկ կլինեմ, իհարկե, բայց Արաքսիկի-Արևիկի-Սոնուլիկի երեխաների՛ համար... Շուշանի երեխաների, նրա խոստացած Աշոտ տղայի աղջկա համար, հաստատ... Դավթի երեխաների երեխաների համար... Երեկ «Բանգլադեշն անիվների վրա» երթի մասնակիցների հետ, տարատեսակ անիվների վրա, ես նրանց հասակակիցն էի. ի՛նչ զգացողություն է՝ ինչպես կրթահամալիրի մարզադահլիճի մեծ բատուտների վրա ճախրելիս... Ի՛նչ տարիք, ի՛նչ պաշտոն... իսկական հասակակիցների երթ էր, տպավորվել մնացել է, մենք ընթացքում տասնյակ մեծ ու փոքր խնդիրներ քննարկեցինք... հեծանվորդներով...

Մեր օրացույցում մեր ուսումնական կյանքն է

Բարի հանդիպում-միասնական հավաք «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում. կրթահամալիրի 2015-2016 ուսումնական տարվա օրացույցով օգոստոսի 19-ին՝ ժամը 10-ին, մանկավարժական աշխատողներով հանդիպեցինք Մայր դպրոցի Մարմարյա սրահում, ու ես հայտարարեցի 2015-2016 ուստարվա մեկնարկի մասին: Մանկավարժությամբ զբաղվող մեծ խումբ մարդկանց օգոստոսի 19-ի այցելությունը քոլեջ կարևոր էր: Շրջայցը քոլեջում-նախակրթարանում կարող էր և ցույց տվեց՝ մասնագիտական կրթության և

նախակրթարանային միջավայրերը նյութական ներսով-դրսով ակնհայտ զարգացել են, հետաքրքիր, հիգիենիկ, անվտանգ դարձել *ակնհայտորեն*: Աչք ունենք՝ տեսանք, սիրտ ունենք՝ ուրախացանք. լավ մեկնարկային պայմաններ են բոլոր կարգի դաստիարակների պատրաստության կազմակերպումը կրթահամալիրով մեկ երեխայի կենդանի գործունեության աշխարհ ընկղմելու, որ դաստիարակին ուսուցանեն կրթահամալիրի միջավայրը, կրթահամալիրի հեղինակային մանկավարժությունը մշակող, կազմակերպող ու տարածող ամեն մի օղակ՝ կրտսեր դպրոց, ուսումնական կենտրոն ու ծառայություն:

Իսկ օգոստոսի 28-ին, 29-ին կրթահամալիրում եղան կրթահամալիրի ուսումնական հաստատությունների սովորողները՝ սա էլ է օրացույցով... Իմ ու վարչական խորհրդի անդամների ջանքերն ուղղված էին օգոստոսի 19-ի հավաքի պատրաստությանը, օգոստոսի 19-ից 27-ի ուսումնական աշխատանքների կազմակերպմանը: Երկու փուլով աշխատեցինք. մինչև օգոստոսի 23-ը (ուշադրություն, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի ընդունման օրն է. ա՜յ քեզ հիշողություն)՝ կարգի բերեցինք, ամառային փոշուց-հետքերից մաքրեցինք մեր նյութական միջավայրը՝ ներսից ու դրսից. ազատվեցինք բոլոր տեսակի աղբից՝ կաբինետ առ կաբինետ, անկյուն առ անկյուն, տարածք առ տարածք, զբաղվեցինք ուսումնական գույքի և միջոցների խնամքով... Ուսումնական կենտրոնների, դպրոցների ղեկավարներով պատրաստվեցինք օգոստոսի 25, 26, 27-ի մանկավարժական դպրոցի աշխատանքին՝ նույնպես 2015-16-ի օրացույցով նախատեսված:

Հիշեցնեմ, որ մենք աշխատում ենք ոչ թե սովորողի համար, այլ սովորողի (երեխայի) հետ. հենց այս օրվանից սովորողները մանկավարժական ընտրությամբ մեզ հետ պիտի լինեն՝ բոլոր իմ թվարկած, չթվարկած, ձեր ավելացրած աշխատանքներում...

Օգոստոսի 28-ին՝ մեր հեղինակային կրթական ծրագրերի 2015-16 ուստարվա մեկնարկի օրը, մենք սեբաստացի սովորողներին հրավիրում ենք հեղինակային կրթական ծրագրերի ուսումնական պլաններով (1-3-րդ, 4-5-րդ, 6-8-րդ, 9-12-րդ) որոշված՝ սովորողի ազատ ընտրությամբ ուսումնական գործունեության, լրացուցիչ կրթության... Այսպիսի ներառական հավաքանին ենթադրում է յուրաքանչյուրի ու բոլորի մասնակցություն, որ պատրաստեցինք մանկավարժական աշխատողների օգոստոսյան ճամբարում...

Փոփոխությունները հնարավորությունների հոմանիշներն են

Այս տեսանյութում «Սեբաստացի TV»-ն, Անի Սարգսյանը փորձել են ի մի բերել հուլիս-օգոստոսի նյութական միջավայրի շարունակական բարելավման աշխատանքները, կատարված փոփոխությունները... Ո՛չ մի շռայլություն, ո՛չ մի չմտածված ոչ ներդրումային ծախս՝ յուրաքանչյուր փոփոխություն ուղղված է կրթական՝ ուսուցանող միջավայրի ամբողջացման-արդիականացմանը...

Հետաքրքիր է՝ ի՞նչ բերք է տալու կրթահամալիրի Գյուղացիական տնտեսության կարտոֆիլը: Մեր տնտեսության լոլիկը, դդմիկը, վարունգը, պղպեղը, սեխն ու եգիպտացորենը աշխատավորներով ու ամառային պարտեզ-ճամբարով չենք կարողանում սպառել: 2015-ի շրջանավարտ Էդվարդ Հովհաննիսյանն ավելի ու ավելի վարպետությամբ է կատարում Գյուղացիական տնտեսության աշխատողի՝ իր համար նոր, ուզում եմ հավատալ՝ հետաքրքիր պարտականությունները... Ես ավելի ու ավելի կապվում եմ, գործընկեր դառնում Էդվարդին.

հնարավոր բաժանումը հեշտ չեմ տանի: Կեցցե՛ք, Էդվարդ ու Հովհաննիսյաններ, որ միասնական-համերաշխ եք:

Կրթահամալիրի Հիմնական դպրոցն այս տարվա շինարարական բարելավման գործերով ամբողջանում է՝ որպես մի նորոգ կուկլա դպրոց... Եկեք տեսեք, թե մի խորհրդային լքված տիպային շենքից ինչպիսի ասելիք-հանրակրթական միջավայր դարձավ՝ գրավիչ-կանչող աշխարհ: Դպրոցի լողափում 2-ից 4 տարեկաններն են՝ տկլոր, պատրաստ աչքի պես զուլալ-ջինջ ջուրը մտնել խաղով... Արևն ու պաղ ջուրը, մեր փորձով ապացուցված է, այնքան ու այնպես կփոխեն մեր մանչուկներին, որ մոռանանք մրսելու-հիվանդանալու մասին... Ամենօրյա բացօթյա լողը կշարունակվի և սեպտեմբերին, հետո՝ կխոսենք... Սպասում եմ մանուկների տրիաթլոնի (լող, հեծանիվ, էստաֆետ) կրթահամալիրային բաց ստուգատեսին...

Նոր դպրոցի ամառային չլռող աշխույժն իմ սրտով է. Նոր դպրոցը վերջնականապես նորացավ, ազատվեց խորհրդային տիպային մանկապարտեզի շենքի ֆիզիկական միջամտությունից, դարձավ մեկ՝ իր բակով ու ներշենքային անցումներով... Ամենամեծ ու ամբողջապես նորոգված նախակրթարանն ունեցավ կրթահամալիրում... Կենսաբան-դաստիարակ Շուշան Ալեքսանյանն արձակուրդում է, բայց որպես կամավորական աշխատանք, անցկացնում է հերթապահության իր օրը, ու տեսեք՝ տարածման արժանի ի՜նչ նախագիծ. նորացնում, թարմացնում, գրավչություն են հաղորդում բոլոր թաղարներին... Անահիտ Գևորգյանը, Տաթև Թամազյանը իրենց Ճամբարականներով Նոր դպրոցի գյուղացիական տնտեսության բարիքներն են հավաքում-մշակում, ծածկած լողավազանում մարզչին ցուցադրում լողի ամառը իրենց ձեռք բերած կարողությունները:

Ամբողջացավ կրթահամալիրի Հիմնական դպրոցը, ոչինչ չի խանգարում էկո-հանրակրթական միջավայրի մոդել ներդրումային ծրագրի մեկնարկի համար: Ծրագիրը Հիմնական դպրոցի ղեկավարի հետ կընտրվի բաց մրցույթով: Կրթահամալիրի բոլոր կրտսեր դպրոցները՝ իրենց նախակրթարաններով, բոլոր 5-6 տարեկանները դասարան-լաբորատորիաների ամբողջական խնամված տարածքներ ունեցան. այս օրերին լաբորատորիաների ղեկավար դասվար-դաստիարակները պիտի կարողանան գործիքավորել, բազմաբնույթ գրավիչ-անվտանգ ուսումնական աշխատանքի արհեստանոցներ դարձնել դրանք՝ յուրաքանչյուր 5-6 տարեկան սեբաստացու համար: Ե՛վ խիզախում, և՛ երևակայություն, և՛ կոնկրետություն պահանջող հեղինակային աշխատանք...

Գեղարվեստի ավագ ու կրտսեր դպրոցները միացան՝ որպես Գեղարվեստի դպրոց... ներքին՝ բաժանող պատերն այլևս չկան... Մնում է վերացնել նաև բոլոր սահմանները ներքին ու տաբուները, որ տարատարիք սովորողների գեղարվեստական գործունեության համար մեծ ներուժ ունեցող շենքը՝ իր բակով, նախընտրելի դառնա քաղաքի, քաղաքամերձ գյուղերի շատ ավելի մեծ թվով երեխաների համար՝ և՛ հանրակրթական, և՛ լրացուցիչ կրթական արդիական ծրագրերի-նախաձեռնությունների-նախագծերի համար՝ երազած փորձարարական դաշտ... Երկու օր է, ինչ հետևում եմ նոր Հասմիկ Թոփչյանի գործունեությանը Գեղարվեստում. գիտեք, մուռ ունեի՝ քանդակի արվեստանոցը շրջափակումից ազատելու, ներկայացնելու-հանրայնացնելու, յուրաքանչյուր ծեփող-քանդակող սեբաստացու համար մատչելի դարձնելուն ուղղված մուռ: Մուռս այս ամառ հանեցի. այդ առիթով մինչև սեպտեմբերի 4-ն իմ

նվերների շարքում դուք ունեցաք իմ «մուռ» ասվածը: Հաջողություն Արա Թարգյանին, և բարով ես եկել կրթահամալիր, Հասմիկ: Ժպիտով, սուր, պրպտող խելքը հայացքի ու խոսքի մեջ, անընդհատ-անաղմուկ գործուն... Ուրիշը, հազարը կսպասեին, կգնային-կգային, ինչպես մեր Գեղարվեստի պատրիարքները, ոտքերը-ձեռքերը կախ կգցեին, մինչև շինարարներն ավարտեն, տնտեսուհին մաքրի, Բլեյանը ներկի... Ո՞ւմ համար, քո և անհասցե, պարազիտ դարձող սովորողի՞... Երբե՛ք... Հասոն կերպար է նոր՝ նույնպիսի նոր կերպար մեզանում, ինչպիսին տեղանքի փնտրվող աղբրի ջուրն է... Բարով ես եկել «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր. այս սրահը քանդակ-կերպարվեստի հենց քեզ համար էլ նախատեսված է: Տիպային մանկապարտեզի շենքերից (մեր կրթական օբյեկտներից հինգն այդպիսին է) թափանցիկ, դուրս ու ներսը մեկ ամբողջական կրթական-ուսուցանող համակարգ դարձրած, տարբեր մարդկանց յուրահատկությունների համար հարմար միջավայրեր ստեղծելն ունի գորդյան հանգույցներ... Այս տարի շինբարելավման աշխատանքներով ես տասնյակ այդպիսի հանգույցներ եմ քանդում-արձակում-լուծում. ա՛յ, խնդրեմ, երեկ մինչև ուշ, բանվորների հետ, Գեղարվեստի շենքի աջ ու ձախ՝ քանդակ-կացարանի, նախակրթարանի հատվածում էի...Արմինե Թոփչյանը սկսել է գործուն մասնակցել լուծմանը, երևում է՝ շինարարությունը սկսել է ոչ միայն հոգս դառնալ նրա համար (մենակ թե շուտ պրծնեմ), այլև հետաքրքրել. միջամտում է նախագծին, փոփոխում-լավացնում... Այդպես և նոր Հասմիկ Թոփչյանը... Իսկ գեղարվեստի կրտսեր դպրոցի գեղանի աղջիկների թիմը, տեսեք, ինչ թեթևությամբ է մոտենում ֆիզիկական աշխատանքների անհրաժեշտությանը... Այդպես քիչ է լինում, բայց պատահում է, որ շինարար-բանվորն էլ սկսում է մասնակից դառնալ, ինչպես տիար Էդուարդ Գավարյանը... Վարպետ Պետոյի հավեսը փախել է. դա երևում է, ափսո՜ս... Բայց հենց հավեսը տեղն է լինում, փայլատակում է լուծումներով՝ նույն պահին իրագործելով՝ առանց ժամին նույնիսկ նայելու, ինչպես երեկ...

Քոլեջ-արհեստագործականն ավելի հասկանալի դարձավ որպես քոլեջ՝ իր ընդարձակվող նախակրթարանով՝ որպես դաստիարակի պատրաստման ամբողջական միջավայր, ներսով-դրսով... Ինչպե՞ս է այն դաստիարակներ պատրաստելու, նույն կե՞րպ, միայն թե պրակտիկա-էքսկուրսիաներ անցկացնելով կրթահամալիրի՞ կրտսեր դպրոցների, քոլեջի նախակրթարաններում... Երբե՛ք: Գնում ենք մասնագիտական կրթության և դաստիարակչական իրական գործունեության ներառման ճանապարհով, որքան էլ այն դժվար լինի:

Արդեն տեսանելի է, որ կրթահամալիրը, իր՝ պահեստի վերածած տարածքների արդիականացմամբ, կունենա հանրապետությունում եզակի հեծանվային ակումբ, Հայրենագիտական ուսումնական ճամփորդությունների կենտրոն, ձիավարժարան ու նետաձգարան՝ անհրաժեշտ նյութական միջավայրով...

Լրագրողները հիմա էլ ամենաշատն ինձ սկսում են հարցնել Սահմանադրական փոփոխությունների մասին... Մեկը չեղավ՝ լուրջ պատրաստված գար ու խոսեինք «Ամառային դպրոց» 2015-ի մեր նախագծերի, ամառային պարտեզների, անընդհատ բաց ու յուրաքանչյուրին ողջ ամառ մատչելի մեր ֆիզիկական կրթական աշխարհի մասին...

Նունե Մովսիսյանը մեր, անխոնջ-խաղաղված, ի՜նչ ճշգրիտ է ձևակերպել ուսումնական հուլիս-օգոստոսը՝ շաբաթ-կիրակի... Ժամանակի ընթացք է, անգամ, ձեր գովական, քույրս կասեր՝ «мировой» տնօրենի վարչական իշխանությունից դուրս՝ օգոստոսի 19-ին օրացույցով սկսվում են շաբաթվա մյուս օրերը... Բարի գալուստ-դարձ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ֆիզիկական աշխարհ... Իհարկե, կան փոփոխություններ, բարելավումներ, համոզված եմ... Մեկ նախադասությամբ ասել եմ. «Ավելի շատ օդ, ջուր ու կանաչ»...

Սուսան Հովհաննիսյանն իր ազատ ընտրությամբ փոքր, ինքնուրույն կտորներ, տեքստեր է առանձնացնում իմ օրագրից ամեն օր, անգլերեն ներկայացնում... որ մեզ հասկանա օտարերկրացին. արտահայտվելու ազատության իրացումը տեղեկատվական թվային միջոցներով՝ այդպիսի հարցադրման համար՝ առանց սահմանների ընթերցող, տալիս է: Ցանկացածին, ով տարածում է իմ գիրը, իր ազատ տնօրինմամբ, շնորհակալ եմ. այդ ջանքերը պիտի որ բերեն կրթական փոխանակումների աշխարհագրության, բնույթի, ծավալների փոփոխությանը: Ասվածը միայն իմ գրին չի վերաբերում. սեբաստացի յուրաքանչյուր հեղինակի գործունեությունը, ստեղծածը, հեղինակած-համահեղինակած գաղափարը տարածելով՝ դու դառնում ես համահեղինակ. դրանից ավելի կոնկրետ-մատչելի-շնորհակալ եղանակ ես չգիտեմ... Սա է ճանապարհն այս անհաղորդության հաղթահարման, նոր հաղորդակցության հաստատման...

Նկատե՞լ եք, որ Հայաստանում մանկավարժ-մասնագետի (բոլոր կարգի ուսուցիչների, դաստիարակների, հատուկ մանկավարժների) պատրաստությունը մեկուսացված է կենդանի մանկավարժական գործունեությունից՝ պարտեզից, դպրոցից... եթե չհաշվենք էքսկուրսիաների ձևով կազմակերպվող մասնագիտական փորձառությունները: Ինչ-որ մի շենքում ինչ-որ առարկայական թեստեր լրացրած, մանկավարժական մասնագիտական կրթության ծրագրով ուսանելու պարտավորություն ստանձնած, հիմնականում աղջիկների ինչ-որ խումբ դասախոսներ ինչ-որ ծրագրերով 4 տարի տանել-բերելուց հետո պետական նմուշի դիպլոմ են տալիս: Հետո այդ դիպլոմավոր մարդիկ, եթե ուզում են ու կարողանում են, տեղավորվում են իրական դպրոցում, մանկապարտեզում ինչ-որ մի գործի ու սկսում իրենց իմացածը, իրենց գնացած դպրոց-մանկապարտեզը վերարտադրել... Սա հատուկ՝ ոչ ներառական կրթություն է՝ իր բոլոր հայտնի արատներով: Սրա այլընտրանքը մանկավարժական մասնագիտական կրթության ու մանկավարժական գործունեության ներառումն է:
– Ինչպե՞ս,- հարցնում եմ:

Իմ էլեկտրոնային փոստն այս օրերին արձանագրում է՝ կրթահամալիրում աշխատողների շարժը մեծ է: Եվ դա լավ է: Յոլա գնալը, տեղավորվել-գնալ-գալը հասարակական խրախուսում ունի՝ գոյաձև է: Ընդունակ մարդը սրան թող չտրվի. կրթահամալիրում անցկացրած ժամանակը կորած չէ. կրթահամալիրը մեծ-յուրահատուկ աշխարհ է՝ անսովոր նիստուկացով՝ շուրջբոլորն անհատականություններ են: Գնա՛ փոփոխության, եթե ինքնավստահության կարողությունն օր օրի չի աճում... դարձի՛ր կրթահամալիրի պատվիրատու-աջակից-գործընկեր հասարակության մասը: Ավելի վտանգավոր է «ո՞ւր գնամ», «սենց էլ որ մնա...», «էս տարին էլ թող անցնի» տեսակը:

Ի՞նչ մնաց... Ես խոստացել եմ թույլ չտալ կրթահամալիրի ծերացումը, չի կարող կրթահամալիրում տիրապետող դառնալ ծերունական մառազմը, երբ ավելի շատ վերցնում են, քան տալիս... Ես իմը տվել եմ... Կա աշխատողների սիրելի տեսակ՝ ֆիզարձակուրդ մեկնողները, ծնունդի գնացողները... Ի՜նչ լավ է, որ մենք ստեղծվել ու շարունակում ենք մնալ երիտասարդ հավաքանի... գործատու կրթահամալիրի տնօրենի՝ սրանից բխող բոլոր հոգսերով: Ուրախ ու սիրելի հոգսեր... տարին երկու տասնյակի չափ ընտանիք կազմող, ֆիզարձակուրդ գնացող ու ֆիզարձակուրդից եկող աշխատող ունենք: Ի՞նչ հանրակրթություն՝ առանց ծնունդի:

Լինելով տարբեր մարդիկ՝ միանման ռազմական устав-կանոնադրության տակ ծառայում են, իրագործում միևնույն կրթական ծրագիրը հանրապետության 1400-ի չափ պետական հանրակրթական հաստատություններում. ինչպե՞ս է, որ դա չի խանգարում... Իսկ այս մեր յուրահատկությունը՝ տարբեր լինելը, ինչպե՞ս է իրեն դրսևորում հեղինակային կրթական ծրագրի մշակման-կազմակերպման ու տարածման փուլերում... Ինչ ուզեմ՝ կանե՞մ... Կուզեմ՝ չե՞մ անի... ուրիշ բան կանե՞մ՝ իմ իմացա՞ծը...
Ի՜նչ տարբերություն, կոնկրետ դասընթացի, ուսումնական նախագծի ծրագիր ես անում-մշակո՞ւմ, թե՞ կրթական միջավայրի շարունակական փոփոխման... Մեր հեղինակային սեբաստացիական միջավայրը մի՞թե յուրահատուկ չէ մեր տարբեր լինելը դրսևորելու համար... Տարբեր լինելը մեր յուրահատկությո՞ւնն է: Ինչպե՞ս է այս մեր յուրահատկությունը (բնույթը) հաշվի առնում նախադպրոցական, 9-ամյա թե 12-ամյա հանրակրթությունը... Թեմա է... Ինչպե՞ս են անհատի տարբեր լինելու իրավունքը հարգում մեր հեղինակային կրթական ծրագրերը՝ իրենց ուսումնական պլաններով, թե՞ կազամակերպման ընթացքում դրանք գաջի-բետոնի սվաղի տակ են մնում...

Սեպտեմբեր-հոկտեմբերին նյութական միջավայրի բարելավման թիրախում նորից կլինեն նախակրթարանները, բայց այս անգամ՝ կոնկրետ ու բացառապես միայն բակ-պարտեզները՝ որպես խնամված կանաչի ու բացօթյա լողի-հեծանվի-մարմնամարզության-էստաֆետախաղի-վազքի լիարժեք միջավայր: Իմ սիրած միասնական ներսուդուրսը կստեղծեն մանկան ինքնուրույն գործունեության ամբողջական աշխարհը... Դաստիարակը, նրա օգնականը, նախակրթարանի դիզայներ ուսուցիչն ու ղեկավարը այսպիսի նախակրթարանում աշխատելու իրավունքը պահպանելու համար պիտի մասնակցեն այս ամբողջականության կերտմանը՝ նախագծի մշակման, իրականացման ու պահպանման բոլոր փուլերում, անընդհատ:

Մենք դաստիարակչական մեթոդի հաստատություն ենք, որպես նախադպրոցական կրթական ծրագիր՝ երևի միակ այլընտրանքը Հայաստանի քաղաքների ու գյուղերի համայնքային նախադպրոցական հաստատություններում իրականացվող պետական նախադպրոցական ծրագրի: Բաց ֆիզիկական ու մեդիա միջավայրում, նախադպրոցականների բնական-կենդանի գործունեության պայմաններում մասնագետների-ծնողների-այլ հետաքրքրվածների ուսուցումը (կրթական ծրագրի փոխանցումը) կրթահամալիրի կանոնադրական խնդիրներից է: Ապահովելու համար արտասահմանցիների, արցախցիների, վրացահայերի, մարզերի ու երևանցիների իրավահավասարությունը՝ մենք ստեղծել ենք կրթական փոխանակումների հարմար

կացարաններ 24 տեղով՝ կրթահամալիրի Հիմնական դպրոցում (Իսակովի 52/6), 26 տեղով՝ Դպրոց-պարտեզում (Ա. Բաբաջանյան 38/1), 10-12 տեղով՝ Գեղարվեստի դպրոցում (Ռաֆֆի 69/1), պարզ, հիգիենիկ կենցաղով, այդ թվում՝ սնունդ և ինտերնետ, մարզանքի, լողի, հեծանվի հարմարություններով: Այսպիսով մեր հինգ նախակրթարաններից յուրաքանչյուրում միաժամանակ կարող է սովորել (պատրաստվել) մեկ խումբ՝ մինչև 20, լա՛վ, 50-60 կացարանային (գիշերելու) տեղի պայմանով... Եվ այս ամենը, կրկնում եմ, բոլորի համար մատչելի, առանձին խմբերի համար՝ անվճար, «Փորձարարական մանկավարժական ծրագրեր հանրակրթությունում» բյուջետային դրամաշնորհի միջոցներով...

Լև Տոլստո՞յն է արձանագրել՝ 5 տարեկանից մեզ բաժանում է մեկ քայլ... Եվ մուտքը կրթահամալիր պարտեզով է, կրթահամալիրի կրտսեր դպրոց՝ 5 տարեկանների ուսուցման ծրագրով... Կրթահամալիրի Դպրոց-պարտեզը, Նոր դպրոցը, Գեղարվեստի կրտսեր դպրոցը, Հիմնական դպրոցը այս տարի ևս ընդունում են 5 տարեկաններին: Այստեղ և՛ Արմինե Գյոնջյանի նման փորձառուն է, ում 5 տարեկանների ծրագրով սկսած 3-րդ դասարանցիները 2015-2016 ուստարվա չորրորդ դասարանցիներն են Դպրոց-պարտեզում, և՛ այս ծրագրի սկսնակ Դիանա Գևորգյանը, ով իր նախաձեռնությամբ Գեղարվեստում ավարտել է 5 տարեկանների խմբի ձևավորումը. նայելու բան է, թե ինչ աշխարհ է ստեղծել, եկեք, տեսեք: Հիմնական դպրոցի և Նոր դպրոցի 5 տարեկանների գործող խմբերի ղեկավարների անունները կհրապարակեմ մեկ-երկու օրից: Այս հապաղումը խոսում է մեր վերաբերմունքի լրջության մասին... Մեզանում առաջ, ինչպես հանրապետությունում, այս խումբ-դասարաններն անվանում էին նախապատրաստական ուսուցման դասարաններ... Ինչի՞ն պատրաստեն. ինչպե՞ս են որոշում, ո՞վ է որոշում... 5 տարեկանների մի մասը որևէ մանկապարտեզի նախապատրաստական խմբում այդպես էլ չի ընդգրկվում և 6 տարեկան է դառնում, 1-ին դասարան գալիս ընտանիքից... Ո՞վ է նրան պատրաստում դպրոցական ուսումնառությանը, ո՞վ է ստուգում-թույլատրում-արգելում, երբ կրթությունը երեխայի անօտարելի իրավունքն է՝ բոլոր ներպետական ու միջազգային փաստաթղթերով...

Մենք 5 տարեկանների ֆիզիկական-մտավոր զարգացման-հասունացման համար կարող ենք և ստեղծել ենք համապատասխան աշխարհ, միջավայր... կրթական մեկամյա ծրագիր, որով սանը ծնողի ազատ ընտրությամբ, 2 ճանապարհ ունի՝ շարունակել զարգանալ-հասունանալ կրտսեր դպրոցի ուսուցման ծրագրով՝ իր 6 տարեկան դարձած ընկերների հետ կամ ընտրել տարրական ուսուցման քառամյա ծրագիր նոր ընկերների հետ՝ կրթահամալիրի որևէ կրտսեր դպրոցում կամ մայրաքաղաքի բազում կրտսեր դպրոցներից մեկում...
5 տարեկանները ծրագրով կլողան, հեծանիվ կվարեն. վազք-էստաֆետ-մարմնամարզությունը կկազմակերպվեն նաև որպես մտավոր զարգացման-հասունության անցումներ...
Մի բան հաստատ է, այստեղից էլ այն հետևողականությունը և ուշադրությունը, որ մենք շարունակում ենք 5 տարեկաններին դարձնել: Տարրական ուսուցման (առաջ՝ տասնամյա դպրոցում եռամյա, հիմա՝ քառամյա 12-ամյա կրթությամբ դպրոցում) պետական կրթական ծրագիրն այդպես էլ չի փոխվել՝ անգիրի, վերարտադրման, դոգմատիկ դպրոց է եղել և մնում... Հեղինակային կրթական ծրագրով տարիների մեր չարչարանքի արդյունքում ստեղծված դպրոց-պարտեզը՝ իր այսօրվա նյութական միջավայրով ու ծրագրային կառույցով, ծրագիրը յուրացրած դաստիարակով, հասարակայնորեն ամենաերևելի կերպով ճանաչվածն է.

հետդարձ չի կարող լինել, իհարկե: Իսկ առաջընթացն այն է, որ մեր Միջին դպրոցը 2015-2016-ում ավելի վստահ է անցնում հասարակական ճանաչման ճանապարհը...

«*Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուրերեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք*»... Սա Հանրակրթության մասին օրենքում գլխապտույտ արագությամբ շարունակվող փոփոխություններից մեկն է: Սկզբում «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» առանձին օրենքով կարգավորվում էին այսպես կոչված ներառական կրթական ծրագրով սովորողների հանրակրթական հարաբերությունները՝ Հանրակրթության մասին օրենքով՝ «սովորական» երեխաների հանրակրթական հարաբերությունները: Մի երրորդ կարգավորում կա արդեն առանց օրենքում սահմանված հասկացության, որ հասկանալի լինի՝ ով է «արտակարգ ընդունակություններ դրսևորած» սովորողը, ով է որոշում, ինչպես: Բացի «հատուկ պահպանվող» տարածքներում նրանց պատսպարելուց, շարունակ թմբկահարվող մեկ ցուցանիշից՝ առարկայական օլիմպիադաներում ձեռք գցած մեդալների քանակից, ի՞նչ ունենք՝ որպես մանկավարժություն... Հիմա էլ, տեսեք, մտափոխ եղան, ուժը կորցրած ճանաչեցին «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքը, այդ հասկացություններն ու հարաբերություններն ինչ-որ զտումով բերեցին «Հանրակրթության մասին» օրենք... Սրանով կամ սրանից հանրակրթությունը դարձավ ներառակա՞ն, երբ չկա դրա գիտակցումը, երբ հանրակրթական հաստատությունն այդպիսին չէ... Անկախության 25-րդ տարում պիտի ոչ թե վարկանիշավորման մեդալներով-շքանշաններով չափվի գործը, այլ բոլորիս՝ առանձնահատուկի, «սովորականի», արտակարգի՝ որպես մեկ ամբողջություն՝ մի բաց հասարակությունում որպես հավասարներ ապրելու, նույն հանրակրթական հաստատությունում կրթվելու պայմաններով... Իսկական կրթությունը, ինչպես բաց հասարակությունը, չի կարող չլինել ներառական, ներառող, հասարակ, պարզ... իրավահավասար... Մենք, որպես հեղինակային հիմնադիր հավաքանի, 25 տարի առաջ խալխի (հասարակ մարդու) դերում էինք, երբ ստեղծեցինք մեր՝ անհատականություններ ներառող, անհատի զարգացման համար համալիր պայմաններ ապահովող ծրագիրը. իմ ձևակերպումն է «Անսովոր կազմակերպում սովորական երեխաների համար»...

Այս հղումով, շնորհակալ եմ մանկավարժության լաբորատորիային, հավաքին ընդառաջ, տեղադրվեց 5 տարեկանից սկսած յուրաքանչյուր կրթական ծրագրի՝ սովորողի ընտրած գործունեության ցանկը՝ պարզաբանումներով, ուսումնական կենտրոնների առաջարկած լրացուցիչ կրթության ձևերն ու դասընթացները՝ տարատարիք սովորողների և ուսուցիչների համար... Տպավորիչ է, այո՞, բայց կուզեմ՝ ուղեցույց դառնա այսպիսի աշխատանքը... Դժվար, շա՛տ դժվար է այսպիսի իրական ընտրությամբ սովորական և յուրաքանչյուր սեբաստացու ազատ գործունեության ապահովում-կազմակերպումը՝ որպես օրացույց ու ժամանակացույց, որպես մեր հավաքանիի ուսումնական առօրյա... Առանց լիարժեք-զարգացող-ինքնավարության-ինքնասպասարկման-ինքնուրույնության, սովորողի և սովորեցնողի անհատական շահագրգռվածության ու ակտիվության, չի ստացվի կամ ուրիշ բան կստացվի՝ այլ արդյունքներով... Շա՛տ են ափսոս տարիների մեր ստեղծածը, փորձը, հեղինակությունն ու

հնարավորությունները վարանում-վրիպում թույլ տալու համար: Սրա համար պիտի փոխվե՞ք՝ փոխվե՛ք. լսո՞ւմ եք... Սովորողի այս ազատ ընտրությամբ է որոշվում յուրաքանչյուրիս մեջ կրեատիվը, հետազոտողը...

Երեկ մենք վարչական խորհրդում խոսում էինք բնագիտական-տեխնիկական ստեղծագործության, ինժեներական, տեխնոլոգիական գործունեության ակտիվացման, սովորողի ընտրությամբ լրացուցիչ կրթության ծավալում սրանց կարևորման ձևերի մասին... Չգիտեմ՝ աշխարհում ինչպես, բայց հայաստանյան դպրոցներում վիճակն այս առումով մտահոգիչ է. ցավոք, ծնողներն էլ հիմնական ուշադրությունը, պատվերը տալիս են տաշի-տուշիին, օտար լեզուների լրացուցիչ պարապմունքներին, կրկնուսուցմանը, բարձր գնահատականներին, բայց տեսեք՝ որքա՜ն աղքատ է երեխայի ընտրությունը բնագիտական-տեխնիկական իրական գործունեությամբ զբաղվելու համար... Խմբակներ ամենատարբեր, լաբորատորիա-արհեստանոցների իրական գործունեություն, ակումբներ... Մի «Թումոյով», Հայաստանում և Արցախում բացվող 2-3 մասնաճյուղով այսպիսի ծավալուն խնդրում տեղաշարժ չի լինի... Ընտանիքը չի կարող հեռու մնալ այս գործունեության կազմակերպման, խրախուսման խնդիրներից... Կրթահամալիրի նախակրթարանների, կրտսեր դպրոցների, ուսումնական կենտրոնների լաբորատոր միջավայրը, մեր հեղինակած ուսումնական պլանները դրա հնարավորությունները հորդառատ տալիս են... Դպրոց-պարտեզի 4-րդ դասարանցի դարձած Արմեն Մարտիրոսյանն ընտրել է ռոբոտիքսը՝ որպես գործունեություն: Այն Արմենը, որ հայտնի է կերպարվեստում ունեցած հաջողություններով, այս ընտրության համար երկար է սպասել:

Օգոստոսի 28-29-ը հեղինակային մանկավարժության կրթական ծրագրերով որոշված ընդհանուր պարտադիր դասընթացների, նրանց ներկայացման ու կազմակերպման օրերն էին... Իսկ սեպտեմբերի մե՞կը՝ հարցնում են... Սեպտեմբերի 1-ով սկսում ենք 2015-2016 ուստարվա կրթական նորամուտների շքերթը... նոր հարյուրավոր տարատարիք սեբաստացիներով, ուսումնական նորույթներով, կրթական միջավայրի նոր մշակումներով, ուսումնական գործի կազմակերպման նոր լուծումներով... Իսկական կրթական շքերթ, որը պիտի անհատականացվի, որ ակտիվ դառնա յուրաքանչյուրը, ներառվի. առանց այսպիսի ելքի-հավեսի ոգևորվածության, ի՞նչ շքերթ... Շքերթ, որ կկլանի ոչ միայն այնքան խոստացած-ավանդական սեպտեմբերի 4-ը, այլև դրան հաջորդող շաբաթ-կիրակին... Ինչո՞ւ նշանավոր-տոնական-հիշարժան՝ որպես ուսումնական մեծ մարաթոնի մեկնարկ չդառնա մեր շքերթը... Ես խոստացա: Հետևե՛ք իմ օրագրին. ես պատմելու եմ և՛ օգոստոսի 28-ին, և՛ սեպտեմբերի 1-ին մեկնարկողի մասին...

Իհարկե, ստացվեց մեր «Մեղրաձոր 2015» արշավախմբային ճամբարը, որին անձրևը կարևոր փորձության ենթարկեց. դաշտ էր, ու արշավախումբ.... Կեցցե՛ք, Գնել Հարությունյան, Կարինե Պետրոսյան, Խորեն Հազարումյան, Հրաչյա Առաքելյան ու ընկերներ՝ բոլոր կարգի ու տարիքի, անձրևն այդ ընդունեք՝ որպես պարգև...

Ուսուցչի, մանկավարժական աշխատանքի շուրջ խմբված են լինում սովորողներ՝ ազատ, մինչև վերջ ազատ ընտրությամբ... Մենք սկսում ենք 2015-2016 ուստարվա խմբերի ձևավորումը ոչ թե հանրակրթական դասարաններից, այլ սովորողի գործունեության ազատ

ընտրությամբ խմբերից...Գնել Հարությունյանը՝ «Մեղրաձոր 2015» ճամբարի հերոս պահապանը, ոգևորված է արշավախմբային ճամբարային գործունեության շարունակականությամբ՝ որպես շուրջտարյա մոբիլ դպրոց բնության գրկում... Իրոք, մի ամսով ամառային ճամբարը վե՞րջ... Ինչո՞ւ չի կարող լինել 7-օրյա, 10-օրյա արշավախմբային աշնանային ճամբար հոկտեմբերի վերջին, աշնանային ուսումնական արձակուրդի շրջանում... Իհարկե. Հայաստանի բնության մի նոր բացահայտում-տարածում... Սկսենք տարածքի ընտրությունը, մինչ այդ էլ վերջնական տեսքի կգա արշավախմբային-հայրենագիտական կայանի տարածքը: Ի դեպ, Գնել Հարությունյան, մեր սեբաստացիական հնգամարտի (ձիասպորտ, սուսերամարտ, նետաձգություն, հրաձգություն, լող) կազմակերպիչ-համակարգող Խորեն Հազարումյան, նետաձիգ Գևորգ, սուսերամարտիկ Միքայել ու «Ասպետ» ակումբի համակարգող Արման Երանոսյան, մեր ամենահայրենագետ Կարինե Պետրոսյան ու կայանի անմիջական պատասխանատու Հրաչ Առաքելյան, ինչո՞ւ չի կարելի մինչև սեպտեմբերի 4-ն ավարտել այն... Կայանը հենց դրա համար էլ ստեղծվում է. ինքնաբուխ արշավախմբային նախագծերի իրականացման համար: Գուցե եռօրյա (շաբաթ, կիրակի, արանքում էլ՝ մի տոն կամ մեռելոց) մոդուլն ամենագործածականն է, կրթահամալիրի արշավախմբային ավտոբուսն էլ՝ շատ հարմար փոխադրամիջոց:

Կրթահամալիրի 2015-16 թթ-ի օրացույցն էի զննում. սեպտեմբերի 21-26-ը կոմիտասյան օրեր են ավանդական, ամենամյա... Օրացույցը մեր ուսումնական է, նրանում արձանագրվածը միջոցառումներ չեն՝ անես-պրծնես, գա ակտիվ ուրիշը, երգի կամ խոսի, դու իբրև ներկա-մասնակից լինես, բայց մտածես, թե հոգի հանեց, ե՞րբ պիտի պրծնի... Օրացույցում մեր ուսումնական կյանքն է, բովանդակությունը՝ ուսուցմամբ, ուսումնական նախագծերով յուրացվող... Այս օրացույցով պիտի կազմված լինի նաև ուսուցչի, կազմակերպչի, ամեն մի մանկավարժական աշխատողի ուսումնական դասընթացների, գործունեության աշխատանքային ծրագրերն ու պլանները... Օգոստոսի 30-ը անգամ ուշ է հետաքրքրվելու համար. արված են մշակումները, որտե՞ղ են դրանք հրապարակված, կարո՞ղ եք ցույց տալ ձեր ուսումնական բլոգներում: Ցո՛ւյց տվեք:

Հեծանիվը: Տարվա լավագույն՝ ամենահանրակրթական, ամենաոգևորիչ ու զարգացումներով լի նախագիծը «Բանգլադեշն անիվների վրա»-ն է անկասկած... Փաստ է, որ հեծանիվը դարձավ առօրեական. մեր ուսուցիչներից շատերը սկսել են ձեռք բերել ... Փաստ է, որ մենք ամենահարմար պայմաններով ստացանք 40 հեծանիվ՝ 20-ը՝ մինչև 11 տարեկանների, 20-ը՝ մեծահասակների համար, նոր ու եվրոպական արտադրության, նախանձելի... Փաստ է, որ ավարտին է մոտենում հեծանվակումբի շինարարությունը. սեպտեմբերի 22-26-ի հեղինակային կրթական ծրագրերի հավաքին մենք կներկայացնենք տարատարիք հեծանվախմբերը... մեր եռամարտը, հնգամարտն ու միամարտը, հեծանիվներ ու հեծանվավոր սովորողներ և ուսուցիչներ... Փաստ է, որ այս 4-5 ամսում ես ու իմ հավատարիմ ընկեր-օգնական Գևորգ Հակոբյանը նախագծեցինք Անաստասավան՝ Շիրակի փողոցով կամ Լենինգրադյանով, Խանջյան փողոց՝ Ծովակալ Իսակովով կամ Սեբաստիայով, Բանգլադեշի՝ կրթահամալիրի Բանգլադեշի հեծանվային բոլոր հուսալի անցումները... Հավատացնում եմ՝ բազմապատիկ նվազեցին նյութական ծախսերն ու ժամանակը «Բանգլադեշն անիվների վրա», «Հեծանիվը՝ հանրակրթական միջոց» նախագծերի իրագործման պիլոտային ծրագրերի

համար: Մենք միայն մեզ համար չէ, որ անում ենք, մենք, այդպես ստացվեց, էլի գնում ենք առջևից՝ հանուն Հայաստանի Հանրապետության, առողջ գլորվող սերնդի...

Հետգրություն

Ես շատ կուզեմ, որ կրթահամալիրի համար էլ 2015-2016 ուստարին հասունության փուլի ազդարարում լինի. հասուն մարդկանց հասուն հարաբերություններ ու հասուն իրագործումներ՝ հասունության բերված նախագծերի ու ծրագրերի... եթե մենք ապրել ենք ու գիտակցում-ուժ ենք ստանում մեր կրթական ծրագրի առաջացման ու իրագործման պատմությունից... Ի՞նչ պատմություն է, եթե ուժ չի տալիս... Կան պտուղներ, դեպքեր, ծնունդներ, որ այդպես էլ չեն հասունանում... կան և լխկածներ... կա և հասուն շրջան...

Կազմեց **Սոֆյա Այվազյանը**